



# ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ

*(ձեռնարկ Արդարադատության ակադեմիայի ունկնդիրների համար)*

# ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ

(Ձեռնարկ սրբաբանության և կրթության ոլորտների շուկայի վերաբերյալ)

ՀՏԴ 342.56(07)  
ԳՄԴ 67.7g7  
Դ 250

Սույն ձեռնարկը մշակվել և հրատարակության է պատրաստվել «Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի», ՀՀ Արդարադատության ակադեմիայի և Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի (IRZ) նախաձեռնությամբ:

Դրանում գիտագործնական հարթությամբ հետազոտվել են դատական իշխանության անկախության երաշխավորմանն առնչվող այնպիսի հիմնահարցեր, ինչպիսիք են՝ դատավորների և դատարանների անկախության հիմունքները, դատական իշխանության սահմանադրական և միջազգային հիմքերը, դատավորների ներքին անկախության ապահովման հիմնախնդիրները, դատավորների նյութական և սոցիալական անկախության ապահովման, ինչպես նաև դատավորների պատասխանատվության հիմքերը:

Ձեռնարկը նախատեսված է Արդարադատության ակադեմիայի ունկնդիրների համար, միաժամանակ՝ այն կարող է օգտակար լինել դատական իշխանության անկախության սահմանադրաիրավական հիմքերով հետաքրքրվող մասնագետներին:



ՀՏԴ 342.56(07)  
ԳՄԴ 67.7g7

Դ 250 Դատական իշխանության անկախությունը: Ձեռնարկ Արդարադատության ակադեմիայի ունկնդիրների համար / Ա. Վաղարշյան, Գ. Դանիելյան, Ե. Խունդկարյան, Վ. Շուբերտ: Ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Դանիելյանի. - Եր.: «Կոնրադ Ադենաուեր հիմնադրամ» հայաստանյան մասնաճյուղ, 2024. - 242 էջ:

**Ձեռնարկի բովանդակության համար պատասխանատու է ՀՀ  
Արդարադատության ակադեմիան**

# ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>ՆԱԽԱԲԱՆ</b> .....	7
<b>Սերգեյ Առաքելյան</b> <i>Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Արդարադատության ակադեմիայի ռեկտոր, ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր</i> .....	7
<b>Շտեֆան Սալերիուս</b> <i>Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի «Հարավային Կովկաս Քաղաքական Երկխոսություն» փարածաշրջանային ծրագրի ղեկավար</i> .....	8
<b>Ֆրանկ Հուսիֆելդ</b> <i>Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի (IRZ) Հարավարևելյան Եվրոպայի II և Հարավային Կովկասի ծրագրերի բաժնի ղեկավար</i> .....	9
<b>ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ</b> .....	10
<b>Վինֆրիդ Շուբերտ</b> <i>Նաումբուրգում գերագույն երկրամասային դատարանի պաշտոնաթող նախագահ, Սաքսոնիա-Անհալթ երկրամասի երկրամասային սահմանադրական դատարանի պաշտոնաթող նախագահ (Գերմանիա)</i> .....	10
<b>Խորհրդածություններ</b> .....	10
<b>ԳԼՈՒԽ 1.</b> <b>ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԱՌՈՒՄՆԵՐԸ ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԽՈՐԱՊԱՏԿԵՐՈՒՄ (Արթուր Վաղարշյան)</b> .....	24
<b>1. Իշխանությունների բաժանումը որպես իրավական պետության կազմակերպման ու գործունեության ընդհանուր սկզբունք և դրա պահանջները</b> .....	24
Իրավական պետություն և իշխանությունների բաժանում .....	24
Իշխանությունների բաժանման գործառույթային, ինստիտուցիոնալ, անձնական առումները և արդի չափանիշները .....	26
Հակակշիռների և զսպիչների դերը իշխանությունների բաժանման համակարգում .....	28
Իշխանությունների բաժանման խնդրի լուծման բարդությունները .....	28
<b>2. Դատական իշխանության հայեցակարգի հիմնական հասկացությունների օպերատիվ իմաստը իշխանությունների բաժանման տեսության համայնապատկերում</b> .....	29
Օպերատիվ հասկացությունների դերը ճանաչողության գործընթացում .....	29
Դատական իշխանության համակարգում անկախության նշանակությունը և սահմանները .....	32
<b>3. Դատական իշխանության անկախության հիմնահարցի բազմակողմանիությունը, տեսական խճճվածությունը, իրավական անորոշությունը</b> .....	33
<b>4. «Դատական իշխանության անկախություն» հասկացության ուսումնասիրության մեթոդաբանությունը</b> .....	35
<b>5. Դատական իշխանության անկախության առումների և յուրահատուկ երաշխիքների ամփոփ համակցությունը և դասակարգումը</b> .....	37
<b>6. Դատական իշխանության անկախության հիմնահարցերը պետական իշխանության համակարգում</b> .....	38

<b>7. Անկախության հիմնահարցերը դատական իշխանության՝ որպես ինքնավար համակարգի ներկառուցվածքային տարրերում</b> .....	40
Դատական համակարգի, ըստ իրավասության տեսակների, ատյանների (դատարանների) միմյանցից անկախությունը .....	41
Դատարանը՝ որպես պետական մարմին, անկախության առումները դատարանի ներկառուցվածքային տարրերի փոխհարաբերություններում .....	41
<b>8. Դատավորը որպես պաշտանատար անձ. նրա անկախությունը</b> .....	42
Դատավորի որպես պաշտանատար անձի ներհամակարգային ու արտահամակարգային անկախության առումները .....	42
Անկախությունը որպես դատավորի երաշխավորված իրավունք և պարտականություն .....	43
Դատավորի որպես իրավագետի պրոֆեսիոգրամայի տարրերը և դրանց առնչությունը նրա անկախության ու անաչառության հետ .....	43
Դատավորը որպես մարդ-անհատ. դատավորի անկախության հիմնահարցերը .....	45
<b>9. Դատարանի ու դատավորի անկախության հիմնահարցերը քաղաքացիական հասարակության համակարգում</b> .....	47

**ԳԼՈՒԽ 2.**

**ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ԵՐՐՈՐԴ**

<b>ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ (Արթուր Վաղարշյան)</b> .....	50
1. Իշխանությունների բաժանման հայեցակարգի ձևավորման ու սահմանադրական ամրագրման համաշխարհային համայնապատկերը .....	50
Իշխանությունների բաժանման գաղափարները հին և միջին դարերում .....	50
Իշխանությունների բաժանման ուշ միջնադարյան դասական տեսությունը .....	52
Իշխանությունների բաժանման հիմնախնդրի տեսագործնական հիմնահարցերը նոր և նորագույն ժամանակներում .....	53
2. Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումը և ժողովրդավարական, իրավական հասարակության կառուցման ռազմավարությունը .....	55
3. Իշխանությունների բաժանման ու դատավորների անկախության իրավական հարցերում Հայաստանի պատմական փորձը և մեկնարկային վիճակը .....	56
Դատավորների կարգավիճակի և անկախության ոլորտներում Հայաստանի պատմական փորձը .....	56
Մեկնարկային վիճակը իշխանությունների բաժանման ու դատավորների կարգավիճակի հարցերում .....	60
4. 1995 թ. Սահմանադրության ընդունումը և դատավորների անկախության իրավակարգավորումները դատաիրավական բարեփոխումների արդյունքում .....	61
Դատական իշխանության սահմանադրական հայեցակարգը .....	61
Դատական իշխանության սահմանադրական ինստիտուտները .....	63
Դատաիրավական բարեփոխումների առաջին փուլը և դրա արդյունքները, չիրագործված հույսեր .....	66
5. Դատավորների անկախության հիմնահարցերը 2005 թ. սահմանադրական փոփոխությունների և դրանով պայմանավորված դատաիրավական բարեփոխումների գործընթացում .....	67

Դատական իշխանության ոլորտում Սահմանադրության գործողության արդյունքները և դրա բարեփոխման անհրաժեշտությունը .....	67
Դատական իշխանության ոլորտում 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության նորամուծությունները և ինստիտուտները .....	68
Դատարանակազմական օրենսդրության կողմից ֆինանսավորումը .....	70

**ԳԼՈՒԽ 3.**

**ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՅՆԱՊԱՏԿԵՐՈՒՄ**

**(Գևորգ Դանիելյան)** .....

1. Հայաստանի անկախացումը և դատական իշխանության սահմանադրական համակարգի կայացման իրավական գործընթացները .....	73
2. Դատավորների անկախության հիմնահարցերը սահմանադրական զարգացման և դատաիրավական բարեփոխումների հիմնական փուլերի համատեքստում .....	85

**ԳԼՈՒԽ 4. ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ**

**ԴԱՏԱՎՈՐԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐ ԲԱՂԱԴԻՒՉ**

**(Երվանդ Խունդկարյան)** .....

1. Դատավորների ներքին անկախությունը որպես դատավորի անկախության կարևոր բաղադրիչ .....	106
2. Վճռաբեկ դատարանի որոշումների պարտադիրությունը և դրանց ազդեցությունն առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների դատավորների ներքին համոզման և իրավական դիրքորոշումների ձևավորման հարցում .....	112
3. Բարձրագույն դատական խորհրդի՝ դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու որոշումների պարտադիրությունը և դրանց ազդեցությունը դատավորների ներքին համոզման և իրավական դիրքորոշումների ձևավորման հարցում .....	122
4. Սահմանադրական դատարանի որոշումների պարտադիրությունը և դրանց ազդեցությունը դատավորի ներքին համոզման և իրավական դիրքորոշումների ձևավորման հարցում .....	129
5. Սահմանադրական և վճռաբեկ դատարանների իրավական դիրքորոշումների փոփոխության հնարավորության որոշ հիմնախնդիրներ .....	141
6. Սահմանադրական դատարանի որոշումներում նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով դատական ակտերի վերանայման արձանագրումը և այդպիսի որոշումների կաշկանդող ուժը (պարտադիրությունը) դատական ակտերի վերանայման իրավասություն ունեցող դատարանների համար .....	147
7. Սահմանադրական դատարանի հիմնելու վերաբերյալ որոշումների կաշկանդող ուժը կամ պարտադիրությունը գործը քննող դատարանի փոփոխության դեպքում .....	153

**ԳԼՈՒԽ 5.**

**ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ**

**ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ (Երվանդ Խունդկարյան)** .....

1. Նյութական և սոցիալական անկախության սահմանադրական և միջազգային իրավական հիմքերը .....	166
---	-----

2. Դատավորների աշխատավարձի հետ կապված զարգացումները  
ՀՀ օրենսդրության մեջ ..... 170

**ԳԼՈՒԽ 6.**

**ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ**

**ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ (Գևորգ Դանիելյան) ..... 212**

- 1. Դատավորների պատասխանատվության ինստիտուտի և դատավորի  
հայեցողության գնահատման արդի հիմնահարցերը ..... 212
- 2. Դատավորների քաղաքական զսպվածության և քաղաքական չեզոքության  
սահմանները, հրապարակայնության սկզբունքը ..... 222

**Եզրափակիչ խոսք**

**Արթուր Վաղարշյան, Երվանդ Խունդկարյան, Գևորգ Դանիելյան ..... 239**

**Համառոտագիր ..... 241**

# ՆԱԽԱԲԱՆ

ՀՀ Սահմանադրությամբ Հայաստանի Հանրապետությունը հռչակվում է ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետություն: Նշված արժեքների սուկ հռչակումը և իրավական ամրագրումը, սակայն, դեռևս բավարար չեն գործնականում դրանց կիրառությունն ապահովելու համար: Այդ իմաստով Հայաստանի Հանրապետության՝ որպես իրական ժողովրդավարական և իրավական պետության կարևորագույն հենասյուններից մեկը անկախ ու անկողմնակալ դատական իշխանության առկայությունն է, ինչը նաև մեր երկրում իրավունքի գերակայության նախապայման է և արդար դատավարության հիմնարար երաշխիք:

Դատական իշխանության անկախությունը՝ որպես իրավական և ժողովրդավարական պետության անկյունաքարային հիմք, ամրագրված է ինչպես միջազգային իրավական բազմաթիվ փաստաթղթերում, այնպես էլ մեր երկրի ներպետական օրենսդրության մեջ՝ Հիմնական օրենքում, «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում, ճյուղային դատավարական օրենսդրական ակտերում: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության հոդված 162-ը սահմանում է, նախ, որ Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, ինչպես նաև՝ որ արդարադատության իրականացմանը որևէ միջամտություն արգելվում է: Հետևաբար, ցանկացած անկախ և արդյունավետ դատական համակարգի գործունեության հիմնական նպատակը պետք է լինի ոչ միայն ձևականորեն, այլև իրականում լիակատար ու պատշաճ արդարադատության իրականացումը՝ զերծ ցանկացած կամայական միջամտությունից:

Այսպիսով, դատական իշխանության անկախությունը ցանկացած պետությունում արդարադատության գոյության օբյեկտիվորեն անհրաժեշտ նախապայման է: Այն ենթադրում է, որ իր վարույթում եղած գործով որոշակի իրավական դիրքորոշում ձևավորելիս յուրաքանչյուր դատավոր ազատ պետք է լինի անհարկի միջամտություն հանդիսացող ցանկացած արտաքին և ներքին ազդեցությունից:

Վերոգրյալի համատեքստում հարկ է կարևորել նաև ընթերցողի ուշադրությանը ներկայացվող սույն աշխատությունը, որում, մեծահասակների ուսուցման պահանջներին համապատասխան, բազմակողմանի անդրադարձ է կատարվում դատական իշխանության անկախությանն առնչվող տարատեսակ, այդ թվում՝ վիճելի, խնդրահարույց և տարակարծիք մեկնաբանությունների տեղիք տվող հարցերի: Լիահույս ենք, որ ուսումնական տվյալ ձեռնարկն օգտակար կլինի դրանում քննարկվող խնդիրներն առավել խորությամբ ընկալելու, իմաստավորելու, դրանց լուծման կոնկրետ ուղղություններ նախանշելու և իրականացնելու համար:

**Սերգեյ Առաքելյան**

*Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,  
Արդարադատության ակադեմիայի ղեկավոր, ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր*



Դատական իշխանության անկախությունը և իրավունքի գերակայության, և ժողովրդավարության հիմքն է: Այն նաև կարևոր նախապայման է քաղաքացիների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների իրավունքների պաշտպանության համար: Անկախ դատավորները, ի վերջո, անփոխարինելի նախապայման են, որպեսզի մարդկանց վստահությունն ամրապնդեն իրենց երկրի արդարադատության համակարգի նկատմամբ:

Շատ դիտորդներ հույս ունեին, որ Արևելյան Եվրոպայում և նախկին Խորհրդային Միությունում կոմունիզմի ավարտը կհանգեցնի իրավական ինստիտուտների և իրավունքի գերակայության էական բարելավմանը նորանկախ պետություններում: Այնուամենայնիվ, 30-ից ավելի տարիների իրավական փոփոխությունների համախառն փորձը փոփոխական հաջողություն ունի. մենք տեսանք ձեռքբերումներ, ինչպես նաև ձախողումներ, առաջխաղացումներ և հետընթաց: Շատ դեպքերում ոչ պաշտոնական քաղաքական պրակտիկները (կլաններ, շահագրգիռ խմբեր և քաղաքական ցանցեր) նպաստում էին քաղաքական գործընթացներին, որոնք հակադրվում էին ավանդական սահմանադրական ինստիտուտներին՝ երբեմն փորձելով «զավթել կառավարությունը»:

Իրավունքի գերակայությունը ցանկացած քաղաքակիրթ հասարակության ամենահիմնական պահանջն է և այն հիմնական սկզբունքներից մեկը, որին հավատարիմ է Կոնրադ Ադենաուեր հիմնադրամն ամբողջ աշխարհում:

Ուստի, մենք շատ ուրախ էինք համագործակցել Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի (IRZ) և Հայաստանի Հանրապետությունում Արդարադատության ակադեմիայի հետ Հայաստանում դատական անկախության սկզբունքներին նվիրված այս ուղեցույցի մշակման գործում:

Մենք հուսով ենք և խորապես հավատում ենք, որ գիրքը և դրա կիրառումը կնպաստեն իրավունքի գերակայության ամրապնդմանը, և այդպիսով նշանակալից առաջընթաց կլինի Հայաստանի ժողովրդավարական վերափոխման և եվրոպական մերձեցման գործում:

### **Շտեֆան Մալերիուս**

*Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի «Հարավային Կովկաս Քաղաքական Երկխոսություն» պարաժաշրջանային ծրագրի ղեկավար*

1992 թ. իր հիմնադրումից ի վեր Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամը (IRZ) Գերմանիայի Արդարադատության նախարարության հանձնարարությամբ խորհրդատվություն է իրականացնում իր գործընկեր պետությունների համար՝ նրանց դատաիրավական համակարգերի բարեփոխման գործընթացում: Իրավական պետության սկզբունքները և ժողովրդականացումը հիմնական իրավունքներով պաշտպանված ազատությունների պահպանման, կայուն պետական և հասարակական կառույցերի ուժեղացման, ինչպես նաև տնտեսական աճի խթանման նախապայմանն են ու երաշխիքը: Այս զարգացմանը նպաստելը հիմնադրամի խնդիրն է, ընդ որում՝ գործընթացի կիզակետում միշտ համապատասխան գործընկեր պետության կարիքներն են:

Մեր հիմնադրամի համագործակցությունը Հայաստանի հետ, որն սկիզբ է առել 2011թ.-ին, իրականացվում է տեղում և Գերմանիայում՝ բազմաթիվ իրավական ոլորտներում վերապատրաստման սեմինարների, մասնագիտական քննարկումների ու գիտաժողովների կազմակերպման և անցկացման ձևով: Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի հետ համագործակցությամբ և Հայաստանի Արդարադատության ակադեմիայի հետ սերտ համաձայնեցմամբ հայ հեղինակներն ու մի գերմանացի փորձագետ Արդարադատության ակադեմիայի համար մշակել են դատական համակարգի անկախությանը նվիրված այս ձեռնարկը:

Ժողովրդավարական պետությունում պարտադիր պայման է, որ դատական համակարգը քաղաքական ազդեցություններից անկախ գործի և արդար որոշումներ կայացնի օրենքների ու իրավական սկզբունքների հիման վրա: Այս ձեռնարկը պետք է նպաստի դատական համակարգի անկախության նշանակությունը խորապես ըմբռնելուն և Հայաստանում սկսնակ դատավորներին իրավական պետության հիմնարար սկզբունքների պահպանման գործում իրենց կարևոր դերակատարմանը նախապատրաստելուն:

Մենք սրտանց շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին, ովքեր մասնակցել են այս ձեռնարկի ստեղծմանը: Նրանց մասնագիտական գիտելիքների և փորձառության շնորհիվ մշակվել է ընդգրկուն և պրակտիկայի պահանջներին համապատասխանող գիրք, որն արժեքավոր տեղեկություններ է պարունակում դատական համակարգի անկախության վերաբերյալ:

Շնորհակալ ենք նաև Կոնրադ Ադենաուեր հիմնադրամին այս ծրագրի շրջանակում վստահության վրա հիմնված արդյունավետ համագործակցության համար:

### **Ֆրանկ Հուֆֆելդ**

*Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի (IRZ) Հարավարևելյան Եվրոպայի II և Հարավային Կովկասի ծրագրերի բաժնի ղեկավար*

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

## Վինֆրիդ Շուբերգ

*Նաումբուրգում գերագույն երկրամասային դատարանի պաշտոնաթող նախագահ,  
Սաքսոնիա-Անհալթ երկրամասի երկրամասային սահմանադրական դատարանի  
պաշտոնաթող նախագահ (Գերմանիա)*

### Խորհրդածություններ

Հարգելի ընթերցող,

Ձեզ է ներկայացվում դատավորների անկախության վերաբերյալ ձեռնարկը, որը ձեզ համար նախապատրաստել, գրել ու հրատարակել են բարձրակարգ մասնագետներ: Այստեղ կգտնեք տարբեր հարցերի պատասխաններ, ինչը կդյուրացնի ձեր գործնական աշխատանքը: Ձեզ մոտ թերևս հարց կառաջանա, թե ուրիշ ինչ կարող են ձեզ հաղորդել այս խորհրդածությունները:

Ուզում եմ պատասխանել ձեզ մի քանի հանդիպակաց հարցերով:

Ինչ կապ ունեն մեր թեմայի հետ Ամազոնի՝ օվկիանոս թափվելը, Իրաքը, Բորդոյի դատարանի նախկին նախագահը: Որքանով են մեզ համար կարևոր «Gouvernement des Juges»<sup>1</sup>, «հայացքը ճոճել», «բրյուսելյան ժանյակներ» հասկացությունները և «influencer»-ի<sup>2</sup> վերաբերյալ հարցը, և ինչ (գլխաբառ՝ եզրափակում) կապ ունի նախկին պապ Բենեդիկտոս XVI-ը Հայաստանի արդարադատության համակարգի հետ:

Եթե գիտեք իմ բոլոր հանդիպակաց հարցերի պատասխանը, ապա սրտանց շնորհավորում եմ ձեզ: Քանզի շարունակությունը կարող եք չկարդալ: Այլապես հուսով եմ, որ ձեզ կհետաքրքրեն իմ հիմնավորումները, ինչպես և պետք է սպասել դատավորից:

### 1) Ամազոնի գետաբերանը:

Բրազիլիայում ամեն 2 ամիսը մեկ «ՏՐԻԲՈՒՆԱ» անունով մի նալ ճանապարհ է ընկնում դեպի Ամազոնի գետաբերանի շրջանը՝ «արդարադատությունն» այնտեղի բնակիչներին բերելու համար: Նավը երկու դատավորներով Մակապայից գնում է Ամապա և ապա Իտամատատուբա: Երկու տախտակամածներին վճիռներ են կայացվում քաղաքացիական ու քրեական գործերով, դատավորների հետ մեկնում են նաև դատախազության ու փաստաբանության ներկայացուցիչներ: Քննվում են ալիմենտների գործեր, հարևանների վեճեր և հանցագործություններ: Ոստիկանության մի սպա ապահովում է անհրաժեշտ կարգուկանոնը և անվտանգությունը: «ՏՐԻԲՈՒՆԱ»-ն բերում է նաև դատական կատարածուններ, արդարադատության համակարգի սոցիալական ծառայության ներկայացուցիչներ և բժիշկներ: Ամազոնի դելտայի բնակիչները սիրով են օգտվում արդարադատության այդ ծառայություններից, որովհետև արդարադատության այդ նավն օգնում է իրենց: «Տախտակամածային» դատավորներից

<sup>1</sup> Ֆրանսերեն՝ կառավարում դատավորների կողմից:

<sup>2</sup> Անգլերեն՝ ազդեցություն ունեցողներ:

մեկն այսպես է ձևակերպում ձեռք բերված իմացությունը. «Մեր ներկայությունը մարդկանց վստահություն է տալիս: Նրանք ստիպված չեն ինքնուրույն լուծել իրենց խնդիրները և ուժի դիմել»: Նավը, որի վրա գրված է «JUSTICIA VEM A BORDO»<sup>3</sup>, պատկանում է հիմնական ծառայությունների տրամադրման համակարգին, «իրավունքի» միջոցով այն ապահովում է քաղաքակիրթ հասարակության միասնականությունը նաև հեռավոր շրջաններում և ճանապարհ է գտնում մինչև կուսական անտառի ամենավերջին անկյունը:

## 2) Իրաք:

Իսկ Իրաքը: Ինչ կապ ունի այս պետությունը Հայաստանի արդարադատության համակարգի հետ: Կապը հիմնավորելու համար պետք է մոտ 4000 տարի հետ գնամ: Եփրատի ու Տիգրիսի միջև ընկած երկիրը ոչ միայն մեր քաղաքակրթության, այլ նաև իրավունքի օրրանն է: Բաբելոնի Համնուրաբի արքայից մեզ է հասել մոտ 2,25 մետր բարձրությամբ սև ստելա (բնօրինակը Լուվրում է) 282 պարագրաֆներով, որոնցում ամփոփված է այն ժամանակվա իրավունքը: Կան կարգավորումներ հողի վարձակալության, մարմնական վնասվածքներ պատճառելու, այրիների և որբերի սոցիալական ապահովման և շատ այլ ոլորտների մասին՝ ոչ թե առանձնապես համակարգված դասակարգմամբ, այլ ավելի շուտ զուգորդական կապի մեջ: Վճռորոշ են ոչ միայն շատ հետաքրքիր կարգավորումները (օրինակ՝ «մեղմացնող հանգամանքներ»), եթե մարմնական վնասվածք հասցրածն ինքը ևս զգալի վնասվածք է ստացել), այլ երեք ուրիշ առանձնահատկություններ: Համնուրաբի արքայի կողմից սահմանված իրավունքը ոչ թե աստվածային, այլ աշխարհիկ իրավունք էր: Ստելայի վրա տեսնում ենք, թե ինչպես է քաղաքի Աստված Մարդուկը նրան շնորհում իշխանության խորհրդանիշները, բայց իր նախաբանում Համնուրաբին կարևորում է այն, որ թեև Աստվածն է իրեն իշխանություն տվել, սակայն օրենքների հեղինակն ինքն է: Սա կարող է մեզ այսօր երկրորդական թվալ, բայց ունի հիմնարար նշանակություն, այն է՝ աստվածային օրենքը չի կարող փոխվել մարդկանց կողմից, քանի դեռ այդ Աստծուն հավատում են: Սակայն աշխարհիկ օրենքը կարելի է ցանկացած պահի հարմարեցնել օրվա պահանջին, օրինակ, եթե անհրաժեշտ է այն արդիականացնել: Բացի այդ, Համնուրաբի ցանկության համաձայն, յուրաքանչյուր մարդ պետք է կարողանա հղում կատարել այս իրավունքին և պահանջել դատարանով դրա կիրառումը: Ստելայի վրայի կարգավորումները պատճենվել են կավե սալիկների վրա և տարածվել ամբողջ Բաբելոնյան կայսրությունում: Բացի այդ, Համնուրաբի արքան այնքան էլ չի պարծենում իր ռազմական նվաճումներով, ինչպես դա անում էին ուրիշ հին արևելյան տիրակալներ, այլ գրում է կամ գրել է տալիս հետևյալը.

<sup>3</sup> Պորտուգալերեն՝ տախտակամածին արդարադատությունն է գալիս:

- «Խաղաղությամբ հոգացի նրանց մասին,
- իմ իմաստությամբ պահպանեցի նրանց,
- որպեսզի ուժեղը չնեղի թույլին,
- որպեսզի որքն ու այրին արդարություն գտնեն,
- ես Բաբելոն քաղաքում, ...
- իմ արժեքավոր խոսքերը գրեցի հուշապանս վրա,
- զետեղելով իմ՝ արդարադատ թագավորիս, պատկերի առջև»:

Համնուրաբին նաև հոգ է տանում, որ արդար վճիռներ կայացվեն: Այսպես, օրենսգրքի § 5-ում կարդում ենք. «Եթե դատավորը օրինական վճիռ է կայացրել, որոշում է ընդունել, կնիքով փաստաթուղթ է կազմել, բայց հետագայում փոխում է իր վճիռը, եթե ապացուցվի, որ դատավորը փոխել է իր կայացրած վճիռը, ապա նա պարտավոր է վճարել այդ իրավական վեճում առաջացած հայցային պահանջի տասներկուապատիկը: Բացի այդ, նրան ժողովի ժամանակ վտարում են դատավորի իր աթոռից, որը նա այլևս երբեք չի զբաղեցնելու: Նա այլևս չի մասնակցելու դատական նիստերին»:

### **3) Բորդոյի դատարանի նախագահը:**

27-ամյա Շառլ դը Սեկոնդատը 1716 թվականին իր հորեղբորից «ժառանգում է» Բորդոյի դատարանի նախագահի պաշտոնը: Նա իրավաբանություն էր ուսանել Բորդոյում: Ապա մի քանի տարի փաստաբան էր աշխատել Փարիզում, իսկ հետո դատավոր՝ Բորդոյում: 10 տարի անց նա ավարտում է դատավորի իր գործունեությունը, տեղափոխվում Փարիզ և սկսում գրել իր գլխավոր աշխատությունը՝ «Օրենքների ոգու մասին» («De l' esprit de loi»): Նա հայտնի է դառնում իր ազնվականական տիտղոսով՝ բարոն դը Մոնտեսքյո:

Այս աշխատության մեջ նա ձևակերպել է ժամանակակից պետական և հասարակական կարգի վերաբերյալ կենտրոնական փիլիսոփայական թեզերը, առաջին հերթին իշխանությունների բաժանումը օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների միջև. «Ամեն ինչ զուր կլինի, եթե միևնույն մարդը կամ իշխանների, ազնվականության կամ ժողովրդի միևնույն մարմինը իրականացնի այս 3 իշխանությունները՝ օրենքներ ընդունել, դրանք կատարել և հանցագործությունների ու մասնավոր վեճերի վերաբերյալ վճիռներ կայացնել... Չկա ազատություն, եթե դատական իշխանությունն անջատված չէ օրենսդիր և գործադիր իշխանություններից»: Իշխանությունների բաժանման այս սկզբունքն անհրաժեշտաբար ներառում է այն աքսիոմը, որ դատական իշխանությունը պարտադիր պետք է զերծ մնա արտաքին ազդեցություններից: Մոնտեսքյոյի գաղափարների համաձայն՝ յուրաքանչյուր անհատի ազատությունները կարող են երաշխավորված լինել միայն այն դեպքում, եթե երաշխավորված է արդար և անկախ արդարադատությունը: Հետևաբար, դատավորների անկախությունը դատական իշխանության՝ որպես ինքնուրույն իշխանության, պատմության էական մասերից է:

Հետագա պատմական զարգացումները ցույց են տալիս, որ դատավորների անկախությունը չի հաստատվել դատավորի մասնագիտությունն ընդգծելու կամ առանձնաշնորհելու համար: Դրա նպատակն ավելի շուտ դատավորի գործի էությանն համապատասխանող և իրավաբանորեն ճիշտ որոշում կայացնելը հնարավոր դարձնելն է: Սա նշանակում է, որ դատարանները պարզում են գործի փաստական հանգամանքները և կիրառում իրավունքը՝ հաշվի չառնելով արտաքին կամ ներքին կապերը: Անկախության երաշխիքը միաժամանակ կախվածության երաշխիք է, կախվածություն բացառապես իրավունքից և օրենքներից: Որպեսզի դատարանի որոշումը կարողանա հավակնել նաև հեղինակության և լեգիտիմության, դատավարության կողմերը պետք է պարտադիր կարողանան ընդունել դատավորներին որպես «իրավունքների միջնորդներ»: Սա ենթադրում է, որ դատարանները որոշումները կայացնում են բացառապես գործող իրավունքի հիման վրա՝ առանց գործին չառնչվող ազդեցությունների: Դատարանների լեգիտիմությունը պահանջում է հավասար վերաբերմունք բոլոր կողմերի նկատմամբ, նաև դատավարության ընթացքում: Իրավունքի տեսանկյունից հավասար մասնակցության հնարավորությունները պետք է երաշխավորված լինեն: Հետևաբար, դատավորները պետք է չեզոք և անկողմնակալ լինեն բոլոր մասնակիցների նկատմամբ և անաչառ գնահատեն նրանց փաստարկները:

Այս խորհրդածությունից բխող հետևանքը հայտնի է. Արդարադատություն իրավունք ունեն իրականացնել միայն դատավորները («դատավորների մենաշնորհ»): Նրանք իրավունք չունեն լինելու որևէ այլ պետական իշխանության անդամ (խորհրդարանի կամ կառավարության. թույլատրելի է դատարանների կառավարման կամովին ստանձնված գործառույթների իրականացումը): Առարկայական անկախությունը (դատարաններին հրահանգներից կամ ցուցումներից լիովին զերծ պահելը) վերաբերում է դատական պրակտիկայի առանցքային ոլորտին, բայց ոչ՝ «արտաքին» կարգի բնագավառին (օրինակ՝ պատմուճան կրելու պարտականությանը, վճիռների շարադրման տառատեսակին, գործավարության պարբերական ստուգումներին, անհրաժեշտության դեպքում՝ 2 տարին գերազանցող ժամանակահատվածում չավարտված վարույթների ցուցակներին և այլն):

Ռոմանական մի երկրի գերագույն երկրամասային դատարաններից մեկի իմ բարեկամ մի նախագահ մի զրույցից հետո ինձ ուղարկեց հետևյալ էլեկտրոնային նամակը. «Independence! What a nice word! I am delighted to read your thoughts about independence, not as a privilege of the judiciary but a guardance for the people. I repeat this idea in all my public interventions but there are some judges which are not capable of understanding it!»<sup>4</sup>.

<sup>4</sup> «Անկախություն: Ինչ լավ բառ է: Ուրախությամբ կարդացի Ձեր մտքերը անկախության մասին, որը ոչ թե դատական իշխանության արտոնություն է, այլ ժողովրդի պաշտպան է: Ես կրկնում եմ այս միտքը իմ բոլոր հրապարակային ելույթներում, բայց կան դատավորներ, որոնք ունակ չեն դա հասկանալու»:

Առարկայական անկախությունը զուտ տեսական կառուցակարգ կլիներ, եթե չլրացվեր անձնական անկախությամբ: Դա նշանակում է, որ առարկայական անկախության հետևանքները որոշումների միջոցով չպետք է հանգեցնեն անձնական անվտանգության: Պետական մյուս իշխանությունները չպետք է այնպես արձագանքեն դատական որոշումներին, որ դրանով դատավորներին հասկացնել տան, թե պետք է իրականացնել մեկ այլ՝ ավելի «ճկուն» արդարադատություն: Անձնական անկախությունը դատավորին առաջին հերթին պաշտպանում է առանց իր կամքի այլ դատարան կամ այլ պաշտոնի տեղափոխելուց, աշխատանքից ազատելուց կամ աշխատավարձի կրճատումներից:

Մենք՝ դատավորներս, պարտական ենք Մոնտեսքյոյին այն բանի համար, որ կարող ենք և պարտավոր ենք կայացնելու անկախ որոշումներ:

#### 4) «Կառավարում դատավորների կողմից»:

Դեռևս 1966 թվականին ֆրանսիացի իրավագետ Ժան-Պիեռ Կոլենը (Colin) քննադատել է Լյուքսեմբուրգի Արդարադատության եվրոպական դատարանի դատական պրակտիկան՝ ասելով, որ դատարանը թույլ է տվել իրեն իրականացնել քաղաքական ազդեցություն կրող դատական պրակտիկա: Ըստ նրա՝ եվրոպայում իշխանությունների հավասարակշռման բացակայության պատճառով (այն ժամանակ խորհրդարանական օրենսդրություն չկար) Արդարադատության եվրոպական դատարանը գրեթե երբեք չի կարողանում խուսափել իրավաստեղծ գործունեություն ծավալելուց: Բայց միևնույն ժամանակ դրա արդյունքում դատավորները հսկայական իշխանություն են ձեռք բերում, որը սպառնում է դուրս գալ իր սահմաններից:

«Gouvernement des juges» (կառավարում դատավորների կողմից) արտահայտությունից սահմանազանցության հոտ է գալիս: «Դատավորների կողմից իրավունքի զարգացում» ձևակերպումն ավելի դիպուկ է: Իրավագիտության բոլոր պրոֆեսորները համակարծիք են, որ դատավորների կողմից իրավունքի զարգացման առնչությամբ հարցն այն չէ, թե **արդյո՞ք** ընդհանրապես թույլատրելի է, այլ այն, թե **ո՞ր չափով**: «Իրավունքի զարգացումը» հիմնվում է օրենքի և իրավունքի վրա, բայց չի թույլատրում այնպիսի իրավաստեղծ գործունեություն, որը տեղ է տալիս քաղաքական ազդեցություններին: Դատավորների կողմից իրավունքի զարգացման առիթ առաջանում է միայն այն դեպքում, երբ անհրաժեշտ է իրականացնել օրենսդրությամբ նախաձեռնված ծրագրեր, լուծել օրենքներում առկա բացերը, վերացնել նույն երևույթի տարբեր գնահատականների միջև հակասությունները, կամ երբ դա են պահանջում կոնկրետ գործի հատուկ հանգամանքները:

Մոնտեսքյոն դատավորներին անվանել է «օրենքի բերան»: Իրավունքի կիրառման յուրաքանչյուր գործողություն միշտ էլ նաև իրավունքը կիրառողի անձնական ներդրումն է: Դատավորների կողմից ստեղծված իրավունքը որևէ անկանոն բան չէ, չի հակասում իշխանությունների բաժանման սկզբունքին: Դատավորը յուրաքանչյուր գործ քննելիս զարգացնում է իրավունքը, քանի որ որո-

շումի կայացումից հետո իրավական վիճակն այլևս նախկինը չէ, իրավական դրույթների և իրավունքի բովանդակությունների գումարը փոխվել է: Յուրաքանչյուր վճիռ, այդ թվում նաև ամենաստորին աստյանում, որևէ իրավական նորմի ստեղծագործաբար իրականացված կիրառում է կոնկրետ գործի նկատմամբ: Վճռի կայացումից հետո գործը լուծված է: Դրանով ստեղծվում է իրավական խաղաղություն և իրավական անվտանգություն՝ ապահովություն: «Աշխարհի» համար մի իրավական խնդիր դրանով վերացած է: Իրավական իրադրությունն արդեն այլ է, սա դատարանի կողմից հիմնավորված իրավական իրադրություն է, որը պարտադիր պետք է ընդունվի բոլորի կողմից:

Գերմանացի մի պրոֆեսոր տվել է դրա ճշգրիտ ձևակերպումը. «Այն փաստը, որ դատավորը կոչված է իրեն նախապես տրված չափացույցների (մասշտաբների) հիման վրա և դրանց շրջանակում անգամ առանձին գործով և այդ գործի համար իրավունք գեներացնել և այս իմաստով իրավունքը որպես ամբողջություն զարգացնել, չի նշանակում, սակայն, որ դատավորը նաև լիազորված է փոփոխելու սեփական գործունեության չափացույցները»:

Արդարադատության անկախ իրականացումը ստեղծագործական գործողություն է, որը միշտ էլ արդիականացնում է իրավունքը՝ կոնկրետ գործի հիման վրա: Այնուամենայնիվ, չափացույցն ու ելակետը միշտ օրենքն է: Սա նշանակում է, որ դատավորները ևս պետք է պահպանեն իշխանությունների բաժանման սկզբունքը:

Իտալացի իրավագետ, պրոֆեսոր, գրող և քաղաքական գործիչ Պիեռո Կալամանդրեին, նկատի ունենալով «իրավական պետության սկզբունքները», 1956 թվականի իր «Դատավորների գովասանք՝ գրված փաստաբանի կողմից» ("Elogio dei giudici scritto da un avvocato") գիրքն սկսում է հետևյալ խոսքերով. «Քանի դեռ ոչ ոք չի խեղաթյուրում օրենքը և չի խոչընդոտում դրա իրականացմանը, այն մեզ շրջապատում է անտեսանելիորեն և անշոշափելի կերպով, ինչպես այն օդը, որը մենք շնչում ենք, աննկատ, ինչպես առողջությունը, որի արժեքը մենք գիտակցում ենք միայն այն ժամանակ, երբ կորցրել ենք այն»:

##### **5) «Հայացքը ճոճելու» մասին:**

Ինչպե՞ս են դատավորները վճիռ կայացնում: Նրանք գնահատում են գործի փաստական հանգամանքները և նորմերը: Այս երկու տարրերի միջև հայացքը «ճոճվում» է: Այսպիսով, անհրաժեշտ ուշադրություն պետք է դարձնել նաև դատավարությանը՝ ընդհուպ մինչև որոշում կայացնելը: «Որոշելը» միշտ նաև «վարքագիծ» է: Հոգեբանության մեջ «վարքագիծ» տակ հասկանում են անձի և իրավիճակի գործառույթ: Ուստի վճռորոշ են նաև որոշումներ կայացնողների ունակությունները, հմտությունները, ակնկալիքները, դիրքորոշումները և մոտիվացիաները, ամենից առաջ նաև անձի և իրավիճակի հատկանիշների փոխազդեցությունը:

Ինչ են ակնկալում սովորական մարդիկ դատավորի որոշումից. Չեզոքություն և օբյեկտիվություն: Հայրս ինժեներ էր գերմանական խոշոր մի էլեկտ-



րական կոնցեռնում: Մի անգամ նա ինձ ցույց տվեց թերթից մի հատված՝ Հյուսիսային Գերմանիայի դատարաններից մեկի վճռով, որն իրեն անհասկանալի էր: Նա չբավարարվեց իմ փոքր-ինչ շտապ և մակերեսային պատասխանով, թե «դե հա, դա ընդամենը ինչ-որ դատարան էր այսինչ տեղում, Մյունխենում որոշումը թերևս ուրիշ կլիներ»: Մաթեմատիկական խնդիրը կարող է ունենալ միայն մեկ ճիշտ լուծում՝ անկախ այն բանից, թե աշխարհի որ ծայրում է լուծվում: Հայրս կարծում էր, որ դատարանի վճիռն էլ միշտ պետք է նույնը լինի՝ անկախ այն բանից, թե ով է նստած դատավորի աթոռին: Սա է բնակչության տեսակետն ու ակնկալիքը: Որովհետև հնարավոր առավելագույն չեզոքությունը և օբյեկտիվությունը դատավարության արդարության «փորձառության» էական հատկանիշ է: Որոշում կայացնող դատավորները պարտավոր են իրենց որոշումը հասկանալի դարձնել դատարան դիմածների համար:

Գերմանիայում անցկացված հոգեբանական մի հետազոտության ընթացքում 52 դատավորի ներկայացվել է բժիշկների նյութական պատասխանատվությանը վերաբերող մի գործ: Հայցվորի մոտ ավշային հանգուցների հեռացումից հետո թևի շարժողականության անդառնալի սահմանափակումներ էին առաջացել: Հավանաբար, վիրահատող բժիշկը վիրահատության ժամանակ կտրել էր նյարդերից մեկը: Հայցվորը պահանջում էր 15000 եվրո փոխհատուցում և ամսական 150 եվրո թոշակ:

Գործի փաստական հանգամանքների բարդության պատճառով տարբեր հիմնավորումներ էին ներկայացվել, վճիռ կայացնելու առանցքային պայմաններն էին.

- հիվանդին պարզաբանումներ տալու բժշկի պարտականությունը չկատարելը (41 x),
- բժշկի սխալ (25 x),
- վիրահատության անհրաժեշտության բացակայություն (3 x),
- հայցը մերժվել է, քանի որ այն բավականաչափ հիմնավորված չէր (2 x):

Հետազոտության արդյունքը. դատավորների մեծամասնությունը, չնայած գործի մեջ բավարար տեղեկությունների բացակայությանը, փորձել էր ընտրել ամենապարզ լուծումը՝ հիմնվելով հիվանդին պարզաբանումներ տալու բժշկի պարտականությունը չկատարելու վրա: Բժշկի սխալի վրա հիմնվել ցանկացողները, հասկանալով, որ այդ դեպքում փորձագիտական եզրակացության անհրաժեշտություն է առաջանալու, միացան «բժշկի կողմից պարզաբանումներ տալու պարտավորությունը խախտելու» հիմնավորմանը: Լուծումն ավելի հեշտ էր, քանի որ օգտագործված բժշկական ձևաթերթը բավարար չափով հստակ չէր:

Եզրակացություն. բժշկի կողմից պարզաբանումներ տալու պարտականությունը խախտելն ընդունող 31 դատավորներից 27-ը նաև այն կարծիքին էին, որ այս լուծումը ամենահաճախ ընտրված լուծումն է: Բժշկի սխալն ընդունող 15

դատավորներից 11-ն էլ կարծում էին, որ հարցվածների մեծամասնությունը կընտրի այս լուծումը: Հետազոտության ավարտին անցկացված հարցման ժամանակ դատավորների մեծամասնությունը կարծում էր, որ իրենց ընտրած լուծումն է «ճիշտը», և զարմացած էին, որ իրենց մյուս գործընկերներն այլ փաստարկներ էին ընտրել, քանի որ, իրենց կարծիքով, գործը «միանշանակ» էր: Հետազոտությունը ցույց տվեց զգալի տարբերությունները: Օժանդակ նյութերը, ինչպիսիք են հիվանդանոցային փաստաթղթերը և բժշկական եզրակացությունները, օգտագործվել էին ընտրովի, իսկ վկաների հարցաքննության ժամանակ տարբեր դատավորներ տարբեր քանակի հարցեր էին տվել՝ 20-ից մինչև 163: Հետազոտող թիմի ղեկավարը ենթադրել է, որ վճիռը քիչ թե շատ պարզ է եղել արդեն գրավոր փաստաթղթերին ծանոթանալուց հետո, ուստի բանավոր քննությունն ավելի շատ կատարվել է ոչ թե որոշում գտնելու, այլ այն արդարացնելու համար: «Հայացքի ճոճումը» թերևս տեղի է ունեցել, բայց հակառակ հերթականությամբ՝ սկզբում անդրադարձ է արվել գործի ենթադրվող փաստական հանգամանքներին, որի հիման վրա որոնվել են անհրաժեշտ տեղեկությունները:

Հետազոտող թիմի ղեկավարի առաջարկությունը. Կողմերին անհրաժեշտ է պարզաբանել, որ չի լինում միայն մեկ ճիշտ վճիռ: Ցանկալի է, որ դատավորներն էլ անընդհատ մտորեն սեփական որոշման մասին և այնուհետև այն հետևողականորեն հիմնավորեն շահագրգիռ կողմերի համար:

Մեկ այլ հետևություն. դատարաններում որոշումներ կայացնելիս շիտակությունը և ինքնաքննադատությունը պետք է մշտապես երաշխավորված լինեն: «Նախապաշարմունքներից» լավագույն պաշտպանությունը դրանց առկայությունը գիտակցելն է:

## **6) «Բրյուսելյան ժանյակներ»:**

Բրյուսելը Եվրոպական հանձնաժողովի, Եվրոպական խորհրդի և բազմաթիվ այլ վերպետական հաստատությունների և աշխատանքային խմբերի նստավայրն է, այդ թվում նաև, օրինակ, ԵԴԽԽՆ՝ Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդը: Առաջին հերթին Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան (ՄԻԵԿ) և դրա վերաբերյալ Ստրասբուրգի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) որոշումները, ինչպես նաև Լյուքսեմբուրգի ԵԴ-ի որոշումները բազմիցս ընդգծել են, որ դատավորների անկախությունը, ինչպես այն նկարագրված է ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածում, իրավական պետության հիմնարար սկզբունքն է: 1980-ականներից ի վեր ՄԻԵԴ-ը նշել է, մասնավորապես, չորս չափանիշներ, որոնք անբեկանելի են դատավորների անկախության երաշխավորման համար ՄԻԵԿ 6-րդ հոդվածի իմաստով՝ դատավորների նշանակման եղանակը, նրանց պաշտոնավարման ժամկետը, արտաքին ազդեցություններից զերծ մնալու երաշխիքների առկայությունը, վերջապես հարցը, թե արդարադատություն իրականացնող խնդրո առարկա մարմինն արդյո՞ք ապահովում է արտաքուստ անկախ երևալը: Այս չափանիշներին ավե-

լացել են դատավորին պաշտոնագրկելու անթույլատրելիության սկզբունքը, վճիռ կայացնելիս հրահանգներին չենթարկվելու պահանջը, խորհրդատվական սենյակում կատարվող քննարկումների գաղտնիության պահանջը, դատարանի որոշումների պարտադիր բնույթը և դատավորների համարժեք վարձատրությունը:

Բազմաթիվ արձանագրությունների, առաջարկությունների, դիրքորոշումների, մասնագիտական կարծիքների և այլն հիմնական բովանդակությունն այն է, որ դատավորների անկախությունն անբեկանելի է եվրոպական պետությունների արժեքային համակեցության համար: ՄԻԵԴ-ը երկու գործով վճիռ է կայացրել նաև Հայաստանի վերաբերյալ, երբ Հայաստանում որոշվել էր դատական խորհրդի նախագահի պաշտոնը տալ երկրի նախագահին:

Բելգիական իրավունքի հիման վրա ստեղծված մի միություն (ENC), European Network of Councils for the Judiciary<sup>5</sup>) իր համար որպես նպատակ է սահմանել ուժեղացնել անկախ, միևնույն ժամանակ պատասխանատու դատական համակարգը ԵՄ-ում և խթանել արդարադատության արագ և արդյունավետ կատարման «լավագույն փորձը»: 2015 թվականին ընդունված մի բանաձևում առաջին եզրակացությունը հետևյալն է. «Independent and accountable judiciaries are an essential component of high quality, effective and efficient justice systems, and a prerequisite for a well-functioning EU area of justice»<sup>6</sup>:

Դատավորների անկախության կարևորությունը ապացուցում է 2022 թվականի մարտի 24-ին Լյուքսեմբուրգում կայացված Եվրոպական դատարանի (ԵԴ) վճիռը: Հարցն այն էր, թե արդյո՞ք դատարաններին թույլատրվում է լրատվամիջոցներին տրամադրել վարույթի փաստաթղթեր, որոնք պարունակում են անձնական տվյալներ: Իր որոշման մեջ ԵԴ-ն արձանագրել է, որ լրագրողներին դատական վարույթից տեղեկությունների տրամադրումն ընկնում է «դատարանների գործունեություն» հասկացության տակ՝ ԵՄ թիվ 2016/679 Կարգադրության 55-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով (Տվյալների պաշտպանության մասին հիմնական կարգադրություն) ճիշտ այնպես, ինչպես ցանկացած գործունեություն, որը կապված է դատարանի կողմից որոշում կայացնելու հետ: Այլ վարչական մարմիններին չի թույլատրվում վերահսկել այս որոշումները, քանի որ դա կխաթարի դատարանների անկախությունը: Լյուքսեմբուրգի դատարանը բերում է հետյալ փաստարկը. «Դատական իշխանության անկախության պահպանումն ընդհանուր առմամբ ենթադրում է, որ դատական գործառույթներն իրականացվում են լիակատար ինքնավարությամբ, ընդ որում դատարանները որևէ մարմնի հետ աստիճանակարգային կապի մեջ չեն կամ ստորադասված չեն դրան և որևէ մարմնից չեն ստանում կարգադրություններ կամ հրահանգներ... (այս նորմը պետք է այնպես հասկանալ, որ...) անձնական տվյալներ»:

<sup>5</sup> Դատական խորհուրդների եվրոպական ցանց:

<sup>6</sup> Անկախ և հաշվետու դատական համակարգը բարձրորակ և արդյունավետ արդարադատության համակարգերի էական բաղադրիչն է և ԵՄ արդարադատության լավ գործող տարածքի նախապայման:

րի մշակումը, որը դատարաններն իրականացնում են իրենց հաղորդակցման քաղաքականության շրջանակում իրենց վճռին հանձնված իրավական գործերի առնչությամբ, ինչպես, օրինակ՝ լրագրողներին ժամանակավորապես տրամադրել փաստաթղթեր դատական գործից, որպեսզի նրանք կարողանան հաղորդագրություն անել ՁԼՄ-ներում, չի ընկնում վերահսկիչ մարմնի իրավասության տակ՝ համաձայն Կարգադրության 55-րդ հոդվածի 3-րդ մասի...»:

Դրանով Լյուքսեմբուրգի դատարանը ցույց է տալիս, թե ինչ հսկայական արժեք է դատական համակարգի անկախությունը: Հետևաբար, քաղաքացիական անձնական ոլորտի իրավունքին, որը նույնպես պաշտպանված է օրենքով, ավելի ցածր կարգ է տրվում: Նախկինում սրա մասին երբեք այսքան հստակ որոշում չէր կայացվել: Նույնիսկ եթե «դատավորների անկախությունը» հիմնական իրավունք չէ, քանի որ ընդամենը որոշակիացնում է պետական-կազմակերպական առանցքային դրույթներ (իրավական պետություն) և, հետևաբար, չի ընձեռում անձնական իրավունքներ, այդուհանդերձ, ԵԴ-ն իր որոշմամբ «դատավորների անկախությունը» մոտեցրել է հիմնական իրավունքներին և հետին պլան մղել մյուս իրավունքները:

### **7) «Մեղավոր է»՝ Influencer.**

Որքան հաճախ է ընթացիկ դատական գործերի վերաբերյալ, հատկապես երբ դրանք աղմկահարույց են, մեդիաներում դատավճիռը նախապես արդեն կայացված համարվում կամ պահանջվում որպես «ընթերցողների ձայն»:

Հետևաբար, մեր թեմայի՝ դատավորների անկախության, հետ կապված, հարց է առաջանում, թե արդյո՞ք չեն կարող դատավորների անկախությունը վտանգել նաև լրատվամիջոցները:

Ողջամիտ տեղեկատվություն անհրաժեշտ է արդեն սահմանադրաիրավական տեսանկյունից ամեն դեպքում: Քանզի լրատվամիջոցների խնդիրն է՝ իրազեկել հասարակայնությանը և հնարավորություն տալ նրան գնահատելու այս կամ այն իրադարձությունը: Արդարադատությունը պետք է լինի հրապարակային, «գաղտնի» կաբինետային արդարադատությունը հաղթահարված է: ՄԻԵԿ-ի հոդված 6-ի 1-ին կետը երաշխավորում է հրապարակային դատաքննություն և վճռի հրապարակում: Գործին մասնակցող կողմերը պետք է կարողանան հասկանալ, թե ինչու է դատարանը հենց այսպիսի որոշում կայացրել և ոչ՝ այլ: Դատարանները պետք է պատասխանատվություն ստանձնեն իրենց գործունեության համար. սա նշանակում է, որ նրանք այդ մասին պետք է իրազեկեն:

Բայց արդյո՞ք չի կարող տեղեկատվությունը նաև ազդել անկախ դատարանների վրա: Քանի որ լրատվամիջոցների զգալի հատվածը հաճախ հանդես է գալիս մեղադրյալի օգտին կամ դեմ, գնահատում է վկաների ցուցմունքները, ինքն է գտնում նոր վկաներ և սեփական լրատվամիջոցում մանրամասն ներկայացնում նրանց խոսքը: Դյուսելդորֆի գերագույն երկրամասային դատարանի մի շատ փորձառու նախագահող դատավոր մի անգամ սթափ և կծու հեզնան-

քով ասել է. «Դատարանը պետք է «պայթյունակայուն» լինի աղմկահարույց գործերում»: «Պայթյունակայուն» լինել նշանակում է թույլ չտալ, որ դրսից եկած որևէ «պայթյուն» ազդեցություն ունենա դատավորի վրա: Մեծ ու բարդ գործ քննել կարողանալու համար դատարանին անհրաժեշտ է հստակ պլան, որի հիման վրա էլ կարող է կազմակերպվել դատաքննությունը: Ընդ որում՝ դրա համար լավ նախադրյալ է փորձառությունը, այն զերծ է պահում հախտուն իրադարձությունների ազդեցությունից: Դատավորները ղի պետք է վայելեն հանրության ուշադրությունը, ղի էլ երկյուղեն դրանից: Այսինքն՝ դատավորներին խիստ պահանջներ են ներկայացվում: Փոքր-ինչ պակաստային ձևով ասած՝ դատարաններին առաջնահերթ հետաքրքրում է իրավունքը, լրատվամիջոցներին առաջնահերթ հետաքրքրում է անիրավությունը: «Դատական համակարգն ի հայտ է բերում պաթոլոգիաներ ու իրավունքի խախտումներ, որովհետև ցանկանում է ծառայել իրավական խաղաղության հաստատմանը: Մինչդեռ՝ լրատվամիջոցները բացահայտում են պաթոլոգիաները, քանի որ դրանք մեծ ուշադրության են արժանանում և պետք է շարունակեն դրան արժանանալ» (Hörisch 2005):

Գերմանիայում անցկացված մի հետազոտության ընթացքում (քրեական դատավարությունների վերաբերյալ) հարցման են ենթարկվել Գերմանիայի 5 երկրամասերի բոլոր դատավորները և դատախազները: Դատավորների 49%-ը նշել է, որ թեև հետևում է իրենց գործերի վերաբերյալ տեղեկատվությանը, սակայն վարվում է այնպես, ինչպես միշտ: 37%-ը խոստովանել է, որ ավելի շատ կարդում է «սեփական» դատավարությունների մասին, քան մյուսների: 19%-ը կարդացել է սեփական գործերի մասին այն լրատվամիջոցներում, որոնց սովորաբար ուշադրություն չէին դարձնի:

Հաջորդ հարցը վերաբերում էր լրատվության մեջ առկա ենթադրյալ սխալներին: Դատավորների 48%-ը նշել է, որ այն հանգամանքները, որոնց վրա դատարանը ազդեցություն չունի, սխալ են ներկայացվել, 20%-ը գտնում էր, որ անարդարացիորեն մեղադրվել են սխալներ անելու համար, իսկ 19%-ը կարծում էր, որ դատարանի սխալները ուռճացվել են և դրամատիզացվել: Հուզական արձագանքների մասին հարցին դատարանները տվել են հետևյալ պատասխանները. 14%-ը վրդովված էր, 45%-ը զգացողություն ուներ, որ չի կարող պատշաճ կերպով պաշտպանվել, 46%-ը զայրացել է, 65%-ը (հարցվողները կարող էին մի քանի պատասխան տալ) հաշտվել է դրա հետ:

Բացասական լրատվության ազդեցության մասին հարցին դատավորների 86%-ը պատասխանել է, որ այն ազդում է տուժողների, 64%-ը՝ վկաների վրա, մինչդեռ միայն 6%-ը եղել է այն կարծիքի, որ դա վատ է ազդում դատարանի վրա: Ուրախալի է նման արդյունքի մասին լսելը: Ափսոս, որ ավելի ուշ հարցման ենթարկված քրեական գործերով պաշտպանները այլ կարծիքի են եղել. 38%-ը հաստատել է ազդեցությունը դատարանների վրա: Դատարանների գնահատմամբ լրատվամիջոցների իրապարակումները միայն 25%-ով են ազդում պատժի չափի վրա, 20%-ով՝ պայմանական վաղաժամկետ ազատման մասին որոշման և 3%-ով՝ մեղադրյալին մեղավոր ճանաչելու վրա: Այստեղ ևս պաշտպան-

ները էապես այլ կարծիքի էին: Նրանք գնահատում են ազդեցությունը, համապատասխանաբար՝ 85%, 83% և 54%-ով:

Համառոտ ամփոփում. քրեական դատավարության հրապարակայնությունն սկզբում ծառայել է ամբաստանյալների և վկաների պաշտպանությանը, ինչպես նաև ճշմարտությունը բացահայտելուն: Դատարանների ներքին անկախությունը նրանց օբյեկտիվության նախապայմանն է: Այնուամենայնիվ, եթե պարզվի, որ լինում է ազդեցություն պատժաչափի սահմանման վրա, ապա անհնար է կասկածներ չունենալ ներքին անկախության վերաբերյալ, հատկապես՝ այն պատճառով, որ զգալի դեր է խաղում հուզականությունը: Տեսնում ենք, որ այստեղ էլ վտանգներ կան դատարանների անկախության համար: Դրան պետք է հակազդել: Նիստերի դահլիճում համոզիչ հաղորդակցության, թափանցիկության և վստահ հանգստություն դրսևորելու միջոցով: Սա հեշտ չէ, բայց մյուս հնարավոր լուծումները դժվար է իրականացնել: Յուվալ Հարարին իր «21-րդ դարի 21 դասերը» գիրքը սկսել է հետևյալ նախադասությամբ. «Աշխարհում, որը հեղեղված է նշանակություն չունեցող տեղեկություններով, հստակությունը ուժ է»:

Այս հստակությունը լավագույնս պաշտպանում է մեր անկախությունը: Դատավորները պետք է գիտակցեն, որ իրենց վրա լրատվամիջոցներն անխուսափելիորեն ազդում են: Միայն նա, ով գիտի իր կախվածությունները, կարող է հակազդել դրանց: Ով դրանք չի ճանաչում (կամ չի ուզում ճանաչել), ուղղորդվում է դրանց կողմից:

### **8) Եզրակացություն:**

Մենք հասանք մեր «tour d'horizon»-ի՝ ակնարկի ավարտին: Արդարության որոնումը, իրավունքի նկատմամբ վստահությունը, արդար դատավճռի հույսը հնագույն պատմություն ունեն: Իրավունքը եղել և մնում է արդյունաբերական ձեռնարկությունների և այլ կառույցների համար տեղակայման վայր ընտրելու վճռորոշ գործոն: Իսկ դուք՝ դատավորներդ, ապահովում եք իրավունքը կյանքի կոչելը: Գերմանական Դեմոկրատական Հանրապետության ժամանակներից մի նախկին աստվածաբան ասել է. «Առանց դատարանների բոլոր իրավունքները մեռած են»: Այս ձեռնարկի գլուխներում դուք կգտնեք ձեր բոլոր հարցերի պատասխանները: Գիտության և պրակտիկայի ոլորտներում փորձառություն ունեցող անվանի հեղինակները հաջողությամբ մեծ ջանքեր են գործադրել դատարանների անկախության մասին կարևոր ամեն բան Ձեզ հաղորդելու համար:

Բայց ինձ համար կարևոր է ևս մի կետ. դատավորները նաև պարտավոր են պահպանել իրենց անկախությունը: Քանզի դատավորների անկախությունը երաշխավորող նորմերը վերաբերում են նաև արժեքների վերաբերյալ օբյեկտիվ որոշումներ կայացնելուն: Արդար իրավական պետությունում դատավոր կարող է լինել միայն նա, ով անկախ է ինստիտուցիոնալ-կազմակերպական, առարկայական, անձնական առումներով, ինչպես նաև կոնկրետ գործում դրա

մասնակիցներից: Դրա հետ կապված են դատավորներին ուղղված երկու պահանջներ.

- Դատարանները պետք է համոզված լինեն իրենց անկախության մեջ և գործով անաչառ վճիռ կայացնեն,
- Բացի դրանից, նրանք նաև պարտավոր են դիմակայել իրենց անկախության նկատմամբ կատարվող ցանկացած միջամտության: Դրա համար գոյություն ունեն դատավորների ծառայողական դատարաններ:

Երկրորդ աշխարհամարտից հետո առաջին շրջանի գերմանացի քաղաքական գործիչներից Կառլո Շմիտդն արդեն 1950 թվականին խորհրդարանում հանդես եկավ հետևյալ խոսքով. «...ինչ է նշանակում լինել դատավոր, դա նշանակում է, առաջին հերթին, ողնաշարն ուղիղ պահել ամենուրեք, որտեղ ինչ-որ մեկը փորձում է բռնություն կիրառել, ամենուրեք, որտեղ փորձ է արվում վճիռը փոխարինել կանխակալ կարծիքով, արտոնությամբ կամ ամբոխի համբույրմամբ»:

Դատավորների անկախությունը, և՛ առարկայականը, և՛ անձնականը, ինքն իրեն իրականացող երաշխիք չէ, այլ ավելի շուտ հոգեկեցվածք, որը պահանջում է շարունակաբար քննել սեփական մասնագիտական ինքնընկալումը և իրեն փոխանցված պատասխանատվությունը: Դատավորները պետք է պատրաստ լինեն ազատվել երրորդ անձանց ակնկալիքներից և ցանկություններից՝ բացառապես իրավունքի և օրենքի հիման վրա որոշում կայացնելու համար: Նրանք պետք է անընդհատ ինքնաքննադատաբար կասկածի տակ դնեն իրենց գործողությունները և անհրաժեշտության դեպքում հետևություններ անեն:

Դատական իշխանությունը լեգիտիմացվում է իրավական պետության նկատմամբ քաղաքացիների վստահությամբ: Վստահությունը միշտ մի տեսակ «կանխավճար» է մի բանի համար, որը մեզ անհայտ է, մի վիճակ՝ իմանալու և չիմանալու միջև: Այդպես կրճատվում է անընդհատ փոփոխվող հանգամանքների համալիր բնույթը՝ «Պետք է կարողանանք առնվազն ինչ-որ բանի ապավինել»: Իսկ վստահությունը նաև նշանակում է, որ այն կվերականգնվի, եթե ինչ-որ բան չի ստացվել: Այնուամենայնիվ, անհրաժեշտ է նաև վերահսկողություն, «ուշադիր աչք պահելը», քանի որ կոյր վստահությունը չի կարող և չպետք է լինի կանոն: Վստահությունը սնվում է նաև կանոններից, ինչպես մենք՝ դատավորներս, միշտ էլ դա իմացել ենք: Առանց կանոնների պահպանման կայացված վճիռները կամայականություն են: Սա բացատրելը մեր խնդիրն է: Քաղաքացիները պետք է համոզվեն, որ դատավորները «չեն անում, ինչ ուզում են»: Մենք ամրապնդում ենք բնակչության վստահությունը իրավական համակարգի նկատմամբ, եթե դատավարություններն ընկալվում են որպես արդար, իսկ դատավորները՝ անկախ: Վստահությունը արդարադատության իրականացման, դատարանների աշխատանքի նկատմամբ ամրապնդում է նաև վստահությունը իրավական պետության և ժողովրդավարության նկատմամբ:

Եկե՛ք բնակչությանը մասնակից դաձնենք վստահության ստեղծման այս գործընթացին՝ մամուլի և հասարակայնության հետ լավ աշխատանքով, դատարաններում «բաց դռների օրերով» և դատական համակարգի առօրյա աշխատանքին ծանոթացնելով: Այդպես ենք արել Նաումբուրգի գերագույն երկրամասային դատարանում՝ ամեն ամիս չորեքշաբթյա քննարկումներ կազմակերպելով, որոնց ժամանակ քաղաքի բնակչությանը տեղեկացնում էինք տարբեր թեմաների մասին և, առաջին հերթին, պարզ դարձնում, որ դատավորը նույնպես մարդ է, ոչ թե՛ արդարադատություն իրականացնող ավտոմատ: Սա կարևոր էր բոլոր այն քաղաքացիների համար, ովքեր դեռ տեսել էին Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետությունը:

Նախկին Հռոմի Պապ Բենեդիկտոս XVI-ն այսպես է գրել մի հոդվածում. «Ոչ թե ուժեղի իրավունքը, այլ իրավունքի ուժը պետք է գործի: Իրավագուրկ ազատությունն իրավունքի անարխիա է և, հետևաբար, ազատության ոչնչացում: Իրավունքի նկատմամբ կասկածը... միշտ էլ կառաջանա, եթե իրավունքն ինքն այլևս հանդես չգա որպես բոլորին ծառայող արդարության դրսևորում, այլ դիտվի որպես կամայականության արգասիք, իշխանություն ունեցողների իրավական ամբարտավանություն»:

Համոզված եմ, որ դուք լավ դատավորներ եք: Մաղթում եմ հաջողություն և լիարժեք, համոզիչ արդարադատություն իրականացնող աշխատանքային գործունեություն:



# ԳԼՈՒԽ 1

## ԱՆԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԱՌՈՒՄՆԵՐԸ ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԽՈՐԱՊԱՏԿԵՐՈՒՄ

Հարգելի ունկնդիր, անշուշտ, հասնելով ուսուցման այս մակարդակին, գիտեք, թե ինչ է դատական իշխանությունը, որոնք են դրա կազմակերպման ու գործունեության սկզբունքները: Այդ պատճառով չենք փորձի ներկայացնել այն, ինչ որ դուք արդեն գիտեք՝ այս կամ այն չափով: Այն, ինչ որ գիտեք, հիմնականում վերաբերում է դատական իշխանության (ներառյալ անկախության) իրավական-օրենսդրական կողմերին ու երաշխիքներին: Իհարկե, շատ կարևոր է, որ դատավոր դարձող իրավագետն իմանա, թե որոնք են իր անկախության իրավական երաշխիքները: Սակայն այդ իմացությունը վերաբերում է միայն օրենսդրական կանոններին, որոնց պարտավոր եք հետևել և՛ դուք, և՛ ուրիշները:

Իսկ միգուցե դատավորի անկախությունը պայմանավորված է հենց իրենով, կախված է հենց իրենից. միգուցե անկախ է մարդը, ով ունակ է լինելու անկախ ու անաչաճ, իսկ հնարավոր է անկախ դարձնել որևէ մեկին, ով ունակ է դրան, չունի անկախ լինելու ինչ-ինչ նախադրյալներ: Շարունակելով հարցադրումները, կարող ենք վեր հանել դատական իշխանության, դատարանի ու դատավորների անկախությունը շոշափող բազմաթիվ հարցադրումներ, որոնք մասամբ ունենալու են իրավական, իսկ մասամբ էլ՝ արտաիրավական (ոչ իրավական)՝ հոգեբանական, սոցիոլոգիական և նման բնույթի այլ առումներ: Այս հարցադրումները ցույց են տալիս, որ դատական իշխանության անկախության հիմնահարցը, բացի իրավական բնութագրերից, իր հիմքում ունի մի քանի այլ առումներ ու կողմեր:

Ուսումնական ձեռնարկի շարադրանքը կառուցված է որոշակի տրամաբանական հերթականությամբ. սկսում ենք պատմությունից՝ հետևելով հայտնի գիտական ասույթին. «Պատմությունը գիտություն է ոչ միայն անցյալի, այլև ներկայի և ապագայի մասին», այնուհետև կատարում ենք խնդրո առարկայի հետ կապված հիմնական հասկացությունների օպերատիվ մակարդակով ճշտորոշում, ընտրում ենք դատական իշխանության համակարգում անկախության հարցի հետազոտման մեթոդաբանություն, և վերջապես փորձում ենք կառուցել դրա բոլոր դրսևորումները և իմաստները:

### **1. Իշխանությունների բաժանումը որպես իրավական պետության կազմակերպման ու գործունեության ընդհանուր սկզբունք և դրա պահանջները**

**Իրավական պետություն և իշխանությունների բաժանում:** Պետությունը հատուկ սոցիալական ու քաղաքական ինստիտուտ է, տարածքային, ինքնիշխան, համընդհանուր և համատարած քաղաքական կազմակերպություն, որն իրականացնում է պետական իշխանություն՝ հասարակության պետական կառավարման անհրաժեշտ, արժեքավոր ու նպատակամղված գործառույթներ:

Պետության պատմական զարգացման գործընթացն ազատական աշխարհի տիրույթում արդի շրջանում հանգեցրել է պետության տեսլականի, որը բնութագրվում է որպես **ժողովրդավարական, իրավական, սոցիալական**:

Գոյություն ունեն իրավական պետության բազմաթիվ բնորոշումներ, տեսական հայեցակարգերի տարբերակներ, որոնց ակունքները գալիս են անտիկ աշխարհի մտածողների գաղափարներից: Պետության այդ հայեցակարգի մշակման գաղափարական նախադրյալներն էին ուշ միջնադարի բնաիրավական ուսմունքն ու իրավաբանական աշխարհայացքը: Իրավական փիլիսոփայությունը, հենվելով պետության հասկացության Ի. Կանտի մոտեցումների վրա, իրավական պետությունը բնորոշում է որպես պետություն, որում պետական իշխանությունը սահմանափակված է իրավունքով, դրա ուժով, ինչպես նաև իրականացնում է մարդու իրավունքների երաշխավորված պաշտպանություն:

Նոր ժամանակներից սկսած Արևմուտքում պետականակերտությունն ընթացավ իրավական պետության կյանքի կոչման ուղով, և արդեն անցյալ դարի կեսերից արևմտյան երկրների սահմանադրական կարգավորումների հիմնաքարը դարձավ ժողովրդավարական, իրավական, ինչպես նաև սոցիալական պետության հայեցակարգը:

Իրավական պետության վերաբերյալ տեսական մոտեցումներից ամենահաջողվածը Վ. Ներսիսյանցի իրավունքի ազատական-իրավաբանական ուսմունքի շրջանակներում մշակված հայեցակարգն է, համաձայն որի՝ իրավական պետությունը հանրային-քաղաքական (պետական) իշխանության կազմակերպման հատուկ կառույց և անհատների, հասարակության ու պետության փոխկապվածության հատուկ իրավական ձև է, որում անհրաժեշտաբար պաշտոնապես ճանաչված, ամրագրված և պահպանված են երեք բաղադրատարրեր՝ ա) մարդու և քաղաքացու ի ծնե և անքակտելի (բնական) իրավունքներն ու ազատությունները, բ) իրավական օրենքների կամ իրավունքի գերակայությունը, գ) պետական իշխանության համակարգի իրավական կազմակերպում՝ իշխանությունների բաժանման սկզբունքի հիման վրա<sup>7</sup>:

Պետականության այս երեք բաղադրատարրերը՝ անհատական (մարդկային) իրավական, նորմատիվ-իրավական, կազմակերպական-իրավական, հենց այն հատկանիշներն են, որոնցով իրավական պետությունը տարբերվում է ոչ իրավական, ավանդական պետությունից: Իրավական պետության ողջ կառույցի իմաստն, ի վերջո, մարդն է, որովհետև այն կոչված է բնական իրավունքներով օժտված մարդուն դարձնել ազատ անհատ (մարդ և քաղաքացի), իրավունքի և հասարակության լիիրավ, իրավահավասար, արժանապատվությամբ օժտված սուբյեկտ: Հետևաբար, իրավական պետությունն իր բաղադրատարրերով, կազմակերպման և գործունեության սկզբունքներով ինքնանպատակ չէ, այլ ձև, միջոց արտահայտելու, կարգավորելու, իրացնելու մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները:

<sup>7</sup> Տե՛ս **Нерсесянц В.С.**, Обшая теория права и государства. М., 1999, էջ 388:

Այսպիսով, իրավական պետություն և իշխանությունների բաժանում հայեցակարգերի հարաբերակցության մեջ առավել ընդհանրացված, ընդգրկուն է իրավական պետության հայեցակարգը, որը ներառում է իրենում իշխանությունների բաժանումը: Գործնական իրավական մակարդակում երկուսն էլ վերածվում են պետության կառուցման ու գործունեության իրավաբանորեն ամրագրված սկզբունքների, որոնք որոշում են պետական ապարատի սոցիալական էությունը, դրա կազմակերպման և գործունեության ելակետային, հիմնական հարցերը (գործառույթները, կառուցվածքը, լիազորությունները և այլն):

Պատմական միևնույն դարաշրջանի միատիպ պետությունների, օրինակ՝ արդի դարաշրջանի սոցիալ-իրավական պետության կառուցակարգի կազմակերպման և գործունեության սկզբունքների համակարգը կազմված է միմյանց նկատմամբ որոշակի համակարգային ստորակարգության մեջ գտնվող սկզբունքներից: Իրավական պետության սկզբունքը, սոցիալական պետության, ժողովրդավարական պետության և ինքնիշխան պետության սկզբունքների հետ միասին դիտարկվում են որպես **հիմնարար սկզբունքներ**, որոնք որպես իրավական ամրագրում ունեցող ամենից ընդհանուր ելակետային դրույթներ որոշում են պետական ապարատի կազմակերպման և գործունեության մյուս, ներառյալ իշխանությունների բաժանման սկզբունքները, պայմանավորում դրանց բովանդակությունը, պահանջները: Պետական իշխանությունների բաժանումը պետության կառուցման ու գործունեության սկզբունքների դասակարգման մեջ համարվում է հիմնարար սկզբունքներից բխող **ընդհանուր սկզբունք**, այսինքն՝ ելակետային և ղեկավար դրույթ, որն այլ ընդհանուր սկզբունքների հետ միասին ընկած է պետական ապարատի բոլոր կառուցվածքային մասերի կազմակերպման և գործունեության հիմքում, բնորոշ է դրա բոլոր ենթահամակարգերին, պետական բոլոր մարմիններին:

**Իշխանությունների բաժանման գործառույթային, ինստիտուցիոնալ, անձնական առումները և արդի չափանիշները:** Իշխանությունների բաժանման Մոնտեսքիոյի տեսությունը հիմնավորում էր բաժանման իրականացումը երեք առումներով՝ գործառույթային, ինստիտուցիոնալ, անձնական:

**Իշխանությունների բաժանման գործառույթային առումը** ենթադրում է երեք առանձնացված գործառույթներ՝ օրենսդիր, գործադիր և դատական (արդարադատության), իսկ **ինստիտուցիոնալ (կառուցվածքային) առումը** պահանջում է, որ պետական միասնական իշխանության երեք գործառույթներից յուրաքանչյուրն իրականացվի պետական ապարատի առանձին կառույցների, առանձին մարմինների միջոցով, որոնք միմյանցից գտնվում են հարաբերականորեն անկախ և ինքնուրույն վիճակում: Դրա նպատակն այն է, որ բոլոր իշխանությունները չկենտրոնացվեն մեկ մարմնի ձեռքում կամ մեկը մյուսի նկատմամբ չունենա առավելություն, որը կարող է հանգեցնել պետական իշխանության չարաշահման: Օրենսդրող մարմինն առանձնացված է գործադրողից, օրենքը սահմանողը չի զբաղվում դրա կիրառմամբ, իսկ գործադրողն էլ չի

զբաղվում օրենսդրմամբ, այլ միայն օրենքների կիրառմամբ: Այստեղից հետևում է, որ գործադիր իշխանության մարմինները չպետք է զբաղվեն օրենսդրմամբ կամ օրենքի ուժ ունեցող ակտերի ընդունմամբ:

Օրենսդիր իշխանությունը, որ ժողովրդի կողմից ընտրվող ներկայացուցչական մարմին է, կոչված է որոշելու հասարակության և պետության զարգացման ռազմավարությունը՝ օրենքներ ընդունելու ճանապարհով: Օրենսդիր իշխանությունը սահմանում է օրենսդրական իրավական նորմեր, որոնք որոշում են հասարակության և պետության մեջ մարդու ազատության չափը: Մասնավորապես, օրենսդիրը սահմանում է հասարակության և անհատի ազատության, անվտանգության, սեփականության ապահովման համար անհրաժեշտ և թույլատրելի հարկադրական ուժի կիրառման կանոնները:

Գործադիր իշխանությունը նշանակվում է իշխանության ներկայացուցչական մարմնի կողմից և զբաղվում է օրենքների կենսագործմամբ, ընթացիկ կառավարմամբ: Գործադիր իշխանությունը նաև պետության հարկադիր-կատարողական ուժն է, որն ընդունակ է կիրառել հարկադրանք: Այդ լիազորությունը պետք է լինի իրավազոր, այսինքն՝ օրենքով սահմանված:

Դատական իշխանությունը՝ սահմանադրության և օրենքների հիման վրա իրականացնում է արդարադատություն: Օրենսդիրը, որ սահմանում է հարկադրանքը, չունի հարկադրանք կիրառելու իրավունք: Նույնը նաև դատական իշխանությունը. ինքը չի կիրառում, այլ թույլատրում կամ թելադրում է հարկադրանքի կիրառումը: Ստացվում է, որ կիրառողը մնում է գործադիրը՝ կառավարությունը, որն ինքը չունի օրենսդրման և արդարադատության գործառույթ, այլ ընդամենը գործում է օրենքների հիման վրա և ի կատարումն օրենքների ու դատարանների որոշումների:

Իշխանությունների ինստիտուցիոնալ բաժանումը պահանջում է նաև, որ օրենսդիրը ևս իրավունք չունենա միջամտել գործադիր իշխանության գործունեությանը՝ ընդունելու ակտեր, որոնք Սահմանադրությամբ վերապահված են միայն գործադիր իշխանության իրավասությանը: Օրենսդիրը գործադիրի նկատմամբ ունի միայն վերահսկողության իրավունք Սահմանադրությամբ սահմանված ինստիտուցիոնալ ձևերով: Դատական իշխանության օրենսդիրի կամ գործադիրի հետ միացման անթույլատրելիությունն ակնհայտ է: Իշխանությունների բաժանումը կանխում է օրենսդիրի անուղակի ներխուժումն արդարադատության իրականացման ոլորտ, նույնիսկ օրենսդրման ձևով:

**Իշխանությունների անձնական բաժանման** պահանջը ևս շատ կարևոր է իշխանությունների բաժանման սկզբունքի կենսագործման համար և ի կատարումն դրա, օրենսդիր մարմնի կազմում չեն կարող մտնել գործադիր իշխանության և դատական համակարգում պաշտոնավարող անձինք: Պատգամավորը չի կարող զբաղեցնել պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել այլ վճարովի աշխատանք՝ բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից: Համա-

պատասխանաբար, դատավորը չի կարող զբաղեցնել իր պարտականությունների հետ չկապված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում, պաշտոն առևտրային կազմակերպությունում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

**Հակակշիռների և զսպիչների դերը իշխանությունների բաժանման համակարգում:** Իշխանության երեք թևերի մարմիններն ինքնուրույն են իրենց իրավասության շրջանակներում և չեն կարող միջամտել այլ մարմինների իրավասությանը: Սակայն դա չի նշանակում, որ այդ մարմինները մեկուսացված են: Ի վերջո, դրանք պետական միասնական իշխանության երեք ճյուղավորումներ են, որոնք սերտորեն համագործակցում են և մեկն առանց մյուսի անիմաստ է: Համաշխարհային փորձը վկայում է, որ հնարավոր է նաև իշխանությունների ներթափանցում: Խնդիրն այս դեպքում լիազորությունների հստակ սահմանազատումն է, որ պեսզի այն չհանգեցնի սահմանադրական ճգնաժամի: Բացի այդ, իշխանությունների փոխհարաբերությունները դրսևորվում են «հակակշիռների և զսպիչների» միջոցով: «Սահմանադրական հակակշիռը պետական իշխանության ինստիտուտի սահմանադրական, ոչ գործառնական բնույթի լիազորություն է՝ կոչված դինամիկայում պահպանելու իշխանությունների տարանջատման սահմանադրական հաշվեկշիռը: Իր հերթին, սահմանադրական զսպումը պետական իշխանության ինստիտուտի սահմանադրական, ոչ գործառնական և ոչ հակակշռային բնույթի լիազորություն է՝ կոչված կանխելու իշխանությունների տարանջատման սահմանադրական հաշվեկշռի հնարավոր խախտումը՝ հակակշիռների համակարգի կողմից այն չապահովելու դեպքում»<sup>8</sup>:

«Հակակշիռները և զսպիչները» թույլ չեն տալիս իշխանությունների ճյուղերից որևէ մեկին դուրս գալ իրենց իրավասության շրջանակներից և, ընդհակառակը, հնարավորություն են տալիս իշխանության մի ճյուղին պահել մյուսներին իրենց իրավասության շրջանակներում: Դրա իմաստն այն է, որ պետական իշխանության երեք ճյուղերի մարմիններից յուրաքանչյուրն ունի այնպիսի լիազորություններ, որոնք հնարավորություն են տալիս հսկելու և ազդելու միմյանց վրա, համագործակցելու միմյանց հետ պետական կարևորագույն հարցերը վճռելիս:

**Իշխանությունների բաժանման խնդրի լուծման բարդությունները:** Հիմնախնդրի պարզ ու ոչ ծավալուն շարադրանքը հանկարծ չստեղծի խնդրի տեսական կողմի վերջնական մշակման, բաժանման նախագծման ընթացքում բարդությունների ու դժվարությունների բացակայության տպավորություն: Այստեղ կան բազմաթիվ տեսական բանավեճեր և գործնական ոչ միանշանակ գնահատվող լուծումներ: Այսպես, որոշ հեղինակներ նախագահական իշխանությունը խառը կառավարման ձևի հանրապետություններում դիտարկում են որպես առանձին իշխանության ճյուղ՝ նախագահական իշխանություն: Հակառակորդները հիմնավոր

<sup>8</sup> Տե՛ս Հարությունյան Գ.Գ., ՀՀ իրավունքի գերակայության սահմանադրական երաշխիքները, Եր., Նժար, 2003, էջ 47:

րում են, որ իշխանությունների բաժանման համակարգում նախագահի ինստիտուտը չի կարող լինել իշխանության նոր ճյուղ, ուղղակի այն համընկնում է գործադիր իշխանության հետ: Իշխանությունների եռաթև բաժանման համակարգում նախագահը համարվում է բարձրագույն գործադիր մարմին, որն իր կողմից ձևավորված կառավարության հետ միասին իրականացնում է գործադիր իշխանություն: Բայց այս դեպքում էլ առաջ է գալիս գործադիր իշխանության երկատումը նախագահականի և կառավարականի: Գործնական հարթության վրա պատգամավորական մանդատի անհամատեղելիությունն այլ պաշտոններ զբաղեցնելու հետ բնորոշ է արդի պետությունների մեծամասնությանը, սակայն խորհրդարանական հանրապետության և խորհրդարանական միապետության կառավարման ձևի որոշ երկրներում խորհրդարանի անդամները միաժամանակ կարող են դառնալ կառավարության անդամ:

Վերոբերյալ պատճառներից ելնելով՝ հեղինակներից մեկը իշխանությունների բաժանման սկզբունքը բնութագրել է որպես «ամենից հիմնարար և միաժամանակ ամենից անհասկանալի»<sup>9</sup>: Նկատի ունենալով հիմնախնդրի բարդությունը՝ Գ. Հարությունյանն առաջարկում է իշխանությունների տարանջատման հետևյալ հիմնական չափանիշները. ա) իշխանության թևերի հարաբերական անկախությունը, բ) անհրաժեշտ սահամանադրական ինստիտուտների առկայությունը, դրանց լիազորությունների ամբողջականությունն ու համարժեքությունը՝ կապված գործառույթների հետ, գ) պետական իշխանության հավասարակշռված գործունեության անընդհատության երաշխավորվածությունը, որն իր հերթին ենթադրում է ներսահմանադրական այնպիսի երաշխիքների ամրագրում, որոնց օգնությամբ հնարավոր կլինի բացահայտել, գնահատել ու վերականգնել գործառնական խախտված հավասարակշռությունը: Միայն այս պարագայում է հնարավոր ապահովել դինամիկ ու ներդաշնակ զարգացում, խուսափել քաղաքական ու հասարակական «պայթյունային» լուծումներից<sup>10</sup>:

## **2. Դատական իշխանության հայեցակարգի հիմնական հասկացությունների օպերատիվ իմաստը իշխանությունների բաժանման տեսության համայնապատկերում**

**Օպերատիվ հասկացությունների դերը ճանաչողության գործընթացում:** Ցանկացած շարադրանքի, առավելապես իրավաբանական բովանդակության տեսական նյութի ու իրավական ակտերի եզրույթաբանական միասնությունը կարևոր նշանակություն ունի, ինչպես հետազոտման առարկայի տեսական խնդիրները գիտականորեն ճիշտ և հիմնավորված լուծելու, այնպես էլ գործնական հարթության վրա իրավական ակտերի միանշանակ հասկացման, կենսագործման ու կիրառման համար: Փորձենք որոշակիացնել դատական իշխանության որպես հետազոտման ու ուսումնասիրության օբյեկտի և առարկայի

<sup>9</sup> Տե՛ս Separation of Powers in the American Political System. – Tairfax, 1989, էջ 4

<sup>10</sup> Տե՛ս Հարությունյան Գ.Գ., ՀՀ իրավունքի գերակայության սահմանադրական երաշխիքները, Եր., Նժար, 2003, էջ 42:

համար մեթոդաբանական-կողմնորոշիչ, ելակետային հիմնական հասկացություններն ու տերմինները: Առանց հասկացությունների ու եզրույթների իմաստի գոնե օպերացիոնալ ճշգրտման գիտատեսական աշխատանքը կհանգեցնի ոչ ճշգրիտ տեսական արդյունքների ու եզրակացությունների, միակողմանիության, իսկ ուսումնական նյութը կվերածվի խրթին ու անհետևողական շարադրանքի: Հին Հունաստանի իմաստուններից մեկն ասում էր. «Վերացրեք եզրույթների բազմիմաստությունը և աշխարհը կազատեք բազմաթիվ թյուրիմացություններից ու բարդություններից»:

Իհարկե, սույն ուսումնական ձեռնարկի խնդիրը դատական իշխանության ողջ հայեցակարգի վերլուծությունը չէ, այլ միայն դրա այն մասը, որը վերաբերում է դրանում անկախության հասկացմանը, դրսևորումներին: Սակայն առանց դատական իշխանության հայեցակարգի մեզ հետաքրքրող տեսանկյունից իմաստավորման ու ելակետային հասկացությունների գոնե օպերատիվ մակարդակով ճշգրտման, հետևողական ու համակարգայնորեն ամբողջական չի լինի նաև սույն ձեռնարկի առարկայի հարցերի վերաբերյալ ձեզ հրամցվող պատկերացումները:

**Հիմնական հասկացությունները իշխանություն և սուբյեկտ համատեքստում:** **Պետությունը** հատուկ քաղաքական կազմակերպություն է, տարածքային, ինքնիշխան, համընդհանուր և համատարած կազմակերպություն, որն իրականացնում է պետական իշխանություն: **Պետական իշխանությունը** պետական կազմակերպության գործառույթն է՝ ընդունակությունը և հնարավորությունը, համոզման կամ հարկադրանքի օգնությամբ ներգործելու հասարակական գործընթացների վրա:

**Դատական իշխանությունը** իշխանությունների բաժանման սահմանադրական սկզբունքի հիմքով գործող պետության հատուկ՝ անկախ, ինքնուրույն և լիիշխան մարմիններին՝ դատարաններին՝ Սահմանադրությամբ վերապահված ու օրենքներով կարգավորվող բացառիկ իրավազորությունն է, որի հիմնական, բացառիկ ու հատուկ գործառույթներն են հատուկ դատավարական ձևերով (կարգերով) հասարակական բախումների (վեճերի) քննությունն ու լուծումը, այսինքն՝ արդարադատության իրականացումը, ինչպես նաև քաղաքացիական ոլորտում իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի ու կացությունների հաստատումը, սահմանադրական վերահսկողությունը, ինչպես նաև վերահսկողությունը քրեական դատավարությունում:

**Դատական համակարգը** դատական իշխանության համակարգային ամբողջական մարմնավորող կառույցն է՝ երկրի բոլոր դատարանների համակցությունը: Դատական իշխանությունը իշխանությունների բաժանման սկզբունքի համատեքստում պետական իշխանության անկախ, ինքնուրույն լիիշխան ճյուղ է, որի կողմ սուբյեկտը հատուկ կարգավիճակ ունեցող պետական մարմիններն են՝ դատարանները, հետևաբար դատարանի լիազորությունները կրում են իշխանական բնույթ, իսկ դրա պահանջների և որոշումների կատարումը ապահովվում է պետության ուժով: «Դատական իշխանություն» հասկա-

ցությունը մատնանշում է գործառույթը, որն իրականացնող սուբյեկտը դատարանն է, դատարանների համակցությունը՝ դատական համակարգը:

Դատական իշխանության հատկանիշները (կամ այն մարմնավորող համակարգի հատկանիշները) իր իսկ բնույթից բխող տարբերություններն են այլ իշխանություններից: Դրանք են՝ դատական իշխանությունը իշխանությունների բաժանման համակարգում հատուկ դեր ունեցող պետական իշխանության տեսակ, ճյուղ է, դատական իշխանության հիմնական նպատակը և առաքելությունը մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանությունն է, դատական իշխանությունը պատկանում է բացառապես միասնական դատական համակարգը կազմող դատարաններին, դատական իշխանության անօտարելի հատկություններն են անկախությունը, ինքնուրույնությունը, առանձնացվածությունը, լիիշխանությունը, սահմանադրական և ենթաօրենսդրական բնույթը, գործառութային ինքնաբավությունը, դատական իշխանություն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին խիստ համապատասխան՝ դատավարական (վարույթային) կարգով, դատական իշխանության իրականացման հիմնական միասնական իրավական ձևն արդարադատությունն է:

**Դատական իշխանությունը պետական իշխանության իրականացման իրավական ձևերի համայնապատկերում:** Լիիշխան դատական իշխանությունը ենթադրում է պետության իրավական գործունեության բոլոր ձևերի, ներառյալ իրավաստեղծագործության, առկայություն դրա իրավասության մեջ: Պետական իշխանության համակարգին վերաբերող սահմանադրական ինստիտուտը կարգավորում է միայն օրենսդիր, գործադիր, դատական իշխանությունները, դրանց ինստիտուցիոնալ կառույցները և լիազորությունները: Սակայն պետական իշխանությունը ենթադրում է պետության գործունեության մի շարք այլ կողմեր, որոնք ուղղակիորեն չեն ներառված սահմանադրական կարգավորման տեսլականում: Չբաժանված, թե բաժանված վիճակում պետությանը պատկանող իշխանության իրականացումը տեղի է ունենում նրա տարաբնույթ գործունեության ընթացքում և արտահայտվում է որոշակի իրավական ու հարաբերականորեն ոչ իրավական (կազմակերպական) ձևերով: Պետական իշխանությունը ներառում է իրականացման իրավաստեղծագործական (ներառյալ օրենսդրման), իրավակիրառական (ներառյալ դատական), իրավապահպանական (իրավապաշտպանական), մեկնաբանողական, վերահսկողական-հսկողական իրավական ձևերը, որոնցից սահմանադրական մակարդակում ամրագրվել են միայն օրենսդրումը, գործադրումը և արդարադատությունը: Ակնհայտ է, որ իշխանության մնացած ճյուղերը ևս ունեն իրավաստեղծ, մեկնաբանողական իրավական կամ վերահսկողական-հսկողական իրավական լիազորություններ: Ուղղակի, Սահմանադրությունն իրավաստեղծագործության տեսակներից օրենքներ ընդունելու բացառիկ իրավունքը վերապահում է խորհրդարանին, իսկ արդարադատության իրականացման բացառիկ իրավազորությունը՝ դատարաններին:



Լիիշխան, լիարժեք դատական իշխանության համակարգը ենթադրում է իշխանությունների բաժանման սկզբունքի սահմանադրական պահանջների պահպանմամբ՝ պետության իրավական գործունեության բոլոր ձևերի (ներառյալ ներգատիվ ու լրացնող իրավաստեղծագործության) առկայությունն դրա իրավասության մեջ, որոնք անհրաժեշտ են դրա հիմնական նպատակի՝ մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանության համար:

**Դատական իշխանության համակարգում անկախության նշանակությունը և սահմանները:** Այժմ փորձենք հասկանալ, թե ի՞նչ նշանակություն ունի դատական իշխանության անկախությունը, թե ի՞նչ է անկախությունն ընդհանարպես և դատական իշխանության համակարգում, և արդյո՞ք այն բացարձակ է, թե՞ ունի սահմաններ:

Հատուկ գործառույթների իրականացումն անհրաժեշտորեն պահանջում է, որ դատական իշխանության համակարգը լինի անկախ և ինքնուրույն, որը միջոց է դրա անաչառության ու անկողմնակալության, արդարացիության երաշխավորման համար: Հետևաբար, անկախությունը որպես անաչառության ու արդարացիության երաշխիք դատական իշխանության համակարգի հիմնական հատկանիշն է, դրա կազմակերպման ու գործունեության գլխավոր, հիմնարար սկզբունքը, այսպես ասած, «սկզբունքների սկզբունքը», որի համար մնացած բոլոր իրավակարգավորումներն ունեն ապահովող, երաշխիքային նշանակություն:

Բացատրական բառարանն անկախ եզրույթը բացատրում է մի քանի իմաստներով. ա) ուրիշի իշխանության տակ չգտնվող, ինքնուրույն, բ) ուրիշից կախում չունեցող, ինքնուրույն, ազատ, գ) չկապված, չառնչվող, չպայմանավորված<sup>11</sup>:

Եթե այդ իմաստները տեղայնացնենք, ելնելով իրավական կարգավորման կառուցակարգի ու իրավահարաբերությունների տեսություններից, ապա մեզ հետաքրքրող անկախությունն ունի սուբյեկտային իմաստ, այսինքն՝ խոսքը գնում է իրավահարաբերությունների մասին, իսկ իրավահարաբերություններն ունեն սուբյեկտներ՝ մասնակիցներ: Այս համատեքստում անկախությունն իրավահարաբերությունների սուբյեկտին՝ մասնակցին, վերագրվող հատկություն է՝ լինել ազատ, ինքնուրույն, գործել և որոշումներ ընդունել առանց որևէ մեկի միջամտության, զերծ մնալ որևէ ազդեցությունից, ինչից էլ որ այն բխի:

Եթե այս մոտեցումը տեղայնացնենք դատական իշխանության համակարգի իրավահարաբերությունների ոլորտում, ապա այստեղ անկախության հնարավոր սուբյեկտներ են դատական իշխանության համակարգը՝ որպես իշխանության առանձին ճյուղ, դատարանը մի քանի իմաստներով՝ որպես պետական մարմին, որպես դատական կազմ, դատավորը՝ որպես պաշտոնյա և որպես մարդ:

<sup>11</sup> Տե՛ս Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Հատոր առաջին, Ա-Ե, Եր., - 1969, էջ 99:

Ասվածը չի փակում այս ոլորտում անկախության բոլոր դրսևորումները և իմաստները: Մեզ այստեղ ավելի շատ հետաքրքրում է այն հարցը, թե արդյո՞ք այդ անկախությունն ունի սահմաններ: Որովհետև անկախությունը կարելի է հասկանալ բացարձակ իմաստով, որը կարող է վերածվել ամենաթողության ու կամայականության, ինչը բացառվում ու անհնարին է իրավունքի՝ որպես հավասար չափը, արդարությունը, ազատությունը հասարակական կյանքում հաստատող սոցիալական կարգավորիչի, էության պարագայում: Հետևաբար, ինչպես իրավունքի բոլոր սուբյեկտները, այնպես էլ դատական իշխանության համակարգում անկախության հատկանիշով օժտված հնարավոր սուբյեկտներն ունեն անկախություն, գործում են անկախ և պարտավոր են լինել անկախ, բայց ենթարկվելով Սահմանադրությանը և օրենքներին, որոնք այդ սուբյեկտների համար ունեն պարտադիր, հրամայող, անվերապահ կարգադրագրի նշանակություն: Անկախության նշված սահմանները համընկնում ու բխում են հենց Մոնտեսքյոյի՝ ազատությունը որպես օրենք փիլիսոփայությունից:

Ինչ վերաբերում է հնարավոր այն դեպքերին, երբ, օրինակ՝ դատավորը կասկածում է այն օրենքի սահմանադրականությանը, արդարացիությանը, որին «ենթարկվում է, այսինքն՝ կիրառում կամ անմիջականորեն կատարում ու պահպանում է, ապա դրա հաղթահարման, անվավեր ճանաչելու համար գոյություն ունեն համապատասխան գործուն իրավական ընթացակարգեր: Ուրեմն կարող ենք պնդել, որ գոյություն ունի նաև անկախության այնպիսի դրսևորում, ինչպիսին է համապատասխան սուբյեկտի «**անկախությունը հակասահմանադրական, ոչ իրավական օրենքից**», որ դրսևորվում է այդ օրենքը չկիրառելու կամ այն վիճարկելու իրավունքով:

Դատական իշխանություն ոլորտում անկախության իմաստավորումը իրավահարաբերությունների լույսի ներքո բերում է այդ հարցի մեկ այլ առումի: Եթե անկախության սուբյեկտ է, օրինակ՝ դատական իշխանության ողջ համակարգը կամ դատավորը, ուրեմն այդ իրավահարաբերության մեջ նրանք իրավազոր կողմ են, որոնց դիմաց կանգնած են համապատասխան պարտավոր սուբյեկտները՝ մի դեպքում օրենսդիրը, մեկ այլ դեպքում գործադիրը, մեկ այլ դեպքում՝ դատավորը, անձինք և այլն:

### **3. Դատական իշխանության անկախության հիմնահարցի բազմակողմանիությունը, տեսական խճճվածությունը, իրավական անորոշությունը**

Ինչպիսիքն է դատական իշխանության անկախության հիմնահարցի ուսումնասիրության վիճակը դատական իշխանության արդի տեսության մեջ: Արդյո՞ք գիտական գրականության մեջ առկա են դրա վերաբերյալ միասնական մեթոդաբանական մոտեցումներով հայեցակարգեր: Այս հարցում կարող ենք արձանագրել, որ այդ տեսության մեջ առկա են միասնական գիտական մոտեցումներ, սակայն միայն որոշ հարցերի, բայց ոչ դրանց մեծամասնության շուրջ: Օրինակ՝ մեր ձեռքի տակ եղած դատական իշխանության տեսության վերաբեր-

յալ երկու տասնյակ գրքերից ամեն մեկը յուրովի է ըմբռնում և դատական իշխանության, և արդարադատության հասկացությունները, տարբեր կերպ է բնութագրում դատական իշխանության, դատարանի, դատավորի անկախությունը՝ ավելի հաճախ իմաստային տարբերություն չդնելով դրանց միջև: Բերենք օրինակներ մի քանիսից՝ ըստ հրապարակման ժամանակագրության.

- 1) Հեղինակներից մեկն անկախության դրսևորումը դատական իշխանության համակարգում դիտարկում է որպես արդարադատության սահմանադրական սկզբունք՝ «դատավորների անկախություն» ձևակերպմամբ՝ ընդ որում արդարադատության սկզբունքներ համարելով նաև «դատավորների անձեռնմխելիությունը» և «դատավորների անփոփոխելիությունը»: Այս հեղինակն արդարադատության սկզբունքների, ներառյալ վերը նշվածների հիմքը համարում է «դատական իշխանության ինքնավարությունը»:
- 2) Մեկ այլ հեղինակ «դատական իշխանության անկախությունը» ընդհանուր վերտառության տակ քննարկում և դիտարկում է միայն դատավորների անկախությունը և դրա երաշխիքների հիմնահարցը՝ ըստ էության նույնացնելով «դատական իշխանության անկախություն» և «դատավորների անկախություն» հասկացությունները:
- 3) Հաջորդ հեղինակը դատական իշխանությունը համարում է պետական իշխանության առանձին տեսակ, «դատավորի անկախությունը և ենթարկումը միայն օրենքին» դիտարկում ու քննարկում է դատական գործունեության սկզբունք՝ այդպիսի ինքնուրույն սկզբունք համարելով նաև «դատավորների անփոփոխելիությունը»:
- 4) Մինչ այժմ թվարկված տեսակետներից էականորեն տարբերվում է այն մոտեցումը, որը խնդրո առարկա հիմնադրույթներն անվանակոչում է «դատական իշխանության կազմակերպման ու գործունեության սկզբունքներ»՝ դրանցից առաջնային համարելով «դատական իշխանության անկախության» սկզբունքը, որը հանդես է գալիս երկու տարբեր, բայց անխզելիորեն կապված առումներով. ա) «դատական իշխանության անկախությունն այդ հասկացության ինստիտուցիոնալ առումով» (անկախությունն այլ հանրային մարմիններից ու հասարակական կազմակերպություններից), բ) «դատական իշխանության կամ դրա կրողների անկախությունն այդ տերմինների բովանդակային նշանակությամբ» կամ այլ կերպ ասած՝ անաչառությունը:

Ընդամենը մի քանի տեսաբանների հեղինակային մոտեցումների պարզ թվարկումն արդեն իսկ հաստատում է, որ անկախության հասկացման հարցում դատական իշխանության տեսության մեջ չկան քիչ թե շատ իրար համընկնող տեսական մշակումներ և միաժամանակ չեն նկատվում դրանց մոտարկման ինչ-որ միտումներ: Բացի այդ, թվարկված մոտեցումներն աչքի չեն ընկնում ո՛չ

գիտական հետևողականությամբ ու ամբողջականությամբ, ո՛չ եզրույթների իմաստի ճշտորոշման ու օգտագործման միասնականությամբ, ինչը ստեղծում է խճճվածության տպավորություն: Այդ պայմաններում շատ դժվար է եղած տեսական գիտելիքը պարզ, համակարգված, տրամաբանորեն կուռ ու գիտականորեն ճշգրիտ շարադրանքի ձևով ներկայացնել դասագրքերում:

Անկախության իմաստի ու հասկացության անորոշությունը և բազմիմաստությունը բնութագրական է ոչ միայն տեսությանը, այլև Սահմանադրությամբ ու օրենքներով ամրագրված վերաբերելի իրավակարգավորումներին: Այսպես, ՀՀ Սահմանադրության 4-րդ հոդվածն արձանագրում է միայն «իշխանությունների բաժանման ու հավասարակշռման պահանջը», իսկ 63-րդ հոդվածն օգտագործում է «անկախ և անաչառ դատարան» ձևակերպումը: Սահմանադրության 164-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է, որ «Արդարադատություն իրականացնելիս դատավորն անկախ է, անաչառ և գործում է միայն Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան: Նույն կերպ՝ ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի 7-րդ հոդվածի վերտառությունն է «Դատարանների անկախությունը», սակայն բուն հոդվածում իրավակարգավորումները հիմնականում վերաբերում են կամ «դատավորին» կամ միայն «դատական կազմ» իմաստով դատարաններին:

Այսպիսով, դատական իշխանության անկախության հիմնահարցերի բազմակողմանիությունը (բազմառումնայնությունը), տեսության մեջ դրանց նկատմամբ մոտեցումների բազմազանությունը, առկա բանավեճերը, օրենսդրական կարգավորման մեջ օգտագործված եզրույթների անհետևողական բազմազանությունը պահանջում են որդեգրել հիմնահարցի ուսումնասիրության և դրա իրականացման արդյունքում շարադրանքի այնպիսի մեթոդաբանություն, որը հնարավորություն կտա վեր հանել դատական իշխանության ոլորտում անկախության բոլոր առումները, որոշակիորեն հաղթահարել կամ շրջանցել տեսական խճճվածությունը, պարզեցնել օրենքներում օգտագործված տարբեր եզրույթների ու ձևակերպումների իմաստը, փորձել տեսականորեն հետևողական ու տրամաբանական կերպով դրանք կապել իրար հետ, լրացնել դրանց շրջանակը, որոշակիացնել դրանց իմաստները:

#### **4. «Դատական իշխանության անկախություն» հասկացության ուսումնասիրության մեթոդաբանությունը**

Որպեսզի դատական իշխանության անկախության վերաբերյալ մեր պատկերացումները, ուսումնասիրության արդյունքները լինեն ամբողջական և լրիվ, բազմակողմանի ու համալիր, հետևողական ու մանրագնին, առաջին հերթին անհրաժեշտ է կատարել դրա ուսումնասիրության պատշաճ մեթոդների և տեսանկյունների (պարադիգմաների) ընտրություն: Միայն ձևական-իրավական վերլուծության կիրառմամբ հնարավոր չէ ապահովել ուսումնասիրության արդյունքների վերը նշված որակները: Հետևաբար, խնդիրը հանգում է հետազոտության պատշաճ մեթոդների համալիրի ընտրությանը և կիրառմանը, ինչը

ունակ է ապահովելու առաջադրված հետազոտության առարկայով պայմանավորված տեսագործնական խնդիրների հաջողված լուծումները, առկա տեսական բանավեճերի ու տարակարծությունների հաղթահարումը, գիտական ճանաչողության զարգացումը:

Դատական իշխանության անկախության հիմնահարցերի պատշաճ ճանաչողության ապահովման համար պիտանի բոլոր մեթոդներից առավել նպատակահարմար է համակարգակառուցվածքային վերլուծության մեթոդը՝ համակցված հիմնահարցի հատուկ իրավաբանական (ձևական-իրավաբանական), սոցիոլոգիական, փիլիսոփայական, հոգեբանական, պատմաիրավական մոտեցումների կիրառմամբ: Համակարգակառուցվածքային վերլուծությունը կամ մոտեցումը, որպես դիալեկտիկայի հիմնական սկզբունքների կոնկրետացում, արդի գիտության (ներառյալ իրավագիտության) ամենից ընդհանրացված մեթոդն է:

Որպեսզի կարողանանք ստանալ դատական իշխանության անկախության հիմնահարցի ամբողջական պատկերը և ունենալ առկա հիմնախնդիրների լավագույն լուծումներ, անհրաժեշտ է հետազոտման առարկայի նկատմամբ կիրառել համակարգային մոտեցում: Մանրագնին ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դատական իշխանության անկախության հիմնահարցերի ուսումնասիրության ոլորտում համակարգակառուցվածքային վերլուծության մեթոդի կիրառումը հետևողական չէ, հիմնականում վերաբերում է «դատական համակարգ» հասկացությանը և դրա տարրերին, երբեմն «դատական իշխանության համակարգ» հասկացությանը:

Խնդիրը նրանում է, որ, նախ, հասկանանք, թե ինչ է պահանջում համակարգային վերլուծության մեթոդը և, երկրորդ, այն կիրառելուց վերլուծության ինչպիսի փուլերով պետք է անցնի ուսումնասիրությունը: Որպեսզի համակարգային վերլուծությունը դառնա արդյունավետ, ինչի արդյունքում վեր կհանվեն երևույթին բնորոշ նոր կողմեր և դրսևորումներ, իսկ հետազոտությունը՝ ամբողջական, անհրաժեշտ է կիրառել համակարգային վերլուծության բոլոր փուլերը: Ընդ որում, համակարգային դիտարկումը ենթադրում է՝ համակարգային որակների ու օրինաչափությունների որոշումը և հետազոտումը, համակարգը կազմող ենթահամակարգերի ու տարրերի համակցության բացահայտումը, վեր հանված մետահամակարգերի ու ներհամակարգային տարրերի միջև կապերի պարզաբանումը, հետազոտվող համակարգն ընդգրկող մետահամակարգերի (շրջակա միջավայրի) որոշումը, համակարգի և այն ներառող մետահամակարգերի փոխհարաբերությունների ու կապերի վերհանումը, ուսումնասիրությունը և այլն:

Այսպիսով, որպեսզի կարողանանք հասկանալ դատական իշխանության համակարգում անկախության հարցի՝ որպես հետազոտության օբյեկտի էությունը, անհրաժեշտ է դիմել համակարգային վերլուծության օգնությանը: Համակարգային վերլուծությունը պահանջում է. առաջին՝ դատական իշխանությունը դիտարկել համակարգ, երկրորդ՝ պարզել, թե այն որպես համակարգ ինչ բա-

ղադրատարրերից (ենթահամակարգերից) է կազմված, երրորդ՝ այն որպես համակարգ, ո՞ր համակարգերի շարքին է դասվում մեկ հարթության վրա, չորրորդ՝ դատական համակարգը ո՞ր մետահամակարգի ենթահամակարգն է (բաղադրատարրը):

Նման համակարգային վերլուծությունը հնարավորություն կտա համալիր մոտեցում դրսևորել դատական իշխանության բոլոր հիմնահարցերի (ներառյալ անկախության) իմաստավորմանը և առկա խնդիրների լուծմանը, համակարգավերլուծության դիրքերից հասկանալ ու որոշել դատական իշխանության հետագա բարեփոխումների ուղղությունները, վեր հանել նախորդ բարեփոխումների և վերակառուցումների թերությունները:

Վերոբերյալ մոտեցումների որդեգրման պայմաններում դատական իշխանության անկախության հիմնահարցերի վերաբերյալ ձեռք բերված տեսական պատկերացումներն ու արդյունքները կունենան ցանկացած իմացության, գիտական ճանաչողության արդյունքների համար պարտադիր՝ ամբողջականության, լրիվության, բազմաառումայնության ու բազմակողմանիության, համակարգվածության որակներ:

## **5. Դատական իշխանության անկախության առումների և յուրահատուկ երաշխիքների ամփոփ համակցությունը և դասակարգումը**

Դատական իշխանության համակարգը լայն հասկացություն է՝ բաղկացած բազում ենթահամակարգերից ու կառուցվածքային տարրերից, որոնք իրենց հերթին գործառույթավորում են մի քանի մետահամակարգերում: Այսինքն՝ դատական իշխանության համակարգը ինքը ենթահամակարգ է, ճիշտ է, անկախ և ինքնուրույն, սակայն վերջինը բացարձակ չէ, այլ հարաբերական: Նախ, դատական իշխանության համակարգի առաջին և ամենամոտ մետահամակարգը, որի ենթահամակարգն է ինքը, միասնական պետական իշխանությունն է, իր երեք ենթահամակարգերով՝ օրենսդիր, գործադիր, դատական: Այնուհետև ինքը՝ պետական իշխանությունը, հասարակության քաղաքական համակարգի ենթահամակարգն է: Քաղաքական համակարգն իր հերթին գործում է կայացող քաղաքացիական հասարակության համակարգում՝ իր համապատասխան ենթահամակարգերով՝ տնտեսական, սոցիալական, հոգևոր-մշակութային, տեղեկատվական և այլն: Բոլոր համակարգերի բջիջը հայաստանյան մարդն է: Վերը բերված համակարգերը, ուղղահայաց ու ստորակարգային ենթահամակարգերը ընդգրկող մետահամակարգը միջազգային իրավականն է, որի և պետական իշխանության համակարգի, այդ թվում՝ դատական, փոխներգործությունը, համագործակցությունը, փոխվերահսկողությունն ակնհայտ են: Այսպիսով, դատական իշխանության անկախության հիմնախնդիրների իմաստավորման համար անհրաժեշտ է ելնել դատական իշխանության համար մետահամակարգ և ենթահամակարգ համարվող բոլոր նշված տարրերի կայացման և արդյունավետության վիճակից: Միաժամանակ այդ մոտեցումը հնարավորություն է տալիս առաջ քաշել դատական իշխանության համակարգում անկախության հասկացման, դրսևորման հետևյալ առումները.

- 1) Պետական կառույցի համակարգի հավասարամակարդակ ենթահամակարգերի (օրենսդիր, գործադիր, դատական) փոխհարաբերություններում դատական իշխանության անկախությունը ենթադրում է Սահմանադրության ու օրենքների շրջանակներում անկախությունը պետական (հանրային) այլ իշխանություններից ու դրանց մարմիններից,
- 2) Դատական իշխանությունը մարմնավորող դատական համակարգում, ըստ իրավասության դատարանների տեսակների ու դատական ատյանների՝ ենթադրվում է դրանց հորիզոնական և ուղղահայաց անկախությունը միմյանցից,
- 3) Ներպետական դատարանի ու դատավորի անկախությունը Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների, ներառյալ դատարանների ոչ իրավաչափ միջամտությունից,
- 4) Դատարանի՝ որպես պետական մարմնի, ներկառուցվածքային տարրերում դատական իշխանության անկախությունը դրսևորվում է դատական կազմի արտաքին և ներկազմային, դատարանի նախագահի և դատավորների, ինչպես նաև դատարանի օժանդակ ստորաբաժանումների և դատավորի փոխհարաբերություններում,
- 5) Դատավորի՝ որպես պաշտոնատար անձի, ներհամակարգային (դատական վարույթներում ու ընթացակարգերում) ու արտահամակարգային անկախության առումները,
- 6) Դատական իշխանության, դատարանի ու դատավորի անկախության յուրահատուկ դրսևորում է «անկախությունը հակասահմանադրական, ոչ իրավական օրենքից»:

Բացի անկախության վերոբերյալ, ընդ որում ոչ սպառիչ դրսևորումներից, դատավորի անկախության համար յուրահատուկ երաշխիքների նշանակություն ունեն դատավորի պատշաճ մասնագիտական նկարագիրն ու արհեստավարժությունը, ինչպես նաև որպես մարդ-անհատի բնական ու ձեռք բերվի հոգեբանական հատկությունները: Միևնույն ժամանակ կայացած քաղաքացիական հասարակությունը և դրա ենթահամակարգերը դատավորի անկախության էական պայմաններ ու գործոններ են:

## **6. Դատական իշխանության անկախության հիմնահարցերը պետական իշխանության համակարգում**

Դատական իշխանության կառուցվածքային համակարգը՝ որպես ենթահամակարգ, գոյություն ունի և գործում է այնպիսի մետահամակարգում, ինչպիսին է պետական իշխանությունը, որը իշխանությունների բաժանման սկզբունքի համաձայն ներառում է նաև օրենսդիր և գործադիր իշխանությունները: Քանի որ պետական իշխանությունը կազմված է երեք ենթահամակարգից, հետևաբար առաջանում է դատական իշխանության և մյուս իշխանությունների փոխ-

հարաբերությունների հիմնահարցը, որի լուծման հիմնարար ուղենիշն իրավական պետության սահմանադրական ամրագրում ունեցող հայեցակարգն է և համապատասխանաբար դրանից բխող իշխանությունների բաժանման սկզբունքը:

Ցանկացած երկրում, որը ժողովրդավարական զարգացման ուղի է ընտրել, մերժելին և առավել վտանգավորն այն է, երբ իշխանության տարանջատված թևերը դիտարկվում են ոչ թե որպես իրենց գործառնական լիազորություններն անկախաբար իրականացնող ինստիտուտներ, այլ որպես գործիքներ իշխանության իրական կրողի ձեռքին, որպիսին, որպես կանոն, ներկայացվում է պետության գլուխը: Անտարակույս է, որ մարդկային հասարակության մեջ նման մոդելներ նույնպես գոյություն ունեն: Սակայն իրավունքի տեսությունը նման քաղաքական ռեժիմները վաղուց բնութագրել է որպես ոչ իրավական: Որքան էլ ժողովրդավարացման ցանկությունը մեծ լինի, միևնույնն է, այնտեղ, ուր երաշխավորված չէ իշխանությունների իրական տարանջատում և հակակշիռների ու զսպումների օգնությամբ հավասարակշռում, անխուսափելի են անձնիշխանության տարաբնույթ դրսևորումները՝ իրենց բացասական լուրջ հետևանքներով:

**Օրենսդիր, գործադիր, դատական իշխանությունների փոխհարաբերությունների համատեքստում դատական իշխանության անկախությունը ենթադրում է դրա անկախ, ինքնուրույն, գործառութային առումով ինքնաբավ գործունեությունը, ինչը ենթադրում է անկախություն պետական (հանրային) այլ իշխանություններից:**

Այդ փոխհարաբերությունները ենթադրում են մի շարք պետաիշխանական լիազորություններ, որոնք, որպես կանոն, դուրս են դատական իշխանության լիազորությունների շրջանակից, սակայն առնչվում են դատական իշխանության համակարգին: Խոսքը հատկապես այն մասին է որ՝

- ա) Արդարադատության, դատավարության և դատարանակազմության հարաբերությունների օրենսդրական կարգավորումը ներառված է օրենսդիր մարմնի իրավասության մեջ,
- բ) Դատական իշխանության համակարգը պետական կառուցակարգի մաս է, որի ծախսերը հատկացվում են պետական բյուջեից, իսկ բյուջեի հետ կապված հարաբերությունների օրենսդրական կարգավորումը օրենսդիր մարմնի իրավասության, իսկ դրա կատարման հարաբերությունները գործադիր մամիներին իրավասության ոլորտներ են,
- գ) Դատավորների նշանակման և/կամ նշանակման հաստատման լիազորությունը պատկանում է օրենսդիրին կամ գործադիրին (համեմայն դեպս, որպես լիազորություն դուրս է դատական իշխանության լիազորությունների շրջանակից),
- դ) Գործադիր իշխանությունը մասնակցում է դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վարույթներին,



- ե) Գործադիր իշխանությանը վերապահված են արդարադատության իրականացման կազմակերպական-ապահովող-օժանդակող լիազորություններ,
- զ) Ինչպես բոլոր անձինք, այնպես էլ դատավորները ենթակա են պատասխանատվության իրավախախտումների համար, և մի շարք վարույթների հարուցման նախաձեռնությունը գործադիր կամ իրավապահ պետական մարմինների իրավազորությունն է,
- է) Օրենսդիր իշխանությանն է վերապահված համաներման իրավազորությունը, իսկ գործադիր իշխանությանը՝ ներման իրավունքը:

Զխորանալով դատական իշխանության արտաքին անկախության վերը բերված բոլոր ուղղություններով հիմնահարցերի վերլուծության մեջ՝ ցույց տանք անկախության հիմնական վտանգները միայն մեկ ուղղությամբ՝ գործադիր իշխանության մարմինների կողմից արդարադատության և դատական գործունեության այլ եղանակների իրականացման կազմակերպական-ապահովող-օժանդակող լիազորությունների բաշխվածության հարցում: Այսպես, Առաջին հանրապետության պետական կառուցակարգում անկախ հռչակված դատական մարմինները վերածվել էին գործադիր մարմինների քմահաճույքներից կախված, կառավարչական ապարատի հետևից քարշ եկող կառուցակարգի: Այդ գործընթացների տեսական իմաստավորումը հիմք է տալիս առաջ քաշելու դատական իշխանության կազմակերպման և գործունեության սկզբունք՝ **գործառույթային ինքնաբավությունը**, որի բովանդակությունը կարելի է արտահայտել հետևյալ բանաձևով. դատական իշխանությունն իր ներհամակարգային բոլոր խնդիրների, գործառույթների, լիազորությունների իրականացման հարցում պետք է լինի ինքնաբավ, արտահամակարգային պետական կառույցներից չկախված: Դա նշանակում է, որ բոլոր ներհամակարգային գործառույթներն ու լիազորությունները, հատկապես արդարադատության իրականացման կազմակերպական-ապահովող-օժանդակող լիազորությունները պետք է կատարվեն ներհամակարգային ապահովող ու օժանդակող կառավարչական կառույցների ու ռեսուրսների միջոցով: Այդ լիազորությունների վերապահումն արտահամակարգային կառույցներին որոշակի իրավիճակներում միջգերատեսչական մրցակցության ու հակամարտության և նույնիսկ քաղաքական պատճառներով կարող է չեզոքացնել համակարգի գործունեությունը, արտաքուստ անկախ, ինքնավար համակարգին դնել լրիվ կախվածության մեջ:

## **7. Անկախության հիմնահարցերը դատական իշխանության՝ որպես ինքնավար համակարգի ներկառուցվածքային տարրերում**

Դատական իշխանության համակարգն իր հերթին կառուցված է որոշակի կազմակերպագործառույթային ենթահամակարգերից, օրինակ՝ ընդհանուր իրավասության առաջին, վերաքննիչ և վճռաբեկ ատյաններ (դատարաններ): Փորձենք վեր հանել դատական իշխանության որպես համակարգի բոլոր հնա-

րավոր հիմնական ենթահամակարգերը, իսկ այնուհետև՝ իմաստավորել անկախության հիմնահարցը համակարգային վերլուծության միջոցով վեր հանված բոլոր տարրերի հետ փոխհարաբերությունների համատեքստում:

**Դատական համակարգի, ըստ իրավասության տեսակների, ատյանների (դատարանների) միմյանցից անկախությունը:** Դատական իշխանության համակարգի կառուցվածքային մարմնավորումը դատական համակարգն է, որը Սահմանադրության 163 հոդվածի համաձայն կազմված է Սահմանադրական դատարանից, վճռաբեկ դատարանից, վերաքննիչ դատարաններից, առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններից, վարչական դատարանից, օրենքով նախատեսված մասնագիտացված դատարաններից: Այս հարթության վրա առաջ է գալիս նշված ատյանների միջև փոխհարաբերությունների ընթացքում միմյանցից հորիզոնական և ուղղահայաց անկախության խնդիրը, որպեսզի բացառվեն ուղղակի վերադատությունն ու ստորադատությունը և այդ հիմքով՝ թելադրանքը, կամայական միջամտությունը և այլն:

Դատական իշխանության անկախության այս կողմն անվանում են դատական համակարգի տարբեր օղակների միմյանցից անկախությունը, ինչը ենթադրում է մի շարք կազմակերպակառուցվածքային ու գործառնությանի երաշխիքների առկայություն: Այդ երաշխիքների ոտնահարման օրինակ է ՀՀ-ում դատաիրավական բարեփոխումների երկրորդ փուլում մասնագիտացված տնտեսական դատարանի ձևավորումը: Դրանով խախտվեց ինքնավերահսկողության անթույլատրելիության սկզբունքը, որովհետև տնտեսական դատարանը կրկին քննում է իր իսկ կողմից սխալ լուծված գործը, վճռաբեկ դատարանում բեկանվելուց հետո:

**Դատարանը՝ որպես պետական մարմին, անկախության առումները դատարանի ներկառուցվածքային տարրերի փոխհարաբերություններում:** Դատարանն առանձին վերցրած հատուկ պետական մարմին է, իսկ ցանկացած մարմնին բնութագրական է ներքին կառուցվածք, հիմնական և օժանդակ ստորաբաժանումներ և այլն: Ներքին կառուցվածքում, ըստ որոշումների ընդունման եղանակի՝ առաջնային նշանակություն ունի մարմնի միանձնյա և կոլեգիալ տեսակը: ՀՀ դատական համակարգի առանձնահատկություններից է այն, որ առաջին ատյանի դատարաններում գործերի քննությունը, որպես կանոն, կատարվում է միանձնյա, իսկ վերաքննիչ, վճռաբեկ ատյաններում, ինչպես նաև Սահմանադրական դատարանում՝ կոլեգիալ:

Գործը միանձնյա քննող դատավորը գործում է որպես դատարան, չունի կոլեգիալության հետ կապված անկախության խնդիրներ: Գործը կոլեգիալ քննվելու դեպքում դատարանը դատական կազմն է: Կոլեգիալ կազմով որոշումներն ընդունվում են դատական կազմի դատավորների քվեարկությամբ: Կոլեգիալ կազմերով գործող դատարաններում, բացի ամեն մի **դատական կազմի անկախության** ապահովման խնդրից, առաջ է գալիս **դատական կազմի ամեն մի անդամի, այսպես կոչված, ներկազմային անկախության խնդիրը**, որը

պետք է լուծվի դատական կազմում որոշումներ ընդունելուց դրա առանձին անդամի անկախությունը երաշխավորող ընթացակարգերի հիման վրա:

Դատարանը՝ որպես պետական մարմին, ունի ներքին կառուցվածք և այն առաջին հերթին կազմված է դատարանի նախագահից և դատարանի՝ օրենքով սահմանված թվակազմով դատավոր անդամներից, օժանդակ-սպասարկող ապարատից (ստորաբաժանումներից): Այս հարթության վրա առաջանում է, օրինակ՝ առաջին ատյանի **դատարանի նախագահի և դատավորների փոխհարաբերությունների**, ինչպես նաև **դատարանի օժանդակ-սպասարկող կառուցվածքային ստորաբաժանումների կազմակերպման** այնպիսի տեսլականի անհրաժեշտությունը, որը չի առաջացնի դատավորի կախվածություն ինչպես դատարանի նախագահից, այնպես էլ օժանդակ-ստորաբաժանումներից: Օրինակ՝ եթե վերջիններն ամբողջովին կենտրոնացված են դատարանի նախագահի ենթակայության տակ, ստորադասության կարգով կատարում են միայն նրա կարգադրությունները, կամ **դատավորը չունի իր անմիջական աշխատակազմը**:

Այսպիսով, դատարանի և դատավորի անկախության առումներից է կոնկրետ դատարանում ներքին կազմակերպական ու գործառույթային-վարույթային անկախությունը, որն ունի կազմակերպական (նախագահ-դատավոր, դատավոր-աշխատակազմ) և գործառույթային-դատավարական (դատական կազմը որևէ դատարանում, դատական կազմ և դրա անդամ դատավոր) առումները:

### **8. Դատավորը որպես պաշտանատար անձ և նրա անկախությունը**

**Դատավորի՝ որպես պաշտանատար անձի, ներհամակարգային ու արտահամակարգային անկախության առումները:** Դատարանն իր հերթին կազմված է դատավորներից, իսկ դատավոր է Սահմանադրական դատարանում, վճռաբեկ, վերաքննիչ, առաջին ատյանի դատարաններում դատավորի պաշտոնում Սահմանադրությամբ և օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

Որևէ դատարանում դատավոր նշանակված անձն իրականացնում է օրենքով սահմանված գործերի դատական կարգով միանձնյա և կոլեգիալ քննություն: Օրինակ՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քրեական մասնագիտացման դատավորը քննում է քրեական գործերը, մինչդասական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության, ինչպես նաև պատժի կատարման հետ կապված օրենքով նախատեսված գործերը: Դատական իշխանության համակարգի հիմքային տարրը դատավորն է, հետևաբար շատ կարևոր է, որպեսզի նրա գործունեության ողջ ընթացքը կարգավորող օրենքները երաշխավորեն առաջին հերթին հենց դատավորի անկախությունը և ենթարկվեն միայն օրենքին: Կոնկրետ դատավորի անկախությունն ունի բազմաթիվ ներհամակարգային դրսևորումներ, օրինակ՝ **դատավորի անկախության երաշխավորումը դատական վարույթներում ու ընթացակարգերում:**

Բայց դատավորի՝ որպես պաշտանատար անձի, անկախությունն ունի նաև արտահամակարգային առումներ, որոնք պետք է ապահովված լինեն **անկախության սոցիալական, նյութական, անվտանգային ու անձնական պաշտպանության երաշխիքներով**: Դատավորի անկախության արտաքին իրավական երաշխիքների համակարգում կարևոր դեր են կատարում հատկապես **անփոփոխելիությունը, անձեռնմխելիությունը, զորահավաքներից ու զորավարժություններից ազատված լինելը, կրթական ծրագրերի, համաժողովների և մասնագիտական այլ հավաքների մասնակցելու իրավունքը** և այլն:

**Անկախությունը որպես դատավորի երաշխավորված իրավունք և պարտականություն**: Դատավորի անհատական անկախությունն իր հերթին ունի երկու կողմ: Առաջինը վերը թվարկված օրենսդրական երաշխիքների համակարգն է, որոնք ուղղված են դատավորի անկախության ապահովմանը, կայացմանն այն դեպքերում, երբ որ հավաքական կերպով ասած իշխանությունները կամ այլ անձինք կփորձեն միջամտել (խոչընդոտել) դատավորի գործունեությանը: Դրանք նպատակամղված են դատավորի՝ իր անկախության հարցերում իրավական ինքնավստահության, պաշտպանվածության լեգիտիմ ակնկալիքների ապահովմանը: Սակայն դատավորի համար անկախությունը ոչ միայն երաշխավորված իրավունք կամ հավակնություն է, այլև պարտականություն՝ լինել անկախ և ենթարկվել միայն օրենքին:

Դատավորը որպես անձ իր կենսական ու մասնագիտական գործունեությամբ չպետք է առաջացնի այնպիսի իրադրություններ կամ պետք է ձեռնպահ մնա այնպիսի գործողություններից, որոնք կարող են վտանգել, վնասել դատավորի ու դատարանի անկախությունն ու անաչառությունը: Այս տեսանկյունից անկախությունը ոչ միայն դատավորի համար երաշխավորված հատուկ իրավունքների հանրագումարն է, այլև նրա պարտականությունը: Դատավորը պարտավոր է իր կենսակերպում դրսևորել այնպիսի վարքագիծ, որոնք նպաստելու են իր որպես դատարանում պաշտոնավարող արդարության քրմի անկախությունն ու անաչառությունը:

**Դատավորի որպես իրավագետի պրոֆեսիոգրամայի տարրերը և դրանց առնչությունը նրա անկախության ու անաչառության հետ**:

Համակարգային մոտեցումը պահանջում է դատավորին դիտարկել ոչ միայն որպես որևէ դատարանում նշանակված պաշտանատար անձ, այլև որպես մարդ-անհատ: Դատավորը բարձրագույն կրթություն ստացած մասնագետ է, որն ունի իրավագետի որակավորում, ընդ որում այդ մասնագիտությունն ունի սոցիալ-հանրային, այլ ոչ թե մասնավոր բնույթ: Այդ առանձնահատկությունը պայմանավորում է իրավաբանի մասնագիտական նկարագրի (պրոֆեսիոգրամայի) բազմատարրությունը, որը կարելի է արտահայտել «Իմանալ, կարողանալ, լինել» բանաձևով: Այդ բանաձևն իրենում պարունակում է երեք հարց՝ ինչ պետք է իմանա իրավաբանը, ինչ պետք է կարողանա անել իրավաբանը, ինչպիսին պետք է լինի իրավաբանը: Այդ կարգախոսից բխում է, որ իրավաբանի

մասնագիտության համար խիստ անհրաժեշտ են, նախ, իմացությունը՝ իրավական գիտելիքները, այնուհետև՝ սկզբնապես իրավաբանական աշխատանքի առնվազն ընդհանուր գործնական հմտությունները, և իհարկե, մասնագետի ներքին-հոգևոր անհատական որակները, բարոյաարժեքային կողմնորոշումներն ու դիրքորոշումները:

Գիտելիքները, գործնական հմտությունները, անձնական էթիկական որակներն իրավաբանի մասնագիտական նկարագրի հավասարաժեշտ բաղադրատարրերն են: Դրանցից մեկի գերազնահատումը կամ թերազնահատումը միշտ հանգեցնում է մասնագիտական նկարագրի խեղաթյուրմանը: Գրոշի արժեք չունեն բուհում սովորելու տարիներին ստացած իրավական գիտելիքները, եթե մասնագետը չունի դրանք գործնականում կիրառելու հմտություններ, սկզբնապես չի տիրապետում ընդհանուր մասնագիտական, իսկ այնուհետև իր աշխատանքային ոլորտում դրանց իրացման եղանակներին: Ի վերջո, առաջին երկու բաղադրատարրերը, չնայած իրենց առկայությանը, կարող են չեզոքացվել, եթե մասնագետի բարոյաէթիկական որակները պատշաճ բարձրության վրա չեն, եթե նրա անձնական որակները, ընդհանուր հոգևոր-իրավական դիրքորոշումները չեն կողմնորոշված դեպի իրավական բարձրագույն արժեքները, արդարությունը, չեն համապատասխանում մասնագիտական էթիկայի կանոններին: Հետևաբար, իրավաբանի մասնագիտական նկարագիրն անհրաժեշտաբար պետք է պարունակի նշված երեք բաղադրատարրերը:

Գիտելիքները և հմտությունները նպատակին հասնելու գործիքներ են, որոնք հնարավոր է կիրառել ոչ միայն լավ, այլև վատ արդյունքներ նվաճելու համար: Գիտելիքի ու հմտության կիրառմամբ նվաճված արդյունքը կախված է նաև՝ թե ով է այն օգտագործում: Իրավագետը՝ որպես սոցիալ-իրավական կարգավորման «ճարտարագետ», «իրավունքի քուրմ», որպես «իրավական արդարության ստեղծագործող», իր բնութագրով պետք է լինի բարի, օրինահպատակ, արդարամիտ: Եթե բոլորի համար այս որակները ցանկալի են, ապա իրավագետի համար դրանք անհրաժեշտ ու պարտադիր են:

Իրավաբանը կարող է բավարար չափով իմանալ իրավական կարգավորման աղբյուրները և նորմերը, ունենալ գործնական հմտություններ, գիտելիքները կյանքում կենսագործելու ունակություններ, սակայն, բարոյաէթիկական որակների բացասական ուղղվածության դեպքում, նրա գործունեությունը կարող է լինել անարդյունավետ, երբեմն էլ սոցիալապես անօգտակար: Հետևաբար, գիտելիքների ու հմտությունների հետ միասին իրավագետը պետք է լինի դաստիարակված և կրթված բարոյական գիտակցության, պատասխանատվության, մարդասիրության, սկզբունքայնության ոգով:

Արդյո՞ք կապ կա իրավագետի մասնագիտական նկարագրի տարրերի և դատավոր նշանակվելուց հետո նրա անկախության որակի հետ: Կարծում ենք, որ պատասխանը միանշանակ դրական է. դատավորի անկախ ու անաչառ գործունեության համար նրա արհեստավարժությունը՝ գիտելիքներն ու հմտությունները, բարձր մասնագիտական իրավագիտակցությունն ու իրավական մշակույ-

թը էական ակունքային նշանակություն ունեն և կարևոր նախադրյալներ են նրա՝ արդեն որպես դատավորի՝ օրենքի շրջանակներում անկախ, անաչառ, արդար ու համոզված գործելու համար:

**Դատավորը որպես մարդ-անհատ. դատավորի անկախության հիմնահարցերը:** Անկախությունը հետևանք է միայն իրավական ամրագրում ունեցող երաշխիքների, թե անկախ լինելը և գործելը ենթադրում է նաև անկախության հոգեբանական ունակություն ու պատրաստակամություն, իսկ մյուս կողմից՝ այդ անկախությունը Սահմանադրության ու օրենքների շրջանակներում պահելու, դրանցով ինքնասահմանափակվելու դիրքորոշում: Եթե ընդունում ենք այս հանգամանքը, ապա առաջ է գալիս մարդկային հոգեբանության կառուցվածքի ու դրա տարրերի հիմքերի, դրանցից ամեն մեկի գոյության ու ձևավորման օրինաչափությունների հարցը:

Դատավորը, ում կոչ ենք անում ու պատվիրում լինել անկախ ու ենթարկվել միայն օրենքին, առաջին հերթին մարդ է՝ օժտված մարդուն բնութագրական բոլոր հատկություններով: Այս հարթությունում նրա անկախությունը պայմանավորված է ոչ միայն արտաքին իրավական, կրթական, մշակութային և նման բնույթի այլ ու շատ դեպքերում ձեռքբերովի երաշխիքներով, այլև ներքին հոգևոր ու հոգեբանական որակներով: Դատավորի անկախության այս առումի որոշ դրսևորումներ վեր հանեցինք դատավորի որպես իրավագետի պրոֆեսիոգրամայի տարրերը վերլուծելու արդյունքում, որտեղ փաստեցինք, որ իրավական գիտելիքների, հմտությունների և մասնագիտական էթիկայի մակարդակն անմիջական նախադրյալ է դատավոր նշանակված իրավագետի անկախության համար, դրա պայմաններից է:

Սակայն իրավագետի մասնագիտական նկարագրի համայնապատկերում խոսքը մասնագիտական էթիկայի կանոնների տիրապետման, յուրացման մասին էր, դատավորին հարիր մասնագիտական էթիկական գիտակցության պարտադիր առկայության, դրա անհրաժեշտության մասին: Դատավորի՝ որպես մարդ-անհատի (այդ հարթության վրա), խոսքը գնում է ընդհանրապես նրա գիտակցության ու դրա ձևերից մեկի՝ իրավագիտակցության ու դրա բարձր մակարդակի՝ իրավական մշակույթի մասին: Այստեղ խնդիրը հանգում է ընդհանրապես գիտակցության, մասնավորապես՝ իրավագիտակցության կառուցվածքին:

«Իրավական գիտակցության» հասկացության վերաբերյալ բազմազան տեսակետների ամփոփումը հնարավորություն է տալիս պնդել, որ իրավական գիտակցությունը հասարակական գիտակցության ձև է, որի առարկան իրավական իրականությունն է և դրսևորվում է իրավական կարգավորման հասարակական հարաբերությունների տիրույթում՝ որպես դրա վերաբերյալ սուբյեկտների **գաղափարական ու հոգեբանական** վերաբերմունքի համակցություն: Հետևաբար, անհատի իրավագիտակցության կառուցվածքային տարրերն են իրավական գաղափարախոսությունը (իրավական գիտելիքները, ընդհանուր և

մասնագիտական հմտություններն ու կարողությունները) և իրավական հոգեբանությունը:

Իրավագիտակցության տեսության մեջ տարածված տեսակետներից մեկի համաձայն՝ ըստ բովանդակության իրավագիտակցության և՛ առօրեական, և՛ իրավագիտական-մասնագիտական տեսակների հոգեբանական ենթահամակարգը գոյություն ունի ընդհանրապես անհատի գիտակցության հոգեբանական ենթակառուցվածքում, որին բնորոշ են անհատի հոգեբանության մակարդակները՝ **կենսաբանական ու հոգեբանական** առանձնահատկությունները, սոցիալական փորձը և ուղղվածությունը: Այս մոտեցման համաձայն՝ անհատի, անկախ նրա մասնագիտական պատկանելությունից, հոգեբանական ենթակառուցվածքի հիմքային մակարդակը կենսաբանորեն պայմանավորված ենթակառուցվածքն է, որի, որպես խառնվածքի (տեմպերամենտի) կամ նյարդային համակարգի բնական հատկությունների ամբողջության, մեջ մտնում են նրա հոգեբանության սեռային, տարիքային և նման բնույթի այլ հատկությունները, հիշողության, զգացմունքների, մտածողության, ընկալումների և կամքի անհատական որակներն ու բնութագրերը: Ստացվում է, որ անհատի սոցիալական փորձը, ներառյալ մասնագիտական գիտելիքները, հմտություններն ու կարողությունները հիմնված են կենսաբանական ու հոգեբանական ենթակառուցվածքների բաղադրատարրերի վրա:

Այս դեպքում նույնիսկ առանց հատուկ հիմնավորումների, տրամաբանորեն ակնհայտ է, որ իրավագիտակցությունը կարող է ունենալ ձևախեղումներ նաև մինչև մասնագիտական գործունեության ծավալումը, որովհետև հնարավոր է որ գիտակցական խնդիրներն ու խեղումները, նախ, ի սկզբանե առկա լինեն անձի մոտ, երկրորդ, դրանք կարող են ձևավորվել սոցիալական փորձի, մասնագիտական կրթության ու գործունեության ընթացքում:

Դատավոր դառնալու հավակնություն ունեցող անհատի որակների կարևորությունը նկատի ունենալով արդի դատարանակազմական օրենսդրությունը կարգավորման է ենթարկել դատավորի թեկնածուի ընտրության փուլում թեկնածուի հոգեբանական առանձնահատկությունների ստուգման մի շարք չափանիշներ ու ընթացակարգեր:

**Առաջին**, հավակնորդը ներկայացնում է դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների բացակայության մասին սահմանած կարգով տրված փաստաթուղթ, իսկ կառավարության 2019 թվականի մայիսի 30-ի թիվ 685-ն որոշմամբ հաստատված դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների ցանկում ներառված են նաև մի շարք հոգեկան և վարքային խանգարումներ, որոնց առկայությունը բացառում է դատավոր դառնալու հնարավորությունը:

**Երկրորդ**, մասնագիտական որակավորման քննությունից զատ հավակնորդներն անցնում են հոգեբանական ստուգում՝ ուղղված պատասխանատու-

վության զգացման, ունկնդրելու կարողության, ինքնատիրապետման, հեղինակության (ազդեցության) չափավոր կիրառման և դատավորի աշխատանքի համար անհրաժեշտ ոչ մասնագիտական այլ հատկանիշների ստուգմանը: Բացի թեսթավորումից, որպես կանոն, դատավորների թեկնածուների հավակնորդներն անցնում են հարցազրույցի գործընթացով, որը, բացի մի շարք կրթական արժանիքների (հավակնորդի մասնագիտական փորձառության, դատավոր դառնալու մոտիվացիայի, դատավորի կարգավիճակին վերաբերող հիմնարար իրավական ակտերի պահանջներին տեղեկացվածության) վերհանումից, նպատակ ունի պարզել և գնահատել նաև նրա անձնական-հոգեբանական հատկանիշները (մասնավորապես ինքնատիրապետում, վարվեցողություն, ազդեցության չափավոր կիրառում, ունկնդրելու կարողություն, հաղորդակցման հմտություններ, արդարամտություն, վերլուծական կարողություններ և այլն): Վերը թվարկված որակները հիմնականում հոգեբանական են, իսկ մարդու հոգեբանական հատկություններն ամբողջովին ձեռքբերովի կամ մշակովի չեն: Դրանց մի մասը, օրինակ՝ աֆեկտիվությունը և ինքնատիրապետման հետ կապված խնդիրները, համաձայնողականությունը և այլն բնական ու բնածին են, որոնք կրթության ու դաստիարակության միջոցով հնարավոր է որոշակիորեն շտկել, բայց ոչ՝ վերացնել:

Հոգեբանական երևույթ է մարդու կողմից տրված երդումը, դրա ազդեցությունը նրա իսկ հետագա վարքագծի վրա: Կան չէ մեր շրջապատում մարդիկ, ովքեր մեկ օրվա ընթացքում երդվում են բազում անգամ: Դա արդեն իսկ կասկածելի է ու երևի թե երդումն այդ մարդու համար ազդեցիկ նշանակություն չունի: Հետևաբար, կարևոր է մարդու այնպիսի հատկությունը, որն իր հոգևոր աշխարհում լուրջ է վերաբերում երդմանը և երդումը նրա համար ոչ թե սովորական խոստում է, այլ նրա հետագա վարքագիծը որոշող խորհրդանշական ծես, անկախության ու անաչառության գործոն ու պայման, Կանտի խոսքերով ասած ներքին կատեգորիկ իմպերատիվ: Հակառակ դեպքում, դատավորը, չնայած իր տված անհատական ու հանդիսավոր երդմանը՝ լինել այսպիսին և այնպիսին, կնամանվի վերը բերված օրինակի՝ օրը հազար անգամ երդվող ու երդումը դրժող վերը բերված ինչ-որ մեկին:

**Այսպիսով, դատավորի որպես մարդ-անհատի բնական ու ձեռքբերովի հոգեբանական հատկությունները ևս նախադրյալ են նրա՝ մասնագիտական գործունեության մեջ անկախության ու անաչառության համար:**

### **9. Դատարանի ու դատավորի անկախության հիմնահարցերը քաղաքացիական հասարակության համակարգում**

Դատական իշխանության խնդիրների իրացման ամենահուսալի երաշխիքը ոչ միայն նորմատիվ կանոններն են, այլ մարդիկ, այդ թվում՝ դատավորները, և պայմանները, որոնցում ընթանում է նրանց ողջ կյանքը, գործունեությունը: Դատավորի կյանքն ու դատարանի գործունեությունն ընթանում է որոշակի հա-



սարակական միջավայրում: Ինչքան էլ որ ուժեղ լինեն մեր իրավական ցանկությունները և իդեալները, անկախության իրավաբանորեն երաշավորված կառուցակարգերը, երևի թե դրանք չեն կարող կենսագործվել, եթե ընդհանուր հասարակական միջավայրը բավական ազդու կերպով չի խթանում, չի նպաստում նրանց անկախությանը, այլ ընդհակառակը՝ խոչընդոտում ու միջամտում է դրան: Հետևաբար, ընդհանուր հասարակական միջավայրն իր բոլոր տարրերով՝ տնտեսական, քաղաքական, սոցիալական, գաղափարական, պայմաններ են, որոնք նպաստում են դատական իշխանության ու դատավորի անկախությանը կամ պայմաններ են ստեղծում դրա համար: Սա շատ կարևոր խնդիր է և միայն կայացած քաղաքացիական հասարակությունն է ունակ լուծելու այն:

Քաղաքացիական հասարակությունը «իրավական, ազատական-ժողովրդավարական, բազմակարծիքային բաց հասարակություն է, որի հիմնական սուբյեկտն իր շահերը՝ բոլորի համար միասնական օրենքի ու իրավակարգի շրջանակներում կենսագործող ազատ անհատն է»<sup>12</sup>: Քաղաքացիական հասարակության հենասյունները և միաժամանակ հիմնարար արժեքներն են ընտանիքը, սեփականությունը, անհատականությունը, ազատությունը, բարոյականությունը, քաղաքացիականությունը, կարգուկանոնը, իրավական պետականությունը: Քաղաքացիական հասարակության, որպես համակարգի, կառուցվածքային բաղադրատարրերն են հասարակության ազատ անհատները, սոցիալական, տնտեսական, հոգևոր-մշակութային, տեղեկատվական, տեղական ինքնակառավարման և այլ ենթահամակարգերը:

Հասուն քաղաքացիական հասարակությունը, կողմնորոշված լինելով դեպի իրավունքի ու օրենքի գերակայություն, ստեղծում է իրավական օրենքների և համամարդկային արժեքների հարգման, ազատության մթնոլորտ, մշակում և կենսագործում է պետության գործունեությունը սահմանափակելու և վերահսկելու կառուցակարգեր:

Հայաստանում հիմնախնդիրը հանգում է նրան, որ քաղաքացիական հասարակության, որպես համակարգի, կառուցվածքային բաղադրատարրերի մի մասը դեռևս գտնվում են կայացման շրջանում: Եթե ընդհանուր համակարգը կայացած չէ, ապա կան լուրջ հիմնախնդիրներ նաև այդ մետահամակարգի կառուցվածքային բաղադրատարրերում, այդ թվում՝ բուն մարդու ու նրա մտածողության մեջ, իսկ այդ հիմնախնդիրներն, անշուշտ, չեզոք գործոններ չեն դատական իշխանության համակարգի համար: Միջավայրը, որում դատարանը գործում է, էապես ազդում է նրա վրա: Եթե միջավայրի՝ հասարակության (մարդկանց), քաղաքական համակարգի, օրենսդիր և գործադիր իշխանությունների ներգործությունը նպաստող չէ, ապա ենթահամակարգը չի կարող կատարել իր գործառույթները և առաքելությունը, ինչքան էլ որ կառուցվածքային ու վարույթային բարեփոխումներ արվեն: Այդպիսի գործելակերպը նման է նորմատիվիստ-իրավաբանի մեխանիկական գործունեության, որը փորձում է գումա-

<sup>12</sup> Տե՛ս **Нерсесянц В.С.**, Общая теория права и государства. М., 1999, էջ 284:

րելիների տեղերի փոփոխմամբ և/կամ դրանց տարանջատմամբ փոխել ընդհանուր գումարը: Այն, որ շրջակա միջավայրը կարևոր նշանակություն ունի գրեթե «իդեալական» համակարգի համար, հաստատում է Առաջին հանրապետությունում դատական շինարարության փորձը, երբ ռեցեպցիայի ենթարկված դատական համակարգի տեսլականը լինելով բավական ժողովրդավարական, առաջադեմ, չկարողացավ լիովին կատարել իր առջև դրված խնդիրները: Պատճառը կոլիզիան էր նորմալ, սովորական, կայուն հասարակական պայմանների համար մտածված դատական իշխանության համակարգի և օբյեկտիվորեն առկա հասարակական արտակարգ, բացասական պայմանների միջև, որոնք, ի վերջո, չէզոքացրին համակարգի գործառութավորումը:

Իհարկե, դատական իշխանության անկախությունն անհնարին է ամբողջական, համալիր իրավական երաշխիքների: Սակայն այդ անկախությունն ավելի անհավանական է, եթե այն չի երաշխավորված դրական միտվածություն ունեցող ընդհանուր կացությամբ՝ երկրի քաղաքական և տնտեսական դրությամբ, հասարակության բարոյահոգեբանական վիճակով ու որակներով, ինչպես նաև հասարակական, արտաիրավական այլ պայմաններով: Աշխարհում առկա դատարանակազմական բազմազանությունը մեզ հուշում է, որ դատական համակարգի, որպես դատական իշխանության կրողի, առջև դրված գործառույթների իրացումը ոչ թե բացարձակ, այլ հարաբերական կախվածության մեջ է գտնվում դատարանակազմությունից: Նշանակում է, բացի իրավակարգավորման գործոնից, կան նաև այլ նախադրյալներ և պայմաններ, որոնցից ևս կախված է դատական իշխանության՝ բոլոր առումներով անկախությունը և արդյունավետությունը, ընդ որում՝ երևի թե ավելի շատ: Հետևաբար, հասարակության ու պետության կարևորագույն խնդիրն այդ պայմանների ստեղծումն է, որոնք երբեմն ավելի կարևոր ու առաջնային են, քան մերկ օրենսդրական կանոնները: Որպես եզրակացություն՝ տեղին է հիշել գերմանացի հրապարակախոս Վ. Շվեբելի «**Լավագույն օրենքներն ի զորու չեն օգնել, եթե մարդիկ ոչնչի պիտանի չեն**» միտքը:

*(Արթուր Վաղարշյան)*

## ԳԼՈՒԽ 2

### ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

1. **Իշխանությունների բաժանման հայեցակարգի ձևավորման ու սահմանադրական ամրագրման համաշխարհային համայնապատկերը**

**Իշխանությունների բաժանման գաղափարները հին և միջին դարերում:** Իշխանությունների բաժանման, պետության գործունեության տարբերվող ուղղությունների վերաբերյալ գաղափարներն ու մտորումները սկիզբ են առել դեռևս Հին աշխարհի իրավունքի աղբյուրներից, անտիկ մտածողների ուսմունքներից, որոնք, սակայն, դեռևս գաղափարներ էին, այլ ոչ թե ամբողջական տեսություններ: Պետական իշխանության որոշակի գործառույթների առանձնացման գաղափարների վաղնջականության պատճառը հասարակական կյանքի կառավարման և իրավական կարգավորման օբյեկտիվ օրինաչափություններն էին, որոնք բերեցին պետության կողմից առնվազն օրենսդիր, գործադիր և դատական գործառույթների կատարման անհրաժեշտությանը:

Հետազոտողներից ոմանք իշխանությունների բաժանման գաղափարի ակունքները որոնում են **Աստվածաշնչում**<sup>13</sup> որպես հիմք վերցնելով դրա այն դրույթները, որոնցում շոշափվում են օրենսդիր, գործադիր և դատական գործառույթների միմյանցից առանձնացման գաղափարները, օրինակ՝ «Մեր դատավորը Տերն է, մեր օրենսդիրը Տերն է, մեր թագավորը Տերն է»<sup>13</sup>:

Անտիկ աշխարհում **Արիստոտելը** հստակ պատկերացրեց և պոլիսի, որպես ազատ և հավասար մարդկանց քաղաքական հաղողակցության իդեալական ձևի, կառույցում առանձնացրեց երեք հիմնական մասեր՝ հիմնական գծերով մշակեց դրանց իրավասության հարցերը, հիմնավորեց դրանց իրավասության որոշակի ինքնուրույնության անհրաժեշտությունը: Պոլիսը պետք է ունենար «... առաջինը՝ օրենսդրախորհրդակցական մարմին, որ քննարկում է պետության կենսախնդիրները, երկրորդ՝ պաշտոններ (ընդհանրապես ինչ պաշտոններ պիտի լինեն և ինչով պետք է նրանք զբաղվեն, ինչպես պիտի համարվեն), երրորդը՝ դատական մարմիններ»<sup>14</sup>: Արիստոտելի պատկերացմամբ բարձրագույնն օրենսդրախորհրդակցական մարմինն էր, իսկ բոլոր իշխանություններին բնութագրական գիծը՝ ժողովրդավարությունը:

<sup>13</sup> Տե՛ս, օրինակ՝ **Баренбойм П.**, Первая конституция мира. Библейские корни независимости суда. М., Белые алвы. 1997. էջ 68: **Ռ. Պապայան**, Արդի իրավունքի քրիստոնեական ակունքները, Մայր աթոռ Սուրբ Էջմիածին, 2002: Պետրոսյան Ռ.Գ., Արդարադատության և դատարանակազմության հիմունքները, Եր., 1998:

<sup>14</sup> Տե՛ս **Аристотель**. Политика. Соч. в 4-х томах, пер. с древнегреческого. /Общ. ред. А.И. Доватура. М., Мысль, 1983, Т. 4, էջեր 514-523:

Հետաքրքիր է Արիստոտելի մոտեցումը, որ դատավորները պետք է նշանակվեն քաղաքացիներից, այլ ոչ թե քչերից, մի քանիսից: Նա կարևորում էր նաև դատավորների նշանակման եղանակը՝ վիճակահանությամբ, թե ընտրությամբ: Նա դատավորների միջև տարբերությունը տեսնում էր երեք հանգամանքներում՝ 1) ովքեր են դատավորները, 2) ինչն է ենթակա նրանց դատարանին, 3) ինչ կերպ են դատավորները նշանակվում:

Հայ իրականության մեջ վաղ միջնադարյան մտածողները ևս հստակ պատկերացում ունեին պետական իշխանության երեք գործառույթների մասին: Այսպես՝ V դ. փիլիսոփա **Եզնիկ Կողբացին**, պաշտպանելով քրիստոնեական ուսմունքը և հերքելով զանազան կրոնական աղանդներ, քննարկելով չարի ու բարու հիմնախնդիրները, գրում է. «Արդ՝ այս բոլոր համոզիչ բացատրություններից հետո էլ համառում ու նույնն են մեջտեղ բերում. «Չարիքները,- ասում են,- ի բնե են և ոչ կամածին»: Պատասխանում ենք, թե որ ի բնե են, ինչու են թագավորներից սահմանվում օրենքները, իշխաններից՝ սաստումներ, դատավորներից՝ պատիժներ, չէ՞ որ չարիքներն արգելելու համար են դրանք: Այլև եթե չարիքները բնական լինեն, օրենսդիրն օրենքները չպիտի սահմանի, ոչ էլ իշխանը չարագործին պիտի պատժի ենթարկի: Ինչու են պատժում նրան, ով ինքնակամ չար չէ, որին պետք էր կարեկցել և ոչ թե պատժի ենթարկել: Եվ արդ՝ եթե այնպիսինի կինը անառակություն անի (նրա կնոջը) չպետք է մեղադրի, որովհետև, ինչպես ասում են, կամովին չի հանձն առել չարիքը, այլ բնականից է հակադրվել: Եվ եթե այնպիսինի որդին սուրը վերցրած իր վրա հարձակվի, թող նրան չմեղադրի, որովհետև ինքնակամ չի հարձակվում, այլ չարն է նրան մղում այն բանին... Իսկ երբ տեսնում ենք, որ թագավորը իր օրենքներին (հակառակվելու համար) պատժում է ու պատժելով հանցանքը պակասեցնում է, դատավորը գողին, ավազակին ամուր կապում ու տանջում է՝ վնասակարությունը մեջտեղից վերացնելու համար և հայրը դաժան որդուն, որպես մահապարտի, դատավորներին է հանձնում, ուրիշ բոլորն էլ իրենց անարգանքների համար պատժում են՝ անձամբ կամ իշխանների միջոցով, – պարզ է, որ կատարվող չարիքները կամածին են և ոչ ի բնե»<sup>15</sup>:

Իշխանությունների բաժանման ուսմունքի մշակման գործում հատուկ ներդրում ունի **Մարսելիոս Պաղուանեցին** (1275-1343 թթ.), որի մոտեցումները մանրամասն չենք քննարկի, որովհետև «Աշխարհի պաշտպանը» երկում նա հիմնավորել է հիմնականում հոգևոր ու աշխարհիկ քաղաքական իշխանության բաժանումը, վերջինի առաջնայնության գաղափարը, մշակել է ժողովրդաիշխանության յուրահատուկ տեսություն: Ըստ Պաղուանեցու՝ «ամեն մի իշխանության իսկական աղբյուրը ժողովուրդն է: Նրանից են ելնում ինչպես աշխարհիկ, այնպես էլ հոգևոր իշխանությունները: Միայն նա է ինքնիշխանության կրողը և գերագույն օրենսդիրը»: Սակայն ժողովուրդն, ըստ նրա, ոչ թե պետության

<sup>15</sup> Տե՛ս **Եզնիկ Կողբացի**, Եղծ աղանդոց (Աշխարհաբար թարգմ. և ծանոթագր. Ա.Փ. Աբրահամյանի), Երևանի համալսարանի հրատ., 1994, էջ 51:

ամբողջ բնակչությունն էր, այլ միայն նրա լավագույն մասը: Նրա կարծիքով ժողովուրդը կազմված է ընդհանուր բարիքին ծառայող բարձրագույն մասից (գինվորներ, հոգևորականներ, պաշտոնյաներ) և սեփական մասնավոր շահերը հոգացող ստորին մասից (առևտրականներ, հողագործներ, արհեստավորներ): Պաղոսանեցին առաջինն էր, որ հստակ բաժանեց օրենսդիր և գործադիր իշխանությունները, համարելով, որ գործադիրն իրացնում է օրենսդրի (ժողովրդի) կամքը և նրա իրավասությունն ու կազմակերպությունը սահմանվում են օրենքով:

**Իշխանությունների բաժանման ու միջնադարյան դասական տեսությունը:** Իշխանությունների բաժանումն ունեցել է նաև գաղափարական հակառակորդներ, օրինակ՝ Թոմաս Հոբսը. «Բաժանել պետական իշխանությունը նշանակում է կործանել այն: Իշխանությունը պետք է սահմանափակված լինի բնական և աստվածային օրենքներով, բայց ոչ բաժանման միջոցով»: Ավելի ուշ շրջանում բաժանմանը հակադրվեց նաև Ժ.Ժ. Ռուսոն:

Իշխանությունների բաժանման դասական տեսությունը մշակել են Ջոն Լոքը (Անգլիա, XVII դ.) և հատկապես՝ Շարլ Լուի Մոնտեսքյոն (Ֆրանսիա, XVII-XVIII դդ.):

**Շարլ Լուի Մոնտեսքյոն** «Օրենքների ոգու մասին» աշխատության մեջ զարգացրեց, համակարգային առումով ամբողջացրեց իշխանությունների բաժանման տեսությունը, որն աչքի էր ընկնում երկու տեսանկյունից՝ նախ, հիմնված էր ռացիոնալ իրավաբանական աշխարհայացքի վրա, այնուհետև պետականության, հատկապես անգլիական, քաղաքական պատմական փորձի վրա:

Իշխանությունների բաժանման սկզբունքի գլխավոր պահանջն է միասնական պետական իշխանությունը բաժանել երեք ճյուղի՝ նպատակ ունենալով հաստատել և պաշտպանել քաղաքական ազատություն, ապահովել օրինականությունը և քաղաքացիների անվտանգությունը իշխանությունների կամայականությունից, բացառել իշխանության չարաշահումները:

«Յուրաքանչյուր պետության մեջ կա երեք տեսակի իշխանություն՝ օրենսդիր և երկու գործադիր: Առաջին իշխանության ուժով տիրակալը կամ մարմինը ստեղծում է օրենքները՝ մշտական կամ ժամանակավոր, ուղղում կամ վերացնում՝ գոյություն ունեցող օրենքները: Երկրորդի ուժով նա հայտարարում է պատերազմ կամ կնքում խաղաղություն, ուղարկում կամ ընդունում է դեսպաններ, ապահովում է անվտանգությունը, կանխում արշավանքները: Երրորդ իշխանության ուժով նա պատժում է հանցագործությունները և լուծում է մասնավոր անձանց բախումները: Վերջին իշխանությունը կարելի է անվանել դատական, իսկ երկրորդը՝ ուղղակի պետության գործադիր իշխանություն»:

«Միևնույն անձում կամ մարմնում օրենսդիր և գործադիր իշխանության միավորումը սպառնում է ինչպես բռնատիրական օրենքների ի հայտ գալով, այնպես էլ դրանց բռնատիրական կիրառմամբ: Ազատությունների որպես հոգեկան հանգստության գիտակցումը, ըստ Մոնտեսքիոյի, հիմնված է քաղաքացի-

ների անվտանգության ուղղությամբ հավատի և համոզմունքի վրա, որի դեպքում ոչ մի քաղաքացի չի վախենում մյուսից: Սակայն ազատություն չի կարող լինել, եթե միավորված են դատական և գործադիր իշխանությունները: Եթե դատական իշխանությունը միավորված է օրենսդիրի հետ, ապա դատավորը դառնում է նաև օրենսդիր, և քաղաքացիները հայտնվում են կամայականության իշխանության ներքո: Դատական իշխանությունը գործադիրին միավորելը սպառնալիք է դատավորին վերածելու ճշտողի: Բոլոր իշխանությունները մեկ անձում միավորելն ամենավատ հետևանքն ունի»:

Օրենսդիր իշխանությունը Մոնտեսքյոն բնորոշում էր որպես ընտրովի ներկայացուցչական օրենսդիր ժողով, որի անդամները պետք է ընտրվեն ոչ թե ամբողջ բնակչությունից, այլ նրա հատվածներից, կազմված իրար հակակշռող ու հավասարակշռող երկու պալատից՝ «ավագանու ժողով» և «ժողովրդի ներկայացուցիչների ժողով»: Գործադիր իշխանության բնույթն է արագությունը, գործողությունների կենտրոնացումը, ուրեմն այն պետք է մարմնավորի միապետը: Մոնտեսքյոյի կարծիքով դատական իշխանությունը պետք է իրացնե՞ր ժողովրդից որոշակի ժամկետով ընտրվող անձանց: Ոչ մշտական դատարանը նրա կարծիքով միջոց էր դատական իշխանությունն անձնավորումից զերծ պահելու համար, որովհետև «մարդիկ պետք է վախենան ոչ թե դատավորից, այլ դատարանից»:

Մոնտեսքյոյի գլխավոր ներդրումն իշխանությունների բաժանման տեսության մեջ՝ օրենքի գերակայության պայմաններում իշխանությունների հավասարակշռման և փոխգործողության, հակակշռման գաղափարներն էին:

**Իշխանությունների բաժանման հիմնախնդրի տեսագործական հիմնահարցերը նոր և նորագույն ժամանակներում:** Իշխանությունների բաժանման հիմնահարցին անդրադարձել են նաև այնպիսի խոշոր մտածողներ, ինչպիսիք են Ի. Կանտը, Գ. Հեգելը, Բ. Կոնստանը, սակայն համաշխարհային մասշտաբով իշխանությունների բաժանման ու հավասարակշռման Մոնտեսքյոյի մշակած վարկածը համարվում է դասական, որովհետև նոր դարաշրջանի հեղափոխությունների հետևանքով ընդունված սահմանադրական ակտերը որդեգրեցին հենց նրա մոտեցումները:

Առաջնեկն ամերիկյան հեղափոխության հաղթանակի հետևանքով ընդունված Սահմանադրությունն էր, որի նախագծողներն էականորեն զարգացրեցին իշխանությունների բաժանման սկզբունքը՝ հակակշիռների և զսպիչների կառուցակարգերով, օրենսդիր մարմնի երկպալատանի կառուցվածով, դատական իշխանությանը նոր առաքելություն վերապահելով:

ԱՄՆ-ում տարիներ հետո «Մերբերին ընդդեմ Մեդիսոնի» գործով ԱՄՆ-ի գերագույն դատարանի նախագահ Ջ. Մարշալը հիմնավորեց օրենքների սահ-

մանադրականության նկատմամբ դատարանի հսկողության իրավունքը<sup>16</sup>: Սահմանադրության մեջ ուղղակի ամրագրված չէր Գերագույն դատարանի լիազորությունն՝ անվավեր հայտարարել հակասահմանադրական օրենքները:

Ջ. Մարշալը հիմնավորեց, որ «Գերագույն դատարանն օժտված էր այնպիսի դատական լիազորություններով, որոնք պատմականորեն ներառում էին օրենքների մեկնաբանության իրավունքը: Քանի որ ֆեդերալ իրավունքի գերակայության սահմանադրական սկզբունքը Սահմանադրությունը դարձնում է «երկրի բարձրագույն օրենք», և ԱՄՆ-ի օրենքները հրապարակվում են ի կատարումն Սահմանադրության, ապա դատավորները երդում են տալիս պաշտպանել Սահմանադրությունը: Այսինքն՝ դատավորները կարող են և իրավունք ունեն անվավեր հայտարարել ցանկացած օրենսդրական ակտ, որը հակասում է Սահմանադրությանը»:<sup>17</sup>

Նորագույն շրջանում իշխանությունների տարանջատման տեսությունն ապացուցեց իր արդյունավետությունը: Այդ հաստատվում է իշխանությունների բաժանումը մերժած ամբողջատիրական պետությունների բացասական փորձով: Միաժամանակ իշխանությունների բաժանման սկզբունքն ապացուցեց իր կենսունակությունը և քաղաքական-իրավական ճշգրտությունը: Այս շրջանի պետականագիտությունը մշակեց այս սկզբունքի որոշ հայեցակարգային ձևափոխումներ կամ կատարելագործման առաջարկությունները:

Կատարվեցին իշխանության նոր ճյուղերի հիմնադրման մշակումներ, ի դեմս՝ վերահսկողական, հայեցակարգային կամ հիմնադիր իշխանությունների: Իշխանությունների բաժանման սկզբունքը զարգացվեց նաև հակակշիռների ու զսպիչների համակարգի կատարելագործման, իշխանությունների գործառույթների սահմանազատման առաջարկություններով, որոնք ստացան սահմանդրական ամրագրում: Տեսականորեն հիմնավորվեց նաև բաժանված պետական իշխանությունների միասնության, փոխկապվածության և փոխգործողության անհրաժեշտության գաղափարը, առաջ քաշվեցին իշխանությունների ուղղահայաց, այսինքն՝ դաշնություն և դրա սուբյեկտներ, կենտրոնական և տեղական իշխանությունների բաժանման գաղափարները:

<sup>16</sup> Ուլիամ Մերբերին հավակնում էր ֆեդերալ դատավորի պաշտոնին, որին Մեդիսոնը (1803 թ. պետական քարտուղար) մերժել էր արտոնագիր տալը՝ չնայած դրանից ոչ շատ առաջ Ջ. Ադամսի նախագահական թիմը շատ ֆեդերալ պաշտոններ հանձնել էր իր մարդկանց և արդեն հասցրել էր Սենատում դրանց թեկնածությունների շուրջ անցկացնել քվեարկություն, այդ թվում՝ Մերբերիի վերաբերյալ: Սենատում քվեարկությունն անցկացվում էր Ջ. Ադամսի պաշտոնավարության վերջին օրը: Մերբերին մերժում ստանալուց հետո դիմեց ԱՄՆ-ի Գերագույն դատարան՝ խնդրանքով իրեն տալ դատական հրաման, որը կպարտադրի գործադիր իշխանությանը շնորհել իրեն արտոնագիր (պատենտ): Մերբերին վկայակոչում էր դատավորների լիազորությունների մասին օրենքը, որում իսկապես նախատեսված էին դատարանի նման գործողությունները: Գերագույն դատարանը մերժեց նրան այն հիմքով, որ այդ օրենքը հակասում է Սահմանադրությանը:

<sup>17</sup> Տես История политических и правовых учений / под ред. В.С. Нерсисянца. М., 2003, էջ 497:

## **2. Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումը և ժողովրդավարական, իրավական հասարակության կառուցման ռազմավարությունը**

Գորբաշովյան վերակառուցման անխուսափելի հետևանքը դարձավ խորհրդային հանրապետությունների անկախացման գործընթացը: 1990 թ. օգոստոսի 23-ին Հայաստանի Գերագույն խորհուրդն ընդունեց «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին», որով դրվեց անկախության գործընթացի սկիզբը: Հայաստանի Անկախության մասին հռչակագիրը, հայտարարելով հայկական պետության անկախության գործընթացի սկիզբը, հռչակում էր նաև այն հիմքերը, ռազմավարական խնդիրները, պատմաքաղաքական նախադրյալները, որոնք ընկած էին անկախության քաղաքական-իրավական սկզբնավորման հիմքում:

Հայաստանը կանգնեց պետաիրավական բարեփոխումների ռազմավարության ընտրության առաջ, և ընտրությունը կատարվեց որոշակի գործոնների և պայմանների ազդեցությամբ: Դրանցից առաջնային էին աշխարհում պետականության և իրավական համակարգերի՝ որպես սոցիալական ինստիտուտների զարգացման միտումները, Հայաստանի պետաիրավական զարգացման պատմական փորձը, խորհրդային պետաիրավական համակարգի ճգնաժամը, նոր աշխարհաքաղաքական իրավիճակը: Ռազմավարության ընտրությունը կատարվեց 1990 թ. օգոստոսի 23-ի Անկախության հռչակագրով, որը, «հռչակելով անկախ պետականության հաստատման սկիզբը», խնդիր դրեց ստեղծել «ժողովրդավարական, իրավական հասարակարգ»: Այսպիսով, Հայաստանի պետական իշխանության բարձրագույն մարմինը ծրագրային-իրավական բնույթ ունեցող Հռչակագրով որպես ռազմավարական նպատակ սահմանեց «ժողովրդավարական և իրավական հասարակության» կառուցումը:

Նոր հռչակված հանրապետության համար սոցիալիստական պետաիրավական զարգացման փորձը, կառուցված մարքսիստական-դասակարգային հայեցակարգի հիմնադրույթների վրա, անընդունելի էր: Այս պայմաններում կարևորվում էր ընդօրինակման արժանի համաաշխարհային փորձը: XX դարի վերջերին աշխարհը հսկայական առաջընթաց է ապրել ժողովրդավարության գաղափարների կենսագործման, դրա ինստիտուտների կայացման ուղղությամբ: Համաաշխարհային քաղաքական-իրավական մտքի վերլուծությունը վկայում է, որ նորագույն աշխարհում ժողովրդավարության տեսլականի հիմնական հենասյուներն են մարդու իրավունքները (ազատությունը), քաղաքացիական հասարակությունը, սոցիալական-իրավական պետությունը:

Անկախության հռչակագրի իրավական նշանակությունը Հայաստանի իրավական համակարգի համար հստակ էր. այն՝ որպես նպատակային, ծրագրային բնույթի ակտ, ամրագրեց իրավական բարեփոխումների մի ռազմավարություն, որի խնդիրն էր խելամիտ, հավասարակշռված ինստիտուցիոնալ-սահմանադրական վերակառուցումների միջոցով իրականացնել հասարակական բոլոր հիմ-



նարար կառույցների ժողովրդավարականացումը, Հայաստանում կայացնել քաղաքացիական հասարակությունը, իրավական, սոցիալական պետությունը, մարդու իրավունքները:

Այս համատեքստում իրավական պետության հայեցակարգի մաս կազմող անկախ և ինքնուրույն դատական իշխանության գաղափարը մարդկային մտքի կարևորագույն նվաճումներից էր: **Դատական իշխանության հայեցակարգը ենթադրում էր անկախ, ինքնավար, օրենսդիր և գործադիր իշխանությունների կառույցներին հավասարազոր համակարգ, որն արդարադատության հետ միասին կոչված էր լինելու իրականացնելու նաև իշխանության այլ ճյուղերի նորմատիվ գործունեության վրա վերահսկողության գործառույթ՝ դրանով իսկ ներագդելով մարդու իրավունքների, քաղաքացիական հասարակության շահերի, հանրային գործերի կառավարման ժողովրդավարական ձևերի ապահովման վրա:**

Հետսոցիալիստական պետականության, ներառյալ դատական իշխանության տեսլականի հռչակմամբ սպասվում էր հսկայական բարենորոգչական աշխատանք, որի առաջնակարգ խնդիրն էր հայկական պետականության ռազմավարական տեսլականի, ներառյալ դատական իշխանության հայեցակարգի, ինստիտուտների և ընթացակարգերի կենսագործումը կյանքում:

### **3. Իշխանությունների բաժանման ու դատավորների անկախության իրավական հարցերում Հայաստանի պատմական փորձը և մեկնարկային վիճակը**

**Դատավորների կարգավիճակի և անկախության ոլորտներում Հայաստանի պատմական փորձը:** Սոցիալիստական Հայաստանը չունեւ դատական անկախ իշխանության հայեցակարգի վրա կառուցված պետաիրավական փորձ: Այս առումով հետաքրքիր էր Առաջին հանրապետության դատական շինարարությունը, որը, սակայն, մի շարք պատճառներով ուսումնասիրված չէր ընդհուպ մինչև XX դարի սկիզբ: 1918 թ. դեկտեմբերի 6-ին Առաջին հանրապետության առաջին խորհրդարանը՝ Հայաստանի խորհուրդն ընդունեց դատաիրավական ոլորտին վերաբերող 6 օրենք, որոնց համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայաստանի Հանրապետությունը ռեցեպցիայի ենթարկեց Ալեքսանդր II բարեփոխումներով ստեղծված դատական համակարգը՝ հարմարեցնելով այն Հանրապետության պայմաններին: Նշյալ օրենքները ելնում էին գործադիր և դատական իշխանությունների բաժանման, դատավորների և դատական քննիչների անփոփոխելիության սկզբունքներից, ամրագրում էին երդվյալ ատենակալների, դատական քննիչների, վարչական արդարադատության ինստիտուտները: Դատարանակազմության ժողովրդավարական ինստիտուտներին համապատասխանում էին դատավարության սկզբունքները՝ օրինականության, հրապարակայնության, բանավորության, մրցակցության, անմեղության կանխավարկածի, մեղադրյալի պաշտպանության իրավունքի, անմիջա-

կանության և անընդհատության, կողմերի իրավահավասարության, դիսպոզիտիվության և այլն:

Պետք է նկատի ունենանք, որ Առաջին հանրապետությունում դատական իշխանության համակարգն իր ժամանակի համար բավական առաջավոր էր, իսկ նրա կառուցման փորձը՝ ուսանելի: Ներդրվելով արտակարգ իրավիճակում գտնվող նորահռչակ և հընթացս կառուցվող պետության կառավարման ապարատում՝ այն հակասության մեջ մտավ առկա հասարակական պայմանների հետ, որոնք չեզոքացրին համակարգի գործառութավորումը: Սակայն համակարգային այդ հակադրությունը հաղթահարելի էր. դրա համար ընդամենը ժամանակ էր պետք: Եթե հանկարծ պատմությունը տար այդ ժամանակը, անշուշտ, դատական համակարգի և դրան ընդգրկող մետահամակարգերի կոլիզիան հնարավոր կլիներ հաղթահարել:

Յուրօրինակ և նախադեպը չունեցող էր խորհրդային սոցիալիստական դատական շինարարությունը: Իշխանությունների տարանջատման սկզբունքը չէր ընդունվում սոցիալիստական պետականագիտության կողմից, որը որպես գլխավոր խնդիր ընդգծում էր պրոլետարիատի դիկտատուրայի ապահովման և ամրապնդման անհրաժեշտությունը: Դասակարգային քաղաքական շահերը կանխորոշում էին սոցիալիստական պետության իշխանության կառուցման ու իրականացման ինստիտուտները, որոնց հիմքում ընկած էր դրա միասնությունն ապահովող **խորհուրդների լի իշխանության սկզբունքը**:

Իշխանությունների տարանջատման սկզբունքի անտեսումը, արդարադատության ոչ պատշաճ սահմանադրական իրավական կարգավորումն ամբողջատիրական վարչաձևի պայմաններում հանգեցրին նրան, որ դատարանները, ինչպես և արդարադատության ողջ կառույցը, դիտվում էին որպես երկրի կառավարման վարչաիրամայական համակարգի տարր: Դատարանները հիմնականում դիտարկվում էին որպես հարկադրանքի ու բռնության մարմիններ՝ հաճախ դատական ձևական ծիսակատարությամբ զարդարելով քննվող գործի նախօրոք որոշված արդյունքը: Ընդ որում, Հայաստանում մեծամասնականությունը «դատական շինարարությունն» սկսեց արդարադատության մերժման ծայրագույն մերժողական դիրքորոշումից՝ իրականացնելով Առաջին Հանրապետության դատական համակարգի հեղափոխական ջարդ և հիմնադրեց դասակարգային-արտակարգ դատական համակարգ, որն իր հիմնական գծերով գործեց մինչև խրուշչովյան հալոցքի շրջանը:

1970-ական թթ. վերջերին անցկացված սահմանադրական-իրավական բարեփոխումները, դրանց արդյունքում համաժողովրդական պետության, հասարակական և պետական կյանքի իրավական հիմունքների, սոցիալիստական ժողովրդավարության և օրինականության զարգացման վերաբերյալ դրույթների ամրագրումը նոր հնարավորություններ բացեցին խորհրդային դատարանի զարգացման և ժողովրդավարացման համար: Սակայն այդ հնարավորությունների կենսագործմանը խոչընդոտեց այն ժամանակների իրադրությունը, քա-

ղաքական ղեկավարության, դրանով պայմանավորված նաև օրինաստեղծագործության պահպանողականությունը:

Հաշվի առնելով սոցիալիստական պետության պատմական անցյալը ՀԽՍՀ 1978 թ. Սահմանադրությունն ընդլայնեց արդարադատության ոլորտի սահմանադրական կարգավորման շրջանակները՝ դրանում ընդգրկելով նաև խորհրդային արդարադատության սկզբունքները, փաստաբանության, պետական արբիտրաժի, իսկ ԽՍՀՄ 1977 թ. Սահմանադրությունը՝ նաև ռազմական տրիբունալների կազմավորման և գործունեության հիմունքները:

Խորհրդային Հայաստանի 1978 թ. Սահմանադրությունը, ընդլայնելով հասարակական հարաբերությունների քննարկվող ոլորտի սահմանադրական կարգավորման շրջանակները, իրականում իրենում ամփոփում էր 50-ական թթ. վերջերից իրականացված դատական բարենորոգումները: Այդ Սահմանադրությամբ արդարադատության ոլորտի իրավակարգավորումներն աչքի էին ընկնում հետևյալ առանձնահատկություններով.

- 1) Հաշվի առնելով խորհրդային պետության պատմական անցյալը և ելնելով ստալինյան շրջանի արտակարգ դատարանների ու դատավարությունների դաժան փորձից՝ սահմանվեց, որ «ՀԽՍՀ-ում արդարադատությունն իրականացնում է միայն դատարանը»<sup>18</sup>: Սահմանադրության այս դրույթից բխում էր, որ որևէ այլ պետական մարմին չէր կարող իրականացնել արդարադատություն: Սահմանադրության 158-րդ հոդվածն ամրագրում էր մեկ այլ նորություն հանդիսացող սկզբունք. «Ոչ ոքի չի կարելի հանցագործության մեջ մեղավոր ճանաչել, ինչպես նաև քրեական պատժի ենթարկել այլ կերպ, քան դատարանի դատավճռով և օրենքին համապատասխան»: Խորհրդային իրավագիտությունը այս դրույթը դիտարկում էր որպես անմեղության կանխավարկածի սկզբունքի արտահայտություն խորհրդային քրեական դատավարության մեջ: Առաջին անգամ սահմանադրական մակարդակի էին բարձրացվում արդարադատության այնպիսի սկզբունքների ամրագրումը, ինչպիսիք էին՝ կոլեգիալությունը<sup>19</sup>, արդարադատության իրականացումը օրենքի և դատարանի առջև քաղաքացիների հավասարության հիման վրա, հասարակայնության մասնակցությունը դատավարությանը<sup>20</sup>:
- 2) Սահմանադրության մեջ նախկինից վերարտադրվում էին մի շարք սկզբունքներ որոշակի խմբագրական փոփոխություններով, մասնա-

<sup>18</sup> ՀԽՍՀ դատարաններ էին Գերագույն դատարանը, շրջանային (քաղաքային) ժողովրդական դատարանները:

<sup>19</sup> Գործերի քննությունը բոլոր դատարաններում կատարվում էր կոլեգիալ, առաջին ատյանում մասնակցում էին ժողովրդական ատենակալները, որոնք արդարադատություն իրականացնելիս օգտվում էին դատավորի բոլոր իրավունքներից:

<sup>20</sup> Դատական գործերի վարույթներին թույլատրվում էր ՀԿ-ների և աշխատավորական կոլեկտիվների ներկայացուցիչների մասնակցությունը: Օրինակ՝ քրեական վարույթում նախատեսված էին հասարակական մեղադրողի և պաշտպանի ինստիտուտները:

վորապես՝ հրապարակայնության, դատավորների անկախության, մեղադրյալի պաշտպանության իրավունքի ապահովման, դատավարության ազգային լեզվի: Դատավորների անկախության սկզբունքը՝ «անկախ են և ենթարկվում են միայն օրենքին» ձևակերպմամբ, երաշխավորվում էր նաև ժողովրդական ատենակալների համար,

- 3) Որպես սոցիալիստական ժողովրդավարության դրսևորում և միաժամանակ դատավորների անկախության երաշխիք՝ այդ Սահմանադրությունը սահմանում էր դատավորների և ժողովրդական ատենակալների ընտրովիության կարգը, սակայն ժամկետային հիմունքներով, համապատասխանաբար՝ հինգ ու երկու և կես տարի: Մինևոյն ժամանակ սահմանվում էր դատավորներին և ժողովրդական ատենակալներին ետ կանչելու ինստիտուտը. «դատավորներն ու ժողովրդական ատենակալները պատասխանատու են ընտրողների կամ իրենց ընտրող մարմինների առջև, հաշվետու են նրանց և կարող են նրանց կողմից ետ կանչվել օրենքով սահմանված կարգով»<sup>21</sup>:

Սահմանադրական բարեփոխումներից հետո հետագա փոփոխություններն ու լրացումները դատարանակազմության մեջ հիմնականում կոսմետիկ բնույթի էին: Դատարանները, որոնց բարձր կոչումը լայնորեն հռչակվում էր տարբեր մակարդակի ակտերում, իրականում հաճախ դիտարկվում էին որպես իրավապահպան մարմինների համակարգի սովորական, շարքային, բաղկացուցիչ մաս: Տեղի էր ունենում բացահայտ և գաղտնի միջամտություն արդարադատության իրականացմանը: Դատարանի և օրենքի առաջ քաղաքացիների հավասարության սկզբունքը, փաստորեն, չէր համարվում համընդհանուր, բոլորի նկատմամբ առանց որևէ բացառության կիրառելի: Դրա գործողության շրջանակներից կամայականորեն դուրս էին մղվել ոչ միայն որոշ պատասխանատու աշխատողներ, այլև նրանց հովանավորյալները: Դատական համակարգը, ըստ էության, կառավարման մարմինների գերատեսչական կառույց էր՝ ավել կամ պակաս չափով կախված քննության և դատախազության դիրքորոշումից, տեղական և այլ իշխանություններից:

**Այսպիսով, խորհրդային սահմանադրական բարենորոգումների երրորդ փուլը և դրա արդյունքում օրենսդրության վերանայումները չտվեցին էական գործնական արդյունքներ դատավորների անկախության ապահովման գործում:**

Գորբաչովյան վերակառուցման քաղաքականության շրջանում գաղափարական կաղապարներից ազատագրված իրավագիտությունը կարողացավ տալ խորհրդային դատական համակարգի պատմական զարգացման և առկա վիճակի օբյեկտիվ գնահատականը և հիմնավորել դրա արմատական բարեփոխ-

<sup>21</sup> Այս ինստիտուտը ներմուծվել էր դեռևս 1962 թ. մայիսի 11-ին ընդունված «ՀԽՍՀ դատարանների դատավորների և ժողովրդական ատենակալների վաղաժամկետ ետ կանչելու կարգի մասին» օրենքով:

ման անհրաժեշտությունը: Ենթադրվում էր, որ դրա իրականացման ընթացքում պետք է հաղթահարվեին՝ արդարադատության գաղափարականացվածությունը, արդարադատության իրական բնույթի և նպատակների խեղաթյուրումը, դատարանի և արդարադատության ոլորտի պաշտոնատար անձանց կախյալ վիճակը և դեպի պետության շահերը կողմնորոշումը և այլ բացասական դրսևորումներ: Պաշտոնական փաստաթղթերում հատուկ շեշտադրվում էր նաև դատարանի հեղինակության բարձրացման անհրաժեշտությունը և նախանշվում էին որոշ քայլեր դրա անկախության ապահովման համար, որոնք դաշնային օրենսդրությամբ մասամբ իրացվեցին «ԽՍՀՄ-ում դատավորների կարգավիճակի մասին» օրենքով: Դրանում առաջին անգամ խորհրդային պետության պատմության մեջ ամրագրվեցին դատավորի անկախության բավական լայն շրջանակի երաշխիքներ:

Սակայն դաշնության փլուզմամբ՝ ծավալված դատական բարեփոխումները մնացին անավարտ, իսկ Հայաստանում ձևավորված բարդ քաղաքական իրադրությունը կասեցրեց և վերակառուցման քաղաքականությունը, և ենթադրվող դատաիրավական բարեփոխումները:

**Մեկնարկային վիճակը իշխանությունների բաժանման ու դատավորների կարգավիճակի հարցերում:** Խորհրդային Հայաստանի պետական ապարատը կառուցված էր, այսպես կոչված, **խորհուրդների լիիշխանության ու ժողովրդավարական կենտրոնացման** սկզբունքների հիման վրա: Անկախության հռչակագիրն ընդունել է լիիշխան ու բարձրագույն ներկայացուցչական մարմնի կարգավիճակ ունեցող Գերագույն խորհուրդը: Հայաստանի անկախության մասին հռչակագրի 9-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում պետք է ապահովվեր «օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատում»: Հետևաբար, պետաիրավական բարեփոխումների հիմնական ուղղություններից էր իշխանությունների բաժանման սկզբունքի կենսագործումը, այդ հիմքով պետական ապարատի վերակառուցումը:

Անկախության հռչակագրի և դրանից հետո ընդունված մի շարք օրենսդրական ակտերի վերլուծությունը ցույց է տալիս, որ իշխանությունների բաժանման սկզբունքի իրավական ամրագրումն ու կենսագործումը տեղի ունեցավ աստիճանաբար: 1991 թ. նոյեմբերին ընդունվեց ՀՀ Գերագույն խորհրդի մասին օրենքը, որի 1-ին հոդվածը սահմանում էր՝ Գերագույն խորհրդը մշտապես գործող մարմին է, որն իրականացնում է օրենսդիր իշխանությունը և օրենսդրությամբ սահմանված այլ լիազորություններ: 1991 թ. հունիսին Գերագույն խորհուրդը որոշեց հիմնել ՀՀ պրեզիդենտի պաշտոն և տարվա վերջին անցկացնել ընտրություններ: 1991 թ. օգոստոսին Գերագույն խորհուրդն ընդունեց օրենք «ՀՀ Նախագահի մասին», ըստ որի՝ Նախագահը Հանրապետության բարձրագույն պաշտոնատար անձն էր և գլխավորում էր Հանրապետության գործադիր իշխանությունը:

Այդ ժամանակներից սկսած՝ հայ քաղաքագիտության և իրավագիտության մեջ առաջ են գալիս սկզբունքորեն նոր մոտեցումներ և հայեցակարգեր՝ պայմանավորված համաշխարհային քաղաքական-իրավական գիտության նվաճումներով: Տեսական միտքը, որն ընկած է արդի սահմանադրական կարգավորման հիմքում, արևմտյան ազատականությունն է, որը մշակել է քաղաքացիական հասարակության, խորհրդարանականության, իշխանությունների բաժանման, իրավական ու սոցիալական պետության և այլ հայեցակարգերը: Այսինքն՝ Հայաստանի սահմանադրական կարգերը փոխառեցին համաշխարհային սահմանադրական իրավական մտքի նվաճումները՝ փորձելով այն դնել ազգային հողի վրա:

Անկախացումից հետո դատական բարեփոխումների իրականացման առումով իրադրությունը մնաց անփոփոխ, որովհետև Հանրապետությունն ընկավ շատ բարդ արտաքին քաղաքական կացության մեջ, որը հանգեցրեց Հանրապետության տնտեսական շրջափակմանը և չհայտարարված պատերազմին՝ Ղարաբաղում: Այդպիսի պայմաններում դատաիրավական բարեփոխումների անցկացումը դարձավ անհնարին: Հետաձգման գործոն էր նաև սպասվող սահմանադրական բարեփոխումը:

1991-1998 թթ. դատարանակազմության մեջ կատարված փոփոխություններից ու լրացումներից էական էին միայն երկուսը: Առաջինը՝ արդարադատության իրականացման կոլեգիալության սկզբունքից հրաժարումը և ժողովրդական ատենակալների ինստիտուտի մասնակի վերացումն էր: 1994 թ. հուլիսի 1-ի օրենքով սահմանվեց առաջին ատյանի ժողդատարաններում քրեական գործերի մասնակի միանձնյա կարգով քննություն: Երկրորդը՝ Գերագույն դատարանի քրեական կոլեգիայի օրինական ուժի մեջ չմտած դատավճիռները վճռաբեկության կարգով գանգատարկելու և բողոքարկելու արգելքի վերացումն էր՝ 1992 թ. մայիսի 11-ի օրենքով: Գանգատարկման և բողոքարկման ատյան էր Գերագույն դատարանի նախագահությունը<sup>22</sup>:

Այսպիսով, անկախության հռչակման պահին Հայաստանի երրորդ հանրապետությունը ժառանգեց խորհրդային «դասական», չբարեփոխված դատական համակարգը, որը գործեց մինչև 1998 թ.:

#### **4. 1995 թ. Սահմանադրության ընդունումը և դատավորների անկախության իրավակարգավորումները դատաիրավական բարեփոխումների արդյունքում**

**Դատական իշխանության սահմանադրական հայեցակարգը:** 1990-95 թթ. իրականացված իրավական բարեփոխումներն իրենց հանգրվանը գտան 1995թ. հուլիսի 5-ի՝ հանրաքվեի միջոցով ընդունված Սահմանադրության մեջ: ՀՀ Սահմանադրությունը, ամբողջությամբ վերցրած, համապատասխանում էր միջազգային չափանիշներին և բավարարում էր արդի սահմանադրականության համընդհանուր ճանաչում ստացած պահանջները:

<sup>22</sup> Տես Հայաստանի գործող օրենքների ժողովածու (1990-1995 թթ.), Երևան, 1995 թ., էջեր 378-379, 732-734:

Հայաստանում սահմանադրական բարեփոխումները հիմնականում դրել էին ժողովրդավարության հիմքերը, և այդ տեսանկյունից ժողովրդավարության հաստատման, հասարակության քաղաքական զարգացման հիմնական իրավական պայմանները՝ որպես առաջադիմության կարևորագույն պայման, առկա էին: Սահմանադրական նպատակների նվաճման պարտականությունն անցնում էր օրենսդիրին և իրավագիտությանը, որոնց սպասվում էր հսկայական բարենորոգչական աշխատանք ուղղված սահմանադրական հիմունքների, ինստիտուտների և ընթացակարգերի կենսագործմանը, դրանց ձևավորման գործընթացները մինչև վերջ հասցնելուն և դրանով իսկ հայկական պետականության ու դատական իշխանության սահմանադրական հայեցակարգն իրականություն դարձնելուն:

Սահմանադրության 5-րդ հոդվածը սահմանում էր, որ պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների **տարանջատման սկզբունքի** հիման վրա:

1995 թ. Սահմանադրության 6-րդ գլուխը նվիրված էր դատական իշխանությանը: «Դատական իշխանություն» հասկացությունը խորհրդային սահմանադրություններում, իշխանությունների տարանջատման սկզբունքի մերժման պատճառով, չէր օգտագործվում: Նոր Սահմանադրությունն այս խնդրում ելնում էր իշխանությունների բաժանման հայեցակարգից և ամրագրում էր «իշխանությունների տարանջատման սկզբունքը»՝ որպես սահմանադրական կարգերի հիմունք: Սահմանադրության 6-րդ գլուխը հենված էր իշխանությունների բաժանման սկզբունքից բխող մի շարք տեսաիրավական ընդհանուր պահերի վրա, որոնք հանգում են հետևյալին:

**Դատական իշխանությունը պետական իշխանության տարատեսակ է, որա ինքնուրույն ճյուղերից մեկը:** 1995 թ. Սահմանադրությամբ ամրագրված դատական իշխանության լիազորությունների շրջանակները խոսում էին այն մասին, որ այդ իշխանությունը իշխանության մյուս ճյուղերի հետ միասին կոչված էր կատարելու կարևոր և պատասխանատու սոցիալական գործառույթներ: Դատական իշխանությունը պետական կառուցակարգի մեջ հատուկ տեղ զբաղեցնող մարմինների (դատարանների) կողմից մարդկանց վարքագծի և ընկերային գործընթացների վրա ներգործելու բազմազան լիազորություններն են, որոնց իրացումն ամբողջության մեջ հենց դատական իշխանության իրացումն է՝ որպես իշխանությունների բաժանման սկզբունքի բաղկացուցիչ:

**Դատական իշխանությունը և արդարադատությունը նույնական հասկացություններ չեն:** Դատական իշխանությունն ընդգրկում է իրենում արդարադատությունը, սահմանադրական վերահսկողությունը, պետական մարմինների և պաշտոնատար անձանց որոշումների ու գործողությունների օրինականության և հիմնավորվածության վրա կանոնավոր վերահսկողությունը և մի շարք այլ լիազորություններ: Այդ լիազորություններից յուրաքանչյուրն ունի իրեն

համապատասխանող դատական մարմինների ու դատական իշխանության իրականացման ընթացակարգային տարբերակներ՝ սահմանադրական, քաղաքացիական, տնտեսական, քրեական, վարչական և այլն:

Դատական իշխանության կողմից հատուկ գործառույթների կատարումը պահանջում է, որ այն կազմակերպվի և գործի հատուկ կանոնների պահպանմամբ, որոնք ուղղված են դատարանների անաչառության, անկաշառության, անկախության ապահովմանը: Դատարանի՝ որպես դատական իշխանության մարմնի, յուրահատկությունն այն է, որ այն գործում է հատուկ կանոններով և ընթացակարգերով, որոնց հիմունքներն ամրագրվել էին սահմանադրական մարկարդակով:

**Դատական իշխանության սահմանադրական ինստիտուտները:** Ելնելով դատական իշխանության հայեցակարգի հիմնարար գաղափարներից ու հիմնադրույթներից՝ 1995 թ. Սահմանադրությունը

**ա)** նախանշեց ՀՀ Սահմանադրական դատարանի ստեղծումը և գործունեությունը, կազմված ինն անդամից, որից հինգին նշանակում էր Ազգային ժողովը, չորսին՝ Հանրապետության Նախագահը,

**բ)** սահմանեց ընդհանուր իրավասության դատարանների եռաստիճան (առաջին ատյանի դատարաններ, վերաքննիչ դատարաններ և վճռաբեկ դատարան) ենթահամակարգ, որը նաև դատավորների ներհամակարգային անկախության ապահովման երաշխիք էր,

**գ)** արտոնեց առանձին մասնագիտացված դատարանների (տնտեսական, զինվորական, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դատարաններ) ստեղծման օրենսդրական հնարավորությունը,

**դ)** օրենսդիրին վերապահեց երդվյալ ատենակալների ինստիտուտի ներմուծման հնարավորությունը,

**ե)** արգելեց արտակարգ դատարանների ստեղծումը: Այդպիսի դատարաններ ստեղծելու պրակտիկան գոյություն է ունեցել և՛ առաջին, և՛ երկրորդ հանրապետություններում: Դրանցում արտակարգ դատարանները ստեղծվում էին սահմանադրական դատական համակարգերից դուրս՝ անտեսելով դատարանի ու դատավարության կազմակերպման իրավական, ժողովրդավարական սկզբունքները,

**զ)** ամրագրեց դատավորների կարգավիճակի հիմունքները, արդարադատության իրականացման սկզբունքները: Այս սկզբունքները Սահմանադրության մեջ ամրագրված էին որպես մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքներ (39-42 հհ.) և «Դատական իշխանություն» գլխում, որպես դատական մարմինների կազմակերպման ու գործունեության սկզբունքներ:

1995 թ. Սահմանադրության 97-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում էր, որ արդարադատություն իրականացնելիս **դատավորը և սահմանադրական դատարանի անդամն անկախ են և ենթարկվում են միայն օրենքին**, իսկ 2-րդ



մասը «դատավորի և սահմանադրական դատարանի անդամի գործունեության երաշխիքները և պատասխանատվության հիմքերն ու կարգը», այսինքն՝ անկախության իրական երաշխիքների ամրագրումը վերապահում էր օրենսդրական կարգավորմանը՝ «սահմանվում են օրենքով» ձևակերպմամբ: Բուն Սահմանադրությամբ սահմանված էին դատարանների ու դատավորների անկախության ապահովման միայն որոշ կառուցակարգային երաշխիքներ ու սկզբունքներ, մասնավորապես.

- 1) **Դատական մարմինների անկախության երաշխավոր էր ճանաչվում Հանրապետության Նախագահը, ով այդ լիազորությունն իրականացնում էր՝ գլխավորելով արդարադատության խորհուրդը** (Սահմանադրության 94-րդ հոդված): Արդարադատության նախարարը և գլխավոր դատախազն այդ խորհրդի փոխնախագահներն էին: Խորհրդի կազմի մեջ մտնում էին նաև Հանրապետության Նախագահի կողմից հինգ տարի ժամկետով նշանակվող տասնչորս անդամ, որոնցից երկուսը՝ իրավաբան գիտնական, ինը՝ դատավոր, երեքը՝ դատախազ: Խորհրդի երեքական անդամ նշանակվում էին առաջին ատյանի դատարանների, վերաքննիչ դատարանների և վճռաբեկ դատարանի դատավորներից: Դատավորների ընդհանուր ժողովները յուրաքանչյուր տեղի համար գաղտնի քվեարկությամբ պետք է առաջադրեին երեքական թեկնածու: Խորհրդի դատախազ անդամների թեկնածություններն առաջադրում էր գլխավոր դատախազը:

Արդարադատության խորհրդի լիազորություններն էին՝

**ա)** արդարադատության նախարարի առաջարկով կազմում և Հանրապետության Նախագահի հաստատմանն էր ներկայացնում դատավորների պաշտոնեական պիտանիության և ծառայողական առաջխաղացման ամենամյա ցուցակները, որոնց հիման վրա կատարվում էին նշանակումները.

**բ)** գլխավոր դատախազի առաջարկով կազմում և Հանրապետության Նախագահի հաստատմանն էր ներկայացնում դատախազների պաշտոնեական պիտանիության և ծառայողական առաջխաղացման ամենամյա ցուցակները, որոնց հիման վրա կատարվում էին նշանակումները.

**գ)** առաջարկում էր վճռաբեկ դատարանի, նրա պալատների նախագահների և դատավորների, վերաքննիչ, առաջին ատյանի և այլ դատարանների նախագահների թեկնածությունները, եզրակացություն էր տալիս արդարադատության նախարարի ներկայացրած մյուս դատավորների թեկնածությունների վերաբերյալ.

**դ)** առաջարկ էր ներկայացնում դատավորներին և դատախազներին որակավորման դասեր շնորհելու մասին.

**ե)** առաջարկ էր ներկայացնում դատավորի լիազորությունները դադարեցնելու, դատավորին կալանավորելու, դատական կարգով վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկելու համաձայնություն տալու մասին.

զ) դատավորներին ենթարկում էր կարգապահական պատասխանատվության<sup>23</sup>:

Դատավորին պատասխանատվության ենթարկելու հարցերը քննելիս՝ արդարադատության խորհրդի նիստերը վարում էր վճռաբեկ դատարանի նախագահը: Հանրապետության Նախագահը, արդարադատության նախարարը և գլխավոր դատախազն այդ նիստերին չէին մասնակցում:

**2) Սահմանվում էր դատավորի և սահմանադրական դատարանի անդամի անփոփոխելիության սկզբունքը**, համաձայն որի՝ դատավորը պաշտոնավարում էր մինչև իր 65 տարին, իսկ սահմանադրական դատարանի անդամը՝ 70 տարին լրանալը: Նրանց լիազորությունները կարող էին դադարեցվել միայն Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված դեպքերում և կարգով (Սահմանադրության 96-րդ հոդված):

**3) Սահմանվում էին դատավորի և սահմանադրական դատարանի անդամի պաշտոնների անհամատեղելիության և ապաքաղաքականացվածության սկզբունքները**: Նշյալ պաշտոնյաները չէին կարող զբաղեցնել պետական այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից, չէին կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ զբաղվել քաղաքական գործունեությամբ (Սահմանադրության 98-րդ հոդված):

**4) Սահմանվում էին դատավորի և սահմանադրական դատարանի անդամի անձեռնմխելիության հատուկ երաշխիքներ և պատասխանատվության հատուկ կարգ**:

Այսպիսով, անկախացումից հետո արմատական բարեփոխումների ճանապարհին հայ ժողովուրդը 1995 թ. հուլիսի 5-ին հանրաքվեի միջոցով ընդունեց նոր Սահմանադրություն, որը, ելնելով իշխանությունների բաժանման հայեցակարգից՝ 6-րդ գլխում ամրագրեց դատական իշխանության կառուցման և գործունեության սահմանադրական հիմունքները, ներառյալ՝ դատավորների իրավական կարգավիճակի ու անկախության սկզբունքի նոր հիմունքները: Ճանաչելով դատավորների և սահմանադրական դատարանի անդամների անկախության սկզբունքը՝ 1995 թ. Սահմանադրությունն այդ սկզբունքի հիմնական երաշխիքների սահմանումը վերապահվեց օրենսդրական կարգավորմանը:

<sup>23</sup> Սահմանադրական դատարանի անդամների լիազորությունները դադարեցնելը, նրան կալանավորելը, դատական կարգով վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկելը հնարավոր էր օրենքով սահմանված կարգով՝ Սահմանադրական դատարանի երակացության հիման վրա:

**Դատաիրավական բարեփոխումների առաջին փուլը և դրա արդյունքները. չիրագործված հույսեր:** ՀՀ Սահմանդրության ընդունումից հետո, արդեն խաղաղ պայմաններում, հրատապ դարձավ դատական բարեփոխման հայեցակարգի մշակումը և դրա կենսագործումը, որը պետք է ստեղծեր լիիշխան, անկախ դատական իշխանության համակարգ, իշխանություն, որի հիմնական կոչումը իրավապաշտպան գործառույթն էր, իսկ իրացման կարևորագույն եղանակը՝ արդարադատությունը:

Ստեղծված կառավարական հանձնաժողովը մշակեց Հայաստանի Հանրապետությունում դատաիրավական բարեփոխումների հայեցակարգ և արդյունքում՝ 1998 թ. Ազգային ժողովն ընդունեց դատաիրավական բարեփոխումներն ապահովող հիմնական օրենքների փաթեթը:

1998 թ. հունիսի 18-ին ընդունված «Դատարանակազմության մասին» ՀՀ օրենքի հիման վրա ստեղծված դատական համակարգը որոշ բացառություններով համապատասխանում էր դատական համակարգերի կառուցման և գործունեության ժողովրդավարական ընդհանուր սկզբունքներին: Այդ օրենքն արձանագրում էր հաջողություններ, բայց նաև ուներ բացթողումներ ու թերություններ, որոնք դատավորների անկախության երաշխավորման հարցում էական էին:

Դատական համակարգի կազմավորման ու գործունեության կարգի իրավակարգավորումների բովանդակության և տեխնիկայի փորձի համատեքստում այդ օրենքը բավական համառոտ ու փոքրածավալ էր: Ուշագրավ է, որ այն կազմված էր 33 հոդվածից՝ տեղաբաշխված 6 գլուխներում (ընդհանուր դրույթներ, առաջին ատյանի դատարաններ, վերաքննիչ դատարաններ, վճռաբեկ դատարան, դատարանների նախագահների խորհուրդ, եզրափակիչ դրույթներ): Դատարաններին վերաբերող գլուխները սահմանում էին համապատասխան դատարանի հասկացությունը, լիազորությունները և դրանց տեղաբաշխումը, դատարանների նախագահների լիազորությունները, դատարանի աշխատակազմը: Ընդհանուր դրույթներում ամրագրված էին դատական համակարգի կազմակերպական ու գործառույթային մի շարք սկզբունքներ, ներառյալ «Արդարադատություն իրականացնելիս դատավորներն անկախ են և ենթարկվում են միայն օրենքին» իրավադրույթը, որն էլ Սահմանադրության 97-րդ հոդվածի 1-ին մասի վերարտադրությունն էր: Ավելին, բացի այդ իրավադրույթից, քննարկվող օրենքի որևէ այլ հոդվածում չէին օգտագործված «դատարանի անկախություն», «դատական իշխանության անկախության» կամ «դատավորի անկախություն» ձևակերպումները:

**Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ դատավորների անկախության սկզբունքի հիմնական երաշխիքների օրենսդրական ամրագրման սահմանադրական պահանջը, հիմնականում սուբյեկտիվ պատճառներով, մնացել էր չիրագործված:**

**5. Դատավորների անկախության հիմնահարցերը 2005 թ. սահմանադրական փոփոխությունների և դրանով պայմանավորված դատաիրավական բարեփոխումների գործընթացում**

**Դատական իշխանության ոլորտում Սահմանադրության գործողության արդյունքները և դրա բարեփոխման անհրաժեշտությունը:**

1995 թ. ՀՀ Սահմանադրության ընդունումից ի վեր դրա գործողության փորձն ակնհայտորեն հաստատեց, որ դրա ընդունումը և դատական իշխանության ինստիտուտի ամրագրումն առաջընթաց քայլեր էին նախկին սահմանադրական օրենսդրության համեմատ: Սակայն իրականության մեջ պարզ դարձավ նաև, որ Սահմանադրության դատական իշխանություն գլուխը մշակվել է առանց նախնական հայեցակետ ունենալու, առանց խորքային գիտական փորձաքննություն անցկացնելու:

ՀՀ 1995 թ. Սահմանադրությունն իշխանությունների բաժանման տեսության առումով ուներ երեք հիմնական «թույլ օղակ»: Նախ, որոշակիացված չէր նախագահական ինստիտուտի տեղը պետական իշխանության համակարգում, երկրորդ՝ օրենսդիր, գործադիր ու դատական իշխանությունները չունեին անհրաժեշտ գործառնական անկախություն ու դինամիկ հավասարակշռված վիճակ, երրորդ՝ խախտված հավասարակշռության բացահայտման, գնահատման ու վերականգնման մեխանիզմներն անկատար էին<sup>24</sup>:

Իրավական պետականության սահմանադրական տեսլականն ուներ կատարելագործման անհրաժեշտություն ոչ միայն իշխանությունների բաժանման, այլև մարդու իրավունքների կարգավորման ու օրենքների իրավականության երաշխավորման հարցերում: Մասնավորապես՝ սահմանադրական մոդելում առկա էին այնպիսի թերություններ, ինչպիսիք են իշխանությունների անհավասարակշիռ բաժանումը, հակակշիռների և զսպիչների ոչ արդյունավետ համակարգը, գործադիր իշխանության երկատումը նախագահականի և կառավարականի, դատական իշխանության կազմակերպման և գործունեության սահմանադրական նորմերի ընդհանուր, ճշացող, ոչ հստակ բնույթը, անհատի սահմանադրական դատարան դիմելու իրավունքի ուղղակի չամրագրումը և այլն: Այդ ամենի արդյունքում Հայաստանում առկա էր պետության հաշվետվության ու պատասխանատվության խնդիրը:

Դատական իշխանության ոլորտում սահմանադրական բարեփոխումների առաջնակարգ խնդիրները նույնն էին ինչ որ նախորդ փուլում՝ կայացնել բացառիկ, միասնական, լիիշխան, անկախ դատական իշխանություն, որն ընդունակ կլիներ սահմանափակել պետական իշխանության այլ ճյուղերի կամայականությունը, հուսալիորեն կպաշտպաներ մարդու և քաղաքացիական հասարակության իրավունքները:

<sup>24</sup> Տե՛ս Հարությունյան Գ.Գ., ՀՀ իրավունքի գերակայության սահմանադրական երաշխիքները, Եր., Նժար, 2003, էջ 46:

2005 թ. հանրաքվեի արդյունքում կատարված սահմանադրական բարեփոխումները՝ հաշվի առնելով արդեն առկա կառույցների գործունեության, ինչպես նաև համաշխարհային փորձը, կատարելագործեցին իշխանությունների բաժանման սկզբունքի համակարգային բաղադրատարրերը: Դրանցից ամենակարևորն այն էր, որ Սահմանադրության նոր խմբագրությամբ 5-րդ հոդվածը սահմանում էր, որ պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա: Այստեղ նորոյթ էր «տարանջատման» եզրույթի փոխարինումը «իշխանությունների բաժանում»-ով, ինչպես նաև հավասարակշռման դրույթը, ինչն իր ինստիտուցիոնալ արտահայտությունն էր գտել Սահմանադրության առանձին իշխանություններին վերաբերող դրույթներում:

2005 թ. բարեփոխված Սահմանադրությունն ամրագրում էր դատական իշխանության մի շարք գործառությանի և կազմակերպական հիմունքներ: Դատական իշխանության առաքելության, արդարադատության ձևերի մասին ընդհանրապես խոսք չկար, իսկ բուն դատական համակարգի կառույցի հիմունքները մասամբ անորոշ էին: Հենց վերջին հանգամանքն էլ թույլ էր տալիս ընթացիկ օրենքներով քաղաքական-տակտիկական, իրավիճակային-խմբակային շահերից ելնելով, փոխել դատական համակարգի կառույցը, մինչդեռ կայունությունը, որ պետք է երաշխավորվի սահմանադրական ամրագրմամբ, վերաբերում է հենց դատական իշխանության համակարգին: Այսպիսով, վերացնելով սահմանադրական կարգավորման նախորդ փուլի մի շարք բացթողումներ և թերություններ, խախտվեցին դատական իշխանության համակարգի կառուցման խնայողականության և միասնականության դատարանակազմական սկզբունքները:

**Դատական իշխանության ոլորտում 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրության նորամուծությունները և ինստիտուտները:** Դատավորների անկախության սահմանադրական կարգավորումները, նախորդի հետ համեմատած, աչքի էին ընկանում հետևյալ բովանդակային նորամուծություններով.

**1) Ամրագրվեց, որ Սահմանադրությունը և օրենքները սահմանում են դատարանների լիազորությունները, կազմավորման ու գործունեության կարգը, երաշխավորում են դատարանների անկախությունը** (Սահմանադրություն, հոդված 94)<sup>25</sup>: Նախորդ խմբագրությունը դատական մարմինների անկախության երաշխավոր էր համարում Հանրապետության Նախագահին:

**2) Հանրապետության Նախագահը զրկվեց Արդարադատության խորհրդում նախագահելու լիազորությունից, իսկ դրա կազմից հանվեցին դատախազության ներկայացուցիչները:** Արդարադատության խորհուրդը

<sup>25</sup> Սահմանադրական դատարանի լիազորություններն ու կազմավորման կարգը սահմանվում էին Սահմանադրությամբ, իսկ գործունեության կարգը՝ Սահմանադրությամբ և Սահմանադրական դատարանի մասին օրենքով:

կազմված էր դատավորների ընդհանուր ժողովի կողմից գաղտնի քվեարկությամբ հինգ տարի ժամկետով ընտրված ինը դատավորներից, Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի կողմից նշանակված երկուական իրավաբան-գիտնականներից: Այդ խորհրդի նիստերը վարում էր վճռաբեկ դատարանի նախագահը՝ առանց քվեարկության իրավունքի:

**3) Արդարադատության խորհուրդն էր** օրենքով սահմանված կարգով դատավորներին ենթարկում կարգապահական պատասխանատվության, առաջարկ էր ներկայացնում Հանրապետության Նախագահին դատավորի լիազորությունները դադարեցնելու մասին, դատավորին կալանավորելու, նրան որպես մեղադրյալ ներգրավելու կամ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու համաձայնություն տալու մասին:

**4) Պահպանվեց դատավորի և սահմանադրական դատարանի անդամի անփոփոխելիության սկզբունքը**, սակայն սահմանվեց նրանց պաշտոնավարման միասնական տարիք՝ մինչև 65 տարին (Սահմանադրության 96-րդ հոդված):

**5) Պահպանվեց դատավորի և սահմանադրական դատարանի անդամի ապաքաղաքականացվածության սկզբունքը՝** առանց որևէ բովանդակային փոփոխության: Միաժամանակ, **պաշտոնների անհամատեղելիության սկզբունքը** շարադրվեց նոր բովանդակությամբ. «Դատավորը և սահմանադրական դատարանի անդամը չեն կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, զբաղեցնել իրենց պարտականությունների հետ չկապված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում, պաշտոն առևտրային կազմակերպություններում, կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից» (Սահմանադրության 98-րդ հոդված):

**6) Նորացվեց դատավորի և սահմանադրական դատարանի անդամի անկախության սկզբունքի բովանդակությունը՝** սահմանելով, որ արդարադատություն իրականացնելիս նրանք անկախ են և ենթարկվում են, նախ, Սահմանադրությանը և այնուհետև՝ օրենքին:

**7) Սահմանվեց, որ դատավորի և սահմանադրական դատարանի անդամի գործունեության երաշխիքները և պատասխանատվության հիմքերն ու կարգը սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքով:** Սահմանադրությունը՝ որպես դատավորի և սահմանադրական դատարանի անդամի գործունեության սահմանադրական երաշխիք, սահմանում էր, որ նրանք չեն կարող կալանավորվել, ներգրավվել որպես մեղադրյալ, ինչպես նաև նրանց նկատմամբ չի կարող դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցվել՝ առանց համապատասխանաբար արդարադատության խորհրդի կամ Սահմանադրական դատարանի համաձայնության: Դատավորը և Սահմանադրական դատարանի անդամը չէին կարող ձերբակալվել, բացառությամբ այն դեպքերի, երբ ձերբակալումն իրականացվում էր հան-

ցագործության կատարման պահին կամ անմիջապես դրանից հետո: Նման դեպքերում ձեռքարկված մասին անմիջապես պետք է տեղեկացվեր Հանրապետության Նախագահը և համապատասխանաբար՝ վճռաբեկ դատարանի նախագահը կամ Սահմանադրական դատարանի նախագահը:

**Դատարանակազմական օրենսդրության կողմից:** 2007 թ. փետրվարի 21-ին ընդունվեց Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրքը (այսուհետև՝ Օրենսգիրք), որը կարգավորում էր դատական իշխանության կազմակերպման և գործունեության հետ կապված հարաբերություններն այնքանով, որքանով դրանք չէին վերաբերում ՀՀ սահմանադրական դատարանին<sup>26</sup>:

**Որպես կողմից կազմակերպի ձևով իրավունքի համակարգմամբ ընդունված օրենք**, այն միավորեց դատական իշխանության կազմակերպման ու գործունեության, որպես համասեռ հասարակական հարաբերությունների, կարգավորման բոլոր հիմնական նորմերը: Հետևաբար, Օրենսգրքի ընդունմամբ արձանագրվեց առաջընթաց իրավաբանական տեխնիկայի տեսանկյունից: Սակայն առաջընթացն ակնհայտ էր նաև կարգավորման առարկայի ընդգրկման բովանդակության ամբողջականության ու մանրամասնության տեսանկյուններից: Այսպես՝ Օրենսգիրքը սկզբնապես կառուցված էր երեք մասից, ութ բաժնից, 228 հոդվածից<sup>27</sup>: Օրենսգրքի «Դատական իշխանությունը» 1-ին մասի՝ «Դատարանակազմությունը» 1-ին բաժինը ներառում էր տասը գլուխներ, այն է՝ ընդհանուր դրույթներ, դատական իշխանության գործունեության սկզբունքները, ընդհանուր իրավասության դատարանը, քաղաքացիական դատարանները, քրեական դատարանները, վարչական դատարանը, վերաքննիչ դատարանը, վճռաբեկ դատարանը, դատարանի բնականոն գործունեության ապահովման երաշխիքները, դատական իշխանության ինքնակառավարումը:

Ըստ էության, կարող ենք արձանագրել, որ Օրենսգրքի ընդունումն ազդարարեց դատարանների ու դատավորների անկախության ու անաչառության իրավաօրենսդրական երաշխիքների բավական լայն շրջանակ, ինչը բացակայում էր նորմատիվ կարգավորման նախորդ կառուցակարգում: Կարծում ենք, որ Օրենսգրքի իրավակարգավորումներն իրենց ամբողջության մեջ մի մասն ուղղակիորեն, մյուսն՝ անուղղակիորեն, առաջին հերթին նպատակամղված էին հենց դատարանների ու դատավորների անկախության, որպես դատական իշխանության համակարգի ամենագլխավոր, առանցքային որակի, հատկանիշի ապահովմանը: Այդ տեսանկյունից, եթե փորձենք պարզել, թե ո՞րն էր Օրենսգրքում ամրագրված դատարանների ու դատավորների անկախության օրենսդրական երաշխիքների համակարգը, դրա տարրերը, ապա անխուսափելիորեն պետք է վերլուծության ենթարկենք դրա համարյա բոլոր իրավադրույթները,

<sup>26</sup> Հետագայում Օրենսգրքի կարգավորման առարկայի մեջ ներառվեցին նաև հաշտարարության կազմակերպման և գործունեության հետ կապված հարաբերությունները:

<sup>27</sup> Հետագայում դրանում կատարված լրացումների հետևանքով ավելացվեցին նոր բաժիններ ու գլուխներ:

ինչը սույն ուսումնական ձեռնարկի խնդիրը չէ: Այստեղ արձանագրենք միայն մեկ փաստ՝ վկայակոչելով Օրենսգրքի կառուցվածքը: *Օրենսգրքի 2-րդ բաժինը վերնագրված էր «դատավորի կարգավիճակը» և դրա կառուցվածքում ներառված էին երկու գլուխ՝ «Դատավորի գործունեության նյութական, սոցիալական և այլ երաշխիքները», «Դատավորի վարքագծի կանոնները», որոնք ամրագրում էին դատավորների անկախության բազմաթիվ ու բազմակողմանի իրավակարգավորումներ ու օրենսդրական երաշխիքներ:*

Իրավակարգավորումների և բովանդակային, և ծավալային, և իրավատեխնիկական առաջընթացը ձևական-իրավական տեսանկյունից ակնհայտ էր: Սակայն Հանրապետության այդ շրջանում իրավական համակարգի գործողության հիմնական սոցիոլոգիական օրինաչափությունը խզվածքն էր իրավակարգավորումների ու իրականության միջև, ինչը հաստատվում է այդ շրջանի իրավագետների բազմաթիվ հետազոտություններով: Օրինակ՝ «Հայաստանի Հանրապետությունում դատարանն այժմ ավելի շատ հիշեցնում է վարչական մարմնի, դատավորը՝ իր հայեցողությամբ գործող չինովնիկի: Եթե ասվածին ավելացնենք, որ տեսականորեն դատավոր կարող է դառնալ 25 տարեկան անձը, որը, փաստորեն, չունի կենսական և մասնագիտական բավարար փորձ, դժվար չէ պատկերացնել, թե պատասխանատվության ինչ ծանր բեռ է ընկնում նրա ուսերին հատկապես ծանր հանցագործությունների վերաբերյալ և հասարակական մեծ հնչեղություն ունեցող գործեր քննելիս: Ուստի կարելի է վստահորեն ասել, որ դատավորին այդ պայմաններում իր պարտականությունները կատարելիս օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառների ուժով ոչ միշտ է հաջողվում գտնվել պարզած բարձրության վրա»<sup>28</sup>:

Համաձայն մեկ այլ գնահատականի՝ բացի ինստիտուցիոնալ ամրագրումից անհրաժեշտ է պետության, նրա մարմինների ու պաշտոնյաների հաշվետվության ու պատասխանատվության մշակույթի ձևավորումը, որում մեծ դեր է խաղում քաղաքացիական հասարակության կառույցների ու կազմակերպությունների միությունը: Այդպիսի միությունը պետք է կազմակերպի դիմադրություն իշխանության կամայական օգտագործման ավանդույթներին: Այդ միությունը պետք է ջանքեր թափի իշխանության ճյուղերի փարանջատման սկզբունքի ինստիտուցիոնալ ամրագրման նպատակով: Եթե ծագած վեճերն անհնարին է լուծել դատարանի միջոցով, եթե կոռուպցիան իմաստից զրկում է իրավաբանական ընթացակարգերը, և եթե էլիտան գործում է առանց օրենքներին նայելու, ապա իշխանությունների փարանջատումն անընդունակ է կատարելու իրեն հասած դերը, այն դառնալու է շղարշ իշխանության ներքին կլանային բաժանման համար, հեղուաբար՝ երկիրն ընդունակ չէ ապահովել իր քաղաքացիների իրավունքների իրականացումը: Նշանակում է անհրաժեշտ են նոր կառուցվածքային և ինստիտուցիոնալ բարեփոխումներ:

<sup>28</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության դատարանակազմությունը և իրավապահպան մարմինները /Ս. Դիլբանդյան, Ա. Հարությունյան, Գ.Ղազինյան, Հ.Ղուկասյան, Եր., ԵՊՀ հրատ., 2008, էջ 169-171:



Դատական իշխանության, ներառյալ անկախության ոլորտում առկա խնդիրների արձանագրումներ կատարեց նաև սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովը՝ 2014 թ. «Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգում»: Հայեցակարգի համաձայն՝ «*Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սահմանադրական համակարգում դատական իշխանությունը գլխավորապես ունի հավասարակշռող կամ կայունացնող դեր: Նման առաքելության իրացման առաջնային նախադրյալը ոչ իրավաչափ ցանկացած ներգործությունից կամ միջամտությունից դատական իշխանության պաշտպանվածությունն է՝ դրա անկախության տեսքով: Միայն գործառության, կառուցակարգային, նյութական ու սոցիալական անհրաժեշտ ու բավարար անկախությամբ օժտված դատական իշխանությունը կարող է երկրում իրավունքի գերակայության, արդյունավետ արդարադատության և արդար դատաքննության երաշխավոր հանդիսանալ:*

*Հայաստանի Հանրապետությունը, միջազգայնորեն ճանաչված սկզբունքների հիման վրա, 1995 թ. Սահմանադրության ընդունումով նախաձեռնել և 2005 թ. կատարված բարեփոխմամբ շարունակել է անկախ դատական իշխանության և արդարադատության արդյունավետ համակարգի ձևավորմանն ու զարգացմանն ուղղված քայլերի իրականացումը: Սակայն վերջին տարիներին, հասարակության իրավագիտակցության բարձրացման, քաղաքացիական հասարակության զարգացման պայմաններում, այս ոլորտում բացահայտվել կամ ընդգծվել են մի շարք առանցքային խնդիրներ, որոնք ժողովրդավարական և իրավական պետությունների լավագույն ավանդույթներին համահունչ արդյունավետ լուծումներ են պահանջում՝ հենց Սահմանադրության մակարդակով:*

*Այդ խնդիրներից հիմնականը դատական իշխանության գործունակության ցածր մակարդակն է, որը պայմանավորված է դատական իշխանության գործառույթային անհստակություններով, կառուցակարգային անկայունությամբ, ոչ լիարժեք անկախությամբ, դատավարական ընթացակարգերի թերություններով, ինչպես նաև սուբյեկտիվ գործոններով պայմանավորված մի շարք բացասական դրսևորումներով: Դրանց հետևանքով ցածր է նաև դատարանների հանդեպ հանրային վստահությունը»:<sup>29</sup>:*

Վերը բերված հղումների համատեքստում առաջանում է հարց, արդյո՞ք անընդհատ կառուցվածքային և ինստիտուցիոնալ իրավական բարեփոխումներն ունակ են լուծելու դատական իշխանության անկախության հետ կապված բոլոր խնդիրները: Եթե ոչ, ապա ուրիշ ի՞նչ էական գործոններ ու պայմաններ կան, որոնք իրավական կարգավորման հետ դաշնակցած պայմանավորում են այդ անկախության կայացումը:

<sup>29</sup> Տե՛ս <http://www.parliament.am/library/sahmanadrakan%20barepoxumner/hayecakarg.pdf>

### ԳԼՈՒԽ 3

## ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՅԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՅՆԱՊԱՏԿԵՐՈՒՄ

#### 1. Հայաստանի անկախացումը և դատական իշխանության սահմանադրական համակարգի կայացման իրավական գործընթացները

Ձեռնարկի այս հատվածում իրավական համակարգի բարեփոխումների հիմքերին կանդրադառնանք հիմնականում՝ 1995 թ. Սահմանադրության ընդունումից հետո արձանագրված զարգացումներին, քանզի մինչ այդ հատվածին արդեն իսկ հանգամանալից անդրադարձ է եղել նախորդ գլուխներում: Միաժամանակ, հետազոտության ամբողջականությունը երաշխավորելու նկատառումով հնարավորինս հակիրճ կվերլուծենք հիշյալ իրավական հիմքերը՝ բացառապես դատական համակարգի կայացման տեսանկյունից: Ինչևէ, Խորհրդային իրավական համակարգում բացակայում էին դատավորների անկախության առնչությամբ սկզբունքային հիմնադրույթներ, ինչը թելադրված էր միակուսակցական քաղաքական համակարգի համատեքստում, այսպես կոչված՝ դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքով կենտրոնացված իշխանությանը տուրք տալու նկրտումներով: Աշխարհաքաղաքական զարգացումներով թելադրված՝ գաղափարական որոշ մեղմացումների արդյունքում դատական իշխանության՝ որպես իշխանության ինքնուրույն ճյուղի գաղափարի որոշ բաղադրիչներ, այն էլ խիստ ընդհանուր գծերով, առաջին անգամ ճանաչվեցին Հայկ. ՍՍՀ 1978 թ. Սահմանադրությամբ: Ըստ էության, նախապատվությունը տրվել էր ոչ թե «դատական իշխանության անկախությանը», այլ «դատավորների անկախությանը»: Սակայն անգամ այդ խիստ թերի հիմնադրույթը շարունակեց մնալ որպես սոսկ սահմանադրական նորմ: Բնորոշ է այն, որ այդ Սահմանադրությամբ ընդհանրապես անտեսվել էր իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը, որպիսի պարագայում իշխանության որևէ ճյուղի անկախության մասին խոսելն ինքնին իմաստազուրկ է: Մասնավորապես, ամրագրվեց այն մոտեցումը, ըստ որի՝ «Ժողովուրդը պետական իշխանությունն իրականացնում է պատգամավորների խորհուրդների միջոցով, որոնք Հայաստանի Հանրապետության քաղաքական հիմքն են»: Ընդհանրապես, սահմանադրաիրավական հարթությամբ հստակ տարանջատված չէին նաև օրենսդիր և գործադիր իշխանության ճյուղերը, իսկ առանձին սահմանադրական մարմիններին առնչվող դրույթները պարզապես միտված են եղել ապահովելու կառուցակարգային ամրագրումների մասնակի որոշակիությունը:

Ոչ միայն հիշյալ Սահմանադրությամբ, այլև ընթացիկ օրենսդրական ակտերով այդպես էլ չամրագրվեցին նշված սահմանադրական սկզբունքի երաշ-

խավորման համարժեք իրավական հիմքեր: Այսպես, Հայկ. ՍՍՀ 1978 թ. Սահմանադրության 153-րդ հոդվածով սահմանված էր.

*«Դատավորներն ու ժողովրդական արենակալներն անկախ են և ենթարկվում են միայն օրենքին:*

*Դատավորների և ժողովրդական արենակալների համար պայմաններ են ապահովվում իրենց իրավունքների ու պարտականությունների անարգել և արդյունավետ իրականացման համար: Դատավորների և ժողովրդական արենակալների՝ արդարադատության իրականացման գործունեությանը որևէ միջամտություն անթույլատրելի է և առաջ է բերում օրենքով սահմանված պատասխանատվություն»:*

Վերոհիշյալ իրավական դրույթը կարող էր իրական լինել, եթե նույն Սահմանադրությամբ ամրագրված չլինեին դատավորների անկախությունը բացահայտ խարխուղ այնպիսի վերապահումներ, ինչպիսիք էին կոմունիստական կուսակցությանը որպես քաղաքական համակարգի միջուկ ճանաչելը, օրենքների ճշգրիտ և միատեսակ կատարման նկատմամբ բարձրագույն հսկողությունը դատախազությանը վերապահելը և այլն:

Անշուշտ, ժողովրդավարության ընդունված սկզբունքների հետ որևէ աղերս չունեցող խորհրդային գաղափարախոսությամբ թելադրված իրավական մշակույթը պարզապես անհնարին էր մեկ իրավական փաստաթղթով ամբողջովին վերանայել և համապատասխանեցնել ժողովրդավարության արդի չափանիշներին: Սակայն դատական իշխանության անկախության բարեփոխումների ողջ գործընթացը դե ֆակտո առավել խայտաբղետ էր, այն թելադրված էր իրավաքաղաքական տարաբնույթ սուբյեկտիվ և օբյեկտիվ նախադրյալներով: Վերջին հաշվով, զգացնել էին տալիս այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ փորձի իսպառ բացակայությունը, խոցելի իրավագիտակցությունը, գործադիր իշխանությունը դատական վերահսկողությունից զերծ պահելու անթաքույց նկրտումները (այս երևույթը, ըստ էության, համընդհանուր է և այս կամ այն չափով դրսևորվել է սոցիալական արմատական փոփոխությունների արդյունքում ձևավորված իշխանության եկած քաղաքական ուժերի պարագայում) և այլն: Ըստ այդմ էլ՝ արձանագրվեց դատական իշխանության անկախության իրավական հիմքերի ձևավորման աստիճանական գործընթաց:

Նախ, անդրադառնանք 1990 թ. օգոստոսի 23-ի «ՀՀ անկախության մասին» հռչակագրին (այսուհետ նաև՝ Հռչակագիր), որի 9-րդ կետով հստակ ամրագրվեց իշխանությունների բաժանման սկզբունքը: Հռչակագրի արժեքը հատկապես այն էր, որ դրանով միաժամանակ ամրագրված էին իշխանության բաժանման սկզբունքին համահունչ հիմնադրույթներ, այսինքն՝ այն լիարժեք և ամբողջական փաստաթուղթ էր՝ զուրկ ներքին անհարկի հակասություններից: Այսպես, Հռչակագրով նախապատվությունը տրվեց ոչ թե իր էությանը խորհրդային գաղափարախոսությանը համահունչ «ողջ իշխանությունը պատկանում է ժողովրդին» թեզին, այլ «Հայոց պետականության կրողը Հայաստանի Հանրապետության ժողովուրդն է, որն իր իշխանությունը իրագործում է անմիջականո-

րեն և ներկայացուցչական մարմինների միջոցով» հիմնադրույթին, ինչն արդեն գրեթե համընդհանուր բնույթ ունի: Նկատի ունենք այն, որ իշխանությունը ժողովրդին պատկանելու առնչությամբ խորհրդային թեզը անհամատեղելի է իշխանությունների բաժանման սկզբունքի հետ, քանզի անխուսափելիորեն ծագում է ներքին հակասականություն:

Նկատենք, որ մինչ այդ՝ Հայկ. ՍՍՀ 1978 թ. Սահմանադրության փոփոխություններով արդեն իսկ կատարվել էին որոշ մասնակի վերանայումներ, որոնք միտված էին դատական իշխանությունը կայացնելու առաքելությանը, թեպետ դեռևս նկատվում էր խորհրդային իրավական գաղափարախոսության ազդեցությունը: Այսպես, 1990 թ. փետրվարի 13-ի «Հայկ. ՍՍՀ Սահմանադրության (Հիմնական օրենքի) փոփոխությունների և լրացումների մասին» օրենքով (ՀՀԳԽՏ 1990/4(960), հոդ. 55) Սահմանադրության 151-րդ հոդվածը շարադրվել էր հետևյալ խմբագրությամբ. «Հայկական ԽՍՀ գերագույն դատարանը Հայկական ԽՍՀ բարձրագույն դատական մարմինն է և հսկողություն է իրականացնում հանրապետության դատարանների դատական գործունեության նկատմամբ», ինչից բխում է, որ հանրային իշխանությունները դեռևս բավարար պատկերացում չեն ունեցել դատական իշխանության ներքին անկախության հարցադրումների մասին:

Թերևս, առաջադիմական կարող է համարվել այն, որ նույն օրենքով ներդրվեցին, այսպես կոչված՝ Հայկ. ՍՍՀ Սահմանադրական հսկողության կոմիտեի իրավական հիմքերը, ինչը էվոլյուցիոն կտրվածքով կարողացավ հանդես գալ հետագայում ստեղծվելիք Սահմանադրական դատարանի նախատիպը: Այս կառույցի գործնական նշանակությունը նաև այն էր, որ դատախազությանը վերապահված ընդհանուր հսկողությունն այլևս չէր դիտվում որպես գերակա ուղղություն: Ինչևէ, Սահմանադրության 113-րդ հոդվածով հանգամանորեն ամրագրվեցին Սահմանադրական հսկողության կոմիտեի լիազորությունները և գործառույթները: Այսպես, այդ հոդվածի 1-ին կետի համաձայն. «Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի հանձնարարությամբ նրան եզրակացություններ է ներկայացնում Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի քննարկմանը ներկայացված Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ ակտերի նախագծերը Հայաստանի Հանրապետության սահմանադրությանը համապատասխան լինելու մասին»: Հարկ է նկատել նաև, որ այս մարմինը գործնականում չունեցավ նկատելի դերակատարում, ինչը պայմանավորված էր վերջինիս կազմով (հիմնականում ներգրավված էին խիստ զբաղված և շահերի բախման մեջ գտնվող պաշտոնյաներ) և իրավասության սահմանափակությամբ:

*Դատական իշխանության սահմանադրաիրավական հիմքերը՝ ըստ Հայաստանի Սահմանադրության 2005 թ. փոփոխությունների:*

Հայաստանի Սահմանադրության 2005 թ. փոփոխություններով, բնականաբար, խնդիր դրվեց էլ ավելի համարժեք ու համապարփակ դարձնել դատական համակարգի իրավական հիմքերը: Որպես նախադրյալներ դիտարկվեցին

ինչպես միջազգային իրավական փաստաթղթերում արտացոլված նորամուծությունները, այնպես էլ նախկինում արդեն իսկ ընդունված իրավական չափանիշներից շեղումները շտկելու օբյեկտիվ պահանջները: Ընդ որում՝ վերանայման վեկտորները մեծամասամբ թելադրված էին նաև Սահմանադրությամբ և ներպետական օրենսդրությամբ նախատեսված կարգավորումների կիրառման համատեքստում ի հայտ եկած հիմնախնդիրներով:

Ինչևէ, այդ նախադրյալների համատեքստում հարկ է առանձնացնել հետևյալ հիմնադրույթները՝

- Նախապատվությունը տրվեց անձին ազատությունից զրկելու իրավական հիմքերը սպառիչ սահմանելուն, որոնք արդեն համահունչ էին «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Կոնվենցիայի 5-րդ հոդվածով ամրագրված իրավանորմերին: Մասնավորապես, այդպիսիք դիտվեցին նաև դատարանի օրինական ուժի մեջ մտած կարգադրությունը չկատարելը, վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու նպատակով կամ հոգեկան հիվանդ, գինեմուլ, թմրամուլ կամ թափառաշրջիկ անձանցից բխող հասարակական վտանգը կանխելը և այլն:
- Կարևոր ձեռքբերում էր այն, որ մասամբ վերանայվեց Հանրապետության նախագահի կարգավիճակը՝ կապված դատական իշխանության անկախության ապահովման հետ, մասնավորապես, դատական իշխանության անկախության երաշխավորի առաքելությունը փոխարինվեց դատական իշխանության բնականոն գործունեությունն ապահովելու կարգավիճակով: Նշված փոփոխությունը կարող էր ավելի ազդեցիկ լինել, եթե ուղեկցվեր համարժեք իրավաքաղաքական երաշխիքներով, ինչն այդ փուլում դեռևս իրատեսական չէր: Ցավոք, սահմանադրաիրավական հարթությամբ այդպես էլ չհաղթահարվեց դատական իշխանության նկատմամբ Հանրապետության նախագահի անհարկի ազդեցության լծակները բացառելու միտումը: Բնորոշ է այն, որ դատավորների նշանակման, առաջխաղացման, ինչպես նաև կարգապահական պատասխանատվության հարցերում Հանրապետության նախագահին դեռևս վերապահվում էին զգալի լիազորություններ, ինչը չէր կարող համահունչ լինել դատական իշխանության իրական անկախության առաքելությանը:
- Դատախազության լիազորություններն ամրագրող իրավանորմերն այս դեպքում ևս ներառված էին «Դատական իշխանությունը» հատվածում, ինչը գիտագործնական հարթությամբ տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք էր տալիս: Մասնավորապես, գերիշխում էր ընկալումը, ըստ որի՝ դատախազությունը դատական իշխանության ինքնուրույն բաղադրիչ է: Իհարկե, դատախազության կարգավիճակի առնչությամբ Սահմանադրության իրավանորմերից անմիջականորեն չէր

բխում այդպիսի եզրահանգում, սակայն նշված նորմերն անմիջակա-  
նորեն «Դատական իշխանության» հատվածի մեջ ներառելը ինքնին  
այդպիսի եզրահանգման համար կարող էր որպես հիմք ընկալվել:  
Ինչևէ, դատախազության լիազորությունների մասով նորամուծություն-  
ներ չեղան, ինչը վկայում էր այն մասին, որ սահմանադրական հար-  
թությամբ, այնուամենայնիվ, բացակայում էր դատարանների նկատ-  
մամբ դատախազական հսկողությունը վերականգնելու որևէ միտում:

- Էական առաջընթաց արձանագրվեց Արդարադատության խորհրդի կազմի և գործառույթների կտրվածքով: Ոչ միայն Հանրապետության նախագահը, այլև արդարադատության նախարարն ու գլխավոր դատախազն այլևս ներգրավված չէին Արդարադատության խորհրդի կազմում: Այդ սահմանադրական մարմնի նիստերը նախագահելու լիազորությունը վերապահվեց Վճռաբեկ դատարանի նախագահին, այն էլ այնպիսի վերապահումով, որ վերջինս դե յուրե զրկված լիներ ազդելու որոշումների վրա, մասնավորապես, զրկված էր քվեարկու-  
թյան իրավունքից:

Արդարադատության խորհրդի կազմում գերակայում էին դատավորները. Հայաստանի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովի կողմից գաղտնի քվեարկությամբ ընտրված 9 դատավորից բացի անդամներ էին Հանրապետության նախագահի և Ազգային ժողովի կողմից ընտրված սոսկ երկու-  
ական իրավաբան-գիտնականներ: Դատավորների գերակայության ասպեկտով նշված համամասնությունը, թերևս, ողջունելի էր, ուղղակի այն պետք է նաև այլ հատկանիշներով համապատասխաներ միջազգային իրավական չափանիշնե-  
րին, որոնց կանդրադառնանք ստորև:

- Դատական իշխանության անկախության կարևորագույն բաղադրիչ-  
ներից մեկի՝ դատավորների անձեռնմխելիության կտրվածքով նախա-  
պատվությունը տրվեց կարգավիճակային անձեռնմխելիությանը, ինչը  
դատական իշխանության անկախության կայացման դեռևս սկզբնա-  
կան փուլում գտնվող պետության պարագայում միանգամայն իրավա-  
չափ, հիմնավորված մոտեցում էր: Ընդ որում՝ դատավորներին կալա-  
նավորելու, որպես մեղադրյալ ներգրավելու կամ դատական կարգով  
վարչական պատասխանատվության ենթարկելու հարցը հարուցվում  
էր արդարադատության խորհուրդ, ինչը ևս համահունչ էր այդ սահմա-  
նադրական մարմնի կարգավիճակին:
- Էական քայլ էր նաև դատավորներին՝ իրենց վարույթում գտնվող կոնկ-  
րետ գործին առնչվող նորմատիվ ակտերի դրույթները վիճարկելու  
հարցով անմիջականորեն Սահմանադրական դատարան դիմելու լիա-  
զորություն վերապահելը. ինչը նախատեսված չէր 1995 թ. ընդունված  
Սահմանադրությամբ:

- Սահմանադրությամբ ամրագրվեցին դատական իշխանության առավել առանցքային նշանակություն ունեցող և դատական իշխանությունը որպես իշխանության ինքնուրույն ճյուղ բնութագրող սկզբունքները: Ընդհանուր սահմանադրական սկզբունքները համակարգված տեսքով ունեն հետևյալ պատկերը՝
  - 1) արդարադատության իրականացումը միայն դատարանների կողմից,
  - 2) դատարանների անկախությունը,
  - 3) դատավորի անկախությունը,
  - 4) դատավորի անձեռնմխելիությունը,
  - 5) դատավորի՝ որոշակի գործունեության տեսակներով զբաղվելու սահմանափակումը,
  - 6) դատավորի ապաքաղաքականացվածությունը:

*Դատական իշխանության սահմանադրահրավական հիմքերը՝ ըստ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2015 թ. փոփոխությունների:*

Սահմանադրության փոփոխությունների առանցքում, թերևս, Արդարադատության խորհրդի իրավահաջորդ Բարձրագույն դատական խորհրդի կազմն ու լիազորությունների շրջանակը, ինչպես նաև դատավորների նշանակման ու առաջխաղացման համակարգը էական բարեփոխումներն էին, որոնք հիմնականում արդյունավետ գնահատվեցին միջազգային փորձագիտական կառույցներում<sup>30</sup>: Բարձրագույն դատական խորհրդի արժեքն այն աստիճան էր ընդգծվում, որ ամբողջովին վերանայվեց «Դատական իշխանություն» գլխի անվանումը՝ «Դատարանները և Բարձրագույն դատական խորհուրդը» անվանումով:

- Հարկ է նկատել, որ դատավորների կարգավիճակի առնչությամբ սահմանադրական բարեփոխումները միանշանակ դիրքորոշում չորդեգրեցին դատավորների անձեռնմխելիության հարցում, մասնավորապես, նախապատվությունը տրվեց ոչ թե կարգավիճակային, այլ արդեն գործառույթային անձեռնմխելիությանը: Ըստ այդմ էլ՝ 164-րդ հոդվածի 4-րդ մասով ամրագրվեց. «Իր լիազորությունների իրականացման կապակցությամբ դատավորի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել միայն Բարձրագույն դատական խորհրդի համաձայնությամբ»: Այս դիրքորոշումը բացատրվում է երկու արժեքների (դատավորների անկախություն և կոռուպցիայի կանխարգելման շահեր) համադրման արդյունքում առավել կշռադատված ընտրություն անելու անհրաժեշտությամբ: Մյուս կողմից, հաշվի առնելով դատական իշխանության

<sup>30</sup> Տե՛ս, օրինակ՝ «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) 2015 թ. սեպտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախագծի 1-7-րդ և 10-րդ գլուխների վերաբերյալ» No. 757/2014 նախնական կարծիքը:

նկատմամբ քաղաքական իշխանության ազդեցության նկրտումների աստիճանը, ինչը գնահատողական երևույթ է, կարող է առավել իրավա-  
չափ դիտարկվել նաև դատավորների անձեռնմխելիության խիստ հա-  
մակարգը, ինչը, կարծում ենք, առավել արդարացված կլինի:

- Թերևս առաջին անգամ Սահմանադրությամբ անդրադարձ արվեց նաև դատավորների վարձատրությանը: Նախագծով առաջարկվել էր դատավորների այնպիսի վարձատրություն, որը համարժեք կլիներ պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրությանը, սակայն այն խիստ անորոշ էր և չէր ընդգծում դատավորի պատասխանատու կարգավիճակը, ուստի առավել ընդունելի համարվեց հետևյալ տարբերակը. «Դատավորի համար սահմանվում է նրա բարձր կարգավիճակին և պատասխանատվությանը համապատասխանող վարձատրություն: Դատավորի վարձատրության չափը սահմանվում է օրենքով»: Իհարկե, դատավորների վարձատրության նաև այս իրավական հիմքը չէր կարող լիարժեք որոշակի դիտվել, սակայն այն շահեկանորեն տարբերվում է նախորդ շարադրանքից և պարտավորեցնում հանրային իշխանություններին զերծ մնալ վարձատրության անհամարժեք չափեր սահմանելու գայթակղությունից: Միաժամանակ, այս հարցում հանրային իշխանությունների վերաբերմունքը միանշանակ չի ընկալվում հանրության կողմից, մասնավորապես, այլ պաշտոնյաների համեմատ ակնհայտ բարձր աշխատավարձ սահմանելը, դատելով հրապարակախոսական նյութերից, երբեմն կարող է ընկալվել, որպես դատավորներին սիրաշահելու միջոցով հնազանդ դարձնելու հնարք:
- Նկատի ունենալով այն, որ ընթացիկ օրենսդրությամբ անհարկի անհամարժեք է ընկալվում դատարանների նախագահների կարգավիճակը, ավելին՝ վերջիններս նշանակվում են անժամկետ, ինչը չէր բխում Սահմանադրությունից, բայց և չէր էլ միանշանակ արգելվում, սահմանվեց առաջին և վերաքննիչ դատական ատյանների նախագահների պաշտոնավարման ժամկետ՝ 3 տարի, իսկ Վճռաբեկ դատարանի, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի պալատների նախագահների համար՝ 6 տարի:

Ընդ որում՝ այդ պաշտոնում վերստին նշանակվելը բացառվում է:

- Անդրադառնալով Վճռաբեկ դատարանին՝ Սահմանադրության փոփոխություններով այն ճանաչվեց որպես «Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական ատյան, բացառությամբ սահմանադրական արդարադատության ոլորտի»: Սա կարևոր դրույթ է, քանզի հնարավորինս որոշակիացնում է Վճռաբեկ դատարանի կարգավիճակը և մասամբ լուծում Սահմանադրական դատարանի հետ փոխհարաբերության առնչությամբ առկա տարաձայնությունները, որոնք, որպես կանոն, առկա են այն երկրներում, որտեղ հստակեցված չէ վճռաբեկ դատարաննե-



րի, որպես դատական ատյանի սահմանադրական կարգավիճակը՝ դատական ատյանների աստիճանակարգության համակարգում:

- Բարձրագույն դատական խորհրդի կազմի առնչությամբ նախապատվությունը տրվեց հավասար թվով՝ 5-ական դատավորների և իրավաբան-գիտնականների տարբերակին: Ընդ որում՝ դատավորներին ընտրում է դատավորների ընդհանուր ժողովը, իսկ իրավաբան-գիտնականներին՝ Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առավելագույն երեք հինգերորդով:

Թե՛ դատավորների և թե՛ իրավաբան-գիտնականների մասով Սահմանադրությամբ ամրագրված են նկատելի խիստ պահանջներ, ինչը թելադրված է այդ սահմանադրական մարմնի հիրավի բարձր կարգավիճակով և պատասխանատվությամբ: Այսպես, դատավոր անդամ կարող է լինել առնվազն տաս տարվա փորձառություն ունեցող դատավորը, ընդ որում՝ ընտրությունը պետք է կազմակերպել այնպես, որ դատական խորհրդում ընդգրկվեն դատավորներ բոլոր ատյանների դատարաններից: Շահերի բախումը բացառելու կամ առնվազն նվազագույնի հասցնելու նկատառումով նաև սահմանվեց, որ դատավորների ընդհանուր ժողովի կողմից ընտրված անդամը չի կարող լինել դատարանի նախագահ կամ Վճռաբեկ դատարանի պալատի նախագահ:

Բարձրագույն դատական խորհրդին անմիջապես Սահմանադրությամբ վերապահվեց օրենքով սահմանված դեպքերում և կարգով ենթաօրենսդրական ակտեր ընդունելու իրավասություն (175-րդ հոդվածի 4-րդ մաս): Ընդ որում՝ «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով հստակեցվեց այն հարցերի շրջանակը, որոնցով Բարձրագույն դատական խորհուրդը պարտավոր է ընդունելու ենթաօրենսդրական ակտեր: Այսպիսի իրավակարգավորումը լրջագույն նորամուծություն էր, նախ, այն էապես ընդլայնում է Բարձրագույն դատական խորհրդի լիազորությունները, ինչը համահունչ է այդ մարմնի սահմանադրական կարգավիճակին. «Բարձրագույն դատական խորհուրդն անկախ պետական մարմին է, որը երաշխավորում է դատարանների և դատավորների անկախությունը» (173-րդ հոդված): Բացի այդ, նշված սահմանադրական դրույթը ողջամտորեն սահմանափակում է Ազգային ժողովի լիազորությունները՝ այն հարաբերությունների օրենսդրական կարգավորման համատեքստում, որոնք անմիջականորեն գտնվում են Բարձրագույն դատական խորհրդի իրավասության ներքո: Սա իշխանությունների բաժանման և, տվյալ դեպքում՝ առավելապես հավասարակշռման դասական գործիք է, որը դատական իշխանությանը հնարավորություն է ընձեռում զերծ մնալու նաև օրենսդիր իշխանության հնարավոր ոչ իրավաչափ միջամտություններից:

- Բարձրագույն դատական խորհուրդն արդեն սահմանադրական հարթությամբ ճանաչվեց որպես դատարան, երբ քննարկում է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարց կամ

Դատական օրեսագրով նախատեսված այլ դեպքերում: Սա ոչ միայն որոշակիացնում է Բարձրագույն դատական խորհրդի գործունեությունը՝ դատավորների նկատմամբ ներգործության միջոցներ կիրառելու համատեքստում, այլև կանխատեսելի և առավել հուսալի է դարձնում դատավորների կարգավիճակը նշված վարույթների շրջանակում, քանզի վերջիններս լիարժեք օգտվում են դատավարության օրենսդրությամբ սահմանված իրավունքներից:

*Դատական իշխանության սահմանադրահրավակական հիմքերը՝ ըստ ներկայիս սահմանադրական բարեփոխումների առնչությամբ նախագծային դրույթների:*

Նկատի ունենալով, որ «Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի» նախագիծը, ըստ էության, դեռևս շրջանառության մեջ չի դրվել՝ Կառավարություն ուղարկելուց հետո, և հնչել է արդեն նոր Սահմանադրություն ընդունելու մասին պաշտոնական հայտարարություն, սույն ձեռնարկում նպատակահարմար ենք համարել անդրադառնալ դրա միայն առանցքային հիմնադրույթներին, ինչը կնպաստի, որպեսզի ունկնդիրներն առավել համապարփակ պատկերացում ունենան հետագա բարեփոխումների հնարավոր միտումների մասին, ինչպես նաև այդ առնչությամբ փորձեն ձևավորել սեփական դիրքորոշումներ, ինչն անհրաժեշտ է շրջանառության մեջ դրված և հետագայում մշակվելիք նախագծերին պաշտոնական հարթությամբ արձագանքելու տեսանկյունից:

Սահմանադրական բարեփոխումների անխուսափելիությունը հիմնավորող փաստարկներից մեկն էլ դիտարկվել է դատական իշխանության սահմանադրահրավակական հիմքերի բարելավման անհրաժեշտությունը, ինչին նվիրված է ներկայումս Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի նախագիծը: Մասնավորապես, ընդգծվել է այն, որ դատական իշխանության անկախությանը նվիրված միջազգային կազմակերպությունների զեկույցներում և կարծիքներում հետևողականորեն արձանագրվել է դատական իշխանության անկախության և արդարադատության արդյունավետության բարձրացմանն ուղղված երաշխիքներ ամրագրելու անհրաժեշտությունը:

Ըստ Հայեցակարգի նախագծի՝ Բարձրագույն դատական խորհրդի առաքելությունը չի կարող սահմանափակվել սուկ դատական իշխանության անկախության երաշխավորությամբ, այդ սահմանադրական մարմինը հավասարապես պետք է ստանձնի արդարադատության արդյունավետությանը և որակին աջակցելու գործառույթը: Ընդ որում՝ այս դիրքորոշումը հիմնավորելու նկատառումով հղումներ են արված Եվրոպայի դատավորների խորհրդատվական խորհրդի թիվ 10 եզրակացության 2-րդ գլխում արտացոլված եզրահանգումների վրա:

Ողջունելի է նշված փաստաթղթում արտացոլված այն դիրքորոշումը, ըստ որի՝ հնարավորինս կազմի կայունությունը երաշխավորելու տեսանկյունից, Բարձրագույն դատական խորհրդի գործունեության արդյունավետությունը բարելավելու նպատակով հարկ է առաջադրել այնպիսի կարգավորումներ, ըստ որոնց՝ Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամների համար իրենց պաշտոնավարման ընթացքում կբացառվի առաջխաղացումը, իսկ գիտնական-անդամների պարագայում՝ դատավորի պաշտոնին անցնելը ոչ միայն պաշտոնավարման, այլև Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունների դադարումից հետո առնվազն երկու տարվա ընթացքում:

Վերոհիշյալ կարգավորումը շահեկան է նաև համակարգում շահերի բախումը բացառելու սկզբունքի, Բարձրագույն դատական խորհրդի սահմանադրական կարգավիճակը հնարավորինս անխտոր պահելու, ինչպես նաև դատավորների նշանակման և առաջխաղացման սահմանադրական հիմնադրույթներն առավել հետևողական երաշխավորելու տեսանկյունից: Ընդ որում՝ այսպիսի չափանիշների ձևավորման համար պարտադիր չէ հենվել սահմանադրական, ընդհանրապես օրենսդրական կարգավորումների վրա, առավել շահեկան կլինի, եթե այդ չափանիշները պարզապես կյանքի կոչվեն գործնական հարթությամբ, ինչի անբեկանելի երաշխիքը կարող է լինել իրավաքաղական բարձր մշակույթը: Բոլոր դեպքերում, փաստացի արձանագրվող զարգացումները համահունչ չեն վերոհիշյալ դիրքորոշումներին:

Ընդհանրապես, դատական համակարգի կայացման, դատական իշխանության անկախության գերկարևոր սկզբունքի երաշխիքները չեն կարող սահմանափակվել սոսկ անգամ ամենակատարյալ իրավական հիմքերով, վճռորոշ նշանակություն ունի քաղաքական կամքը, ինչը, վերջին հաշվով, մեծապես պայմանավորված է իրավաքաղաքական մշակույթով:

Հաջորդ առանցքային դիրքորոշումը վերաբերում է դատավորներին և Բարձրագույն դատական խորհրդի անդամներին ներկայացվող պահանջների վերանայմանը: Ըստ էության, առաջարկվում է Սահմանադրության կարգավորման առարկա չդիտարկել հիշյալ պաշտոններում նշանակման համար անհրաժեշտ պայմաններին առնչվող հարաբերությունները, ինչը կնպաստի, որպեսզի հնարավոր լինի ապահովելու առավել երիտասարդ մասնագետների մուտքը դատական ատյաններ և Բարձրագույն դատական խորհուրդ:

Երիտասարդ մասնագետների խնդրին դրական են արձագանքել նաև միջազգային կազմակերպություններն ու փորձագիտական կառույցները, միաժամանակ վերջիններս հատուկ վերապահում են արել, որ այն չպետք է հակադրվի իրավագետի մասնագիտական ողջամիտ փորձի անհրաժեշտության պահանջին, չպետք է քաղաքական կամ նմանաբնույթ այլ դրդապատճառներով սահմանափակի փորձառու մասնագետների մուտքը: Այսպես, ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի, ինչպես նաև Դատական անկախության հետազոտությունների Մաքս Պլանք Միներվա

խմբի կողմից կազմված «Արևելյան Եվրոպայում, Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում դատական անկախության վերաբերյալ կիլյան հանձնարարականներ. Դատական վարչարարություն, ընտրություն և հաշվետվողականություն» փաստաթղթով արձանագրվել է. «... դատավորի մասնագիտությունը պետք է հասանելի լինի ոչ միայն հատուկ վերապատրաստում անցած երիտասարդ իրավաբանների, այլ նաև իրավաբանի մասնագիտական աշխատանքի հարուստ փորձ ունեցող իրավաբանների համար (այսինքն՝ կարիերայի միջին հատվածից դատական համակարգ մուտքի հնարավորություն)»<sup>31</sup>:

Դարձյալ կարևոր ենք համարում, որ այս բնույթի վերապահումները զուտ իրավական կարգավորման խնդիրներ չեն, դրանք կարող են, և միջազգային փորձը ցույց է տալիս, որ լուծվում են համարժեք իրավաքաղաքական մշակույթի համատեքստում: Ինչ վերաբերում է Բարձրագույն դատական խորհրդին, ապա միջազգային իրավունքի աղբյուրներով թեպետ անդամներին ներկայացվող պահանջները սահմանելը համարվում է պետության հայեցողության շրջանակներին առնչվող հարց (ընդ որում՝ պարտադիր չի համարվում այդ պայմաններն անմիջապես Հիմնական օրենքով ամրագրելը), այնուամենայնիվ, հստակ ընդգծվում է այդ մարմնի անդամներին ներկայացվող բարձր պահանջների անհրաժեշտությունը: Մասնավորապես, այդ փաստաթղթերում արտացոլված չափանիշների վերլուծությունը միանշանակ ցույց է տալիս, որ տարիքային նվազ ցենզ կամ սահմանափակ մասնագիտական աշխատանքի փորձ սահմանելը պարզապես բացառվում է: Այսպես, ԵԴԽԽ-ի 2007 թ. նոյեմբերի 21-23-ի 8-րդ նիստում ընդունված «Հասարակությանը ծառայող բարձրագույն դատական խորհրդի մասին» թիվ 10(2007) կարծիքի 21-րդ կետով արձանագրված է. «Անկախ նրանից՝ դատավոր են, թե ոչ, անդամների ընտրությունը պետք է իրականացվի՝ հիմք ընդունելով վերջիններիս *որակավորումը, փորձը* (ընդգծումը մերն է), դատավորի կյանքի մասին պատկերացումները, քննարկումներ անցկացնելու կարողությունը և անկախության մասին պատկերացումները»: Նույն փաստաթղթի 22-րդ կետով արձանագրված է հետևյալ դիրքորոշումը. «Դատավոր չհանդիսացող անդամներ կարող են ընտրվել *ակնառու այլ իրավաբաններից* (ընդգծումը մերն է), երկար տարիներ մասնագիտական ծառայություններ մատուցած համալսարանական պրոֆեսորներից կամ ճանաչում ունեցող քաղաքացիներից: Դատական իշխանության ժամանակակից կառավարման պարագայում կարող է պահանջվել այնպիսի անձանց լայն ներգրավվածությունը, որոնք մասնագիտացված են իրավական ոլորտից դուրս այլ բնա-

<sup>31</sup> Տե՛ս ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի, ինչպես նաև Դատական անկախության հետազոտությունների Մաքս Պլանք Միներվա խմբի «Արևելյան Եվրոպայում, Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում դատական անկախության վերաբերյալ կիլյան հանձնարարականներ. Դատական վարչարարություն, ընտրություն և հաշվետվողականություն», Կիև, 23-25 հունիսի, 2010 թ., էջ 8:

գավառներում (օրինակ՝ կառավարում, ֆինանսներ, ՏՏ ոլորտ, սոցիալական գիտություններ)»<sup>32</sup>:

Կարևորվել է նաև Բարձրագույն դատական խորհրդի որոշումները հավուր պատշաճի բողոքարկելու խնդիրը: Մասնավորապես, առաջադրվել է այն մոտեցումը, ըստ որի՝ Բարձրագույն դատական խորհրդի որոշումները սահմանադրական փոփոխությունների արդյունքում հնարավոր կլինի բողոքարկել կա՛մ Սահմանադրական դատարանում կա՛մ Բարձրագույն դատական խորհրդում: Ընդ որում՝ երկրորդ տարբերակի դեպքում առաջարկվել է վերանայել Բարձրագույն դատական խորհրդի կազմը՝ ներառելով դրանում «ad hoc» կազմ, որում չեն ներառվի առաջին անգամ հարցը քննած անդամները: Եվ որպեսզի հնարավոր լինի կյանքի կոչել հիշյալ տարբերակը, անհրաժեշտ է համարվել, որպեսզի ներդրվի հարցի քննության բաշխման պատահական համակարգ, որի դեպքում, առաջին անգամ հարցը կքննվի փոքր կազմով՝ ի տարբերություն «ad hoc» սկզբունքով վերանայման կազմի:

Տվյալ դեպքում, ելակետ է ընդունվել այն, որ ըստ Սահմանադրական դատարանի 2019 թ. ՍԴՈ-1488 որոշման՝ գործող Սահմանադրությունը բացառում է որևէ դատական ատյանում Բարձրագույն դատական խորհրդի որոշումները բողոքարկելու իրավական հնարավորություն, ինչին կանդրադառնանք սույն ձեռնարկի 6-րդ գլխում:

Հայեցակարգի նախագծում անդրադարձ չկա Բարձրագույն դատական խորհրդի կազմում դատավորների քանակի գերակայություն ապահովելու վերաբերյալ միջազգային չափանիշը պահպանելու անհրաժեշտության մասին:

Հաջորդ կարևոր նախաձեռնությունը վերաբերում է Վճռաբեկ դատարանի դատավորների ընտրությանը: Ըստ այդմ էլ՝ առաջարկվել է հանել Վճռաբեկ դատարանի դատավորի թեկնածուի առաջադրման համար Բարձրագույն դատական խորհրդի կողմից երեք թեկնածու առաջադրելու ընթացակարգը, նախապատվությունը տալով մեկ թեկնածու առաջադրելուն:

Ինչևէ, կարծում ենք, դատական իշխանության անկախության սահմանադրական հիմքերն առավել երաշխավորված և անխոցելի դարձնելու հրամայականը կարող էր ընդգրկել նաև այլ էական հարցադրումներ, որոնց արդիականությունը խիստ ընդգծվում է դատաիրավական բարեփոխումների ներկա փուլում: Մասնավորապես, ազգային իրավակիրառ պրակտիկայի, ինչպես նաև միջազգային իրավունքի չափանիշների համակողմանի վերլուծությունը ցույց է տալիս, որ ներկայումս խիստ արդիականություն են ձեռք բերել հետևյալ հարցադրումները՝

<sup>32</sup> Տե՛ս ԵԴԽԽ-ի 2007 թ. նոյեմբերի 21-23-ի 8-րդ նիստում ընդունված «Հասարակությանը ծառայող բարձրագույն դատական խորհրդի մասին» թիվ 10(2007) կարծիքը, Ստրասբուրգ, 2007 թվականի նոյեմբերի 23, Հրատարակվել է Եվրոպայի խորհրդի Երևանյան գրասենյակի կողմից՝ «Աջակցություն Հայաստանում դատական բարեփոխումների իրականացմանը» ծրագրի շրջանակներում, 2018թ. էջ 9:

- Դատական իշխանության անկախությունը երաշխավորելու առաքելություն իրականացնող մարմնի՝ Բարձրագույն դատական խորհրդի կազմի վերանայումը՝ դրանում դատավորների մեծամասնությունն ապահովելու տեսանկյունից: Այս պահանջը հստակ ու անբեկանելի ամրագրված է դատական իշխանության անկախությանը վերաբերող միջազգային իրավունքի գրեթե բոլոր փաստաթղթերով, որոնց սույն ձեռնարկում արդեն իսկ անդրադարձ է եղել,
- Օրենքի կիրառման միասնականությունն ապահովելու առավել համարժեք երաշխիքներ առաջադրելը: Այն խրախուսելի լինելով հանդերձ, չի կարող պարտադիր բնույթ ունենալ և անհիմն սահմանափակել դատավորի հայեցողական լիազորությունները: Դատավորների անկախությունն ամրապնդելու նկատառումով բարձր ատյանի դատարանների նախադեպային նշանակություն ունեցող դատական ակտերը «պետք է հանձնարարականի կարգավիճակ ունենան, սակայն այլ գործերով պարտադիր չլինեն ավելի ցածր ատյանի դատարանների դատավորների համար»<sup>33</sup>,
- Հանրության առջև դատական իշխանության համարժեք հաշվետվողականության համակարգի ներդրումը,
- Դատական իշխանության նկատմամբ վստահության աստիճանը բացառապես անկախ փորձագիտական կառուցակարգերի ներգրավմամբ պարբերաբար պարզելու անհրաժեշտությունը,
- Բարձրագույն դատական խորհրդի կազմում դատախազության, այլ իրավապահ ու քննչական մարմինների աշխատակիցներ ընդգրկելու արգելք սահմանելը և այլն:

## **2. Դատավորների անկախության հիմնահարցերը սահմանադրական զարգացման և դատաիրավական բարեփոխումների հիմնական փուլերի համատեքստում**

Ներպետական և միջազգային իրավական հիմքերի, տեսական հիմունքների և իրավական մշակույթի համակողմանի վերլուծության արդյունքը վկայում է այն մասին, որ ներկայումս սահմանադրական զարգացման և դատաիրավական բարեփոխումների հիմնական փուլերի համատեքստում, հիմք ընդունելով տեսագործական հարթությամբ շրջանառության մեջ դրված թեզերը, թերևս, առաջնահերթ են համարվում դատավորների անկախության հետևյալ հիմնահարցերը.

<sup>33</sup> Տե՛ս ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի, ինչպես նաև Դատական անկախության հետազոտությունների Մաքս Պլանք Միներվա խմբի «Արևելյան Եվրոպայում, Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում դատական անկախության վերաբերյալ կիևյան հանձնարարականներ. Դատական վարչարարություն, ընտրություն և հաշվետվողականություն», Կիև, 23-25 հունիսի, 2010 թ., էջ 13:

**Դատական իշխանության անկախությունը երաշխավորելու համար սահմանադրական մարմնի կարգավիճակն ու կազմավորումը:** Դատական իշխանությունը երաշխավորելու առաքելությունը չի կարող բնորոշ լինել և իրավաչափ դիտարկվել ինչպես օրենսդիր, այնպես էլ առավել ևս գործադիր իշխանության, այդ թվում՝ պետության գլխի պարագայում: Այս տեսանկյունից, սահմանադրաիրավական զարգացումները հիմնականում՝ համապատասխանել են իշխանությունների բաժանման սկզբունքից բխող դիրքորոշումներին, ըստ այդմ էլ՝ նախապատվությունն ի սկզբանե տրվել է Արդարադատության խորհրդին: Սակայն ինքնին այդպիսի սահմանադրական մարմին կազմավորելը չի կարող դատական իշխանության անկախության երաշխավորման գերխնդիրը լուծել, քանի որ էական նշանակություն ունեն նաև այնպիսի հարցեր, ինչպիսիք են այդ մարմնի կազմավորման կարգն ու սկզբունքները, վերջինիս նախագահի կարգավիճակը, կազմում դատավորների համամասնությունը, որոշումների բողոքարկման ընթացակարգերի լիարժեքությունը և այլն:

Քննարկվող հարցի տեսանկյունից կարևոր է Բարձրագույն դատական խորհրդի կազմը, ինչի առնչությամբ ձևավորված միջազգային չափանիշների համաձայն.

- ա) Նպատակահարմար է, որպեսզի դատավորները կազմեն մեծամասնություն, իսկ եթե Սահմանադրությունը դա բացառում է, ինչը բնորոշ է հայրենական համանուն ինստիտուտին, ապա հարկ է նախապատվությունը տալ այնպիսի համակարգի, որի դեպքում առանձին հարցերի լուծումը վերապահվում է բացառապես Բարձրագույն դատական խորհրդի դատավորների կազմից բաղկացած հատվածին:
- բ) Անկախ Բարձրագույն դատական խորհրդի կազմի անդամների կարգավիճակից, նրանք «չպետք է լինեն ակտիվ քաղաքական գործիչներ, գործադիր կամ օրենսդիր իշխանությունների անդամներ»<sup>34</sup>: Ընդ որում՝ այս պայմանը երաշխավորելու համար բնավ օրենսդրական փոփոխության կարիք չկա: Վերջին հաշվով, քննարկման հարցի առնչությամբ առկա է ԵԴԽԽ-ի կարծիքը, որի դրույթները կիրառելու համար Բարձրագույն դատական խորհրդի անդամների թեկնածուներ առաջադրելու, ինչպես նաև ընտրելու իրավասություն ունեցող սահմանադրական մարմինները պարզապես պետք է քաղաքական կամք դրսևորեն և հետևեն խորհրդատվական նշանակություն ունեցող հիշյալ կարծիքի դրույթներին: Ընդ որում՝ ցանկացած այլ պատճառաբանություն, որով փորձ կարվի արդարացնել, օրինակ՝ պետական ծառայողներին կամ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձին Բարձրագույն դատական խորհրդի կազմում

<sup>34</sup> Տե՛ս Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի 2007 թ. նոյեմբերի 23-ի թիվ 10(2007) «Հասարակությանը ծառայող Բարձրագույն դատական խորհրդի մասին» կարծիքի «Առաջարկությունների ամփոփում և եզրակացություններ» մասի «Բ» կետի «բ» ենթակետը:

ընտրելու պրակտիկան, չի կարող հիմնավորված համարվել սոսկ այն վերապահումով, թե իբր այդ անձինք ընտրվելու պահից այլևս պետական ծառայողներ կամ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձինք չեն:

- գ) Բարձրագույն դատական խորհուրդն առանցքային դերակատարում ունի ոչ միայն հանրային իշխանության մարմինների հետ փոխհարաբերությունում, այլև հանրության մեջ դատական իշխանության հեղինակությունը բարձր պահելու գործում, մասնավորապես, դատավորների նկատմամբ անհիմն հրապարակային նյութերին արձագանքելու տեսանկյունից:

**Սահմանադրությամբ ամրագրված արդար դատաքննության իրավունքի երաշխիքների սահմանները:** Սույն ձեռնարկում արդար դատաքննության իրավունքի երաշխիքներին անդրադարձ է արված հիշյալ հիմնարար իրավունքի և դատավորների անկախության սկզբունքի հետ փոխառնչակցության համատեքստում: Ինչպես իրավաստեղծ գործունեության, այնպես էլ արդարադատության իրականացման տեսանկյունից արդար դատաքննության իրավունքը հարկ է ընկալել համարժեք, այն որևէ կերպ չի կարող ստորադասվել համաչափության սկզբունքի հետ աղերսներ ունեցող հանրային շահերի պաշտպանությանը, դատավարության հանրահայտ սկզբունքներին: Վերջին հաշվով, դատավարության սկզբունքները ինքնանպատակ չեն, այլ կոչված են երաշխավորելու արդար դատաքննության սահմանադրական իրավունքը, այսինքն՝ ածանցյալ են արդար դատաքննության իրավունքից: Այսպես, օրինակ՝ մրցակցության սկզբունքն անբեկանելի և ինքնաբավ իրավադրույթ չէ, այն իրավական արժեք ու նշանակություն ունի այնքանով, որքանով նպաստում է արդար դատաքննության իրավունքի պաշտպանությանը:

Դատաիրավական բարեփոխումների ներկա փուլում, օրինակ՝ մրցակցության սկզբունքի առնչությամբ վերապահումներ են սահմանվել վարչական դատավարության կտրվածքով, անգամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ «Վարչական դատավարության սկզբունքները» վերտառությամբ 2-րդ գլխում բացակայում է մրցակցության սկզբունքը: Ինչպես հայտնի է՝ հիշյալ սկզբունքը դատավարության մյուս օրենսգրքերում սահմանված է կա՛մ որպես ինքնուրույն սկզբունք (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 13-րդ հոդված), կա՛մ կողմերի հավասարության համատեքստում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդված): ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով, թերևս, նախապատվությունը տրվել է մրցակցության սկզբունքից որոշակիորեն տարբերվող «Փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու» սկզբունքին, որը դատավորին այլևս չի դիտարկում որպես առերևույթ անկողմնակալ «արբիտր», այլ վերապահում է դատավարությանը միջամտելու լայն իրավազորություն, մասնավորապես՝ դատարանը կաշկանդված չէ վարչական դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով,



միջնորդություններով, առաջարկություններով, բացատրություններով և առարկություններով, վերջինս իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար, մատնանշում է հայցադիմումներում առկա ձևական սխալները, առաջարկում է ճշտել ոչ հստակ հայցային պահանջները, ոչ ճիշտ հայցատեսակները փոխարինել պատշաճ հայցատեսակներով, տարբերակել հիմնական և ածանցյալ պահանջները, համալրել ոչ բավարար փաստական տվյալները, ինչպես նաև պահանջում է, որ ներկայացվեն գործի փաստական հանգամանքները պարզելու և գնահատելու համար անհրաժեշտ բոլոր ապացույցները:

Ըստ էության, վերը նշված իրավագործության բաղադրիչները գործնականում կարող են անհարմարություններ պատճառել դատավորին, քանզի վերջինս հարկադրված է լինում ցուցաբերելու միջամտության այնպիսի տարրեր, որոնք դեռևս չձևավորված անհրաժեշտ իրավական մշակույթի պայմաններում, ինչպես կողմերի, այնպես էլ անկախ դիտորդի մոտ անխուսափելիորեն առաջացնում են որոշակի անվստահություն: Այս ընկալումները դատավորներին, անշուշտ, պարտավորեցնում են լինել ծայրահեղ հաշվենկատ և փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու սկզբունքի կիրառման համատեքստում գործել այնպես, որ հնարավորինս կասկածների տեղիք չտա դատավորի անաչառությունը:

Մյուս կողմից, փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու սկզբունքը առավել համահունչ է արդար դատաքննության իրավունքի երաշխավորմանը, ինչպես նաև բուն արդարադատության էությանը, քանզի արդարադատությունը չի կարող սահմանափակվել սոսկ կողմերի իրավահավասարությամբ ու մրցակցությամբ, այդ սահմանադրական առաքելության էությունը բնավ կողմերի հմտությունների ու ունակությունների բացահայտումը չէ, այլ գործին առնչվող բոլոր փաստական հանգամանքների բացահայտումն ու դրանց հաշվառմամբ իրավաչափ եզրահանգումներ ամրագրելը: Միջազգային փորձը ևս վկայում է այն մասին, որ աստիճանաբար իրավագետները հակվում են այն դիրքորոշմանը, որ փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու իրավագործությունը հարկ կլինի որոշ վերապահումներով կիրառել նաև դատավարության մյուս տեսակների պարագայում: Մասնավորապես, այս սկզբունքի կիրառման անհրաժեշտությունը ինչպես ՄԻԵԴ-ը, այնպես էլ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն սկզբնական շրջանում արձանագրում էին այն քրեական գործերով, որոնք անմիջականորեն առնչվում էին ընտանեկան բռնության հետ, այսինքն՝ միջազգային դատական ատյանը ևս հանգել է այն եզրակացության, որ կողմերի դե ֆակտո անհավասարության դեպքում, մրցակցության

սկզբունքի դասական պատկերացումները բացահայտ աղերսներ ունեն արդար դատաքննության իրավունքի հետ<sup>35</sup>:

Արդար դատաքննության իրավունքի յուրաքանչյուր սկզբունք, որն այս կամ այն չափով երաշխավորում է այդ իրավունքի իրացման համատեքստում նաև դատարանների անկախությունը, ևս պետք է ընկալվի և կիրառվի վերը նշված շահերի ներդաշնակ պաշտպանության հարթությամբ: Ըստ էության, ցանկացած դատավարական սկզբունք չի կարող հակասության մեջ մտնել դատարանների անկախության սկզբունքի հետ, եթե դրանք կիրառվում են իրավունքի համընդհանուր սկզբունքներին (համաչափության, իրավունքի էության անխախտելիության և այլն) խիստ համահունչ:

**Օրենքի միատեսակ կիրառման մասով դատարանների դերը:** Այս հիմնադրույթը տեսագործնական հարթությամբ ևս դիտարկվում է այնպիսի վերապահումներով, որ չհանգեցնի դատական իշխանության անկախության խաթարմանը: Օրենքի միատեսակ կիրառումը ինքնին ողջունելի է, այն խորհրդանշում է կայուն և կանխատեսելի արդարադատություն, օրենքի ընդհանրություն, իրավահավասարություն և օրենքի որոշակիություն: Միաժամանակ, օրենքի միատեսակ կիրառումը չպետք է որևէ կերպ ընկալվի և ըստ էության հանգեցնի դատական իշխանության անկախության սահմանափակմանը: Այլ կերպ ասած, օրենքի միատեսակ կիրառությունը չի կարող կյանքի կոչվել դատավորի հայեցողության իրավաչափ սահմանների անհարկի ոտնահարմամբ: Իհարկե, դատավորի հայեցողությունը ևս անսահմանափակ չէ, այն կանխորոշվում է բազմաթիվ իրավական նախապայմաններով, որոնց անդրադարձ է արվել սույն ձեռնարկի 6-րդ գլխում, սակայն դրանք չեն կարող էլ ավելի սահմանափակվել օրենքի միատեսակ կիրառման պահանջի անհամարժեք ընկալման արդյունքում: Վերջին հաշվով, զուտ մեխանիկական միատեսակությունը ոչ միայն չի բխում արդարադատության էությունից, այլև խաթարում է իրավունքի զարգացումը:

Հավելենք, որ օրենքի միատեսակ կիրառությունը որպես «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով ամրագրված արդար դատաքննության իրավունքի կարևոր բաղադրիչ է դիտարկել նաև ՄԻԵԴ-ը<sup>36</sup>:

<sup>35</sup> Խնդրին առնչվող ՄԻԵԴ-ի նախադեպային դատական ակտերը հանգամանորեն և համալիր ներկայացված են հետևյալ աղբյուրներում՝ 1. Արդար դատաքննության իրավունք, «Ուղեցույց Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի վերաբերյալ», թարմացվել է 31 օգոստոսի 2021 թ., Մարդու իրավունքների եվրոպական դատարան, 2022թ., 183-190 էջեր, 2. Guide to litigating cases of violence against women. Domestic and Sexual Violence Written and produced by the European Human Rights Advocacy Centre (EH-RAC), Middlesex University, London, December 2020, 3. Barnett, H. Constitutional and Administrative law / H. Barnett. – London and New York : Routledge-Cavendish, 2008. և այլն:

<sup>36</sup> Տես ՄԻԵԴ, Թոմիջը և այլք ընդդեմ Մենտենեգրոյի, 18650/09 և այլ գործեր, 2012 թվականի ապրիլի 17:

Վերը նշված հիմնադրույթների ներքին հակասությունը հաղթահարելու բանաձևը հստակ պատկերացնելու համար, նպատակահարմար է ելակետ ընդունել հետևյալ վավերապայմանները՝

ա) Ողջամտության սահմաններում օրենքի միատեսակ կիրառությունը իրավական որոշակիության և կիրառման կանխատեսելիության անքակտելի բաղադրիչներից է: Ըստ այդմ էլ, դատավարության կողմերը ոչ միայն ձեռք են բերում արդեն իսկ օրինական ուժ ստացած դատական ակտերի վրա հղում անելու իրավունք, այլև դատական իշխանության նկատմամբ ձևավորվում է անհրաժեշտ վստահություն: Օրենքի միատեսակ կիրառման էական շեղումները հանրության մեջ հիմք են՝ դատարանների կողմից կամայականությունների մասին դատողություններ անելու համար, ինչը չի կարող չհանգեցնել վստահության նվազման:

Օրենքի միատեսակ կիրառումը չի բացառում, որ դատարանները միևնույն օրենքը կիրառելիս կայացնեն տարբեր որոշումներ: Ընդ որում՝ այս առնչությամբ, ՄԻԵԴ-ի նախադեպային դատական պրակտիկայի վերլուծության արդյունքում կարևոր դիտարկում է արձանագրել ԵԴԽԽ-ը. «... այլ դատարանները կարող են հանգել տարբեր, բայց միևնույն դեպքում՝ ռացիոնալ և պատճառաբանված եզրահանգումների, որոնք վերաբերում են նմանատիպ փաստական հանգամանքներում բարձրացված իրավական հարցերին»<sup>37</sup>:

բ) Օրենքի միատեսակ կիրառումն ապահովելու համատեքստում սահմանադրական առաքելությունը վերապահված է Վճռաբեկ դատարանին (Սահմանադրության 171-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետ), ինչը սակայն չի նշանակում, որ մյուս դատական ատյաններն ամբողջովին ազատված են հիշյալ սահմանադրական հիմնադրույթի պահանջին հետևելու պարտականությունից: Պարզապես Վճռաբեկ դատարանի պարագայում ընդգծվում է ողջ դատական համակարգում հիշյալ հիմնադրույթի «ապահովման» անհրաժեշտությունը:

Թերևս, այս պահանջների համադրմամբ է, որ «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով օրենքի միատեսակ կիրառման սահմանադրական հիմնադրույթն ստացել է ամբողջական կարգավորում՝ մի կողմից դատարանը պարտավոր է անդրադառնալ նույնանման փաստերով այլ գործով Հայաստանի Հանրապետության դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտում առկա օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտի մեկնաբանություններին, որոնք վկայակոչելու իրավունքը վերապահվում է դատավարության մասնակցին, մյուս կողմից՝ նույնանման փաստերով այլ գործով Վճռաբեկ դատարանի կողմից իրավական նորմի մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանության դեպքում դատարանը պետք է

<sup>37</sup> Տե՛ս Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի 2017 թ. նոյեմբերի 10-ի «Օրենքի միատեսակ կիրառության մասով դատարանների դերի մասին» թիվ 20(2017) կարծիքի 8-րդ կետ, ՄԻԵԴ, Շահինը և Շահինը ընդդեմ Թուրքիայի, 13279/05, 2011 թվականի հոկտեմբերի 20:

հիմնավորի օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտի՝ Վճռաբեկ դատարանի մեկնաբանությունից շեղվելը:

գ) Օրենքի միատեսակ կիրառումը նպաստում է դատարանների անհարկի ծանրաբեռնվածության նվազմանը, քանզի արդեն իսկ ձևավորված պրակտիկայի պարագայում հնարավորինս սահմանափակվում է դատարան դիմելու գրավչությունը, մարում է էպպես նոր մեկնաբանություններով շահեկան դատական ակտ ակնկալելու ձգտումը,

դ) Օրենքի միատեսակ կիրառման երաշխիքներից է տվյալ դատարանի դատավորների կամ նույն ատյանի տարբեր դատավորների, կամ առավել բարձր ատյանի դատավորների հետ կանոնավոր խորհրդատվական հանդիպումները, որոնք արգելված չեն օրենքով: Ուղղակի հարկ է այդպիսի հանդիպումների համատեքստում ղեկավարվել մի շարք վերապահումներով. մասնավորապես, որպեսզի այդ հանդիպումները չընկալվեն որպես ուղղորդող, դատավորի անկախությունը կաշկանդող, նպատակահարմար է, որպեսզի Բարձրագույն դատական խորհուրդը հնարավորինս մշակի համապատասխան կառուցակարգեր, ներդնի համապատասխան ուղեցույցներ և այլն: Օրինակ, խորհրդատվության առարկա կարող են լինել այնպիսի հարցադրումներ, երբ կոնկրետ փաստական հանգամանքների առնչությամբ չկա նախադեպային նշանակություն ունեցող դատական ակտ, մինչդեռ բարդություններ են ծագում պատճառված վնասի չափը հաշվարկելու առումով:

ե) Վճռաբեկ դատարանի կողմից բողոքները քննության ընդունելու հիմքում հարկ է դնել նաև օրենքների միատեսակ կիրառություն ապահովելու սահմանադրական պահանջը: Ըստ էության, հենց այս հիմնադրույթն է պայմանավորել օրենսդրական կարգավորումների էությունը, քանզի բողոքը քննության ընդունելու համար առաջնահերթ է համարվում այն, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար: Իհարկե, սա չի նսեմացնում կոնկրետ գործով արդարադատության իրականացման անհրաժեշտությունը, քանզի բողոքը քննության ընդունելու հավասարազոր հիմք է դիտարկվում նաև այն, երբ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում:

Ըստ էության, օրենքի միատեսակ կիրառության պահանջը փոխկապակցված է իրավունքի զարգացման անհրաժեշտության հետ, ըստ այդմ էլ՝ դատավարական օրենսդրությամբ բողոքը քննության ընդունելու համատեքստում օրենքի միատեսակ կիրառության բաղադրատարր է դիտել նաև դատարանի կիրառած նյութական կամ դատավարական իրավունքի նորմի կապակցությամբ իրավունքի զարգացման խնդրի առկայությունը: Ընդ որում՝ այդպիսի խնդիր առկա է առավելապես այն դեպքում, երբ կոնկրետ օրենքի մեկնաբանության կտրվածքով ոչ միայն դեռևս չի ձևավորվել միասնական դիրքորոշում, այլև ակնհայտ է, որ արդեն իսկ սահմանափակ կիրառման արդյունքներով տվյալ իրավական նորմի բովանդակության շուրջ բացակայում է անհրաժեշտ համարժեք ընկա-

լում: Բացի այդ, Վճռաբեկ դատարանը կարող է գերակա շահի և «Կենդանի մեխանիզմի» սկզբունքի հաշվառմամբ նախաձեռնել նաև այնպիսի բողոքի քննություն, որի արդյունքներով հարկ կլինի վերանայել արդեն իսկ ձևավորված իրավական դիրքորոշումները, դրանով իսկ նպաստելով իրավունքի զարգացմանը:

ԵԴԽԽ-ի մտահոգություններից մեկն էլ բարձրագույն դատական ատյանի կողմից միմյանց հակասող նախադեպային կամ նախադեպային նշանակություն ունեցող դատական ակտեր ընդունելն է, ինչը ոչ միայն խաթարում է օրենքների միատեսակ կիրառության պահանջը, այլև խոցելի է դարձնում բուն արդարադատության էությունը<sup>38</sup>: Այս տեսանկյունից հիշյալ միջազգային խորհրդատվական կառույցը գտնում է, որ բարդ հարցերով առավել նպատակահարմար է կազմակերպել խորհրդատվական ընթացակարգեր: Մեր կարծիքով էական նշանակություն կարող է ունենալ նաև խորհրդատվական հարցով ՄԻԵԴ դիմելու լիազորության իրագործումը, ինչը դեռևս լայն կիրառություն չունի:

Հավելենք, որ ԵԴԽԽ-ն այնչափ էական է համարում բարձրագույն դատական ատյանի կողմից օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու խնդիրը, որ հանգել է հիշյալ առաքելությունն իրականացնելիս վերջինիս օժտել ստորադաս դատական ակտերը սեփական նախաձեռնությամբ բողոքարկելու լիազորությամբ<sup>39</sup>, իհարկե, նախապես որոշակիացնելով բողոքարկման չափանիշները:

Այսպիսով, օրենքի միատեսակ կիրառությունը չի ենթադրում բացարձակ միատեսակություն, խոսքը «հիմնարար և տևական տարբերությունների» մասին է, ինչն էլ ողջամտություն է հաղորդում դատավորների հայեցողության և օրենքի միատեսակ կիրառության իրավադրույթների փոխհարաբերությանը:

**Դատական իշխանության անկախության նկատմամբ հարգանքը:** Հարգանքը զուտ բարոյահոգեբանական ազդակ է, սակայն առանձին իրավական հարաբերություններում այն ունի կարևոր նշանակություն, քանզի իրավական մշակույթը ևս կանխորոշում է իրավական զարգացումների ուղղությունները, և այս համատեքստում դատական իշխանությունը բացառություն չէ, ավելին՝ հանրության հարգանքը դատական իշխանության անկախության առանցքային նշանակություն ունեցող բաղադրիչներից է:

Ի տարբերություն իշխանության մյուս ճյուղերի, դատական ատյանները հանրության վստահությունը ձեռք բերելու և հարգանքի արժանանալու համար ունեն ակնհայտ սահմանափակ գործիքակազմ, վերջիններս որևէ կերպ չեն կարող դիմել հանրությանը սիրաշահելու մեթոդաբանությանը: Դատական

<sup>38</sup> Տե՛ս Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի 2017 թ. նոյեմբերի 10-ի «Օրենքի միատեսակ կիրառության մասով դատարանների դերի մասին» թիվ 20(2017) կարծիքի 24-րդ կետ:

<sup>39</sup> Տե՛ս Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի 2017 թ. նոյեմբերի 10-ի «Օրենքի միատեսակ կիրառության մասով դատարանների դերի մասին» թիվ 20(2017) կարծիքի 8-րդ բաժնի «գ» կետ:

իշխանությունն ունի հանրության հարգանքին արժանանալու, ըստ այդմ էլ՝ դատական իշխանության անկախությունն ամրապնդելու միայն մեկ միջոց՝ Սահմանադրության և օրենքների պահանջներին խիստ համապատասխան, իրականացնել արդարադատություն:

Ընդ որում՝ օրենսդիր և գործադիր իշխանության պաշտոնյաները պարտավոր են ձեռնպահ մնալ դատական իշխանության նկատմամբ հարգանքի, դատավորների նկատմամբ վստահության կտրվածքով սուբյեկտիվ դատողություններից: Ի հարկե, այդպիսի դեպքերում Բարձրագույն դատական խորհուրդը պարտավոր է հավուր պատշաճի արձագանքել և հրնթացս պարզաբանել, որ դատական համակարգի նկատմամբ վստահության աստիճանի մասին եզրակացություն ձևավորելու համատեքստում հանրային իշխանության մարմինները չունեն որևէ իրավասություն, քանզի այդ նրբին ու պատասխանատու ոլորտում գործելու և եզրակացություն ներկայացնելու միակ իրավաչափ լուծումը, հիրավի, անկախ փորձագիտական արհեստավարժ հանձնաժողովներն են: Հանրային իշխանության պաշտոնյաների կողմից անպատեհ սուբյեկտիվ, զուտ քաղաքական հարթությամբ հայտարարությունները դիտարկվում են որպես դատական իշխանության նկատմամբ ազդեցություն ձեռք բերելու անթաքույց միջոց: Ի հարկե, խոսքը չի վերաբերում այն իրավաչափ գործողություններին, որոնք միանշանակ նախատեսված են օրենսդրությամբ և, որպես կանոն, կարող են կիրառվել վարությամբ իրավանորմերով, այդ թվում՝ դատավորների գործունեության գնահատման և չափորոշման կտրվածքով<sup>40</sup>:

Ըստ էության, սկզբունքորեն ոչ միայն դեմ չլինելով դատավորների գնահատման համակարգին, և առանձնակի նշանակություն չտալով դրա իրականացման եղանակին՝ «Ֆորմալ», թե «ոչ ֆորմալ», այլև այն դիտելով, որպես դատական իշխանության նկատմամբ հարգանքի ցուցիչ, միջազգային իրավական փաստաթղթերով հետևողականորեն ընդգծվում է երեք կարևոր վերապահում՝ ա) գնահատումը պետք է իրականացվի նախապես հստակ մշակված այնպիսի մեթոդաբանությամբ, որ որևէ կերպ չվերաձվի դատական իշխանության նկատմամբ հանրային իշխանության ոչ իրավաչափ ներգործության, բ) գնահատումը պետք է լինի հնարավորինս անաչառ և ունենա կանխատեսելի հետևանքներ<sup>41</sup>: Ընդ որում՝ գնահատման ողջ գործընթացը և դրա արդյունքում կազմվող նյութերը պետք է մատչելի լինեն դատավորների համար և գ) դատավորի գնահատման արդյունքները կարող են հաշվի առնվել բացառապես դատավորի առաջխաղացման գործընթացներում, սակայն երբեք չեն կարող անմիջակա-

<sup>40</sup> Տե՛ս, օրինակ՝ ԵԱՀԿ կիլյան առաջարկությունները և Դատարանների խորհուրդների եվրոպական ցանցի (ԴԽԵՑ) 2012-2013թթ. «Դատական իշխանության անդամների մասնագիտական կատարողականի գնահատման և անփոփոխելիության վերաբերյալ նվազագույն չափանիշների մասին» զեկույցը:

<sup>41</sup> Տե՛ս, օրինակ՝ Եվրոպական դատավորների խորհրդակցական խորհրդի 2014 թ. հոկտեմբերի 24-ի «Դատավորների աշխատանքի, արդարադատության որակի գնահատումը և դատական իշխանության անկախության նկատմամբ հարգանքը» թիվ 17(2014) կարծիքի 47 կետ:

նորեն հանգեցնել վերջինիս աշխատավարձի կամ կենսաթոշակի չափի փոփոխությանը:

Ըստ էության, այս հարցը համարժեք է կարգավորված նաև «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով: Մասնավորապես, նշված օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով հստակ ընդգծվում է, որ դատարանի կամ դատավորի անկախությունը վնասող գործողություններից ձեռնպահ մնալու արգելքը տարածվում է ոչ թե պարզապես դատավորի կարգավիճակի վրա որևէ կերպ ազդելու լիազորություն ունեցող բարձրաստիճան պաշտոնյաների, այլ անխտիր բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց վրա, ինչը նշանակում է, որ որևէ պաշտոնատար անձ իր անհարիր արտահայտությունները կամ գործողությունները չի կարող արդարացնել՝ իբր թե դատավորի կարգավիճակի վրա դե յուրե ազդեցություն չունենալու մտացածին պատճառաբանությամբ:

Ընդ որում՝ նմանաբնույթ դեպքերում, արձագանքելու պարտականությունը, ինչպես արդեն նկատեցինք, դրված է Բարձրագույն դատական խորհրդի վրա, ինչը թելադրված է դատական իշխանության անկախությունը երաշխավորելու վերջինիս սահմանադրական կարգավիճակով: Ընդ որում՝ Բարձրագույն դատական խորհուրդը հատկապես պարտավոր է արձագանքել, երբ արդարադատություն և որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ, ինչպես նաև դատավորի կարգավիճակից բխող իրավունքներ իրականացնելու կապակցությամբ իր գործունեությանը միջամտության վերաբերյալ դատավորը հայտարարություն է ներկայացնում: Մասնավորապես, Բարձրագույն դատական խորհուրդը ենթադրյալ մեղավոր անձանց պատասխանատվության ենթարկելու միջնորդությամբ պետք է դիմի իրավասու մարմին, որը պարտավոր է ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ անհապաղ գրավոր տեղեկացնել Բարձրագույն դատական խորհրդին: Իրավասու մարմնի ձեռնարկված միջոցառումների, ինչպես նաև ողջամիտ ժամկետում համապատասխան միջոցառումներ չձեռնարկելու կապակցությամբ Բարձրագույն դատական խորհուրդն իրավունք ունի հանդես գալու պաշտոնական հայտարարությամբ («ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասեր):

Հարկ է ուշադրություն դարձնել, որ վերը նշված դեպքերում Բարձրագույն դատական խորհրդին դիմելը ոչ թե դատավորի հայեցողական լիազորությունն է, այլ ուղղակի պարտականությունը, ինչը նշանակում է, որ խնդիրը միայն այն չէ, որ դատավորը պարզապես կարող է անտեսել օրենքով նախատեսված այլ լիազորություններ, ինչպես նաև դատավորի կարգավիճակից բխող իրավունքներ իրականացնելու կապակցությամբ իր գործունեությանը միջամտության կոնկրետ փաստերը և գործել անաչառ, խնդիրը նաև այն է, որ այդպիսի միջամտությունը բացահայտելով և համարժեք արձագանքելով՝ արդյունքում նպաստում ենք դատական իշխանության նկատմամբ հարգանքի ձևավորմանը, և կանխարգելում այլ պաշտոնյաների հակաօրինական կեցվածքը:

Վերջապես, դատական իշխանության նկատմամբ հարգանք ձևավորելու կարևորագույն լծակ է դիտվում օրենքով սահմանված կարգով միավորում ստեղծելու դատավորների, ինչպես նաև այդպիսի միավորմանն անդամակցելու յուրաքանչյուր դատավորի իրավունքը: Ընդհանրապես, ինքնավար մարմինների նպատակասլաց ու հասցեական գործունեությունը կարող է էապես նպաստել դատական իշխանության նկատմամբ անհրաժեշտ հարգանքի ձևավորմանը, քանզի դա խորհրդանշում է ողջ դատական համակարգի ինքնաբերաբար ձևավորվող հավաքական դիրքորոշումը:

**Դատական իշխանության փոխհարաբերությունները իշխանության այլ ճյուղերի հետ:** Իշխանության այլ ճյուղերի հետ փոխհարաբերության հարցը չի սահմանափակվում միայն դատական իշխանության նկատմամբ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց հայտարարություններով և այլ գործունեությամբ: Դատական իշխանության անկախությունը ոչ թե բացառում, այլ ողջամտորեն ենթադրում է այդպիսի փոխհարաբերության որոշակի համակարգ: Պարզապես այս կտրվածքով, խիստ անհրաժեշտ է, որպեսզի այդպիսի փոխհարաբերությունը ոչ միայն չհանգեցնի դատական իշխանության դե ֆակտո կախվածությանը, այլև հանրության մոտ ձևավորի այդպիսի կախվածության անհարկի ընկալումներ: Ընդ որում՝ փոխհարաբերության բնույթը պետք է լինի այնպիսին, որ արդյունքում որևէ իշխանության ճյուղ ձեռք չբերի դե ֆակտո գերակայող դիրք և ընկալում:

Նախ, նկատենք, որ իշխանությունների բաժանման սկզբունքն ինքնին արդեն դատական իշխանության անկախության երաշխիք է, քանզի դե ֆակտո հենց դատական իշխանությունն է առավել խոցելի և հենց այդ իշխանության թևն ունի մյուս իշխանության թևերից անկախ լինելու կարիք: Իհարկե, դատական իշխանության ձևավորման համատեքստում իշխանության մյուս թևերը անխուսափելիորեն օժտված են որոշակի իրավասությամբ, սակայն դատական իշխանության անկախության սկզբունքը ենթադրում է, որ հնարավոր բոլոր միջոցները հարկ է գործադրել, որպեսզի այդ ազդեցությունը նպաստի դատական իշխանության լեգիտիմությանը, ոչ թե վերածվի քաղաքականության ակնկալվող բաղադրիչի:

Իհարկե, դատական իշխանության լեգիտիմությունը, ինչպես արդեն նկատել ենք, մեծապես կախված է հենց դատավորների արհեստավարժությունից և բարեվարքության ընդհանուր վիճակից, սակայն այն մեծապես թելադրված է նաև իշխանության մյուս թևերի իրավաչափ պահվածքով և դատական իշխանության հետ հարաբերվելիս քաղաքական նկրտումները մի կողմ թողնելու անհրաժեշտ պատրաստականությամբ:

Դատական իշխանության պարագայում իշխանության մյուս թևերի և հատկապես՝ հանրության առջև «հաշվետվողականությունը» չի կարող ընկալվել դասական ուղիղ իմաստով, սակայն դատական իշխանությունը ևս պարտավոր է ելակետ ընդունել այն, որ իր գործունեության արդյունքները ևս պետք



է հասանելի լինեն իշխանության մյուս թևերի համար, վերջիններս ևս պետք է բավարար չափով տեղեկացված լինեն դատարանների աշխատանքի արդյունավետության մասին: Վերջին հաշվով, խելամիտ հաշվետվողականությունն անհրաժեշտ է առնվազն հիմնավորված իրավաստեղծ և իրավակիրառ գործունեության համատեքստում: Դատավորները չեն կարող անմիջականորեն հանդես գալ օրենսդրական նախաձեռնության իրավունքով, սակայն վերջիններս կարող են ազդել օրինաստեղծ գործունեության վրա առնվազն երկու ասպեկտով՝ ա) իրենց աշխատակազմերի միջոցով մշակել և ներկայացնել նախագծեր այդպիսի նախաձեռնության լիազորություն ունեցող սուբյեկտներին, բ) եզրակացություն տալ նորմատիվ իրավական ակտերի այն նախագծերի առնչությամբ, որոնք վերաբերում են դատական իշխանությանը (սա նաև իր ամրագրումն է ստացել «ՀՀ դատական օրենսգիրք» Սահմանադրական օրենքի 89-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով):

Ընդհանրապես, դատական իշխանությանն առնչվող նորմատիվ իրավական ակտերի նախագծերին դատավորների արձագանքը չպետք է հատվածական բնույթ կրի: Խնդիրն այն է, որ դատավորները, միևնույնն է, հետագայում կոնկրետ գործերով բարձրացնում են այդ նորմատիվ իրավական ակտերի խնդրահարույց լինելը, սակայն առավել արդյունավետ է դիտվում ոչ թե արդեն իսկ ընդունված նորմատիվ իրավական ակտերի վերանայման գործընթացը, որքան նախապես հնարավորինս խնդրահարույց իրավանորմերի բացառումը:

Անչափ կարևոր է դատական համակարգի ֆինանսավորումը, և խնդիրը բնավ միայն դատավորների նյութական ապահովվածությունը չէ. «Դատական իշխանության քրոնիկ թերֆինանսավորումը պետք է ամբողջ հասարակության կողմից դիտվի որպես դատական իշխանության սահմանադրական գործառույթի արգելք, որովհետև այն խաթարում է իրավունքի գերակայությամբ կատարվող ժողովրդավարական հասարակության հիմքերը»<sup>42</sup>:

ԵԴԽԽ-ն, հատկապես սուր ձևակերպումներով է անդրադառնում բոլոր այն դեպքերին, որոնք վերաբերում են քաղաքական դեմքերի անհարիր արտահայտություններին և ընդհուպ՝ դատարանների նկատմամբ բռնության կոչերին. «Քաղաքական գործիչները երբեք չպետք է խրախուսեն դատական ակտերի դեմ անհնազանդություն, առավել ևս՝ դատավորների դեմ բռնություններ, ինչպես դա պատահել է որոշ անդամ պետություններում»<sup>43</sup>:

Անդրադառնալով քաղաքական գործիչների կողմից դատական իշխանության քննադատությանը, հարկ է նկատել, որ սկզբունքորեն այն չի կարող

<sup>42</sup> Տե՛ս Եվրոպական դատավորների խորհրդակցական խորհրդի 2015 թ. հոկտեմբերի 16-ի «Ժողովրդավարական հասարակությունում դատական իշխանության դիրքը և փոխհարաբերությունը իշխանության այլ թևերի հետ» թիվ 18(2015) կարծիքի 7-րդ հատվածի 17-րդ կետ:

<sup>43</sup> Տե՛ս Եվրոպական դատավորների խորհրդակցական խորհրդի 2015 թ. հոկտեմբերի 16-ի «Ժողովրդավարական հասարակությունում դատական իշխանության դիրքը և փոխհարաբերությունը իշխանության այլ թևերի հետ» թիվ 18(2015) կարծիքի 7-րդ հատվածի 20-րդ կետ:

արգելվել, քանզի համարվում է հրապարակայնորեն արտահայտվելու համատեքստում պետական իշխանության լեգիտիմության բաղադրիչներից մեկը, մյուս կողմից՝ այդ քննադատությունը որևէ կերպ չի կարող հանգեցնել սեփական թերացումները քողարկելու նկատառումով դատական իշխանության նկատմամբ անհարգալից վերաբերմունք ձևավորելու նկրտումների իրականացմանը: Հաշվի առնելով այս դիտարկման ներքին բարդությունները և յուրաքանչյուր դեպքում քննադատությունը համարժեք գանահատելու անհրաժեշտությունը, ԵԴԽԽ-ն փորձել է ուրվագծել այդպիսի քննադատության սահմանները. «Քաղաքական գործիչները չպետք է կիրառեն պարզեցված կամ դեմագոգիայի հասնող փաստարկներ դատական իշխանությանը քաղաքական քարոզարշավների դեմ քննադատելու համար՝ պարզապես փաստարկ բերելու համար, կամ որպեսզի շեղեն ուշադրությունը իրենց սեփական թերացումներից»<sup>44</sup>:

Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնյաները չպետք է դատական իշխանությունը թիրախավորեն նաև օրենսդրական նախաձեռնության կարգով օրինագծերի հիմնավորումները մշակելիս: Ինչ խոսք, դատական իշխանությանն առնչվող օրենսդրությունը հաճախ հարկ է լինում վերանայել, հաշվի առնելով նաև դատական համակարգում առկա սուբյեկտիվ գործոնները՝ արհեստավարժության պակասը, վստահության ցածր աստիճանը և այլն, սակայն այդ փաստարկների վրա հղում անելը ևս պետք է զերծ լինի դատական իշխանության հասցեին այնպիսի արտահայտություններից, որոնք կարող են հանգեցնել դատական իշխանության անկախության նսեմացմանը: Հակառակ պարագայում մենք ոչ միայն չենք ունենում անհրաժեշտ որակի օրենսդրություն, այլև հրնթացս խոցելի ենք դարձնում դատական իշխանության անկախությունը, որպիսի պարագայում անգամ կատարյալ ձևակերպված օրենսդրական նորմերը դե ֆակտո հնարավոր չէ արդյունավետ կիրառել:

**Դատավորների անփոփոխելիության չափորոշիչները:** Դատավորի անփոփոխելիության սկզբունքը սերտորեն կապված է դատական իշխանության անկախության հետ, այն դիտվում է որպես դատական իշխանության անկախության առանցքային երաշխիքներից մեկը: Հիշյալ սկզբունքի էությունն այն է, որ հանրային իշխանության մյուս թևերը չունենան հնարավորություն դատավորներին փոփոխելու արտաքուստ իրավաչափ օրենսդրական հիմքեր ձևավորելու միջոցով, ըստ էության, կախվածության մեջ գցելու ողջ դատական իշխանությունը:

Դատավորների անփոփոխելիության սկզբունքն անգամ հարգվել է ֆրանսիական հեղափոխության և Առաջին կայսրության տարիներին: Մի կողմից հեղափոխության առաջնորդներն ամեն գնով ձգտել են պահպանել իրենց

<sup>44</sup> Տե՛ս Եվրոպական դատավորների խորհրդակցական խորհրդի 2015 թ. հոկտեմբերի 16-ի «Ժողովրդավարական հասարակությունում դատական իշխանության դիրքը և փոխհարաբերությունը իշխանության այլ թևերի հետ» թիվ 18(2015) կարծիքի 52-րդ պարբերություն:

իշխանությունը, այդ թվում՝ դատական իշխանության նկատմամբ վերահսկողություն սահմանելու միջոցով, մյուս կողմից՝ փորձել են հետևողականորեն հավատարիմ մնալ դատավորների անփոփոխելիության սկզբունքին, ինչը հաջողվել է: Հիշարժան է այն, որ վերը նշված հակասական ձգտումների արդյունքում է ծնվել վարչական արդարադատության գաղափարը, որի միջոցով հեղափոխությամբ իշխանության անցած քաղաքական ուժերը փորձել են հանրային իշխանության հետ կապված վեճերով շրջանցել ավանդական դատարանները և այդպիսիք քննության առարկա դարձնել նորաստեղծ վարչական դատարաններում, որոնք համալրվել էին արդեն յուրայիններով: Սա այն դեպքերից է, երբ հանրային իշխանությունը ձգտում է լուծել իշխանությունը պահելու իրավիճակային խնդիրներ, սակայն արդյունքում կյանքի են կոչվում հետագա զարգացումների համատեքստում հիմնարար արժեքավոր ինստիտուտներ<sup>45</sup>:

Միաժամանակ, դատավորների անփոփոխելիությունը միանշանակ անվերապահ պահանջ է, ուղղակի այն կարող է կիրառվել միայն խիստ կանխատեսելի և իրավաչափ չափորոշիչներով: Ընդ որում՝ նշված չափորոշիչները հենց միտված են սահմանափակելու քաղաքական հեռահար հաշվարկներով իշխանության մյուս թևերի հնարավոր ձգտումները: Նկատենք, որ այդ չափանիշները իրենց իրավական ամրագրումն են ստացել ոչ միայն ազգային օրենսդրությամբ, այլև մի շարք միջազգային իրավական փաստաթղթերով, մասնավորապես՝ ա) «Դատական իշխանության անկախության մասին» ՄԱԿ-ի հիմնարար սկզբունքներով (1985թ.), բ) «Դատավորների անկախության, արդյունավետության և դերի մասին» Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ անդամ պետություններին ուղղված թիվ R(94)12 բանաձևով, գ) «Դատավորների կարգավիճակի մասին» եվրոպական խարտիայով՝ ընդունված 1998 թ. հուլիսի 8-10-ին և այլն: Բոլոր այս միջազգային իրավական փաստաթղթերով հստակ ամրագրված է, որ դատավորների նշանակման, նրանց ներկայացվող պահանջների, առաջխաղացման և լիազորությունների դադարման ու դադարեցման հիմքերը հարկ է սահմանել բացառապես հիմնարար օրենսդրական ակտերով, և այս տեսանկյունից հայրենական իրավական համակարգը բացառություն չէ, քանի որ նշված հարցերի իրավական կարգավորումն արտացոլված է անմիջապես Սահմանադրությամբ:

Թեպետ դատավորների անփոփոխելիությունը դիտվում է որպես դատական իշխանության անկախության բաղադրիչ, այն ևս որոշակի ինքնուրույն սահմանադրաիրավական արժեք է և ուղղված է իրավունքի գերակայության երաշխավորմանը: Ընդհանրապես դատական իշխանության ցանկացած բաղադրիչ, այդ թվում՝ դատավորների անկախ գործունեության, նրանց անձեռմխելիության հիմնադրույթներն առաջնահերթ ծառայում են ոչ թե դատավորների, այլ արդարադատության շահին. միայն լիարժեք անկախ դատավորն է ի զորու կյանքի կոչել լիարժեք արդարադատություն:

<sup>45</sup> Տե՛ս **Գ. Դանիելյան**, Վարչական արդարադատության կայացման հիմնախնդիրները, Երևան, «ԱՌՏ», 2004թ., էջեր 20-25:

Անդրադառնալով դատավորների անփոփոխելիության չափանիշներին, հարկ է նկատել, որ դրանք պետք է լինեն օբյեկտիվ, ուստի, հաշվի առնելով, որ դրանց գնահատման գործընթացը, այնուամենայնիվ, ընթանում է սուբյեկտիվ հարթությամբ, հարկ է նախապատվությունը տալ այնպիսի որոշակի չափանիշների և դրանց գնահատման այնպիսի որոշակի ընթացակարգերի, որոնց պայմաններում սուբյեկտիվ գործոնը չունենա վճռորոշ նշանակություն:

Այս հատվածում առավելապես կանդրադառնանք դատավորների անփոփոխելիության չափանիշներին, նկատի ունենալով, որ նրանց նշանակման և առաջխաղացման հարցերը լուսաբանված են այլ հատվածներում: Ուղղակի մի կարևոր վերապահում անենք. դատավորների անփոփոխելիության սկզբունքի հուսալիությունը մեծամասամբ թելադրված է դատավորների նշանակման, առաջխաղացման չափանիշների կայունությամբ և ծանրակշռությամբ: Թերևս, հենց այս դատողությունների համատեքստում է, որ անվերապահորեն առաջ է քաշվում դատավորների ընտրության համար ոչ միայն որոշակի, օբյեկտիվ, այլև հնարավորինս խիստ պահանջների գաղափարը, քանզի այդպիսի պահանջների բավարարելու դեպքում նվազում է նաև զուտ քաղաքական հաշվարկներով դատավորներ փոփոխելու գրավչությունը: Բնորոշ է այն, որ դատավորների փոփոխելիության մեջ շահագրգռված իշխանության մյուս թևերը, որպես կանոն, տարաբնույթ պատճառաբանություններով առաջնահերթ են համարում դատավորների թեկնածուներին ներկայացվող պահանջները հնարավորինս մեղմացնելը:

Դատավորների պաշտոնավարման ժամկետ սահմանելիս առավել երաշխավորված համարել մինչև կենսաթոշակային տարիքը<sup>46</sup>: Ինչ վերաբերում է սահմանադրական դատարանների դատավորներին, ապա առավել նախընտրելի է դիտվում պաշտոնավարման որոշակի ժամկետ սահմանելը: Ընդ որում՝ ժամկետ սահմանելը ևս համարվում է անփոփոխելիության երաշխիք, եթե այն զգալի տևողություն ունի և բացառվում է առանց դատավորի համաձայնության իրեն այլ պաշտոնի կամ այլ աշխատատեղ տեղափոխելը (հիարկե, խոսքը այս և նմանաբնույթ մյուս դեպքերում չի վերաբերում կարգապահական պատասխանատվությամբ պայմանավորված տոյժերին):

Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերում հարկ է հստակ առանձնացնել այն հիմքերը, որոնց հետ փոխկապակցվում է դատավորի լիազորությունների դադարեցումը: Բոլոր դեպքերում, «<< դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 6-րդ մասով հստակ փորձ է արվել հնարավորինս որոշակիացնել դատավորի լիազորությունները դադարեցնելու հիմքի՝ «էական խախտում» եզրույթի բովանդակությունը, այնուամենայնիվ, հաշվի առնելով այդ եզրույթի խիստ էական նշա-

<sup>46</sup> Հիշատակման արժանի է Չեխիայի Հանրապետությունում որդեգրած տարբերակը. դատավորը կարող է պաշտոնավարել նաև կենսաթոշակային տարիքը (65 տարեկան) լրանալուց հետո, սակայն այդ դեպքում արդարադատության նախարարին վերապահվում է այդ տարիքից բարձր պաշտոնավարող դատավորին պաշտոնից հետ կանչելու լիազորություն:

նակությունը և իրավակիրառ պրակտիկան, հարկ է շարունակել այդ եզրույթը որոշակիացնելուն միտված աշխատանքները:

**Դատարանների և հասարակության ու լրատվամիջոցների հետ փոխհարաբերությունները:** Արդարադատության, դատական համակարգի առնչությամբ տեղեկատվությունը համարվում է հանրային իրավագիտակցության կարևոր բաղադրիչներից, և այդ նկատառումով առաջնահերթ է դիտվում դպրոցական և բուհական կրթական ծրագրերում քաղաքացիական ուսուցում կազմակերպելիս վերոհիշյալ հարցերի ներառումը<sup>47</sup>: Միաժամանակ, դատարանները ևս պետք է ներգրավված լինեն հասարակության շրջանում արդարադատության և դատական իշխանության համակարգի հարցադրումները լուսաբանելու գործում:

Ըստ էության, հատկապես դատավարության հրապարակայնության սկզբունքը ևս արդար դատաքննության իրավունքի կարևորագույն բաղադրիչներից է, այն առաջին հերթին կոչված է առավել երաշխավորված դարձնելու արդար դատաքննության իրավունքը: Սա անչափ կարևոր մեկնակետ է, քանզի կանխորոշում է նշված իրավունքի և արդարադատության շահի, ինչպես նաև այլ իրավական արժեքների մրցակցության պարագայում արդար դատաքննության առաջնահերթ պաշտպանության անհրաժեշտությունը: Սա նաև նշանակում է, որ դատավորն իր գործունեության այլ ասպեկտներ լուսաբանելիս ևս պարտավոր է ղեկավարվել անձի արդար դատաքննության իրավունքի առաջնահերթ պաշտպանության սահմանադրական հիմնադրույթով:

Հասարակության և դատարանների փոխհարաբերության հիմքում դրվում են հետևյալ դրույթները՝

«- դատարաններում գրասենյակների ստեղծում, որոնք պատասխանատու են քաղաքացիների ընդունելության և տեղեկատու ծառայությունների համար,

- դատարանի պատասխանատվության ներքո տպագիր նյութերի տարածում, համացանցային էջերի ստեղծում,

- կրթական հարթակների և/կամ կանոնավոր հանդիպումների կազմակերպում դատարանների կողմից, որոնց կարող են մասնակցել քաղաքացիները, հանրային շահ հետապնդող կազմակերպությունները, քաղաքականություն մշակողները, ուսանողները և այլն,

- «տեղեկտվական ծրագրեր» և արդարադատության մատչելիության ապահովմանն ուղղված ծրագրեր»<sup>48</sup>:

Հասարակության հետ փոխհարաբերություններն անխուսափելիորեն ներառում են առանձնահատուկ իրազեկվածության աստիճան և որակներ, ուստի այդ հարցերը հարկ է ներառել դատավորների վերապատրաստման ծրագրե-

<sup>47</sup> Տե՛ս Եվրոպական դատավորների խորհրդակցական խորհրդի 2005 թ. նոյեմբերի 25-ի «Արդարադատության և հասարակության մասին» թիվ 7(2005) կարծիքի «Առաջարկությունների ամփոփում և եզրակացություններ» հատվածի «Ա2» պարբերություն:

<sup>48</sup> Տե՛ս Եվրոպական դատավորների խորհրդակցական խորհրդի 2005 թ. նոյեմբերի 25-ի «Արդարադատության և հասարակության մասին» թիվ 7(2005) կարծիքի «Առաջարկությունների ամփոփում և եզրակացություններ» հատվածի «Ա4» պարբերությունը:

րում: Ընդ որում՝ հիշյալ ասպեկտով դատավորների գործունեությունը դրսևորվում է երկու ասպեկտով՝ ինչպես ընդհանրական, այնպես էլ կոնկրետ գործերով: Ընդհանրական փոխհարաբերության շրջանակներում դատավորները համեմատաբար ավելի լայն իրավունքներ ունեն, քան երբ խոսքը վերաբերում է կոնկրետ գործերի: Բոլոր դեպքերում, դատավորը հանրային փոխհարաբերություններում սահմանափակված է առնվազն արդարադատության շահի պաշտպանության և դատարանների նկատմամբ վստահության աճի և հաշվետվողականությունն ապահովելու խնդիրներով:

Ընդհանրապես, հանրության հետ փոխհարաբերություններում դատարանները չպետք է բավարարվեն իրենց գործունեության բացառապես դրական կողմերով ու օրինակներով, քանզի այդպիսի գործելաոճը, մեծ հաշվով, չի կարող նպաստել դատարանների նկատմամբ անհրաժեշտ վստահության ձևավորմանը: Ընդ որում՝ նպատակահարմար է արձագանքել նաև այն տեղեկատվությանը, անկախ դրա աղբյուրներից, ինչը դատական իշխանությունը ներկայացնում է ոչ շահեկան ասպեկտներով:

Ընդ որում՝ հանրության հետ անհրաժեշտ փոխհարաբերությունն երաշխավորելու համար դատարանները պետք է ունենան բավարար ֆինանսական միջոցներ, քանզի զուտ հասարակական հիմունքներով և չհամակարգված գործունեությունն այդ չափազանց բարդ ոլորտում չի կարող ապահովել անհրաժեշտ արդյունավետություն: Հավելենք, որ հիշյալ ոլորտին վերաբերող հարցադրումներն անմիջականորեն են առնչվում լրջագույն ֆինանսական ներդրումների հետ, մասնավորապես՝ դատական նիստերի համար նախատեսված դահլիճները պետք է ունենան այնպիսի կառուցվածք, կահավորվածություն, տեխնիկական հագեցվածություն և այլն, որպեսզի կողմերի իրավահավասարությունը նաև գործնական հարթությամբ լինի անհրաժեշտ չափով ընկալելի:

Ընդհանրապես, դատարանների մամլո աշխատակիցները և հասարակության հետ կապերի պատասխանատուներն ունեն որոշակի հայեցողություն, սակայն վերջիններս պարտավոր են գործել դատավորների և Բարձրագույն դատական խորհրդի անմիջական վերահսկողության և ցուցումների ներքո, զերծ մնան կոնկրետ գործերով իրավական նշանակության հարցերի առնչությամբ մեկնաբանություններից: Խրախուսելի է դատավորների մասնակցությամբ դատական իշխանության խնդիրների առնչությամբ պարբերաբար հանրային լուծումներ և քննարկումներ կազմակերպելը: Դատավորը չպետք է խուսափի հանրային շփումներից, քանզի այդպիսի վարքագիծը գործնականում թույլ չի տալիս իրապես համարժեք ընկալելու դատական համակարգը, գնահատելու մամուլի միջոցներով տարածված տեղեկատվության հավաստիությունը, սերմանում է անհարկի անվստահություն և այլն:

Վերևում անդրադարձանք հանրության հետ շփումներում դատավորների վերապատրաստման անհրաժեշտության մասին, սակայն պակաս կարևոր չէ հենց լրագրողների պատրաստվածության խնդիրը: Ներկայումս այս տեսանկյունից խրախուսելի նախաձեռնություն է դրսևորվել ԵՊՀ իրավագիտության ֆա-

կուլտետում, որտեղ հիմնադրվել է լրատվության միջոցների ներկայացուցիչների համար նախատեսված հատուկ մագիստրոսական ծրագիր: Բացի այդ, բակալավրիատի լրագրողների համար նախատեսված են իրավագիտության հիմունքների վերաբերյալ մասնագիտական ծրագրեր: Տվյալ դեպքում, խոսքը լրագրողներին բնավ համալիր ծավալով իրավագիտություն ուսուցանելու մասին չէ, խոսքը դատական իշխանության հարցադրումներով պատշաճ լրագրություն իրականացնելու համար անհրաժեշտ նվազագույն հմտությունների մասին է:

Հանրության հետ փոխհարաբերություններում դատավորներին և դատարանների լրատվական ծառայություններին խորհուրդ է տրվում օգտվել հնարավորինս պարզ ու մատչելի շարադրանքից, հնարավորինս զերծ մնալ լատիներեն և այլ նեղ մասնագիտական եզրույթներ օգտագործելուց:

Դատարանների և լրատվության միջոցների փոխհարաբերության նախադրյալների շրջանակը բազմանիստ է և ընդգրկում, պարզապես ստորև նպատակահարմար է անդրադառնալ առավել առանցքային հիմնադրույթներին<sup>49</sup>

- Դատավորները իրենց գործունեության մասին հանրությանը տեղեկատվություն ներկայացնելիս չպետք է սահմանափակվեն միայն իրենց համակարգում գործող լրատվության ծառայություններից, չպետք է տեղեկատվություն տրամադրելիս խտրական վերաբերմունք դրսևորեն այլ լրատվության միջոցների նկատմամբ,
- Դատավորները պետք է վերահսկեն դատարանի մամուլի ծառայության գործունեությունը, վերջինիս աշխատակիցները չեն կարող դատավորի գործունեության հետ կապված տեղեկությունների շրջանակն ինքնուրույն որոշել և ուղեկցել դրանք սեփական մեկնաբանություններով,
- Դատավորների և լրատվության միջոցների միջև տարածայնությունների և այլ խնդիրների առաջացման դեպքում, քննարկումը նպատակահարմար է իրականացնել լրատվության ոլորտում գործող անկախ կազմակերպության միջոցով,
- Դատարաններում պետք է գործեն առավել մատչելի ընթացակարգերով լրատվության միջոցներին տեղեկատվություն, այդ թվում՝ հատուկ հետաքրքրություն ներկայացնող գործերի վերաբերյալ տեղեկություն, դատական ակտեր, լրատվության միջոցներով հաղորդումների վերաբերյալ *փաստական պարզաբանումներ* տրամադրելու համակարգեր,
- Դատական նիստերը հեռարձակելիս տեսախցիկները պետք է լինեն հնարավորինս ֆիքսված, միաժամանակ նիստը նախագահողը կարող է որոշել, թե ինչ պայմաններով պետք է տեղի ունենա նկարահանումը և համապատասխան հիմքերի դեպքում՝ դադարեցնի նկարահանումը,

<sup>49</sup> Նշված հիմնադրույթներն արտացոլված են Եվրոպական դատավորների խորհրդակցական խորհրդի 2005 թ. նոյեմբերի 25-ի «Արդարադատության և հասարակության մասին» թիվ 7(2005) կարծիքի «Առաջարկությունների ամփոփում և եզրակացություններ» հատվածի «Դատարանների և լրատվամիջոցների փոխհարաբերությունները» վերտառությամբ «Գ» պարբերությունը:

- Սահմանված կանոններից շեղումներ (նիստը նախագահողի որոշմամբ) ինչը ևս պետք է կայացվի սահմանված ընթացակարգով, կարող են թույլատրվել միայն այն դեպքերում, երբ տեսանկարահանումներն ուսումնական նպատակներով են իրականացվում կամ առնչվում են պատմական կարևորություն ունեցող գործերի հետ,
- Դատավորների հասցեին ուղղված քննադատությունը, այդ թվում՝ անհիմն թիրախավորման համատեքստում կեղծ տեղեկատվություն տարածելուն հակադարձելը չպետք է իրականացվի նույն ճանապարհով, մասնավորապես՝ ա) առաջնահերթ դատական իշխանության անկախության երաշխավորման համար պատասխանատու սահմանադրական մարմնի՝ Բարձրագույն դատական խորհրդի գործառույթն է և բ) դատավորը ևս կարող է արձագանքել, սակայն խորհուրդ է տրվում նախապատվությունը տալ այնպիսի շարադրանքի, որը խոցելի չի դարձնի դատական համակարգի նկատմամբ հարգանքը և վստահությունը:

**Էլեկտրոնային արդարադատությունը:** Արդարադատության ոլորտում էլեկտրոնային եղանակով իրականացվող դատավարության շրջանակների ընդլայնումն անխուսափելի է, իսկ համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ հայրենական դատական համակարգը նշված ասպեկտով դեռևս չի գրանցել բարվոք ցուցանիշներ: Ըստ էության, էլեկտրոնային արդարադատության նկատելի հատված ներդրվեց միայն վերջին շրջանում, երբ դատավարական օրենսդրության մեջ կատարվեցին համապատասխան փոփոխություններ:

Էլեկտրոնային արդարադատությունը, ինչպես և ցանկացած այլ արմատական նորամուծություն, ունի ինչպես դրական, այնպես էլ բացասական կողմեր, ըստ այդմ էլ՝ հարկ է այդ ուղղությամբ աշխատանքները կատարել այնպիսի վերապահումներով, որպեսզի հնարավոր բացասական դրսևորումները կամ բացառվեն, կամ հնարավորինս նվազագույնի հասցվեն:

Ինքնին տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը չի կարող անվերապահորեն դիտարկվել որպես մարդու արդար դատաքննության իրավունքի երաշխիքներից, ավելին՝ այն ոչ համարժեք կիրառելու դեպքում կարող է էապես խաթարել այդ իրավունքը: Ընդ որում՝ գործնականում այդ հարցի առնչությամբ նաև դատավորների մասնագիտական իրավագիտակցությունը միանշանակ չէ, դեռևս իրեն զգացնել է տալիս զգուշավորությունը, ինչը թելադրված է մի քանի արդարացի գործոններով՝ ա) ՏՏ ներդրման ընդհանուր խոցելի մակարդակը, ինչը հնարավորություն չի տալիս երաշխավորելու էլեկտրոնային արդարադատության բոլոր ասպեկտների նկատմամբ համալիր և համընդհանուր վերաբերմունքը, բ) դատավարության մասնակիցների ՏՏ ոլորտում ունակությունների և իրազեկվածության ակնհայտ խնդրահարույց լինելը, գ) դատավարական գործընթացների բնականոն ընթացքը երաշխավորող ծրագրային ապահովվածության զգալի թերությունները և այլն: Այնուամենայնիվ, ընդհանուր իրավական մշակույթը, հիշյալ վերապահումներով հանդերձ ու դրանց հաշվառմամբ,



հակված է, որպեսզի SS ներդրումը հնարավորինս լայն շրջանակներ ընդգրկի՝ չխաթարելով ձեռք բերված հաջողությունները:

SS համակարգը կոչված չէ սուկ անհարկի ծախսերից խուսափելուն ուղղված դատավարական գործընթացների պարզեցում ու արագացում ապահովելու համար, այն հայտնի իմաստով նաև առնչվում է արդար դատաքննության իրավունքի մի շարք բաղադրիչների (գործի քննության ողջամիտ ժամկետ, արդարադատության մատչելիության համար հեմամատաբար նպաստավոր պայմաններ և այլն) արդյունավետությանը, ինչպես նաև կոնկրետ իրավիճակներում հոգեբանական նպաստավոր մթնոլորտի ձևավորմանը (օրինակ՝ խափանման միջոցի ընտրությանն առնչվող դատական նիստերում մեղադրյալի մասնակցությունը էլեկտրոնային համակարգի միջոցով, վերջինիս դարձում է առավել անկաշկանդ, մանավանդ, երբ հանրային հնչեղություն ունեցող գործերով բացահայտ մեծ է լինում վերջինիս նկատմամբ հանրային հրապարակային միջոցառումների ազդեցությունը): Այսինքն՝ խնդիրը միայն անիմաստ դատական ու վարչական ծախսերից խուսափելը չէ, ինչը ևս ունի կարևոր նշանակություն, քանզի եղած միջոցներն առավել նպատակահարմար է ուղղել դատական իշխանության բնականոն գործունեության առաջնահերթ խնդիրների լուծմանը, խնդիրը հենց արդար դատաքննության իրավունքի երաշխավորման արդյունավետության բարձրացումն է՝ նաև հոգեբանական տարաբնույթ բացասական ազդակները բացառելու տեսանկյունից:

Իհարկե, SS համակարգն ուղեկցվում է հրապարակայնության որոշակի ցուցիչներով (ներկայումս շատ երկրներում բոլոր դատական նիստերը նկարահանվում են, և դրանց կարելի է ուղիղ հեռարձակմամբ հետևել), ինչը հոգեբանորեն կարող է կաշկանդել նաև դատավորներին, բայց դա կարճատև և հաղթահարելի անհարմարություն է:

SS համակարգը չի սահմանափակվում միայն կոնկրետ գործերով դատաքննությանն սպասարկելով, այն, ըստ էության, դատական իշխանության անկախության երաշխավորման ժամանակակից գործիքներից է, քանզի առնչվում է դատական իշխանության անկախության բոլոր բաղադրիչների հետ: Վերջին հաշվով, հնարավոր չէ առանց SS ժամանակակից հնարավորությունների ողջ ծավալով օգտագործման ապահովել պատշաճ հրապարակայնություն, դատական ակտերի և ընդհանրապես՝ դատական ատյանների գործունեության հասանելիության անհրաժեշտ գործընթաց և այլն: Միայն այդ համակարգերի ներդրմամբ է, որ դատական համակարգը ստիպված չի լինում հերքել կեղծ ու ոչ բավարար չափով պատշաճ տեղեկատվությունը, ինչը, այնուամենայնիվ, ամբողջությամբ հավատ չի ներշնչում: SS համակարգի միջոցով արդարադատության գրեթե ողջ ընթացքը մատչելի է դառնում հանրության համար, նպաստում հանրային իրավագիտակցության հղկմանը, իրավունքի գերակայության սկզբունքի ամրապնդմանը, քանզի իրազեկ քաղաքացին, այդպիսով, օժտվում է իր իրավունքներն առավել արդյունավետ պաշտպանելու, համարժեք իրազեկված լինելու և նիհիլիզմով անհարկի չհրապուրվելու ունակություններով: Միաժամանակ, դատական համակարգն այդ հզոր համակարգի միջոցի շնորհիվ, արդեն նախկինի նման գրավիչ չի ընկալվում ոչ պատշաճ տեղեկատվությամբ

ու անհիմն գնահատականներով թիրախավորելու պատրաստ լրատվության միջոցների կողմից:

Միաժամանակ, խիստ կարևորվում է SS համակարգի նշանակության ճշգրիտ, համարժեք ընկալումը: Մասնավորապես, այն չպետք է դիտարկվի սուկ որպես տեխնիկական միջոց՝ որոշ դատավարական գործառույթներ առավել արագ ու հնարավորինս նվազ ֆինանսական միջոցներով իրականացնելու պարզ գործիք. քանզի ցանկացած նորամուծություն պետք է առանցքում ունենա միայն և միայն մարդու գերակայությունը: Այս տեսանկյունից բնորոշ է ԵԴԽԽ-ի հետևյալ եզրահանգումը. «Եվրոպական դատարաններում SS-ի ներմուծումը չպետք է խաթարի արդարադատության մարդկային և սիմվոլիկ կողմերը: Եթե արդարադատությունից օգտվողների համար այն ընկալվի որպես զուտ տեխնիկական, առանց իր իրավական և հիմնական գործառույթի, ապա *ուրույր կարող է ապամարդկայնացվել* (ընդգծումը մերն է)»<sup>50</sup>: Ասվածից բխում է, որ SS համակարգը որևէ կերպ չպետք է հանրային շահերի պաշտպանության պատճառաբանությամբ սահմանափակի դատավարության կողմերի իրավունքները, քանզի հանրային և մասնավոր շահերի մրցակցության այս հարաբերակցությունում առավել ծանրակշիռ է մարդու արդար դատաքննության իրավունքը:

SS համակարգի ներդրումը չպետք է չափից դուրս ֆորմալացնի դատավարական փաստաթղթերը, իսկ այդպիսի հնարավոր զարգացումները կանխելու նկատառումով անհրաժեշտ է, որպեսզի դատական համակարգի աշխատակազմերը սերտորեն համագործակցեն ծրագրավորողների հետ, որոշակիացնեն դատավարական փաստաթղթերին ներկայացվող, ինչպես նաև դատավորների հայեցողությամբ պայմանավորված անհատական մոտեցումները չսահմանափակելու պահանջները:

Ընդհանուր առմամբ, ողջունելի է, որ SS համակարգի կիրառմամբ է իրականացվում նաև ոչ միայն դատական գործերի բաշխման, այլև դատավորների գնահատման աշխատանքները, սակայն չպետք է գնահատման ողջ ընթացքը սահմանափակվի միայն SS համակարգի միջոցով, մարդկային գործոնն այս դեպքում անհրաժեշտ է ստեղծագործական և վերլուծական մարդկային ունակությունները ևս համարժեք օգտագործելու տեսանկյունից: Ուղղակի SS համակարգի կիրառմամբ նվազագույնի է հասցվում սուբյեկտիվ գործոնի չարաշահման հնարավորությունը:

Սկզբունքորեն էլեկտրոնային արդարադատության շրջանակների հետագա ընդլայնումը չի բացառում, որ առանձին կանխատեսելի, պարզ գործերով, օրինակ՝ վարչարարության առանձին տեսակների հետ կապված դիմումների քննարկումն իրականացվի արհեստական բանականության սկզբունքով, սակայն անգամ այս դեպքում ընթացակարգերը և դրանց արդյունքները չեն կարող «անձեռնմխելի» դիտարկվել, քանզի իրավունքի զարգացումը պահանջում է անհրաժեշտ ճկունությունը փոխանցել նաև արհեստական բանականության համակարգերին:

<sup>50</sup> Տե՛ս Եվրոպական դատավորների խորհրդակցական խորհրդի 2011 թ. նոյեմբերի 9-ի «Արդարադատությունը և տեղեկատվական տեխնոլոգիաները (SS)» թիվ 14(2011) կարծիքի 6-րդ կետը:

## ԳԼՈՒԽ 4

### ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԴԱՏԱՎՈՐԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐ ԲԱՂԱԴՐԻՉ

#### 1. Դատավորների ներքին անկախությունը որպես դատավորի անկախության կարևոր բաղադրիչ

Սահմանադրության 4-րդ հոդվածը որպես սկզբունք սահմանել է, որ պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքների համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման ու հավասարակշռման հիման վրա:

Սահմանադրական դատարանը 2021 թվականի ապրիլի 29-ի ՍԴՈ-1590 որոշմամբ նշել է, որ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը ժողովրդավարության, իրավունքի գերակայության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության հիմնարար երաշխիք է, որը թույլ է տալիս կյանքի կոչել Սահմանադրության 1-ին հոդվածում ամրագրված Հայաստանի Հանրապետության՝ ժողովրդավարական և իրավական պետություն հանդիսանալու սահմանադրի հրամայականը:

Մեկ այլ՝ 2021 թվականի փետրվարի 23-ի ՍԴՈ-1578 որոշմամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ իշխանությունների բաժանման և հավասարակշռման մասին Սահմանադրության 4-րդ հոդվածով նախատեսված սկզբունքի պահանջն է պետական իշխանության գործառույթային (օրենսդիր, դատական և գործադիր) և այդ գործառույթների իրագործմանը կոչված ինստիտուտների (պետական մարմինների և պաշտոնատար անձանց) հստակ տարանջատվածությունը: Իշխանությունների բաժանումը, սակայն, ինքնանպատակ չէ, քանի որ իշխանության իրականացման ընթացքում պետության կենսական կարևոր խնդիրների իրագործման նպատակով այն անհրաժեշտաբար պետք է զուգորդվի իշխանությունների հավասարակշռմամբ: Այսինքն՝ հստակ տարանջատվածության հետ մեկտեղ պետական իշխանության ճյուղերն անհրաժեշտաբար պետք է գտնվեն ընդհանուր հավասարակշռության մեջ:

Ելակետային պետք է դիտարկել այն հանգամանքը, որ իշխանությունների սահմանադրական հավասարակշռության ապահովման համար վերջիններիս գործառույթային, հակակշռող և զսպող լիազորությունները պետք է հստակորեն բաժանված լինեն՝ երաշխավորելով ինչպես իշխանությունների սահմանադրական գործառույթների համակարգային ամբողջականությունը, այնպես էլ իշխանության յուրաքանչյուր թևի գործառույթային անկախությունը:

Իշխանությունների բաժանման համակարգում իր ուրույն դերն ունի դատական իշխանությունը, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ իշխանության այս ճյուղին է վերապահված արդարադատություն իրականացնելու

բացառիկ լիազորությունը<sup>51</sup>: Ուստի իրավական պետությունում իշխանությունների ամրապնդման հանձնառությունն առաջին հերթին ենթադրում է անկախ և անաչառ դատական իշխանության առկայություն, իսկ դատական իշխանության ինքնուրույնությունն ապահովող անկախության սկզբունքի լիարժեք կենսագործման համար անհրաժեշտ է նախատեսել այդ սկզբունքի ապահովման իրական երաշխիքներ:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր որոշմամբ ընդգծել է հետևյալը. հաշվի առնելով այն կարևոր տեղը, որ դատական իշխանությունը զբաղեցնում է պետական մարմիններում ժողովրդավարական հասարակության մեջ և իշխանությունների տարանջատման և դատական իշխանության անկախության ապահովման աճող կարևորությունը պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձվի դատական իշխանության անդամների պաշտպանությանը այնպիսի գործոններից, որոնք, ազդելով նրանց կարգավիճակի կամ կարիերայի վրա, կարող են սպառնալ նրանց դատական անկախությանը և ինքնավարությանը<sup>52</sup>:

Սահմանադրական դատարանը 2021 թվականի հոկտեմբերի 12-ի ՍԴՈ-1613 որոշմամբ նշել է, որ դատարանների անկախությունը վերացական հասկացություն չէ: Այն ենթադրում է գործառնական, կառուցակարգային, նյութական ու սոցիալական անկախության այնպիսի նախադրյալներ, որոնք անհրաժեշտ ու բավարար են դատարանների ու ողջ դատական իշխանության անկախությունը երաշխավորելու համար: Սահմանադրությամբ ամրագրված են մի շարք հիմնարար սկզբունքներ, որոնք ամրագրում են դատարանների՝ որպես միասնական պետական իշխանության ինքնուրույն թևի՝ դատական իշխանության, և դատավորների՝ որպես դատական իշխանության միակ կրողների, սահմանադրական կարգավիճակը՝ սահմանադրորեն երաշխավորելով նրանց անկախությունը: Օրենքները կոչված են իրավական համարժեք երաշխիքներ ստեղծելու այդ անկախության ամրապնդման համար:

Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդն արձանագրել է, որ «Դատական իշխանությունը ժամանակակից ժողովրդավարական պետության երեք կարևոր և հավասարազոր հենասյուներից մեկն է: Այն կարևոր դեր և գործառույթներ է կատարում իշխանական մյուս երկու թևերի հետ հարաբերություններում: Այն ապահովում է, որ կառավարությունները և վարչական ապարատը հաշվետու լինեն իրենց գործողությունների համար (...): Իր այս գործառույթը կատարելու համար դատական իշխանությունը պետք է անկախ լինի այդ մարմիններից, այդ թվում՝ պետք է զերծ լինի նման մարմինների հետ ոչ պարզաձև կապերից կամ նրանց ազդեցությունից: Սա անպայմանորեն իր հետևանքներն ունի դատավորի կարիերայի գրեթե բոլոր ասպեկտների վրա՝

<sup>51</sup> Տե՛ս Սահմանադրության 162-րդ հոդված:

<sup>52</sup> Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Bilgen v. Turkey թիվ 1571/07 գանգատով 09.03.2021 թվականի վճիռը, կետ 58:

վերապատրաստումից մինչև նշանակում և առաջխաղացումից մինչև կարգապահական պատրասխանավորություն<sup>53</sup>»։ Միաժամանակ նույն կարծիքում Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդը նշել է, որ «Դատական իշխանության անկախությունն իրավունքի գերակայության նախապայման է և արդար դատավարության հիմնարար երաշխիք։ (...) Դատավորների անկախությունը նրանց սեփական շահերի համար տրված բացարձակ իրավասություն կամ արտոնություն չէ։ Այն բխում է իրավունքի գերակայության շահերից և այն անձանց շահերից, որոնք փորձում են օգտվել արդարադատությունից և արդարադատություն են ակնկալում»<sup>54</sup>։

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, անդրադառնալով դատական իշխանության անկախությանը, նշել է այն չափանիշները, որոնց համապատասխանելու դեպքում մարմինը կարող է համարվել անկախ. դրանք են՝ այդ մարմնի անդամների նշանակման ձևը և նրանց պաշտոնավարման ժամկետը, արտաքին ճնշումների դեմ երաշխիքների առկայությունը և թե արդյոք տվյալ մարմինը թողնո՞ւմ է անկախ լինելու տեսանելիություն<sup>55</sup>։

Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովն (այսուհետ՝ Վենետիկի հանձնաժողով) իր հերթին նշել է, որ դատական իշխանության անկախությունը կարելի է դիտարկել երկու ձևով, այն է՝ ինստիտուցիոնալ և անձնական անկախություն։ Ինստիտուցիոնալ անկախությունը ենթադրում է իշխանությունների տարանջատում և դատավորի գործելու ազատությունն առանց օրենսդիր և գործադիր մարմինների կողմից գործադրվող ճնշման։ Իսկ անձնական անկախությունը ենթադրում է դատավորների կողմից գործերն առանց քաղաքական կամ այլ ճնշման լուծելու հնարավորությունը<sup>56</sup>։

Ինստիտուցիոնալ անկախությունն ունի չորս չափանիշներ։ Մասնավորապես՝

- Առաջին չափանիշը վարչական (կազմակերպչական) հարցերում անկախությունն է, այսինքն՝ դատական համակարգը իր ներքին կազմակերպչական հարցերը պետք է որոշի առանց արտաքին ազդեցության։ Այն նաև պետք է ինքնավար լինի գործերի բաշխման հարցում։
- Երկրորդ չափանիշը դատական համակարգի՝ ֆինանսական հարցերում անկախ լինելն է։ Դատական համակարգը պետք է ունենա բավա-

<sup>53</sup> Տե՛ս Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի «Դատական իշխանության անկախության և դատավորների անփոփոխելիության չափորոշիչների մասին» թիվ 1 (2001) կարծիքը, կետ 11։

<sup>54</sup> Տե՛ս Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի «Դատական իշխանության անկախության և դատավորների անփոփոխելիության չափորոշիչների մասին» թիվ 1 (2001) կարծիքը, կետ 10։

<sup>55</sup> Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի *Bryan v. The United Kingdom* թիվ 19178/91 գանգատով 22.11.1995 թվականի վճիռը, կետ 95։

<sup>56</sup> Տե՛ս Վենետիկի հանձնաժողովի 2012 թվականի հունիսի 18-ի CDL-AD(2012)014 կարծիքը (թիվ 648/2011.), պարբերություն 75։

րար ֆինանսական միջոցներ, որպեսզի պատշաճ իրականացնի իր գործառույթները, ինչպես նաև ունենա որոշիչ դեր այդ ֆինանսական միջոցների բաշխման հարցում:

- Երրորդ չափանիշը դատական համակարգի՝ սեփական որոշումները կայացնելու հարցում անկախությունն է: Այդ որոշումները պետք է հարգվեն և իրականացվեն, ինչպես նաև այդ որոշումները չպետք է ենթակա լինեն ոչ դատական իշխանությունների կողմից վերանայման:
- Չորրորդ չափանիշը դատական համակարգի կողմից իր իրավասությունը (ընդդատություն) որոշելու անկախությունն է, այսինքն՝ արդյոք տվյալ գործն ընկնո՞ւմ է իր իրավասության տակ, թե՞ ոչ<sup>57</sup>:

Ինչ վերաբերում է դատավորի անձնական անկախությանը, ապա այն ենթադրում է անկախություն դատավորի մասնագիտական պարտականություններն իրականացնելիս<sup>58</sup>: Անձնական անկախությունն ունի բազմաթիվ ասպեկտներ, իսկ դրանցից առավել կարևոր չափանիշները հետևյալն են.

- Առաջին չափանիշը դատավորի նշանակման և առաջխաղացման ընթացակարգն է: Մասնավորապես՝ դատավորի մասնագիտական կարիերային վերաբերող բոլոր որոշումները պետք է հիմնված լինեն օբյեկտիվ չափանիշների վրա, զերծ լինեն կողմնակալությունից և խտրականությունից: Դատավորների ընտրությունը և նրանց առաջխաղացումը պետք է հիմնված լինեն արժանիքների վրա (օր.՝ մասնագիտական որակավորում):
- Երկրորդ չափանիշը դատավորի պաշտոնավարման և ֆինանսական կայունությունն է: Մասնավորապես՝ դատավորի պաշտոնավարմանը վերաբերող հարցերը պետք է կարգավորվեն օրենքով, և լավագույն դեպքում այն պետք է ավարտվի դատավորի թոշակի անցնելով: Պետք է երաշխավորվեն նաև համապատասխան վարձատրություն և արժանապատիվ աշխատանքային պայմաններ: Երաշխիքի ցանկացած փոփոխություն պետք է տեղի ունենա միայն բացառիկ իրավիճակներում:
- Երրորդ չափանիշը որոշումների կայացման գործում անկախությունն է: Դատական իշխանությունը որոշումներ կայացնելիս պետք է լինի ազատ՝ առանց արտաքին միջամտության:

Չորրորդ չափանիշը դատավորների իրավունքներն են: Մարդու հիմնարար իրավունքները ևս տարածվում են դատավորների վրա, իսկ դրանցից մի քանիսը էլ ավելի են կարևորվում դատավորի անկախության երաշխավորման գործում (օրինակ՝ արտահայտվելու ազատությունը և այլն): Մյուս կողմից՝ որոշ իրավունքներ դատավորների համար կարող են սահմանփակվել, օրինակ՝ խոս-

<sup>57</sup> Տե՛ս Վենետիկի հանձնաժողովի 2012 թվականի հունիսի 18-ի CDL-AD(2012)014 կարծիք (թիվ 648/2011.), պարբերություն 79:

<sup>58</sup> Տե՛ս Վենետիկի հանձնաժողովի 2012 թվականի հունիսի 18-ի CDL-AD(2012)014 կարծիք (թիվ 648/2011.), պարբերություն 80:

քի ազատությունը սահմանափակվում է դատական գործերի գաղտնիության պահպանման պարտականությամբ<sup>59</sup>:

Այսպիսով, դատավորների անկախությունը ենթադրում է դատավորների կողմից դատական իշխանության (արդարադատության) իրականացում՝ զերծ լինելով կողմնակի միջամտություններից և ազդեցություններից, որոնք կարող են բխել ինչպես հանրային իշխանության մարմիններից, այնպես էլ մասնավոր անձանցից: Դատավորների անկախությունը դատական իշխանության և դրա միակ կրողների՝ դատավորների նկատմամբ հանրային վստահության անկյունաքարն է՝ նկատի ունենալով, որ միայն վերջինիս առկայության դեպքում կարող է հանրության, առաջին հերթին՝ արդարադատություն հայցող անձանց մոտ ձևավորվել և ամրապնդվել վստահությունն առ այն, որ դատավորներն իրենց գործառույթներն իրականացնելիս գործում են անաչառ և ղեկավարվում բացառապես Սահմանադրությամբ և օրենքով: Ընդ որում՝ դատավորների անկախությունը գնահատելիս էական նշանակություն ունեն նաև անկախության արտաքին հատկանիշները, այսինքն՝ թե դատավորները որքանով են օբյեկտիվ դիտորդի կողմից ընկալվում որպես անկախ: Այսպիսով, դատական իշխանության անկախությունը ենթադրում է այնպիսի օրենսդրական երաշխիքների առկայություն, որոնց պայմաններում դատարաններն իրենց գործառույթային լիազորությունները կարող են իրականացնել՝ զերծ լինելով արտաքին և ներքին ներգործությունից և ճնշումներից:

Միաժամանակ Սահմանադրությամբ ամրագրվել է դրույթ, համաձայն որի՝ արդարադատություն իրականացնելիս դատավորն անկախ է, անաչառ և գործում է միայն Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան: Սահմանադրական այս դրույթն ամրագրում է դատավորների անկախությունը, որն իրավական պետության գոյությունն ապահովող երաշխիքներից է: Ընդհանուր առմամբ, դատավորի մասնագիտական անկախությունը նշանակում է, որ դատավորն արդարադատություն իրականացնելիս ղեկավարվում է միայն Սահմանադրությամբ և օրենքներով: Ո՛չ օրենսդիր, ո՛չ գործադիր իշխանության մարմինները, և ո՛չ էլ դատական իշխանության ներկայացուցիչները չեն կարող դատավորին թելադրել, թե վերջինս ինչպես պետք է լուծի իր քննությանը հանձնված գործը կամ հարցը:

Այս տեսանկյունից ընդունված է տարբերակել դատավորի «արտաքին» և «ներքին» անկախությունը: Արտաքին անկախությունը վերաբերում է օրենսդիր և գործադիր իշխանության մարմիններից դատարանի անկախությանը, ինչը ենթադրում է, որ պետք է բացառվեն նրանց կողմից դատարանների և դատավորների վրա «ոչ պատշաճ ձևով» ազդելու փորձերը: Ուստի դատական իշխանության և դրա ինստիտուտների կազմավորումը և գործունեության անկախությունը պետք է իրականացվեն և ապահովվեն այնպես, որպեսզի իշխա-

<sup>59</sup> Տե՛ս Վենետիկի հանձնաժողովի 2012 թվականի հունիսի 18-ի CDL-AD(2012)014 կարծիքը (թիվ 648/2011.), պարբերություն 81:

նության այս թևը զերծ մնա քաղաքական գործընթացներից և ազդեցություններին:

Իսկ ներքին անկախությունը ենթադրում է դատավորի անկախություն դատական իշխանության ներսում, այսինքն՝ անկախություն գործընկեր դատավորներից, ինչպես նաև այլ դատարանների դատավորներից: Դա նշանակում է, որ դատավորն իրավասու չէ ցուցումներ ստանալ այլ դատավորներից իր քննությանը հանձնված գործի կամ հարցի քննության և լուծման կապակցությամբ: Ընդ որում՝ դատավորի մասնագիտական անկախությունը վերաբերում է գործի քննության ողջ ընթացքին, և օրենսդրական կարգավորումների խնդիրն է ապահովել, որ դատավորի կայացրած որոշումները և դրանց հիմքում ընկած ողջ գործընթացը զերծ լինեն կողմնակի ազդեցությունից և միջամտությունից: Ավելին՝ հենց դատավորի ներքին անկախությունն ապահովելու նպատակով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքը դատավորներից, ի թիվս այլնի, պահանջում է մի կողմից զերծ մնալ մեկ այլ դատավորի կողմից արդարադատության իրականացմանը միջամտելուց, մյուս կողմից՝ չնախաձեռնել և թույլ չտալ վերադաս այն դատարանի դատավորի հետ խորհրդակցելը, որին տվյալ գործով կարող է ներկայացվել բողոք, ինչպես նաև այն դատավորի հետ, որն ինքնաբացարկ է հայտնել տվյալ գործով:

Դատավորի մասնագիտական անկախության սկզբունքից է բխում դատավորի՝ ներքին համոզմունքով առաջնորդվելու գաղափարը: Հարկ է նշել, որ «ներքին համոզում կամ համոզմունք» արտահայտությունը թե՛ դատավարական օրենսգրքերում, թե՛ մասնագիտական գրականության մեջ առավելապես կիրառվում է ապացույցների գնահատման և դրա հիման վրա որևէ փաստ հաստատված համարելու համատեքստում, սակայն այն ավելի լայն իմաստով կարելի է բնորոշել որպես որոշակի օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքների ու գործոնների հիման վրա անձի, տվյալ դեպքում՝ դատավորի մոտ ձևավորված վստահություն կոնկրետ հարցի քննարկման արդյունքների նկատմամբ (օրինակ՝ գործով կիրառման ենթակա նորմի՝ Սահմանադրությանն անհամապատասխանության վերաբերյալ հիմնավոր կասկածի առկայության մասին, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի հաստատված լինելու մասին և այլն): Նման համոզմունքը հանգեցնում է համապատասխան իրավական գնահատականների, ընկած է դատավորի կողմից կայացվող որոշումների հիմքում և պայմանավորում է դրանցում ներկայացվող իրավական դիրքորոշումները:

Նշվածի համատեքստում առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում այն իրավիճակները և հարցերը, որոնք շոշափում են դատավորի մասնագիտական անկախությունից աժանցվող՝ ներքին համոզմունքով գործելու և այդ համոզմունքի հիման վրա ձևավորվող իրավական դիրքորոշումներն արտահայտելու ազատությունը, և որոնցից մի քանիսը կառանձնացվի սույն աշխատությունում: Ընդ որում՝ նշված հարցերն առավելապես կքննարկվեն առաջին



ատյանի և վերաքննիչ դատարանների դատավորների՝ ներքին համոզմունքով գործելու սկզբունքի և նրանց՝ այլ դատավորների կամ դատարանների արտահայտած իրավական դիրքորոշումներով հնարավոր կաշկանդվածության տեսանկյունից:

## **2. Վճռաբեկ դատարանի որոշումների պարտադիրությունը և դրանց ազդեցությունն առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների դատավորների ներքին համոզման և իրավական դիրքորոշումների ձևավորման հարցում**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգի հիմնարար սահմանադրական սկզբունքներից է իշխանությունների տարանջատումը, որի բաղկացուցիչ տարրերից է հավասարակշռման սկզբունքը, որն էլ իր հերթին անխուսափելի անհրաժեշտություն է ժողովրդավարական կարգերի և իրավական պետության համար: Իշխանությունների տարանջատումը ենթադրում է դրանց հավասարակշռում, իսկ հավասարակշռությունը հնարավոր է միայն հավասարակշիռ տարրերի միջև: Այո՛, դատական իշխանությունն իշխանության մյուս ճյուղերին հավասար կշիռ ունեցող իշխանություն է, իսկ օրենսդիր և դատական իշխանությունների միջև հավասարակշռման մեխանիզմը դրսևորվում է իշխանության մի ճյուղի կողմից օրենքներ ընդունելով, մյուսի կողմից՝ դրանք մեկնաբանելով ու կիրառելով:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից ձևավորված նախադեպային իրավունքի համաձայն՝ օրենքը պետք է ձևակերպված լինի բավարար հստակությամբ, ինչը հնարավորություն կտա ֆիզիկական և իրավաբանական անձանց ողջամտորեն կանխատեսել իր վարքագծի իրավական հետևանքները: Օրենքը պետք է օժտված լինի իրավունքի գերակայությունից բխող այնպիսի որակական հատկանիշներով, ինչպիսիք են հասանելիությունը և կանխատեսելիությունը: Բացի այդ, օրենքը պետք է ձևակերպվի այնպես, որ մասնավոր անձինք օժտված լինեն հանրային իշխանության կամայական միջամտությունների դեմ արդյունավետ պաշտպանության հնարավորությամբ:

Օրենսդրական կարգավորման որոշակիությունը և ճշգրտությունը, սակայն, չեն կարող բացարձականացվել. նույնիսկ ոչ բավարար հստակությունը կարող է լրացվել դատարանի մեկնաբանություններով: Այս հարցում մեծ դերակատարում ունեն Վճռաբեկ դատարանի որոշումները, ինչը պայմանավորված է Վճռաբեկ դատարանի սահմանադրական գործառնությամբ, այն է՝ ապահովել օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը և վերացնել մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները:

Վճռաբեկ դատարանի ստեղծումը պայմանավորված էր 1995 թվականին Սահմանադրության ընդունմամբ, որը Վճռաբեկ դատարանին օժտում էր ընդհանուր իրավասության դատարանների համակարգում բարձրագույն դատական ատյանի կարգավիճակով և վերջինիս վերապահում էր միայն օրինական

ուժի մեջ մտած դատական ակտերը վերանայելու գործառույթ: Հետագայում Վճռաբեկ դատարանի դերը և նշանակությունը վերանայվեց. 2005 թվականին տեղի ունեցած սահմանադրական փոփոխությունների արդյունքում Վճռաբեկ դատարանը ձեռք բերեց բոլորովին այլ՝ օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու գործառույթ, որն իրականացվում էր վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու հայեցողական լիազորության կիրառման միջոցով: Դրանով իսկ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում ներդրվեցին նախադեպային իրավունքի առաջին սերմերը: Ներկայումս 2015 թվականին տեղի ունեցած սահմանադրական փոփոխությունների արդյունքում Վճռաբեկ դատարանն օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունն ապահովելուց զատ ձեռք բերեց նաև որակապես նոր գործառույթ՝ մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները վերացնելը, իսկ Վճռաբեկ դատարանի կողմից այդ հրամայականների միաժամանակյա կենսագործումը նպաստում է իրավունքի զարգացմանն ու կանխատեսելիության մակարդակի բարձրացմանը: Նշված գործառույթն ամբողջացնում է Վճռաբեկ դատարանի՝ որպես բարձրագույն դատական ատյանի, տեղն ու դերը թե՛ դատական իշխանության, թե՛ առհասարակ հանրային իշխանության մարմինների համակարգում:

Այսօր արդեն կարող ենք փաստել, որ դատական նախադեպի մշակույթի ներդրումը մեր իրավական համակարգի առաջադեմ և միջազգային իրավական գործընթացներին համահունչ քայլ էր: Առաջնորդվելով Վճռաբեկ դատարանի՝ նախադեպային նշանակություն ունեցող որոշումներով՝ դատարաններն առավել արդյունավետ են իրականացնում գործերի լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննությունը՝ ապահովելով միասնական պրակտիկայից և իրավական նորմերի միասնական մեկնաբանությունից բխող դատական ակտերի կայացումը և նվազագույնի հասցնելով դատական սխալների հիմքով դատական ակտերի բեկանումները: Օրենքների միատեսակ կիրառությունը, կոչված լինելով մարդու իրավական պաշտպանվածության բարձրացմանը և մասնավորապես՝ օրենքի առաջ բոլորի հավասարության ապահովմանը, կանխում է նույն իրավական նորմի տարբերույթ մեկնաբանությունները տարբեր անձանց նկատմամբ: Վճռաբեկ դատարանի գործունեության նպատակը հենց այս հավասարության երաշխավորումն է՝ միաժամանակ ապահովելով նաև իրավական որոշակիությունը, իրավական կանխատեսելիությունը և այս ամենի արդյունքում նաև՝ կանխատեսելի արդարադատությունը:

Իհարկե, նախադեպը քարացած իրավական կատեգորիա չէ: Հասարակական հարաբերությունների զարգացմանը համահունչ անհրաժեշտություն կարող է առաջանալ ոչ միայն զարգացնել նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումը, այլև ստորադաս դատարաններում նույնանման փաստական հանգամանքներ ունեցող գործով շեղվել Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումից, ինչը նախատեսված էր թե՛ նախկին ՀՀ դատական

օրենսգրքում, թե ներկայումս գործող «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում:

Այսպես, նախկինում գործող ՀՀ դատական օրենսգիրքը սահմանում էր, որ որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ:

Այսինքն՝ օրենսդիրն առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների դատավորներին ըստ էության թույլ չէր տալիս շեղվել նույնանման փաստական հանգամանքներով գործով վճռաբեկ դատարանի դատական ակտի հիմնավորումներից (այդ թվում՝ օրենքի մեկնաբանություններից). դատավորը միայն կարող էր ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորել, որ դրանք տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի չեն:

Նման կարգավորումն իրավաբանական հանրույթի մոտ որոշակի տարակուսանք էր առաջացնում՝ կապված դատավորների անկախության հետ: Հիմնական քննադատությունն այն էր, որ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները պարտադրելով մյուս դատարաններին, էապես սահմանափակվում էր դատավորի՝ ներքին համոզմունքով գործելու ազատությունը: Իհարկե, մյուս կողմից՝ վճռաբեկ դատարանի դիրքորոշումների պարտադիրությունը կանխատեսելիություն էր ապահովում կողմերի համար, որոնք թե՛ նյութական իրավահարաբերությունների մեջ մտնելիս, և թե՛ որոշակի փաստական հանգամանքներով դատական գործը դատարանի քննությանը հանձնելիս կարող էին կանխատեսել, թե ինչ մեկնաբանություն կտրվի կիրառման ենթակա իրավական դրույթներին:

Այնուամենայնիվ, 2018 թվականին ընդունված «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքը նախապատվություն տվեց դատավորի՝ ներքին համոզմունքով գործելու մոտեցմանը, և սահմանեց, որ նույնանման փաստերով այլ գործով վճռաբեկ դատարանի կողմից իրավական նորմի մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանության դեպքում դատարանը պետք է հիմնավորի օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտի՝ վճռաբեկ դատարանի մեկնաբանությունից շեղվելը:

Այսինքն՝ դատավորը, իր ներքին համոզմունքի հիման վրա մեկնաբանելով կիրառման ենթակա դրույթները, կարող է հանգել դրանց բովանդակության վերաբերյալ այլ հետևության և արտահայտել վճռաբեկ դատարանի կողմից տրված՝ իրավական նորմի մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանություն, իհարկե, ներկայացնելով նման շեղման հիմնավորումները: Նման կարգավորումը պայմանավորված է նաև այն իրողությամբ, որ հասարակական հարաբերություններն անընդհատ զարգանում և փոփոխվում են, ուստի վճռաբեկ դատարանի կողմից իրավական նորմի մեկնաբանությունները ժամանա-

կի ընթացքում օբյեկտիվորեն կարող են կորցնել իրենց արդիականությունը և արդյունավետությունը՝ չքայլելով հասարակական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց: Նման իրավիճակներում դատավորը կարող է, շեղվելով Վճռաբեկ դատարանի մեկնաբանությունից, դրանով իսկ բարձրացնել այդ մեկնաբանությունը վերանայելու անհրաժեշտության հարց, որը և համապատասխան բողոքի ներկայացման դեպքում հիմք կլինի Վճռաբեկ դատարանի կողմից իրավունքի զարգացման գործառույթն իրացնելու համար:

Հարկ է նշել, որ Վճռաբեկ դատարանն օրենքների և նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության ապահովման իր գործառույթն իրականացնում է կոնկրետ վճռաբեկ բողոքի քննության կապակցությամբ՝ այդ կոնկրետ գործի փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելով համապատասխան իրավանորմի մեկնաբանությունը: Ընդ որում՝ շատ դեպքերում փաստական հանգամանքների առանձնահատկությունն էլ պայմանավորում է այս կամ այն իրավանորմի մեկնաբանության բովանդակությունը: Միաժամանակ թե՛ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, թե՛ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը և թե՛ 01.07.1998 թվականին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը և 30.06.2021 թվականին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը որպես վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքի՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշման՝ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար էական նշանակություն ունենալու կոնկրետ դեպք սահմանել են բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանության հակասությունը վճռաբեկ դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը: Հետևաբար նշված դեպքի պարագայում բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը տվյալ նորմի կապակցությամբ Վճռաբեկ դատարանի արտահայտած մեկնաբանության հետ հակասության առումով վերլուծելիս և գնահատելիս հարկ է հաշվի առնել, թե արդյոք նույնաման են տվյալ գործերի փաստական հանգամանքները, որոնց լուծման կապակցությամբ տրվել է իրավանորմի մեկնաբանությունը: Նշված եզրահանգումը բխում է նաև «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի կարգավորումից:

Սահմանադրական դատարանը, Ադասի Տեր-Եսայանի և Նշան Իսախրյանի դիմումների հիման վրա քննելով նախկինում գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ կետի, 231-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ ենթակետի և 231-րդ հոդվածի 3-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանելու հարցը, 27.12.2016 թվականի թիվ ՍԴՌ-1334 որոշմամբ իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ ենթակետի՝ «կատարելով համեմատական վերլուծություն» եզրույթը ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող այնպիսի սահմանադրաիրավական բովանդակությամբ, համաձայն որի՝ «բողոքարկվող դատական ակտի և նույնաբնույթ փաստական

հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի դատական ակտի միջև առկա հակասության վերաբերյալ համեմատական վերլուծությունը կամ դրանց համադրման արդյունքում անհամապատասխանության փաստումն ինքնին հանդես է գալիս որպես հիմնավորում առ այն, որ բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը, ըստ բողոքաբերի, հակասում է վճռաբեկ դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը: Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հարցի լուծման փուլում նման վերլուծության բնույթի, ըստ էության, գնահատմամբ չի կարող վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել»:

Այդուհանդերձ, Վճռաբեկ դատարանը դեռևս 2006 թվականից ձևավորել է այնպիսի դատական պրակտիկա, համաձայն որի՝ վերանայվող դատական ակտի հակասելը Վճռաբեկ դատարանի նախկինում ընդունված որոշմանը ինքնին ստորադաս դատարանի վերանայվող դատական ակտը բեկանելու հիմք չէ, այլ ընդամենը վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերից մեկն է: Այսինքն՝ վերը նշված դեպքի՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմք հանդիսանալու հանգամանքը դեռևս չի ենթադրում, որ Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքի, ըստ էության, քննության փուլում բողոքարկվող դատական ակտի ճակատագիրը որոշելիս պետք է կաշկանդված լինի բացառապես այն հանգամանքով, որ բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը հակասում է վճռաբեկ դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը: Նշվածը պայմանավորված է այն հանգամանքով, որ Վճռաբեկ դատարանը պետք է քննության առարկա դարձնի այն հանգամանքը, թե արդյոք բողոքարկվող դատական ակտը կայացրած դատարանը հիմնավորել է օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտի՝ Վճռաբեկ դատարանի մեկնաբանությունից շեղվելը, և թե արդյոք առկա է այդ մեկնաբանությունը վերանայելու անհրաժեշտության հարց:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումներով առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների դատավորների հնարավոր կաշկանդվածության հարցն անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել նաև Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատների տարանջատման համատեքստում:

Մինչև ««Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2022 թվականի փետրվարի 9-ի ՀՕ-24-Ն օրենքի ուժի մեջ մտնելը գործող «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում էր, որ Վճռաբեկ դատարանում գործում են քրեական պալատը՝ 8 դատավորի թվակազմով, քաղաքացիական և վարչական պալատը՝ 11 դատավորի թվակազմով, որոնք համարվում են միաժամանակ քաղաքացիական և վարչական մասնագիտացումներ ունեցող: Իսկ վերոնշյալ օրենքի ուժի մեջ մտնելուց հետո «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 30-րդ հոդվածի փոփոխության

արդյունքում սահմանվեց, որ Վճռաբեկ դատարանը գործում է չորս պալատով, որոնցից յուրաքանչյուրը հանդես է գալիս որպես Վճռաբեկ դատարան: «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի ներկայիս կարգավորումների համաձայն՝ Վճռաբեկ դատարանում գործում են՝ քրեական պալատը՝ 6 դատավորի թվակազմով, քաղաքացիական պալատը՝ 7 դատավորի թվակազմով, վարչական պալատը՝ 5 դատավորի թվակազմով, հակակոռուպցիոն պալատը՝ 10 դատավորի թվակազմով (կոռուպցիոն հանցագործությունների քննության և հակակոռուպցիոն քաղաքացիական գործերի քննության դատական կազմեր՝ յուրաքանչյուրը հինգ դատավորի թվակազմով):

Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական մասնագիտացմամբ միասնական պալատի կոնցեպցիան ինքնանպատակ չէր և պայմանավորված էր ինչպես Վճռաբեկ դատարանի՝ օրենքի միատեսակ կիրառության ապահովման առաքելությամբ, այնպես էլ՝ քաղաքացիական ու վարչական արդարադատության միջև գոյություն ունեցող սերտ կապերով: Մինչ 2008 թվականի օրենսդրական փոփոխությունները, մասնավորապես՝ մինչև վարչական արդարադատության ներմուծումը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգ, վարչական դատարանին ընդդատյա գործերը քննվել են քաղաքացիական դատավարության կանոններով, ինչը փաստում է դատավարական այս երկու ճյուղերի միջև գոյություն ունեցող սերտ կապի մասին: Նման կապը, ըստ էության, պայմանավորված է առարկայական ընդդատության որոշ ընդհանրություններով, ինչն էլ իր հերթին արդյունք է հանրային և մասնավոր իրավահարաբերությունների առանձին ինստիտուտների կրկնության (օրինակ՝ վնասի, գույքն արգելանքից հանելու և այլն): Հետևաբար նշվածով պայմանավորված՝ առարկայական ընդդատության տարանջատման բարդություններն անխուսափելի են: Նմանատիպ խնդիրներ դատական պրակտիկայում հատկապես արձանագրվել են ժառանգման, մտավոր սեփականության, աշխատանքային և մի շարք այլ վեճերով: Իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրությունը փաստում է, որ դատական պրակտիկայում քաղաքացիական և վարչական գործերի տարանջատումը բավական խնդրահարույց է, և շատ դեպքերում նշված վեճերի լուծման հարցում իր դերակատարումն է ունեցել Վճռաբեկ դատարանը, որը մի շարք գործերով կայացված որոշումների շրջանակներում հստակ չափանիշներ է սահմանել այդպիսի վեճերի լուծման համար: Պալատի միասնական լինելն արժևորվում էր հատկապես այս հարցում, քանի որ նպաստում էր միասնական դիրքորոշման ձևավորմանը, որը երկուստեք պարտադիր էր և քաղաքացիական, և վարչական դատավարությունների համար: Մինչդեռ տարբեր պալատների դեպքում հնարավոր է իրավիճակ, որ վերջիններիս դիրքորոշումները ոչ միայն էականորեն տարբերվեն միմյանցից, այլև որոշ դեպքում նույնիսկ հակասությունների տեղիք տան, ինչը ոչ միայն բացասական կանդիդատնա դատական պրակտիկայի վրա, այլև որոշակի առումով կվտանգի Վճռաբեկ դատարանի՝ միասնական դատական պրակտիկա ապահովելու առաքելությունը:

Օրինակ՝ դատական պրակտիկան բախվել է նման խնդրի գրավադրված գույքի նկատմամբ արտադատական կարգով բռնագանձում տարածելու գործընթացի վերաբերյալ գրավատուին ծանուցելու և ծանուցման փոստային առաքման անդորրագիրն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում իրականացնող մարմին ներկայացնելու կապակցությամբ Վճռաբեկ դատարանի արտահայտած դիրքորոշումների առնչությամբ:

Այսպես՝ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը, թիվ ՎԴ3/0092/05/10 վարչական գործով 2010 թվականի դեկտեմբերի 27-ին կայացրած որոշմամբ անդրադառնալով գրավառուի կողմից գրավատուին պատշաճ ծանուցելու (բռնագանձման ծանուցում) օրենսդրական պահանջին, արձանագրել է հետևյալը. «<< քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին պարբերությունը ենթադրում է գրավառուի կողմից գրավատուին՝ վերջինիս կողմից գրավ դրված գույքի վրա բռնագանձում տարածելու մասին իրազեկելու (ծանուցելու) կապակցությամբ գրավառուի ակտիվ գործողություններ, որոնք պետք է իրականացվեն պատշաճ: Ընդ որում՝ անկախ ծանուցման եղանակից, ծանուցումը պետք է լինի այնպիսին, որով հնարավոր է ապացուցել գրավատուի՝ առանց դատարան դիմելու գրավառուի կողմից գրավի առարկայի բռնագանձման մասին տեղեկացնելու փաստը: (...) << քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին պարբերությամբ նախատեսված՝ առանց դատարան դիմելու գրավի առարկայի բռնագանձման մասին գրավատուի տեղեկանալու իրավունքը և գրավառուի տեղեկացնելու պարտականությունն ուղղակիորեն կապված են << քաղաքացիական օրենսգրքով սահմանված գրավառուի իրավունքների ապահովման հետ: Այդ իրավունքներն ամբողջ ծավալով կարող են իրականացվել միայն այն դեպքում, երբ գրավատուին ընձեռված է առանց դատարան դիմելու գրավառուի կողմից գրավի առարկայի բռնագանձման մասին տեղեկանալու հնարավորություն: Այդ իսկ պատճառով գրավի առարկայի բռնագանձման մասին գրավատուի իրազեկումը գրավառուի պարտականությունն է, որի չպահպանման դեպքում վերջինս չի կարող իրականացնել առանց դատարան դիմելու գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու իր իրավունքը»:

<<տագայում թիվ ՎԴ/3164/05/18 վարչական գործով 2021 թվականի մայիսի 21-ին կայացրած որոշմամբ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատը, անդրադառնալով այն իրավական հարցադրմանը, թե արդյոք գրավառուի կողմից հիփոթեքի առարկա անշարժ գույքի նկատմամբ առանց դատարան դիմելու բռնագանձում տարածելու հիմքով հիփոթեքի առարկայի նկատմամբ գրավառուին անցնող սեփականության իրավունքի պետական գրանցման համար որպես բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնված լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթ բավարար է ծանուցման փոստային առաքման անդորրագրի առկայությունը, արտահայտել է նշված հարցի վերաբերյալ նախկինում արտահայտված դիրքորոշումից տարբերվող

դիրքորոշում՝ փոխելով արդեն իսկ ձևավորված իրավակիրառ պրակտիկան, և նշել, որ «(...) արտադատական կարգով բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնված լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթը կարող է լինել և՛ ծանուցման փոստային առաքման անդորրագիրը, և՛ ծանուցումը հանձնված լինելու մասին գրավատուի ստորագրությամբ տրված ստացականը, այդ թվում՝ գրավատուի ստորագրությամբ ծանուցման պատճենի վրա կատարված նշումը: Նման պայմաններում օրենսդիրը, ծանուցման փոստային առաքման անդորրագիրը որպես արտադատական կարգով բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնված լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթ դիտարկելով, կարևորել է բռնագանձման ծանուցումը գրավատուին ուղարկելու հանգամանքը, որը բավարար է բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնված լինելու հանգամանքը հաստատելու համար: Հետևաբար՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ միայն բռնագանձման ծանուցման փոստային առաքման անդորրագրի առկայությունն արդեն վկայում է կողմին բռնագանձման ծանուցումը պատշաճ հանձնված լինելու հանգամանքը, որպիսի պայմաններում [Անշարժ գույքի կադաստրի կոմիտեն] «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ և 40-րդ հոդվածներով նախատեսված փաստաթղթերը հիմք ընդունելով, կարող է իրավաչափորեն կատարել սեփականության իրավունքի պետական գրանցումը»:

Մինչդեռ թիվ ՎԴ/9799/05/18 վարչական գործով 2022 թվականի նոյեմբերի 3-ին կայացրած որոշմամբ արդեն Վճռաբեկ դատարանի վարչական պալատը, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 40-րդ հոդվածի կիրառության համատեքստում անդրադառնալով հիփոթեքի առարկայի նկատմամբ առանց դատարան դիմելու բռնագանձում տարածելու հիմքով իրավունքների պետական գրանցման առանձնահատկություններին, վերահաստատել է Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից թիվ ՎԴ3/0092/05/10 վարչական գործով 2010 թվականի դեկտեմբերի 27-ին կայացրած որոշմամբ արտահայտված դիրքորոշումները՝ նշելով, որ գրավատուի կողմից գրավատուին պատշաճ ձևով ծանուցելու (բռնագանձման ծանուցում) օրենսդրական պահանջն ինքնանպատակ չէ: Այն հետապնդում է գրավատուի այլ իրավունքների իրականացման ապահովման նպատակ, ուստի կարևորվում է ոչ միայն այն հանգամանքը, թե արդյոք ապահովված է բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնելու և այդ մասին ապացույցն իրավունքի պետական գրանցում իրականացնող մարմին ներկայացնելու օրենսդրական պահանջը, այլ նաև այն, թե բռնագանձման ծանուցման բովանդակությունն արդյոք ձևակերպված է այնպես, որ գրավատուի համար պարզ լինի, թե ինչ գործընթաց է նախատեսվում իրականացնել:

Փաստորեն, խնդրո առարկա հարցի կապակցությամբ իրավակիրառ պրակտիկայում արտահայտվել են միմյանցից տարբերվող դիրքորոշումներ: Մասնավորապես, թեև Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական



պալատը թիվ ՎԴ3/0092/05/10 վարչական գործով կայացրած որոշմամբ արձանագրել է գրավ դրված գույքի վրա բռնագանձում տարածելու մասին գրավատուին իրազեկելու (ծանուցելու) կարևորությունը, ընդգծել դրա նշանակությունը գրավատուի իրավունքների իրականացման տեսանկյունից և արձանագրել, որ ծանուցումը պետք է լինի այնպիսին, որով հնարավոր է ապացուցել գրավատուի՝ առանց դատարան դիմելու գրավառուի կողմից գրավի առարկայի բռնագանձման մասին տեղեկացնելու փաստը, այդուհանդերձ, հետագայում կայացրած որոշմամբ Վճռաբեկ դատարանի նույն պալատը հիփոթեքի առարկա անշարժ գույքի նկատմամբ առանց դատարան դիմելու բռնագանձում տարածելու հիմքով հիփոթեքի առարկայի նկատմամբ գրավառուին անցնող սեփականության իրավունքի պետական գրանցման վարույթի շրջանակում կարևորել է բռնագանձման ծանուցումը գրավատուին ուղարկելու հանգամանքը՝ այն բավարար համարելով բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնված լինելու հանգամանքը հաստատելու համար: Այսինքն՝ իրավական նշանակություն է տրվել ոչ թե գրավատուի կողմից բռնագանձման ծանուցումն ստանալը, այլ միայն գրավառուի կողմից նշված ծանուցումն ուղարկելը հավաստող փաստաթղթին: Մինչդեռ Վճռաբեկ դատարանի նոր՝ վարչական պալատը, շեղվելով Վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի ձևավորած վերջին դիրքորոշումից, վերահաստատել է նույն պալատի կողմից նշված հարցի վերաբերյալ նախկինում արտահայտած դիրքորոշումը՝ միաժամանակ կարևորելով ոչ միայն գրավառուի կողմից բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնելու և այդ մասին ապացույցն իրավունքի պետական գրանցում իրականացնող մարմին ներկայացնելու օրենսդրական պահանջի ապահովումը, այլ նաև այն, որ բռնագանձման ծանուցումը պետք է պարունակի բավարար տեղեկատվություն՝ առանց դատարան դիմելու գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու գործընթացի վերաբերյալ:

Վերոնշյալ հարցը բարձրացվել է նաև Սահմանադրական դատարանի առջև, մասնավորապես՝ 2022 թվականի նոյեմբերի 1-ի ՍԴՈ-1667 որոշմամբ անդրադառնալով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանելու հարցին՝ Սահմանադրական դատարանը եկել է այն եզրահանգման, որ նշված դրույթը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որ նշված դրույթի իմաստով՝ ծանուցման փոստային առաքման անդորրագիրը փոստային առաքման գործընթացում կազմվող այն փաստաթուղթն է կամ փաստաթղթերի համակցությունը (անկախ փոստային առաքման շրջանակում տվյալ փաստաթղթին տրված անվանումից), որը հնարավորություն է տալիս հաստատել բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնված լինելու հանգամանքը և այն հանձնելու օրը: Իսկ 2022 թվականի նոյեմբերի 15-ի ՍԴՈ-1668 որոշմամբ անդրադառնալով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստա-

նի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրությանը համապատասխանելու հարցին՝ որոշել է, որ այն համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որ գրավ դրված գույքի՝ արտադատական կարգով բռնագանձման արդյունքում գրավառուին անցնող սեփականության իրավունքի պետական գրանցման համար անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում իրականացնող մարմին պետք է ներկայացվի նաև գրավադրված գույքի վրա արտադատական կարգով բռնագանձում տարածելու վերաբերյալ գրավառուի հստակ կամահայտնությունն արտահայտող բռնագանձման ծանուցումը հանձնված լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթը:

Վերոնշյալից հետևում է, որ Վճռաբեկ դատարանը ձևավորել է միմյանցից տարբերվող իրավակիրառ պրակտիկա, ուստի հարց է առաջանում, թե ստորադաս դատարանները, մասնավորապես՝ կոնկրետ մասնագիտացում ունեցող դատավորները Վճռաբեկ դատարանի կողմից իրավական նորմին տրված ճիշտ մեկնաբանությամբ պետք է առաջնորդվեն նույնանման փաստերով այլ գործ քննելիս: Հարկ է նշել, որ եթե իրավակիրառ պրակտիկայում Վճռաբեկ դատարանի նույն պալատի կողմից նույն հարցի վերաբերյալ արտահայտվել են միմյանցից տարբերվող դիրքորոշումներ, ապա ենթադրվում է, որ օրենքի միատեսակ կիրառության ապահովման տեսանկյունից նույնանման փաստերով այլ գործով կիրառելի կլինի Վճռաբեկ դատարանի նույն պալատի կողմից համապատասխան նորմին տրված վերջին մեկնաբանությունը՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ Վճռաբեկ դատարանի համապատասխան պալատը հասարակական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց, ելնելով իրավունքի զարգացման անհրաժեշտությունից, փոխել է նախկինում արտահայտած իր դիրքորոշումը:

Մինչդեռ այլ է իրավիճակը, եթե նման՝ միմյանցից տարբերվող դիրքորոշումներն արտահայտվել են Վճռաբեկ դատարանի տարբեր պալատների կողմից: Իսկ Վճռաբեկ դատարանի տարբեր պալատների տարանջատման արդյունքում նման հակասությունների տեղիք կարող են տալ ոչ միայն քաղաքացիական և վարչական գործերով, այլև քաղաքացիական և հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով, քրեական և կոռուպցիոն հանցագործությունների գործերով, որն էլ իր բացասական հետևանքները կարող է թողնել Վճռաբեկ դատարանի՝ միասնական դատական պրակտիկա ապահովելու առաքելության վրա: Կարծում եմ՝ գործող իրավակարգավորումների պայմաններում որպես նշված իրավիճակում առաջացած խնդրի միակ լուծում կարող է հանդիսանալ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին բավարարող անհատական դիմումի առկայության դեպքում Սահմանադրական դատարանի կողմից ֆիզիկական կամ իրավաբանական անձանց նկատմամբ կիրառված համապատասխան դրույթի սահմանադրականության ստուգումը՝ հաշվի առնելով իրավակիրառ պրակտիկայում Վճռաբեկ դատարանի տարբեր պալատների կողմից նշված դրույթին տրված հակասական մեկ-

նաբանությունը: Կամ էլ օրենսդրի կողմից պետք է ներդրվեն այնպիսի կառուցակարգեր, որ հենց Վճռաբեկ դատարանի կողմից հնարավոր լինի տարբեր պալատների կողմից արտահայտված իրավական դիրքորոշումների միջև հակասությունների հաղթահարումը:

### **3. Բարձրագույն դատական խորհրդի՝ դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու որոշումների պարտադիրությունը և դրանց ազդեցությունը դատավորների ներքին համոզման և իրավական դիրքորոշումների ձևավորման հարցում**

Բարձրագույն դատական խորհուրդն իր ուրույն տեղն ու դերն ունի իշխանությունների բաժանման ու հավասարակշռման համակարգում, մասնավորապես՝ սահմանադիրը վերջինիս դիտարկել է որպես անկախ պետական մարմին, որը երաշխավորում է դատարանների և դատավորների անկախությունը:

Վենետիկի հանձնաժողովը, անդրադառնալով Դատական խորհուրդների անկախությանը, նշել է, որ այն պետք է համարժեք լինի Սահմանադրությամբ նախատեսված անկախության իրավական բովանդակությանը: Դատական խորհրդի գործունեության արդյունավետությունն ու լիարժեքությունը որևէ չափով չպետք է կաշկանդված լինի իշխանության ճյուղերի որևէ մարմնի, ընդհուպ դատավորների ինքնակառավարման մարմինների հնարավոր ներազդեցությամբ: Վերջինս հատկապես վերաբերում է դատավորների կարգապահական վարույթների իրականացմանը<sup>60</sup>:

Իշխանությունների բաժանման ու հավասարակշռման համակարգում Բարձրագույն դատական խորհրդի հակակշռող լիազորության և դատարանների ու դատավորների անկախության ապահովման գործառույթի տեսանկյունից հատկապես կարևորվում է Բարձրագույն դատական խորհրդի կազմը և դրա կազմավորման կարգը: Այսպես՝ Բարձրագույն դատական խորհուրդը հանդիսանում է պետական իշխանության երկու ճյուղերի կողմից համատեղ ձևավորված պետական մարմին, որտեղ հավասարապես ներկայացված են օրենսդիր և դատական իշխանությունների կողմից ընտրված տաս անդամները<sup>61</sup>: Ըստ այդմ էլ՝ Բարձրագույն դատական խորհուրդն իր սահմանադրական լիազորությունների իրականացումն ապահովում է պետական իշխանության նշված երկու ճյուղերի կողմից ընտրված անդամների մասնակցությամբ: Ի թիվս այլնի՝ Բարձրագույն դատական խորհրդի լիազորություններից է նաև դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի լուծումը<sup>62</sup>, որն իրականացվում է Բարձրագույն դատական խորհրդի անդամների ձայների որոշակի հարաբերակցությամբ: Այսպես՝ նշված որոշումների ընդունման կարգը ժամանակագրական առումով հանգում է հետևյալին.

<sup>60</sup> Տե՛ս Վենետիկի հանձնաժողովի 2007 թվականի հունիսի 22-ի CDL-AD(2007)028 կարծիքը (թիվ 403/2006):

<sup>61</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 80-րդ հոդվածի 1-ին մասը:

<sup>62</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 89-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը:

09.04.2018 թվականին ուժի մեջ մտած «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի կարգավորումների համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին Բարձրագույն դատական խորհրդի որոշումներն ընդունվում էին խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով: Այնուհետև՝ օրենսդրական փոփոխությունների արդյունքում 02.05.2020 թվականին ուժի մեջ մտած «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-197-Ն օրենքով նախատեսվեց որոշումների ընդունման տարբեր կարգ՝ ըստ որոշումների տեսակի: Մասնավորապես՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ Բարձրագույն դատական խորհրդի որոշումներն ընդունվում էին խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, իսկ դատավորի լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ որոշումները՝ խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով: Նշված կարգավորումը ևս ենթարկվել է օրենսդրական փոփոխությունների. արդյունքում՝ 25.02.2022 թվականին ուժի մեջ մտած «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-22-Ն օրենքով նախատեսվել է, որ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ Բարձրագույն դատական խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ, եթե որոշմանը կողմ է քվեարկել խորհրդի անդամների ընդհանուր թվի առնվազն կեսը<sup>63</sup>: Նշված կարգավորումից հետևում է, որ օրենսդրական փոփոխությունների արդյունքում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու որոշման կայացման համար անհրաժեշտ ձայների շեմն իջեցվել է, մասնավորապես՝ դատավորը կարող է ենթարկվել կարգապահական պատասխանատվության, եթե նշված որոշմանը կողմ են քվեարկել Բարձրագույն դատական խորհրդի հինգ անդամներ (սա այն դեպքերում, երբ որևէ հիմքով Բարձրագույն դատական խորհուրդը կգործի տասը անդամից պակաս կազմով)<sup>64</sup>:

Վերոնշյալ կարգավորումն արդարադատության նախարարի կողմից դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու լիազորության համատեքստում դիտարկելիս՝ տեսականորեն չի բացառվում այնպիսի իրավիճակի հնարավորությունը, որ գործադիր իշխանության ներկայացուցիչը, կասկածի

<sup>63</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 94-րդ հոդվածի 6-րդ մաս:

<sup>64</sup> Սույն դիրքորոշումը շարադրելիս հաշվի է առնվում այն հանգամանքը, որ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 25.10.2023 թվականին ընդունված ՀՕ-335-Ն օրենքի՝ դատավորին կարգապահական պատասխանատվության Բարձրագույն դատական խորհրդի կազմի վերաբերյալ դրույթները դեռևս ուժի մեջ մտած չեն, քանի որ ըստ նշված օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասի՝ նշված օրենքի 2-21-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում Բարձրագույն դատական խորհրդի ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահին:

տակ դնելով դատավորի կողմից իրականացված արդարադատության որակը, հանդես գա դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու նախաձեռնությամբ, իսկ Բարձրագույն դատական խորհրդի հինգ ոչ դատավոր անդամների կողմից դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելուն կողմ քվեարկելու արդյունքում դատավորը ենթարկվի կարգապահական պատասխանատվության՝ առանց Բարձրագույն դատական խորհրդի՝ դատական իշխանության որևէ ներկայացուցչի դիրքորոշումը հաշվի առնելու:

Սահմանադրական դատարանը, 2021 թվականի հունիսի 10-ի ՍԴՈ-1598 որոշմամբ անդրադառնալով Բարձրագույն դատական խորհրդի կողմից որոշման կայացմանը, նշել է, որ օրենսդրի կողմից իրավացիորեն ընտրվել է որոշումների կայացման ծայների այնպիսի քանակ, որն ապահովի պետական իշխանության երկու ճյուղերից ընտրված Բարձրագույն դատական խորհրդի անդամների համաձայնությունը, ինչը, տվյալ դեպքում Բարձրագույն դատական խորհրդի անդամների ընդհանուր թվի ծայների մեծամասնությունն է՝ առնվազն 6 ծայն:

Նշված որոշման բովանդակությունից հետևում է, որ նման իրավակարգավորման նպատակն այնպիսի որոշումների կայացումն է, որն արժանացել է Բարձրագույն դատական խորհրդի անդամներից առնվազն վեցի հավանությանը, այսինքն՝ Բարձրագույն դատական խորհրդի այնքան անդամների համաձայնությամբ, որը բացառում է միայն դատավորների ընդհանուր ժողովի կամ միայն Ազգային ժողովի կողմից ընտրված Բարձրագույն դատական խորհրդի անդամների կողմից որոշումների կայացումը<sup>65</sup>:

Վերոնշյալի համատեքստում կարևորելով կոլեգիալ գործունեության ընթացքում բազմակարծության ապահովումը, սուբյեկտիվիզմի և կամայականության բացառումը՝ գտնում ենք, որ Բարձրագույն դատական խորհրդի կողմից դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումների կայացման կարգին վերաբերող իրավակարգավորումները ևս պետք է լինեն Սահմանադրական դատարանի վերը նշված դիրքորոշմանը համահունչ՝ բացառելով Բարձրագույն դատական խորհրդի կողմից բացառապես դատավոր անդամների կամ ոչ դատավոր անդամների կողմից կոնկրետ շահ, այդ թվում՝ համայնքային շահ հետապնդելու արդյունքում որոշումների կայացման հնարավորությունը: Վերը նշված իրավիճակը հատկապես խնդրահարույց է դառնում այն դեպքում, երբ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթը հարուցվում է գործադիր իշխանության ներկայացուցչի նախա-

<sup>65</sup> Սույն դիրքորոշումը շարադրելիս հաշվի է առնվում այն հանգամանքը, որ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 25.10.2023 թվականին ընդունված ՀՕ-335-Ն օրենքի՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննության համար Բարձրագույն դատական խորհրդի կազմի վերաբերյալ դրույթները դեռևս ուժի մեջ մտած չեն, քանի որ ըստ նշված օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասի՝ նշված օրենքի 2-21-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում Բարձրագույն դատական խորհրդի ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահին:

ծեռնությամբ, իսկ որոշումը Բարձրագույն դատական խորհրդում կայացվում է օրենսդիր իշխանության կողմից ընտրված հինգ անդամի համաձայնությամբ (սա այն դեպքերում, երբ որևէ հիմքով Բարձրագույն դատական խորհուրդը կգործի տաս անդամից պակաս կազմով)՝ որևէ կերպ չարժևորելով դատական իշխանության կողմից ընտրված անդամների կարծիքը, որպիսի պայմաններում ոչ միայն չի ապահովվի իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի իրագործումը, այլև կվտանգվի դատական իշխանության անկախությունը:

Դատավորի «ներքին անկախության» համատեքստում հարկ է անդրադառնալ նաև նյութական կամ դատավարական նորմի խախտման հիմքով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցին:

Այսպես՝ կարգապահական պատասխանատվության առաջացման հնարավորությունը նախատեսել է նաև Սահմանադրությունը, որի 164-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավորը չի կարող պատասխանատվության ենթարկվել արդարադատություն իրականացնելիս հայտնած կարծիքի կամ կայացրած դատական ակտի համար, բացառությամբ երբ առկա են հանցագործության կամ կարգապահական խախտման հատկանիշներ: «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի կարգավորումներից հետևում է, որ Արդարադատության նախարարի կողմից կարգապահական վարույթ հարուցելու հիմք է հանդիսանում նաև դատավորի կողմից արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ<sup>66</sup>:

Այս համատեքստում զգայուն հարցերից է կարգապահական պատասխանատվության «արժանի» վարքագծի շրջանակի պարզումը: Այդ կապակցությամբ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքը սահմանում է հետևյալ կանոնները. դատական ակտի բեկանումը կամ փոփոխումը ինքնին հիմք չէ այդ ակտը կայացրած դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար, ինչպես նաև արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս օրենքի մեկնաբանությունը, փաստերի և ապացույցների գնահատումն ինքնին չեն կարող հանգեցնել կարգապահական պատասխանատվության: Նշվածները միջազգայնորեն ընդունված բացառություններն են դատավորներին նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտման համար կարգապահական պատասխանատվության ենթարկելու շրջանակից, սակայն կարևոր է, թե այս գնահատողական հասկացությունները գործնականում ինչպես են կիրառվում կարգապահական վարույթ իրականացնող մարմնի՝ Բարձրագույն դատական խորհրդի կողմից:

<sup>66</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը:

Նկատի ունենալով, որ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտը ենթադրում է նաև միջամտություն դատավորի գործառությանն անկախությանը, ապա դրա իրականացման ընթացակարգի վերաբերյալ օրենսդրական կարգավորումները պետք է համահունչ լինեն դատական իշխանության անկախության սկզբունքին:

Հարկ է նշել, որ նյութական կամ դատավարական նորմի խախտման հիմքով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հնարավորության վերաբերյալ միջազգային հանրության կողմից ընդունված միասնական մոտեցում առկա չէ: Մի կողմից՝ դատավորի անկախությանը միջամտելու ռիսկերը խոսում են դատավորի կայացրած որոշումների նկատմամբ կարգապահական վերահսկողության իրականացումը բացառելու օգտին: Սակայն մյուս կողմից՝ դատական համակարգի նկատմամբ հանրային վստահությունն ապահովելու նկատառումներից կարելի է բխեցնել դատավորի դատական գործառույթների նկատմամբ որոշակի կարգապահական վերահսկողություն սահմանելու անհրաժեշտությունը:

Մինչդեռ դատական որոշումների բովանդակության ուսումնասիրումը Բարձրագույն դատական խորհրդի կողմից կարող է հանգեցնել հետևյալ խնդրահարույց իրավիճակներին. նախ՝ Բարձրագույն դատական խորհուրդը դատավորի կողմից նյութական կամ դատավարական իրավունքի նորմի ենթադրյալ խախտում թույլ տրված լինելու հանգամանքը բացահայտելու համար պետք է գնահատման առարկա դարձնի դատավորի կողմից արդարադատություն իրականացնելու որակը, ինչը ենթադրում է դատական իշխանության անկախության ուղղակի միջամտություն: Բացի այդ, դա կարող է սահմանափակել դատական անկախությունը որոշումների կայացման գործընթացում՝ ազդելով դատավորի՝ ներքին համոզմունքով առաջնորդվելու ազատության վրա: Օրինակ՝ նախկինում գործող ՀՀ դատական օրենսգիրքը դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ժամկետի հաշվարկը սկսում էր դատական ակտը կայացնելու պահից<sup>67</sup> (նշված կարգավորումը գործել է մինչև 09.04.2018 թվականը), ինչը նշանակում էր, որ դատական խորհուրդը կարող էր դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշում կայացնել այն պայմաններում, երբ դեռևս դատական ակտի դեմ ներկայացված բողոքը քննվում էր վերադաս դատարանի կողմից: Այս կարգավորման հիմնական քննադատությունն այն էր, որ վերադաս դատարանի դատավորը կարող էր կաշկանդվել դատական խորհրդի դիրքորոշմամբ և չգործել իր ներքին համոզմամբ: Հետագայում այս մտահոգությունը փարատե-

<sup>67</sup> ՀՀ դատական օրենսգրքի (ուժը կորցրել է 09.04.2018 թվականին) 153.1-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ «դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու նպատակով վարույթը կարող է հարուցվել սույն օրենսգրքի 153-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված հիմքերով՝ տվյալ գործով կամ հարցով համապատասխան դատական ակտը կայացնելուց հետո՝ մեկ տարվա ժամկետում»:

լու որոշակի փորձ արվեց «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով (ուժի մեջ է մտել 09.04.2018 թվականին), որը սահմանեց, որ նյութական կամ դատավարական նորմի խախտման հիմքով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու ժամկետը հաշվարկվում է խախտումը վարույթ հարուցող մարմնի կողմից հայտնաբերվելու պահից<sup>68</sup>, սակայն եթե խախտումը հայտնաբերվել է մինչև տվյալ գործով եզրափակիչ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը, ապա ժամկետը հաշվարկվում է տվյալ ակտի օրինական ուժի մեջ մտնելու պահից<sup>69</sup>: Այդուհանդերձ, նշված սահմանադրական օրենքում տեղ է գտել նաև այնպիսի կարգավորում, որի համաձայն՝ եթե դատավորի կողմից թույլ են տրվել դատավարական նորմերի այնպիսի խախտումներ, որոնք հանգեցնում են դատական պաշտպանության իրավունքի խախտման և արդարադատության խաթարման, ապա վարույթ կարող է հարուցվել նաև մինչև տվյալ եզրափակիչ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը: Ասվածը նշանակում է, որ քննարկված մտահոգությունն այդպես էլ ամբողջությամբ չի վերացել, քանի որ ամեն դեպքում իսպառ չեն բացառվել այնպիսի իրավիճակները, երբ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննվի և լուծվի միևնույն որոշման իրավաչափության՝ վերադաս դատարանում քննության ընթացքում:

Նշված կարգավորմանը զուգահեռ դատավարական իրավահարաբերությունները կարգավորող նորմատիվ իրավական ակտերում ամրագրվել է կարգավորում առ այն, որ նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտումը կամ սխալ կիրառումը դատական ակտի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է գործի սխալ լուծման<sup>70</sup>: Հիշյալ կարգավորումներից հետևում է, որ դատական սխալի առկայության հաստատումը հանդիսանում է վերադաս դա-

<sup>68</sup> «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 144-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ «դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու նպատակով վարույթը կարող է հարուցվել արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ խախտման հիմքով՝ խախտումը վարույթ հարուցող մարմնի կողմից հայտնաբերվելուց հետո՝ մեկ տարվա ժամկետում: Սույն կետով նախատեսված հիմքով կարգապահական վարույթ չի կարող հարուցվել, եթե եզրափակիչ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո անցել է ութ տարի»:

<sup>69</sup> «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 144-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ «եթե սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված խախտումը հայտնաբերվել է մինչև տվյալ գործով եզրափակիչ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը, ապա նույն կետով նախատեսված մեկ տարվա ժամկետը հաշվարկվում է տվյալ ակտի օրինական ուժի մեջ մտնելու պահից, իսկ եթե դատավորի կողմից թույլ են տրվել դատավարական նորմերի այնպիսի խախտումներ, որոնք հանգեցնում են դատական պաշտպանության իրավունքի խախտման և արդարադատության խաթարման, ապա վարույթ կարող է հարուցվել նաև մինչև տվյալ եզրափակիչ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը»:

<sup>70</sup> ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 151-րդ հոդվածի 2-րդ մաս, 152-րդ հոդվածի 1-ին մաս, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 364-րդ հոդվածի 2-րդ մաս, 365-րդ հոդվածի 1-ին մաս, 01.07.1998 թվականին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 395-րդ հոդված, 30.06.2021 թվականին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 354-րդ հոդվածի 1-ին մաս:



տական ատյանների կողմից քննարկման և գնահատման հարց: Նման պայմաններում իրավունքի նորմի խախտման հիմքով կարգապահական պատասխանատվությունը կարող է կարգապահական վարույթը վերածել քողարկված բողոքարկման վարույթի, որի շրջանակում Բարձրագույն դատական խորհրդի կողմից ըստ էության քննարկվեն այն հարցերը, որոնք պետք է քննվեն սովորական դատավարական կարգով՝ վերադաս դատարաններում բողոքի քննության շրջանակում: Նշված հանգամանքը ռիսկեր է պարունակում այն տեսանկյունից, որ եզրափակիչ դատական ակտի օրինական ուժի մեջ մտած չլինելու դեպքում որևէ նորմի խախտման հիմքով Բարձրագույն դատական խորհրդի կողմից դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու դեպքում վերջիններիս կողմից նշված խախտմանը գնահատական տալը կարող է կաշկանդել վերադաս դատական ատյանի դատավորներին եզրափակիչ դատական ակտի բողոքարկմամբ բարձրացված հարցին իրենց ներքին համոզմամբ դիրքորոշում արտահայտելիս, քանի որ մշտապես առկա է լինելու այն գիտակցումը կամ մտայնությունը, որ վերադաս դատական ատյանի կողմից ստորադաս դատարանի դիրքորոշումը հիմնավոր համարելը ևս հանգեցնելու է վերադաս դատական ատյանի դատավորների նկատմամբ նույն հարցի առնչությամբ կարգապահական վարույթ հարուցելուն: Հետևաբար նման պայմաններում վտանգի տակ է դրվելու վերադաս դատական ատյանի դատավորների կողմից իրենց ներքին համոզմամբ և անկախության սկզբունքի պահպանմամբ արդարադատություն իրականացնելը:

Բացի վերոնշյալից, չի բացառվում նաև այնպիսի իրավիճակներ, երբ կարգապահական վարույթ իրականացնող մարմինը և վերադաս դատական ատյանները նյութական կամ դատավարական նորմի խախտման վերաբերյալ ունենան իրար ակնհայտ հակասող դիրքորոշումներ: Ավելին՝ դա կարող է առաջացնել այնպիսի իրավիճակներ, երբ Բարձրագույն դատական խորհուրդը ստանձնի դատական նախադեպ ստեղծելու լիազորություն, քանի որ դատավորները հետագայում որոշումներ կայացնելիս ստիպված կլինեն կաշկանդվել այդ մարմնի արտահայտած դիրքորոշումներով: Սա դատավորի համար կարող է նաև ստեղծել հակասական իրավիճակներ, երբ օրենքի և նորմատիվ իրավական այլ ակտերի միատեսակ կիրառությունն ապահովելու սահմանադրական գործառույթ ունեցող Վճռաբեկ դատարանը որևէ հարցի կապակցությամբ արտահայտի այնպիսի իրավական դիրքորոշում, որը չհամընկնի դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու իրավասություն ունեցող Բարձրագույն դատական խորհրդի՝ միևնույն հարցի կապակցությամբ արտահայտած այլ դիրքորոշման հետ: Մինչդեռ սահմանադիրը հռչակել է, որ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության ապահովումը Վճռաբեկ դատարանի առաքելությունն է, որն իրականացվում է դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայելու միջոցով<sup>71</sup>: Այսինքն՝ սահմանադիրը միայն Վճռաբեկ դատարանին է

<sup>71</sup> Տե՛ս Սահմանադրության 171-րդ հոդվածի 2-րդ մասը:

օժտել օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական առաքելությամբ:

Փաստորեն, չնայած դատական ակտի օրինականության ստուգումը բացառապես եռաստիճան դատական համակարգին պատկանելու հանգամանքին, նյութական կամ դատավարական նորմի խախտման հիմքով Բարձրագույն դատական խորհուրդը դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու լիազորության շրջանակում փաստացի գնահատում է դատական ակտի օրինականությունը՝ ստանձնելով վերադաս դատական ատյանի դեր, իսկ որոշակի դեպքերում՝ ստանձնելով նաև օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունն ապահովող մարմնի դեր: Ավելին՝ Սահմանադրական դատարանը 2019 թվականի նոյեմբերի 15-ի ՍԴՈ-1488 որոշմամբ իր մտահոգությունն է հայտնել այն առթիվ, թե արդյոք «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում հստակ տարանջատված են նյութական կամ դատավարական օրենքի խախտումը գնահատելու հարցում, մի կողմից՝ վերաքննիչ և Վճռաբեկ դատարանների, մյուս կողմից՝ Բարձրագույն դատական խորհրդի լիազորությունները՝ միաժամանակ օրենսդրական նախաձեռնության սուբյեկտների ուշադրությունը հրավիրելով նշված հարցի վրա:

Ամփոփելով վերոնշյալը՝ հարկ է նշել, որ նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտումները կարող են հանդիսանալ վերադաս դատական ատյանում դատական ակտի բողոքարկման և ըստ այդմ՝ դատական ակտի վերանայման հիմք, այլ ոչ՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք, առավել ևս, որ նշված հիմքով Բարձրագույն դատական խորհրդին՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու լիազորության վերապահումը կարող է դատավորի անկախության սկզբունքի խաթարման վտանգ ստեղծել:

#### **4. Սահմանադրական դատարանի որոշումների պարտադիրությունը և դրանց ազդեցությունը դատավորի ներքին համոզման և իրավական դիրքորոշումների ձևավորման հարցում**

Սահմանադրական արդարադատությունը, կոչված լինելով ապահովելու Սահմանադրության գերակայությունը, Հայաստանի Հանրապետությունում անցել է ձևավորման և կայացման որոշակի ճանապարհ, որը պայմանականորեն կարող ենք բաժանել երեք փուլի: Առաջին փուլի մեկնարկը տրվեց 1995 թվականին Սահմանադրության ընդունմամբ, որով նախատեսվեց Սահմանադրական դատարանի կազմավորման կարգը և լիազորությունների շրջանակը՝ առանց ուղղակիորեն ամրագրելու սահմանադրական արդարադատության ոլորտում Սահմանադրական դատարանի՝ մասնագիտացված մարմին լինելու հանգամանքը:

Երկրորդ փուլի սկիզբը դրվեց 2005 թվականին տեղի ունեցած սահմանադրական բարեփոխումներով: Ի տարբերություն մայր օրենքի սկզբնական

տարբերակի՝ 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրությունն ուղղակիորեն ամրագրեց, որ Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական արդարադատությունն իրականացնում է Սահմանադրական դատարանը: Այս կերպ ընդգծվեց իրավական այն կարևոր գաղափարը, որ Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական արդարադատությունն իրականացվում է հատուկ մասնագիտացված մարմնի կողմից:

Սահմանադրական արդարադատության զարգացման հաջորդ փուլը կապված է 2015 թվականին կայացած հանրաքվեի արդյունքում Սահմանադրության փոփոխությունների ընդունման հետ: 2015 թվականի խմբագրությամբ Սահմանադրությունը փոփոխեց Սահմանադրական դատարանի դատավորների ընտրության կարգը: Ինչպես բնորոշ է պառլամենտական կառավարման ձև ունեցող երկրներին, Հայաստանի Հանրապետությունում ևս Սահմանադրական դատարանի դատավորներին ընտրում է Ազգային ժողովը, սակայն այս գործընթացին, թեկնածու առաջադրելու եղանակով, մասնակցություն ունեն նաև իշխանության մյուս ճյուղերը, այդ թվում նաև՝ դատական իշխանությունը՝ ի դեմս Դատավորների ընդհանուր ժողովի, որի մասնակցությունը Սահմանադրական դատարանի կազմավորման գործընթացին կարևորվում է այնքանով, որքանով որ Սահմանադրական դատարանը, լինելով դատական իշխանության կրողը, այդ իշխանության մի մասնիկը, օրգանական սերտ կապի մեջ պետք է գտնվի այդ իշխանությունը կրող մյուս սուբյեկտների հետ:

Պետության կարևորագույն գործառույթներից է մարդու իրավունքների ապահովումն ու պաշտպանությունը, որն իրականացվում է պետական տարբեր մարմինների, այդ թվում նաև՝ Սահմանադրական դատարանի կողմից:

Սահմանադրական դատարանն օժտված է սահմանադրաիրավական առանձնահատուկ կարգավիճակով, որը պայմանավորված է պետական իշխանության մարմինների համակարգում իր ունեցած տեղով, դերով և դրան համապատասխան լիազորություններով: Որպես դատական մարմին բացառապես սահմանադրական դատարանին է իրավասություն վերապահված իրականացնել սահմանադրական արդարադատություն: Սահմանադրական դատարանը կոչված է ապահովելու Սահմանադրության գերակայությունն ու անմիջական գործողությունը, որի արդյունքում ընդունում է որոշումներ (եզրակացություններ): Այդ ակտերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում ունեն իրենց առանձնահատուկ տեղն ու դերը՝ թե՛ բովանդակությամբ, իրավակարգավորիչ նշանակությամբ, և թե՛ ունեցած իրավական հետևանքների առումներով: Դրանցով կարգավորվող հարաբերությունները վերաբերում են հասարակական կյանքի բոլոր բնագավառներին և իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտներին<sup>72</sup>:

Սահմանադրական դատարանի խնդիրն է՝ ստուգել դատարանի կողմից կիրառման ենթակա կամ արդեն իսկ կիրառված նորմի սահմանադրականությունը, առաջին դեպքում կանխելով մարդու իրավունքների հնարավոր խախտման փաստը, իսկ երկրորդ դեպքում՝ նախադրյալներ ապահովելով այդ-

<sup>72</sup> Տե՛ս Սահմանադրականի դատարանի 2011 թվականի փետրվարի 25-ի ՍԴԴ-943 որոշումը:

պիսի խախտումը վերացնելու համար: Վերջին դեպքում Սահմանադրական դատարանի որոշումը կարող է հիմք հանդիսանալ օրինական ուժի մեջ մտած վերջնական դատական ակտի վերանայման համար: Այսպիսով՝ Սահմանադրական դատարանը, կոչված լինելով ապահովելու Սահմանադրության գերակայությունը, հանրային-իրավական կյանքում ձեռք է բերել առանձնահատուկ դերակատարություն:

Միջազգային իրավական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում սահմանադրական վերահսկողությունը կարող է իրականացվել ուղղակիորեն և անուղղակիորեն: Ուղղակի վերահսկողության դեպքում շահագրգիռ անձն առանց որևէ նախապայմանի իրավունք ունի դիմել Սահմանադրական դատարան: Անուղղակի վերահսկողության պարագայում շահագրգիռ անձը Սահմանադրական դատարան դիմելու իր իրավունքը կարող է իրացնել միայն իրավական պաշտպանության այլ միջոցները սպառելու պարագայում: Ներկայիս կարգավորումների պարագայում մեր երկրում գործում է սահմանադրական անուղղակի վերահսկողության կառուցակարգը:

Ինչպես վերը նշվեց սահմանադրական արդարադատության իր գործառույթն իրականացնելիս Սահմանադրական դատարանը կայացնում է որոշումներ և եզրակացություններ, իսկ գործերը դատաքննության նախապատրաստելու և դատաքննության հարցերով, ինչպես նաև իր գործունեության կազմակերպման հետ կապված այլ հարցերով ընդունում է աշխատակարգային որոշումներ<sup>73</sup>:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 61-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ Սահմանադրական դատարանի կողմից ըստ էության ընդունված որոշումները պարտադիր են բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց համար Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում: Ի տարբերություն Սահմանադրական դատարանի կողմից ըստ էության ընդունված որոշումների՝ աշխատակարգային որոշումները պարտադիր են միայն դատավարության մասնակիցների և դրանց այլ հասցեատերերի համար<sup>74</sup>: Այսինքն, եթե Սահմանադրական դատարանի կողմից ըստ էության ընդունված որոշումների պարտադիրությունը տարածվում է ընդհանրապես, համընդգրկուն ձևով՝ առանց կոնկրետ սուբյեկտների տարանջատման, ապա Սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշումների պարագայում դրանց պարտադիրությունը սահմանափակված է կոնկրետ հասցեատերերի շրջանակով:

Ընդ որում՝ Սահմանադրական դատարանի ըստ էության ընդունված որոշումները չեն դիտարկվում միայն որպես իրավական ակտերի սահմանադրա-

<sup>73</sup> Տե՛ս «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 61-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը:

<sup>74</sup> Տե՛ս «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 61-րդ հոդվածի 5-րդ մասը:

կանությունը կամ հակասահմանադրականությունը հավաստող իրավական փաստաթղթեր, այլ նշված որոշումները, ունենալով ուղղորդող նշանակություն, պարունակում են իրավական դիրքորոշումներ, որոնք, ըստ էության, հանդիսանում են Սահմանադրության նորմերի պաշտոնական մեկնաբանություններ, նպաստում են մեր երկրում սահմանադրական մշակույթի կայացմանը և ամրապնդմանը:

Ըստ Սահմանադրական դատարանի՝ իր կողմից կայացված որոշումների իրավաբանական բնույթը՝ Հայաստանի Հանրապետության իրավահամակարգում այդ ակտերի տեղի և դերի իմաստավորման տեսանկյունից, կայանում է հետևյալում<sup>75</sup>.

- Սահմանադրական դատարանի որոշումները Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի ստորադասության համակարգում դասված են Սահմանադրությունից և «Սահմանադրական դատարանի մասին» օրենքից հետո, այդպիսով որոշվում է նաև այդ ակտերի իրավաբանական ուժը: Օրենքները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրության այլ ակտերը չպետք է հակասեն սահմանադրական դատարանի որոշումներին, հետևաբար՝ սահմանադրական դատարանի որոշումներն իրավական ցանկացած այլ ակտի նկատմամբ ունեն իրավաբանական առավել բարձր ուժ,
- այդ որոշումները որպես դատարանի վերջնական ակտեր ընդունվում են Հայաստանի Հանրապետության անունից, որոնց կատարումը (որպես իրավական ակտ) երաշխավորված է օրենքով և ապահովված է պետական հարկադրանքի ուժով,
- Սահմանադրական դատարանի գործով ըստ էության ընդունված որոշումները պարտադիր են Հայաստանի Հանրապետության բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց համար:

Միաժամանակ անդրադառնալով Սահմանադրական դատարանի որոշումների իրավաբանական բնույթին Հայաստանի Հանրապետության ընդհանուր և մասնագիտացված դատարանների ակտերի համակարգում՝ նշել է, որ.

- սահմանադրական արդարադատություն իրականացնելը և այդ գործառույթի շրջանակներում գործով ըստ էության որոշում կայացնելը Սահմանադրական դատարանի բացառիկ իրավասությունն է,
- քննելով սահմանադրական (հանրային-իրավական բնույթի) գործեր՝ Սահմանադրական դատարանը կայացնում է որոշումներ, որոնք են-

<sup>75</sup> Տե՛ս Սահմանադրականի դատարանի 2011 թվականի փետրվարի 25-ի ՍԴՈ-943 որոշումը:

թակա են պարտադիր կատարման դատական համակարգի մյուս մարմինների՝ Հայաստանի Հանրապետության ընդհանուր իրավասության և մասնագիտացված բոլոր դատարանների կողմից,

- իրավական ակտերի սահմանադրականությունը որոշելիս Սահմանադրական դատարանը գնահատում է նաև արդարադատական (ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարանների) պրակտիկան՝ բացահայտելով նաև կիրառվող (այդ թվում՝ դատական պրակտիկայում) օրենքների (դրանց առանձին դրույթների) սահմանադրաիրավական բովանդակությունը, զարգացնելով ինչպես սահմանադրական, այնպես էլ ճյուղային իրավունքը,

- իրավական ակտերի՝ Սահմանադրությանը հակասելու վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշմանը հաջորդում են իրավական հետևանքներ (նոր հանգամանքներ), որոնք պարտադիր հանգեցնում են օրենքով սահմանված կարգով դատական ակտերը վերանայելուն,
- Սահմանադրական դատարանն իր որոշումներով ըստ էության մեկնաբանում է Սահմանադրությունը,
- Սահմանադրական դատարանի որոշումները վիճարկման ենթակա չեն ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային որևէ դատարանում:

Իրավաբանական գրականության մեջ Սահմանադրական դատարանն ընկալվում է նաև որպես «նեգատիվ օրենսդիր», ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ Սահմանադրական դատարանի որոշման կայացման արդյունքում օրենսդրի կողմից ընդունված իրավական ակտը կարող է կորցնել իր իրավաբանական ուժը՝ այն ճանաչվելով Սահմանադրությանը հակասող: Սակայն նման տեսակետը կատեգորիկ չէ այնքանով, որքանով որ Սահմանադրական դատարանն իր լիազորությունների իրականացման արդյունքում կայացված որոշումներով օրենսդրի կողմից ընդունված իրավական ակտը նաև կարող է ճանաչել Սահմանադրությանը համապատասխանող՝ որոշ դեպքերում բացահայտելով դրա սահմանադրաիրավական բովանդակությունը: Վերջին դեպքում Սահմանադրական դատարանը, որոշելով վիճարկվող իրավական ակտի սահմանադրականությունը, ըստ էության, գնահատում է նաև դրա վերաբերյալ ձևավորված իրավակիրառ պրակտիկան, և հավաստելով օրենսդրի գործողությունների իրավաչափությունը, միաժամանակ ուղղորդում է նաև իրավակիրառ սուբյեկտներին դրսևորելու իր կողմից տրված մեկնաբանությանը համապատասխանող վարքագիծ:

Պետական իշխանության մարմիններն իրենց լիազորությունները պետք է իրականացնեն այնպես, որպեսզի հարգանք ձևավորվի կոնկրետ բնագավառում այլ մարմինների ունեցած լիազորությունների, արդյունքում նաև՝ նրանց հեղինակության նկատմամբ: Նշվածը վերաբերում է նաև Սահմանադրական

դատարանի որոշումների կատարման ապահովմանը, և ենթադրում է այդ բնագավառում ներգրավված սուբյեկտների կողմից սահմանադրական արդարադատության և դրա հետևանքների նկատմամբ համապատասխան հարգանքի դրսևորում: Փոխադարձ հարգանքի սկզբունքը պետք է գործի և՛ Սահմանադրական դատարան-Ազգային ժողով փոխհարաբերություններում, և՛ Սահմանադրական դատարան-այլ պետական մարմիններ փոխհարաբերություններում, և՛ Սահմանադրական դատարան-եռաստիճան դատական համակարգ փոխհարաբերություններում: Հայաստանի Հանրապետությունում պետք է առաջնային լինեն պետական, հասարակական, քաղաքական այնպիսի մշակույթի կայացումը և ամրապնդումը, որոնք ենթադրում են Սահմանադրական դատարանի որոշումների՝ ինքնակամ և հանրային շահից բխող գիտակցումով կատարման անհրաժեշտություն:

Այս հարցում փոխադարձ են նաև ակնկալվող գործողությունները: Ի վերջո, օրենսդիր իշխանության հայեցողությանն է տրված իրավաստեղծ գործունեությունը, և Սահմանադրական դատարանը՝ որպես դատական իշխանության կրող, պետք է հարգի իշխանությունների տարանջատման սկզբունքից բխող այս կարևոր իրողությունը: Միաժամանակ այն դեպքերում, երբ Սահմանադրական դատարանը որևէ իրավադրույթ ճանաչել է հակասահմանադրական, իր խոսքը պետք է ասի նաև Ազգային ժողովը: Որպես ժողովրդի կողմից առաջնային մանդատով օժտված մարմին, որի գործունեությունն ուղղված է պետության՝ օրինաստեղծ գործառույթի ապահովմանը, Ազգային ժողովը կամ պետք է վերահաստատի իր մոտեցումը կամ այն ենթարկի համապատասխան փոփոխությունների: Այլ կերպ ասած՝ Ազգային ժողովի արձագանքը քննարկվող իրավիճակներում անհրաժեշտ է:

Այսպիսով, ի տարբերություն Վճռաբեկ դատարանի, Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության արդյունքում ընդունվող որոշումները պարտադիր են բոլորի համար, և դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումները կաշկանդում են թե՛ օրենսդիր և գործադիր, թե՛ դատական իշխանության մարմիններին: Ավելին՝ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները կարող են փոփոխվել բացառապես Սահմանադրական դատարանի կողմից<sup>76</sup>: Նշվածը պայմանավորված է սահմանադրական արդարադատություն իրականացնելու՝ Սահմանադրական դատարանի բացառիկ իրավասությամբ: Վերջինս իր ակտիվ դերակատարմամբ ապահովում է Սահմանադրության գերակայությունը և իր որոշումներում վերհանելով սահմանադրի կամքը՝ բացահայտում է նորմատիվ իրավական ակտի դրույթների սահմանադրաիրավական բովանդակությունը: Հետևաբար, եռաստիճան դատական համակարգում պաշտոն զբաղեցնող դատավորները՝ որպես դատական իշխանության ներկայացուցիչներ, պարտավոր են արդարադատություն իրականաց-

<sup>76</sup> Տե՛ս «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի (ՀՀՊՏ 2018.01.31/7(1365) Հոդ. 74, ընդունվել է 17.01.2018 թվականին, ուժի մեջ է մտել 09.04.2018 թվականին) 68-րդ հոդվածի 16-րդ մաս:

նելիս առաջնորդվել Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներով՝ դրանով իսկ ապահովելով Սահմանադրական դատարանի որոշումների կատարումը:

Այս առումով որոշակիորեն սահմանափակվում է դատավորների՝ ներքին համոզմունքով գործելու և այդ համոզմունքի հիման վրա ձևավորվող իրավական դիրքորոշումներն արտահայտելու ազատությունը, քանի որ վերջիններս Սահմանադրական դատարանի որոշումների առկայության պայմաններում չեն կարող իրավական դրույթները կիրառել այլ մեկնաբանությամբ, քան բխում է Սահմանադրական դատարանի դիրքորոշումներից: Այդուհանդերձ, նման սահմանափակումն արդարացված է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սահմանադրական դատարանի որոշումներով լուծվում են հանրային-իրավական կարևորություն ունեցող գործեր, որոնք անմիջականորեն կապված են Սահմանադրության նորմերի մեկնաբանման ու կիրառման հետ, որպիսի բացառիկ լիազորությունը Սահմանադրությամբ պատվիրակված է միայն Սահմանադրական դատարանին:

Սահմանադրական դատարանի որոշումների պարտադիրությունը կարևորվում է նաև իրավական որոշակիության սկզբունքի ապահովման տեսանկյունից՝ կոչված լինելով իրավակիրառ պրակտիկայում ապահովելու Սահմանադրության միակերպ ընկալումը: Մասնավորապես՝ Սահմանադրական դատարանը, վիճարկվող դրույթը Սահմանադրությանը համապատասխանող, հակասող կամ Սահմանադրական դատարանի մեկնաբանությամբ Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու լիազորությունների շրջանակում վիճարկվող դրույթով բարձրացված հարցին գնահատական տալով, ձևավորում է տվյալ դրույթի կիրառմամբ իրավակիրառ պրակտիկայում առաջացած խնդրի վերաբերյալ կայուն լուծում ենթադրող վարքագիծ, որը իրավահարաբերությունների բոլոր իրավասու սուբյեկտներին, այդ թվում՝ դատարաններին, հնարավորություն է տալիս համապատասխան հանգամանքներում հասկանալու, թե որն է հաստատված իրավակիրառ պրակտիկան: Ուստի Սահմանադրական դատարանի որոշումների պարտադիրությունն ուղղված է նաև իրավական որոշակիության ու հստակության հաստատմանը, որպեսզի նույն հարցի վերաբերյալ իրավակիրառ պրակտիկան այլևս չներառի տարաբնույթ մեկնաբանություններ և հանգեցնի իրավական շփոթի: Հետևաբար արդարադատություն իրականացնելիս դատավորների կողմից Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներով չառաջնորդվելը կհանգեցնի Սահմանադրական դատարանի որոշումների կատարման պարտադիրության սկզբունքի խախտման՝ խոչընդոտելով արդարադատության խնդիրների իրագործմանը:

Այդուհանդերձ, թեև Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները պարտադիր են դատարանների համար, Սահմանադրական դատարանի և եռաստիճան դատական համակարգի փոխհարաբերությունները պարզաբանելիս հարկ է նկատի ունենալ, որ Սահմանադրական դատարանը չորրորդ դատական ատյան չէ և վերադատության կարգով չի ստուգում դատա-



րանների կայացրած դատական ակտերի օրինականությունն ու հիմնավորվածությունը և ըստ այդմ՝ բացահայտում ու արձանագրում դատարանների թույլ տված դատական սխալները: Դատարանների կայացրած դատական ակտերն ընդամենը միջոց են՝ վիճահարույց նորմի կապակցությամբ ձևավորված իրավակիրառ պրակտիկան ուսումնասիրելու համար: Հետևաբար, Սահմանադրական դատարանի որոշումներում որևէ գնահատական չի կարող տրվել այլ դատարանների գործողությունների կամ եզրահանգումների իրավաչափությանը, ինչը ենթադրում է, որ Սահմանադրական դատարանը պետք է որոշակի զգուշավորություն դրսևորի՝ որոշումներում տրված իր ձևակերպումներում դատական իշխանության մյուս սուբյեկտներին հեղինակազրկելու, ինչպես նաև վերջիններիս իրավասության սահմանները խախտելու տպավորություն չստեղծելու առումով: Այսինքն՝ Սահմանադրական դատարանը կրում է պարտականություն՝ չանդրադառնալու վիճարկվող դրույթների կիրառման իրավաչափության հարցին, իսկ Սահմանադրական դատարանի կողմից նորմատիվ իրավական ակտի դրույթի կիրառման իրավաչափության հարցի քննարկման դեպքում Սահմանադրական դատարանը կստանձնի դատական ակտ վերանայող դատական ատյանի գործառույթ՝ դառնալով Վճռաբեկ դատարանի վերադաս՝ չորրորդ դատական ատյան, ինչը ոչ միայն չի բխում Սահմանադրության և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի կարգավորումներից, այլև փաստացի կվերացնի Սահմանադրական դատարանի և եռաստիճան դատական համակարգում ներառված դատարանների գործառույթների տարանջատումը և կխախտի դատավորի՝ ներքին համոզմունքով գործելու մոտեցումը:

Ամփոփելով վերոնշյալը և ելնելով Սահմանադրական դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակից՝ վերջինիս կողմից ընդունվող որոշումների իրավաբանական բնույթից և դրանց իրավական հետևանքների առանձնահատկություններից, ինչպես նաև նկատի ունենալով, որ Սահմանադրության գերակայության ապահովման կարևոր պայման է հանդիսանում վերջնական և պարտադիր բնույթ ունեցող դատական ակտերի կատարումը, պետք է արձանագրել, որ անթույլատրելի է Սահմանադրական դատարանի որոշումների չկատարումը իրավասու սուբյեկտների, ընդհուպ դատարանների կողմից, հակառակ դեպքում վերջիններիս գործողություններն ու ընդունված ակտերը կհակասեն Սահմանադրությամբ երաշխավորված սահմանադրական կարգի սկզբունքներին՝ խաթարելով Սահմանադրության գերակայության երաշխավորման սկզբունքի իրացումը:

Սահմանադրական դատարանի որոշումների պարտադիրության համատեքստում անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել նաև այն հարցը, թե արդյոք պետք է Սահմանադրության նորմերի մեկնաբանությունը տրվի միայն Սահմանադրական դատարանի կողմից:

Այսպես՝ հասարակական հարաբերությունները պարբերաբար զարգանում են, և այդ զարգացումն օբյեկտիվորեն թելադրում է օրենսդրական փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն: Նույնը, սակայն, չենք կարող ասել

սահմանադրական փոփոխությունների մասին՝ նկատի ունենալով Սահմանադրությամբ կարգավորման ենթակա հարցերի շրջանակը: Դրանք այնպիսի ոլորտներ են, որոնք հարաբերականորեն կայուն են տևական ժամանակ, դրանց հիմքում ընկած են համամարդկային այնպիսի արժեքներ, որոնք հիմնականում հարատև են և փոխանցվում են սերնդեսերունդ: Այդուհանդերձ, չի կարելի բացառել Սահմանադրության հետագա զարգացման անհրաժեշտությունը, որը կարող է իրականացվել ոչ միայն տեքստային փոփոխություններ կատարելու միջոցով, այլև սահմանադրական այս կամ այն նորմի բովանդակության բացահայտման եղանակով: Փաստորեն, Սահմանադրության զարգացման այլընտրանքային ուղին Սահմանադրության մեկնաբանության ինստիտուտի կատարելագործումն է: Թե՛ Սահմանադրության որևէ նորմ կիրառելիս, և թե՛ դրա դատական պաշտպանությունն իրականացնելիս օբյեկտիվորեն անհրաժեշտ է բացահայտել այդ նորմի բովանդակությունը, իսկ ներկայիս կարգավորումների պայմաններում այս առումով իր առանձնահատուկ դերակատարումն ունի Սահմանադրական դատարանը, քանի որ Սահմանադրության մեկնաբանման գործառույթը Սահմանադրական դատարանն իրականացնում է իրեն վերապահված լիազորությունների շրջանակում:

Հայաստանի Հանրապետությունը սահմանադրական վերահսկողության ինստիտուտը որդեգրել է դեռևս 1995 թվականին: 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրությունն ուղղակիորեն ամրագրեց, որ Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական արդարադատությունն իրականացնում է Սահմանադրական դատարանը: Այս կերպ ընդգծվեց իրավական այն կարևոր գաղափարը, որ Սահմանադրական դատարանին է վերապահվում Սահմանադրության գերակայությունն ապահովելու առաքելությունը:

Մասնավորապես՝ Սահմանադրական դատարանը, հանդիսանալով որպես Սահմանադրության գերակայությունն ապահովող մարմին, որոշումներ (եզրակացություններ) ընդունելու միջոցով սահմանադրական նորմերին տալիս է վերջնական և համապարտադիր մեկնաբանություն: Ուստի նման լիազորության իրականացման միջոցով Սահմանադրական դատարանն իր հերթին ապահովում է սահմանադրական կայունությունը՝ կանխելով Սահմանադրության հաճախակի փոփոխությունը: Հետևաբար Սահմանադրության՝ յուրաքանչյուր ժամանակահատվածի սերնդի կենսական պահանջմունքներին համապատասխանությանը հնարավոր է հասնել ոչ միայն Սահմանադրության տեքստում կոնկրետ փոփոխություններ կատարելով, այլ նաև դրա տեքստի ընկալումը Սահմանադրական դատարանի որոշումներում տրված մեկնաբանությունների միջոցով փոփոխելով: Նշվածը կարևորվում է հատկապես այն առումով, որ երբեմն սահմանադրական նորմն ինքնին բավարար չէ Սահմանադրության պահանջների իրագործման համար, ուստի այդ պահանջների կենսագործումն ապահովվում է նաև Սահմանադրական դատարանի կողմից դրանց տրված մեկնաբանության միջոցով:

Նշվածի համատեքստում հարց է առաջանում, թե արդյոք բացառապես Սահմանադրական դատարանին սահմանադրական նորմերը մեկնաբանելու լիազորություն տալն ինքնին արգելք է հանդիսանում դատական իշխանության մյուս սուբյեկտների համար իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործով որոշում կայացնելիս մեկնաբանել կիրառելի սահմանադրական նորմը:

Հարկ է նշել, որ գործառույթային առումով Սահմանադրական դատարանի և դատական իշխանության մյուս սուբյեկտների միջև համագործակցությունը խորը արմատներ ունի: Գործառույթային առումով Սահմանադրական դատարանի և դատական իշխանության մյուս սուբյեկտների միջև փոխգործակցությունը դրսևորվում է հետևյալ ուղղություններով՝

ա) քրեական, քաղաքացիական և վարչական դատավարության կարգով գործեր քննելիս դատավորն իր վարույթում գտնվող գործով կիրառման ենթակա օրենքի կամ այլ իրավական ակտի՝ Սահմանադրությանը հակասելու վերաբերյալ հիմնավոր կասկածի պարագայում այդ հարցով իրավասու է դիմելու Սահմանադրական դատարան,

բ) որևէ դատական գործով դատարանի կիրառած օրենքի դրույթի՝ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու մասին որոշումը կամ այդ դրույթի՝ իր սահմանադրաիրավական բովանդակությունից տարբերվող բովանդակությամբ կիրառված լինելու վերաբերյալ Սահմանադրական դատարանի որոշումը նոր հանգամանքի հիմքով վերջնական դատական ակտի վերանայման հիմք է:

Այսպիսով, Սահմանադրական դատարանի և դատական իշխանության մյուս սուբյեկտների միջև փոխգործակցությունը սահմանափակվում է բացառապես վերոնշյալ դեպքերով: Դրանից դուրս վերջիններիս միջև գործառույթային առումով համագործակցության վերաբերյալ որևէ օրենսդրական կարգավորում առկա չէ:

Մինչդեռ իրավակիրառ պրակտիկայում հանդիպում են դեպքեր, երբ տվյալ դատական գործի լուծումը պայմանավորված է սահմանադրական որևէ դրույթի անմիջական կիրառմամբ և մեկնաբանմամբ: Իսկ ինչպես վերը նշվեց դատարանների կողմից Սահմանադրական դատարան դիմելու լիազորությունը կարող է կիրառվել բացառապես այն դեպքում, երբ դատարանն իր վարույթում գտնվող գործով կիրառման ենթակա օրենքի կամ այլ իրավական ակտի՝ Սահմանադրությանը հակասելու վերաբերյալ ունի հիմնավոր կասկած: Այսինքն՝ դատարանի կողմից Սահմանադրական դատարան դիմելու հնարավորությունը նախատեսված է միայն օրենքի կամ նորմատիվ այլ իրավական ակտի սահմանադրականության հարցը որոշելու առումով: Նշված դեպքում դատարանը նորմատիվ իրավական ակտի սահմանադրականությունը ստուգելու հարցով Սահմանադրական դատարան դիմելու մասին որոշում կայացնելիս քննարկման առարկա է դարձնում տվյալ նորմատիվ իրավական ակտի ենթադրյալ հակասահմանադրականությունը Սահմանադրության համապատասխան դրույթների մեկնաբանության համատեքստում: Մինչդեռ դատարանը նման լիազոր

րությունն իրացնելիս իրավունք չունի նորմատիվ իրավական ակտը որակել հակասահմանադրական՝ արդյունքում ուղղակիորեն կիրառելով Սահմանադրությունը, քանի որ նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության հարցի որոշումը բացառապես Սահմանադրական դատարանի լիազորությունն է: Իսկ նշված լիազորությունից զատ օրենսդրությամբ առկա չէ կոնկրետ գործով կիրառման ենթակա սահմանադրական դրույթի վերաբերյալ Սահմանադրական դատարանի մեկնաբանությունը ստանալու հարցով դատարանի կողմից Սահմանադրական դատարան դիմելու հնարավորություն:

Այդուհանդերձ, գտնում ենք, որ թեև սահմանադրական արդարադատությունը դուրս է դատական իշխանության մյուս սուբյեկտների՝ դատարանների գործառույթների շրջանակից, սակայն նշվածը չի նշանակում, որ վերջիններս չունեն Սահմանադրությունը մեկնաբանելու և կիրառելու լիազորություն:

Հարկ է նշել, որ Սահմանադրությամբ ամրագրվել է կարգավորում առ այն, որ արդարադատություն իրականացնելիս դատավորն անկախ է, անաչառ և գործում է միայն Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան<sup>77</sup>: Փաստորեն դատավորի անկախությունն ամրագրող այս դրույթը, ի թիվս այլնի, ամրագրում է նաև Սահմանադրությանը համապատասխան գործելու դատավորի պարտականությունը, ինչը նշանակում է, որ Սահմանադրությունը մեկնաբանելու և կիրառելու լիազորություն Սահմանադրությամբ վերապահված է յուրաքանչյուր դատարանի: Ավելին՝ Սահմանադրության անմիջական կիրառումը հանդիսանում է դատարանի պարտականությունը, եթե որևէ հարցի առնչությամբ կիրառելի նորմատիվ իրավական ակտը չունի համապատասխան կարգավորում կամ պարունակում է օրենսդրական բաց, իսկ այդ հարցի լուծմանը կարելի է հասնել Սահմանադրության դրույթի անմիջական կիրառմամբ և մեկնաբանմամբ: Ընդ որում՝ քիչ չեն պրակտիկայում դեպքերը, երբ վեճի լուծումը հնարավոր է միայն և միայն Սահմանադրության կոնկրետ նորմի մեկնաբանմամբ և կիրառմամբ:

Սահմանադրական դատարանը, անդրադառնալով այս հարցին, 2019 թվականի հունվարի 25-ի ՍԴԱՌ-7 աշխատակարգային որոշմամբ նշել է, որ «Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի ուժով մարդու հատկապես հիմնական իրավունքները և ազատություններն են անմիջականորեն ենթակա դատական պաշտպանության, հետևապես՝ ոչ միայն Վճռաբեկ, այլև բոլոր դատարաններն են պարտավոր առաջին հերթին պաշտպանելու մարդու հենց հիմնական իրավունքները և ազատությունները, իսկ դա հնարավոր չէ առանց այդ իրավունքները և ազատություններն ամրագրող Սահմանադրության դրույթների մեկնաբանության և կիրառման»: Սահմանադրական դատարանը միաժամանակ նշել է, որ «(...) որպես Սահմանադրության գերակայության ապահովման միջոց՝ Սահմանադրության վերջնական և համապարտադիր մեկնաբանությունն ու կիրառումն է Սահմանադրական դատարանի բացառիկ իրավա-

<sup>77</sup> Տե՛ս Սահմանադրության 164-րդ հոդվածի 1-ին մասը:

*սություները, իսկ հանրային իշխանության բոլոր մարմինները՝ Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված իրենց լիազորությունների շրջանակներում մեկնաբանում և կիրառում են Սահմանադրությունը (...):*

Փաստորեն դատարանները, կոչված լինելով երաշխավորելու մարդու հիմնական իրավունքների ու ազատությունների անմիջական գործողությունը, իրենց լիազորություններն իրականացնելիս պարտավոր են ելնել նախ և առաջ սահմանադրական կարգավորումներից, որը հնարավոր է Սահմանադրության անմիջական կիրառմամբ և մեկնաբանմամբ: Մինչդեռ վերոնշյալ հանգամանքով որևէ կերպ չի նսեմացվում Սահմանադրության կիրառման և մեկնաբանման գործում Սահմանադրական դատարանի դերը, քանի որ որպես Սահմանադրության գերակայության ապահովման միջոց՝ Սահմանադրության վերջնական և համապարտադիր մեկնաբանությունն ու կիրառումը Սահմանադրական դատարանի բացառիկ իրավասությունն է: Հետևաբար դատարանների կողմից Սահմանադրությունը մեկնաբանելը և կիրառելը չի կարող խաթարել Սահմանադրական դատարանի լիազորության բացառիկությունը, որը վերջնական լուծում տալով Սահմանադրության մեկնաբանության հարցերին՝ ունի համապարտադիր բնույթ բոլորի համար: Սակայն նշվածը չի վերաբերում այն իրավիճակներին, երբ որևէ հարցին առնչվող սահմանադրական դրույթի առնչությամբ արդեն իսկ առկա է Սահմանադրական դատարանի համապատասխան մեկնաբանությունը՝ Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշման տեսքով: Նշված դեպքում դատարանը պարտավոր է առաջնորդվել Սահմանադրական դատարանի մեկնաբանությամբ՝ նկատի ունենալով, որ այն վերջնական է և ունի համապարտադիր բնույթ:

Վերոնշյալից հետևում է, որ Սահմանադրությունը մեկնաբանելու լիազորությունը վերապահված է ոչ միայն Սահմանադրական դատարանին, այլ նաև դատական իշխանության մյուս սուբյեկտներին՝ դատարաններին: Սակայն հարկ է նշել, որ վերը նշված երկու դեպքում էլ նշված լիազորությունն ունի իր առանձնահատկությունը. մասնավորապես, եթե Սահմանադրական դատարանի պարագայում վերջինիս լիազորությունն անմիջականորեն բխում է Սահմանադրությամբ հռչակված իր դերից, որպիսի դեպքում բարձրացված հարցի առնչությամբ տրված սահմանադրական նորմի և վիճարկվող իրավական ակտի մեկնաբանությամբ էլ Սահմանադրական դատարանը որոշում է վիճարկվող իրավական ակտի սահմանադրականության հարցը՝ ըստ այդմ այն Սահմանադրությանը համապատասխանող կամ հակասող ճանաչելով, ապա դատարանների դեպքում նշված լիազորության իրացումը դրսևորվում է բացառապես իր վարույթում գտնվող գործով կիրառման ենթակա սահմանադրական նորմի մեկնաբանմամբ: Նման առանձնահատկության սահմանումը նպատակ է հետապնդում ապահովելու իրավական որոշակիությունը, քանի որ երկուստեք նման լիազորության վերապահումը իրավական շփոթ կառաջացնի այն առումով, թե որ մեկնաբանությանը պետք է տալ նախապատվություն: Այնուհանդերձ, պետք է արձանագրել, որ ընդհանուր իրավասության և մասնագիտաց-

ված դատարանները, ինչպես և վերաքննիչ և վճռաբեկ դատարանները չեն կարող ձեռնպահ մնալ սահմանադրական նորմերի մեկնաբանությունից և կիրառումից, առավել ևս, որ որոշակի գործերով վեճին լուծում տալու համար անհրաժեշտ է լինում հենց Սահմանադրության նորմը կիրառել: Ընդ որում՝ նշված դեպքերում չի բացառվում այնպիսի իրավիճակը, որ տարբեր դատարաններ Սահմանադրության նորմը մեկնաբանեն տարակերպ ու իրար հակասող բովանդակությամբ: Իսկ ահա գործող օրենսդրությամբ սահմանված չէ որևէ գործիքակազմ, որ վեճը լուծող դատարանը կարող է դիմել Սահմանադրական դատարան՝ ակնկալելով Սահմանադրության նորմի մեկնաբանություն: Դատարանները Սահմանադրական դատարան դիմելու լիազորություն ունեն միայն այն դեպքում, եթե ակնկալում են պատասխան որևէ օրենքի կամ նորմատիվ իրավական ակտի Սահմանադրության համապատասխանության հիմնավոր կասկածները փարատելու ուղղությամբ, և ոչ երբեք Սահմանադրության նորմերի մեկնաբանություն ստանալու առումով:

Կարծում ենք, որ ներկայիս կարգավորումների պայմաններում Սահմանադրության մեկնաբանման գործառույթը Սահմանադրական դատարանի կողմից իրեն վերապահված լիազորությունների շրջանակում իրականացնելը բավարար չէ: Սահմանադրական դատարանին պետք է օժտել սահմանադրական նորմերի պաշտոնական պարտադիր մեկնաբանություն տրամադրելու ինքնուրույն լիազորությամբ: Այս լուծումը կարող է կիրառվել բոլոր այն դեպքերում, երբ դատարանների մոտ առկա է Սահմանադրության՝ անմիջականորեն կիրառման ենթակա դրույթի բովանդակության՝ Սահմանադրությանը համապատասխանող մեկնաբանության բացահայտման անհրաժեշտություն: Նման մեկնաբանության հայցումը կարող է իրականացվել, օրինակ, դատարանների կողմից իրենց վարույթում գտնվող որևէ գործով Սահմանադրության նորմի անմիջական կիրառության կապակցությամբ: Ընդ որում՝ ի սկզբանե այն կարող է կիրառվել միայն դատական իշխանության սուբյեկտների միջև փոխհարաբերություններում՝ աստիճանաբար նման նախաձեռնությամբ հանդես գալու լիազորություն վերապահելով իշխանության մյուս ճյուղերի ներկայացուցիչներին: Սահմանադրական դատարանին Սահմանադրության նորմերի պաշտոնական մեկնաբանություն տրամադրելու ինքնուրույն լիազորություն ընձեռելը մեծապես կնպաստի Սահմանադրության կայունության ապահովմանը:

## **5. Սահմանադրական և վճռաբեկ դատարանների իրավական դիրքորոշումների փոփոխության հնարավորության որոշ հիմնախնդիրներ**

Սահմանադրական դատարանի դատավորը, ինչպես Հայաստանի Հանրապետության ցանկացած այլ դատավոր, անկախ է, անաչառ և գործում է միայն Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան<sup>78</sup>: «Սահմանադր-

<sup>78</sup> Տե՛ս Սահմանադրության 164-րդ հոդվածի 1-ին մասը:

րական դատարանի մասին» սահմանադրական օրենքի<sup>79</sup> 7-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը սահմանում են, որ արդարադատություն իրականացնելիս դատավորն անկախ է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, պաշտոնատար, ֆիզիկական և իրավաբանական անձանցից, հաշվետու չէ որևէ մեկին, այդ թվում՝ պարտավոր չէ որևէ բացատրություն տալ, և իրավունք չունի իր գործունեության կապակցությամբ հայցելու որևէ ցուցում: Իսկ «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 7-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը սահմանում են, որ արդարադատություն և որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ, ինչպես նաև դատավորի կարգավիճակից բխող իրավունքներ իրականացնելիս դատավորն անկախ է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, պաշտոնատար, ֆիզիկական և իրավաբանական անձանցից և հաշվետու չէ որևէ մեկի, այդ թվում՝ պարտավոր չէ որևէ բացատրություն տալ, իսկ դատարանը գործը կամ հարցը քննում և լուծում է Սահմանադրությանը և օրենքին համապատասխան՝ գործի հանգամանքները գնահատելով իր ներքին համոզմամբ:

Երբ խոսքը վերաբերում է մի կողմից դատավորների, այդ թվում՝ Սահմանադրական դատարանի դատավորների, մյուս կողմից պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար, ֆիզիկական և իրավաբանական անձանց միջև հարաբերություններին, ապա հստակորեն պետք է արձանագրել, որ թե՛ Սահմանադրական դատարանի դատավորները և թե՛ եռաստիճան դատական համակարգի դատավորները նշված սուբյեկտներից որևէ մեկից կախված չեն, արդարադատական իրենց գործառույթներն իրականացնելիս չեն կարող հայցել, ստանալ կամ ղեկավարվել որևէ անձի կողմից տրված ցուցումներով: Թե՛ եռաստիճան դատական համակարգի որևէ դատարանի, թե՛ Սահմանադրական դատարանի քննությանը հանձնված կոնկրետ գործի կապակցությամբ դատավորները, հիմնվելով Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված իրավակարգավորումների վրա, պետք է իրենց ներքին համոզմունքով ձևավորեն իրենց իրավական դիրքորոշումները, որոնք էլ արտահայտվում են կամ միանձնյա կարգով որոշում կայացնելու միջոցով, կամ էլ կոլեգիալ կարգով դատավորի կողմից կատարված քվեարկությամբ, ինչպես նաև որոշակի դեպքում՝ դատավորի կողմից շարադրվող հատուկ կարծիքում:

Դատավորի անկախությունը ենթադրում է, ի թիվս այլնի, իր ներքին համոզմունքով գործելու և դրա հիման վրա ձևավորվող իրավական դիրքորոշումներն արտահայտելու ազատություն, և գործող իրավակարգավորումների պայմաններում երբեմն ստեղծվում են դատավորի՝ այլ դատարանների կամ դատավորների արտահայտած դիրքորոշումներով հնարավոր կաշկանդվածության հարցեր, որոնք շոշափում, ընդհուպ սահմանափակում են դատավորի՝ ներքին համոզմունքով գործելու ազատությունը: Սահմանադրական դատարանի դա-

<sup>79</sup> Տե՛ս ՀՀՊՏ 2018.01.31/7(1365) Հոդ.74, ընդունվել է 17.01.2018 թվականին, ուժի մեջ է մտել 09.04.2018 թվականին:

տավորի ներքին համոզմունքով գործելու սահմանափակման և նրա կաշկանդվածության հարցն առավել բարդ ձևակերպում է ստանում, երբ այն վերաբերում է Սահմանադրական դատարանի կողմից նախկինում արտահայտված դիրքորոշումներին:

Այսպես՝ պետությունում սոցիալական, տնտեսական փոփոխությունները, հասարակական հարաբերությունների շարունակական զարգացումն ու ձևափոխումները երբեմն պահանջում են Սահմանադրությունում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն: Այլ դեպքերում հնարավոր է, որ Սահմանադրությունը ձևական առումով չփոփոխվի, սակայն ի հայտ գան սահմանադրական դրույթների այնպիսի ընկալումներ, որոնք ամբողջությամբ չտեղավորվեն Սահմանադրական դատարանի կողմից նախկինում կայացված որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակում: Նման պայմաններում հարց է ծագում, թե արդյոք Սահմանադրական դատարանի դատավորների կողմից որոշակի պահի կայացվող որոշումները կաշկանդում են դատարանի ապագա կազմերի դատավորներին, և եթե այո, ապա նման կաշկանդվածությունն արդյոք չի վտանգում Սահմանադրական դատարանի դատավորների՝ ներքին համոզմունքով գործելու ազատությունը:

Սահմանադրական արդարադատության իր գործառույթն իրականացնելիս Սահմանադրական դատարանը կայացնում է որոշումներ, որոնք «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 61-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ պարտադիր են բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց համար Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում: Ընդ որում՝ նշված որոշումները բովանդակում են քննության առարկա հանդիսացող հարցի սահմանադրականության կամ հակասահմանադրականության վերաբերյալ Սահմանադրական դատարանի եզրահանգումները, որոնք պետք է պարտադիր և կաշկանդող լինեն ոչ միայն պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց համար, այլ նաև հենց Սահմանադրական դատարանի համար:

Սահմանադրական դատարանը, անդրադառնալով Սահմանադրական դատարանի որոշումների կարևորությանը, նշել է, որ դրանցով լուծվում են հանրային-իրավական կարևորություն ունեցող այնպիսի գործեր, որոնք անմիջականորեն կապված են Սահմանադրության նորմերի մեկնաբանման ու կիրառման, իրավական, քաղաքական անվտանգության, հանրային իշխանության անընդհատության (հաջորդայնության), այդ իշխանության մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից իրենց սահմանադրական գործառույթների անվերապահ կատարման, ինչպես նաև օրենքով նրանց վերապահված լիազորությունների սահմանադրականության որոշման հետ, հետևաբար՝ այդ ակտերում ամրագրված նորմերը ենթակա են անվիճելի և անհապաղ կատարման<sup>80</sup>:

<sup>80</sup> Տե՛ս Սահմանադրական դատարանի 2011 թվականի փետրվարի 25-ի ՍԴԴ-943 որոշումը:



Նույն որոշմամբ Սահմանադրական դատարանը նշել է, որ Սահմանադրական դատարանի որոշումն իրենից ներկայացնում է Սահմանադրությամբ, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով իր լիազորությունների շրջանակներում ընդունված պաշտոնական գրավոր փաստաթուղթ, որով սահմանվում են պարտադիր ճանաչման, պահպանության, պաշտպանության, կատարման կամ կիրառման ենթակա իրավունքներ, պարտականություններ, պատասխանատվություն, սահմանափակումներ, իրավաբանական տեսակետից անվիճարկելի (վերանայման ոչ ենթակա), առանց նախապայմանների, անվերապահ և անհապաղ (եթե այլ ժամկետ չի սահմանվել) կատարման ենթակա նորմատիվ կանոններ, այսինքն՝ վարքագծի կանոններ:

Չնայած Սահմանադրական դատարանի որոշումների կայունությամբ օժտված լինելու հանգամանքին՝ այն բացարձակ բնույթ չի կրում, և նշվածից որպես բացառություն կարող են համարվել այն դեպքերը, երբ Սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումներն օրենքով սահմանված դեպքերում ենթակա են վերանայման, ինչը փաստում է այն իրողությունը, որ Սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները որոշակի օբյեկտիվ հիմքերի և հիմնավոր փաստարկների առկայության դեպքում կարող են փոփոխվել:

Այսպես՝ օրենսդիրը սահմանել է Սահմանադրական դատարանի կողմից իր իսկ որոշումների վերանայման որոշակի կարգ, մասնավորապես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը նախատեսում է վիճարկվող ակտը կամ դրա վիճարկվող դրույթը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու կամ Սահմանադրական դատարանի մեկնաբանությամբ Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին որոշումները օրենքով սահմանված կարգով ներկայացված համապատասխան դիմումի հիման վրա վերանայելու հնարավորություն, եթե փոփոխվել է Սահմանադրության՝ տվյալ գործով կիրառված դրույթը, և եթե ի հայտ է եկել տվյալ գործով կիրառված Սահմանադրության դրույթի այնպիսի նոր ընկալում, որի առկայությամբ նույն հարցի վերաբերյալ կարող է ընդունվել Սահմանադրական դատարանի այլ որոշում, և եթե տվյալ հարցն ունի սկզբունքային սահմանադրաիրավական նշանակություն<sup>81</sup>:

Փաստորեն, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի քննարկվող կարգավորումը վերաբերում է սուկ վիճարկվող ակտը կամ դրա վիճարկվող դրույթը Սահմանադրությանը համապատասխանող կամ վիճարկվող ակտը կամ դրա վիճարկվող դրույթը Սահմանադրական դատարանի մեկնաբանությամբ Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին Սահմանադրական դատարանի որոշումների վերանայմանը և բացառում է «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով նախատեսված՝ վիճարկվող ակտն ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությա-

<sup>81</sup> Տե՛ս «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 16-րդ մասը:

նը հակասող և անվավեր ճանաչելու կամ վիճարկվող նորմատիվ իրավական ակտն ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող ճանաչելու և նորմատիվ իրավական ակտի կամ դրա մի մասի իրավական ուժը կորցնելու ավելի ուշ ժամկետ սահմանելու մասին որոշումների վրա հիշյալ կարգավորման տարածումը: Հարկ է նշել, որ Սահմանադրական դատարանի որոշման վերանայումը ենթադրում է ոչ թե նախկինում կայացված կոնկրետ որոշման վերանայում, այլ կոնկրետ հարցի վերաբերյալ Սահմանադրական դատարանի որոշմամբ արտահայտված դիրքորոշման վերանայում: Միաժամանակ որպես Սահմանադրական դատարանի որոշման վերանայման հիմք օրենսդիրը նախատեսում է Սահմանադրության՝ տվյալ գործով կիրառված դրույթի կամ դրա ընկալման փոփոխությունը, որպիսի դեպքերում էլ Սահմանադրական դատարանը պետք է պատճառաբանի Սահմանադրության նոր դրույթով կամ արդեն իսկ կիրառված դրույթի նոր ընկալմամբ իր դիրքորոշման փոփոխությունը: Իր հերթին նման փոփոխությունը չի կարող ունենալ հետադարձություն Սահմանադրական դատարանի նախկինում կայացված որոշման արդյունքում առաջացած հարաբերությունների նկատմամբ:

Այսպիսով, Սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների օրենքով սահմանված դեպքերում վերանայումը փաստում է այն իրողությունը, որ Սահմանադրական դատարանի որոշումները կարծրացած երևույթ չեն և որոշակի օբյեկտիվ հիմքերի առկայության դեպքում կարող են փոփոխվել: Ընդ որում՝ հատկապես կարևոր է Սահմանադրության դրույթի՝ նոր ընկալման հիմքով նախկինում արտահայտած դիրքորոշումների փոփոխման հնարավորությունը, քանի որ այս լիազորության պատշաճ իրականացման պարագայում Սահմանադրական դատարանը կերաշխավորի սահմանադրական կայունությունը մեր երկրում և կկանխի Սահմանադրության հաճախակի փոփոխության փորձերը: Սահմանադրությունը նաև «կենդանի փաստաթուղթ է», որը պետք է համապատասխանի յուրաքանչյուր ժամանակահատվածի սերնդի կենսական պահանջմունքներին, և այդ համապատասխանությանը հնարավոր է հասնել ոչ միայն Սահմանադրության տեքստում կոնկրետ փոփոխություններ կատարելով, այլ նաև դրա տեքստի ընկալումը Սահմանադրական դատարանի որոշումներում տրված մեկնաբանությունների միջոցով փոփոխելով:

Հարկ է նշել, որ թեև Սահմանադրական դատարանի որոշումների վերանայում օրենսդիրը նախատեսել է միայն որոշակի տեսակի գործերի քննության պարագայում<sup>82</sup>, այդուհանդերձ, օրենսդրի որդեգրած մոտեցումը, ըստ էության, հանգում է բացառապես վիճարկվող ակտը կամ դրա վիճարկվող, դրույթը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու կամ վիճարկվող, ակտը կամ դրա վիճարկվող, դրույթը Սահմանադրական դատարանի մեկնաբանությամբ Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին Սահմանադրական դատարանի որոշումների վերանայմանը: Վերոգրյալ իրավիճակից

<sup>82</sup> Տե՛ս «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 16-րդ մասը, 69-րդ հոդվածի 4-րդ և 13-րդ մասերը, 70-րդ հոդվածի 6-րդ մասը, 71-րդ հոդվածի 10-րդ մասը, 72-րդ հոդվածի 6-րդ մասը, 73-րդ հոդվածի 7-րդ մասը:

տարբերվող դեպքերում և այդ գործիքակազմի կիրառման հնարավորություն չնախատեսող վարույթներով բացակայում է Սահմանադրական դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումներից տարբերվող այլ որոշում կայացնելու օրենսդրական հնարավորությունը, եթե, իհարկե, չի փոխվել Սահմանադրությունն ամբողջությամբ կամ սահմանադրական նորմը բովանդակային առումով:

Մասնավորապես՝ գործնականում հնարավոր են իրավիճակներ, երբ Սահմանադրական դատարանն իր որոշմամբ Սահմանադրությանը հակասող է ճանաչում օրինակ՝ միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունները, ապա հետագայում Սահմանադրության մեջ կատարված փոփոխություններից հետո Սահմանադրական դատարանի առջև կրկին բարձրացվում է նշված միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների համապատասխանության հարցը: Նման իրավիճակներում յուրաքանչյուր դեպքում որպեսզի հնարավոր լինի պարզել, թե արդյոք Սահմանադրության գործող կարգավորումները բացառում են Սահմանադրական դատարանի կողմից նախկինում կայացված որոշմամբ վերհանված խնդիրների առկայությունը, անհրաժեշտ է բովանդակային առումով վերլուծել և գնահատել ինչպես նախկինում գործող Սահմանադրության այն դրույթները, որոնց հիմքով Սահմանադրական դատարանը միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը չհամապատասխանող, այնպես էլ գործի քննության պահին գործող Սահմանադրության համապատասխան դրույթները:

Ընդ որում՝ այն դեպքում, երբ նախկինում գործող և գործի քննության պահին գործող խմբագրություններով Սահմանադրության դրույթները՝ նույն հարցի սահմանման առումով ունեն բովանդակային միևնույն հենքը, և սահմանադրի կողմից որևէ բովանդակային փոփոխության չեն ենթարկվել, Սահմանադրական դատարանը չի կարող շեղվել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունները Սահմանադրությանը հակասող ճանաչելու վերաբերյալ նախկինում կայացրած իր որոշմամբ արտահայտած դիրքորոշումներից, հետևաբար Սահմանադրական դատարանը, կաշկանդված լինելով իր՝ նախկինում կայացված որոշմամբ, հնարավորություն չունի միևնույն հարցի վերաբերյալ արտահայտելու վերոնշյալ որոշումից տարբերվող դիրքորոշում:

Ի տարբերություն Սահմանադրական դատարանի՝ Վճռաբեկ դատարանի կողմից գործի քննության արդյունքում ընդունվող որոշումների վերանայման ուղղակի արգելք կամ հնարավորություն օրենսդրությամբ նախատեսված չէ (նշվածից բացառություն է կազմում նոր երևան եկած և նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման ինստիտուտը): Ուստի նման պայմաններում Վճռաբեկ դատարանը հասարակական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց, ելնելով իրավունքի զարգացման անհրաժեշտությունից, զրկված չէ նախկինում կայացված դիրքորոշումը փոփոխելու հնարավորությունից, այդուհանդերձ, յուրաքանչյուր դեպքում Վճռաբեկ դատարանը պետք է պատճառաբանի նախկինում արտահայտած դիրքորոշումից տարբերվող դիրքորոշում

արտահայտելը: Հետևաբար, եթե իրավակիրառ պրակտիկայում Վճռաբեկ դատարանի կողմից նույն հարցի վերաբերյալ արտահայտվել են միմյանցից տարբերվող դիրքորոշումներ, ապա ենթադրվում է, որ օրենքի միատեսակ կիրառության ապահովման տեսանկյունից նույնանման փաստերով այլ գործով կիրառելի կլինի Վճռաբեկ դատարանի կողմից համապատասխան նորմին տրված վերջին մեկնաբանությունը:

**6. Սահմանադրական դատարանի որոշումներում նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով դատական ակտերի վերանայման արձանագրումը և այդպիսի որոշումների կաշկանդող ուժը (պարտադիրությունը) դատական ակտերի վերանայման իրավասություն ունեցող դատարանների համար**

Սահմանադրական արդարադատության բնագավառում Սահմանադրական դատարանի խնդիրն է՝ ստուգել դատարանի կողմից կիրառման ենթակա<sup>83</sup> կամ արդեն իսկ կիրառված նորմի սահմանադրականությունը՝ առաջին դեպքում կանխելով մարդու իրավունքների հնարավոր խախտումը, իսկ երկրորդ դեպքում՝ նախադրյալներ ապահովելով այդպիսի խախտումը վերացնելու համար: Վերջին դեպքում գործում է կոնկրետ անձի իրավունքների պաշտպանության նպատակով տվյալ անձի կողմից սահմանադրական դատարան դիմելու իրավունքը, որն իրացվում է Սահմանադրության 169–րդ հոդվածի 1-ին մասի 8–րդ կետին համապատասխան<sup>84</sup>:

Սահմանադրականը դատարանը, 2008 թվականի ապրիլի 15-ի ՍԴՌ-751 որոշմամբ անդարդառնալով կոնկրետ սահմանադրական վերահսկողության ինստիտուտին, նշել է, որ անհատական դիմումների հիման վրա իրականացվող կոնկրետ վերահսկողության նպատակը Սահմանադրության դրույթների անմիջական գործողության երաշխավորումն է, մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների ապահովումն ու պաշտպանությունը: Սահմանադրական դատարանի կողմից իրականացվող կոնկրետ վերահսկողությանը մասնավորապես բնորոշ է իրավական ակտի սահմանադրականության մասին որոշման տարածումը տվյալ գործին առնչվող իրավահարաբերությունների վրա: Կոնկրետ վերահսկողության դեպքում առաջին պլան է մղվում նաև անհատական շահերի պաշտպանության խնդիրը:

Սահմանադրական դատարանի դատական կազմն իր հերթին 2021 թվականի սեպտեմբերի 14-ի ՍԴԴԿՈ-58 որոշմամբ արձանագրել է, որ Սահմանադրական դատարան ներկայացվող անհատական դիմումների հիման վրա իրականացվում է կոնկրետ վերահսկողություն, ինչը ենթադրում է, որ նորմատիվ

<sup>83</sup> Այն դեպքում, երբ դատարանը կիրառման ենթակա նորմի սահմանադրականության հարցով դիմում է Սահմանադրական դատարան:

<sup>84</sup> Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը (նշված սահմանադրական դրույթն իր կոնկրետացումն է ստացել «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածում):

ակտի սահմանադրականությունն առնչվում է դատաքննության առարկա դարձած այս կամ այն կոնկրետ գործին: Ի վերջո, Սահմանադրական դատարան ներկայացվող անհատական դիմումների հիման վրա իրականացվող կոնկրետ վերահսկողության ինստիտուտի՝ դիմողի համար վերջնական և հիմնական հետևանքը դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտի՝ նոր հանգամանք ի հայտ գալու հիմքով վերանայումն է:

Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման առկայության պայմաններում դատական ակտի վերանայման անհրաժեշտությունը բխում է նաև կոնկրետ գործերով սահմանադրական վերահսկողության ինստիտուտի էությունից և նշանակությունից, մասնավորապես՝ մեկ այլ որոշմամբ Սահմանադրական դատարանը նշել է, որ անհատական սահմանադրական դիմում (զանգատ) ներկայացնելու վերջնական նպատակը Սահմանադրական դատարանի որոշման հիման վրա՝ անձի խախտված հիմնական իրավունքների և ազատությունների վերականգնումն է, որն էլ կարող է երաշխավորվել Սահմանադրական դատարանի որոշումների հիման վրա նոր հանգամանքի հիմքով վերջնական դատական ակտերի վերանայման միջոցով<sup>85</sup>:

Այսպիսով, կոնկրետ սահմանադրական վերահսկողության հիմքում ընկած է անձի սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությունը, որը տվյալ դեպքում կարող է դրսևորվել Սահմանադրական դատարանի որոշման հիման վրա՝ անձի խախտված սահմանադրական իրավունքի վերականգնման միջոցով, մասնավորապես՝ որպես *restitutio in integrum* սկզբունքի երաշխավորման միջոց օրենսդիրը նախատեսել է օրինական ուժի մեջ մտած վերջնական դատական ակտի վերանայման հնարավորություն Սահմանադրական դատարանի որոշման հիմքով: Ընդ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի համաձայն՝ Սահմանադրական դատարանի համապատասխան որոշումը պետք է նշում բովանդակի այդ մասին<sup>86</sup>:

Փաստորեն, նոր հանգամանքի հիմքով օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայման պարագայում անձի իրավունքների պաշտպանության ապահովումը գերակայում է *res judicata* (դատական ակտերի վերջնական լինելու) սկզբունքին, քանի որ նշված ինստիտուտի ողջ բովանդակությունը հանգում է նրան, որ այդ ինստիտուտի միջոցով ապահովվում է անձի խախտված սահմանադրական իրավունքների վերականգնումը: Ուստի օրինական ուժի մեջ մտած դատական ակտով անձի սահմանադրական իրավունքի խախտման դեպքում, այդ իրավունքի պաշտպանության նպատակով մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակի վերականգնումը ենթադրում է այնպիսի վիճակի առկայություն, որը գոյություն է ունեցել տվյալ դատական ակտի բացակայության պայմաններում: Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն ամրագրել է, որ որոշակի հանգամանքներում գործերի վերանայումը

<sup>85</sup> Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 22.03.2022 թվականի ՍԴՈ-1645 որոշումը:

<sup>86</sup> Տե՛ս «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 64-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը:

կամ վարույթի նորոգումը հանդիսանում է ամենաարդյունավետ, եթե ոչ միակ միջոցը *restitutio in integrum*-ի հասնելու համար<sup>87</sup>:

Հարկ է նշել, որ անհատական սահմանադրական գանգատի ինստիտուտ ունեցող որոշ երկրներում խախտված սահմանադրական իրավունքի վերականգնումն իրականացվում է հենց սահմանադրական դատարանի կողմից, որը, հակասահմանադրական ճանաչելով վիճարկվող նորմը կամ նորմի կիրառումը, միաժամանակ վերացնում է նաև հակասահմանադրական նորմ կիրառած կամ անձի սահմանադրական իրավունքը խախտած դատական ակտը<sup>88</sup>:

Ի տարբերություն այդ երկրների՝ Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է այն մոտեցումը, համաձայն որի՝ Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումով անձը կարող է միայն վիճարկել դատարանի վերջնական ակտով իր նկատմամբ կիրառած նորմատիվ իրավական ակտի դրույթի, սակայն ոչ հակասահմանադրական նորմ կիրառած կամ իր սահմանադրական իրավունքը խախտած դատական ակտի սահմանադրականությունը, և անձի խախտված սահմանադրական իրավունքի վերականգնումը պետք է կատարվի դատական ակտի վերանայման միջոցով<sup>89</sup>: Ըստ այդմ, օրենսդիրը սահմանել է նոր հանգամանքի հիմքով օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայման հնարավորություն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանը տվյալ գործով դատարանի կիրառած օրենքի կամ այլ նորմատիվ իրավական ակտի դրույթը ճանաչել է Սահմանադրությանը հակասող և անվավեր կամ այն ճանաչելով Սահմանադրությանը համապատասխանող և միաժամանակ որոշման եզրափակիչ մասում բացահայտելով դրա սահմանադրաիրավական բովանդակությունը՝ համարել է, որ այդ դրույթն իրավակիրառ պրակտիկայում կիրառվել է Սահմանադրությանը հակասող մեկնաբանությամբ<sup>90</sup>:

Իրավակիրառ պրակտիկայում, ինչպես նաև հանրության շրջանակներում, խնդրահարույց է այն հարցը, թե արդյոք Սահմանադրական դատարանի՝ որևէ գործով դատարանի կիրառած օրենքի կամ այլ նորմատիվ իրավական ակտի դրույթը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու մասին որոշումը կամ Սահմանադրությանը համապատասխանող, սակայն իրավակիրառ պրակտիկայում այլ մեկնաբանությամբ կիրառված լինելու մասին որոշումն օրինական ուժի մեջ մտած դատական ակտը վերանայելու կամ վերանայման վարույթ հարուցելու պարագայում դատական ակտը բեկանելու անվերապահ հիմք է:

<sup>87</sup> Տե՛ս Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 19.01.2000թ. Նախարարների ներկայացուցիչների 694 նստաշրջանում ընդունված՝ «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների հիման վրա ներպետական մակարդակով գործերի վերանայման և վարույթի նորոգման մասին» N R (2000) 2 հանձնարարականը:

<sup>88</sup> Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 15.07.2011 թվականի ՍԴՈ-984 որոշումը:

<sup>89</sup> Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 27.01.2021 թվականի ՍԴՈ-1573 որոշումը:

<sup>90</sup> Տե՛ս ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 419-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, 01.07.1998 թվականին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 426<sup>4</sup>-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, 30.06.2021 թվականին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 403-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ:

Նախ հարկ է տարբերակել նոր հանգամանքի հիմքով վերանայման վարույթի հարուցումը նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայումից: Այսպես՝ Սահմանադրական դատարանի՝ որևէ գործով դատարանի կիրառած օրենքի կամ այլ նորմատիվ իրավական ակտի դրույթը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու մասին որոշումը կամ Սահմանադրությանը համապատասխանող, սակայն իրավակիրառ պրակտիկայում այլ մեկնաբանությամբ կիրառված լինելու մասին որոշումը մեխանիկորեն չի հանգեցնում օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերանայման վարույթի հարուցման: Այդպիսի վարույթ, համաձայն դատավարական օրենսդրությունների, կարող է հարուցվել միմիայն դատավարության մասնակցի կողմից օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերանայման վերաբերյալ համապատասխան բողոք կամ դիմում ներկայացված լինելու պարագայում: Ընդ որում՝ նման բողոքի կամ դիմումի ներկայացման փաստը ևս վերանայման վարույթ հարուցելու անվերապահ պայման չէ, այլ անհրաժեշտ է, որ պահպանված լինեն ընթացակարգային որոշակի պայմաններ: Այսինքն՝ յուրաքանչյուր դեպքում դիմումը նախ և առաջ պետք է բավարարի դիմումը վարույթ ընդունելու համար օրենսդրությամբ նախատեսված բոլոր պահանջները, հակառակ դեպքում դրանց խախտումը վերանայման վարույթի հարուցումը մերժելու հիմք է: Փաստորեն, իրավասու դատարանը հարուցում է դատական ակտի վերանայման վարույթ այն պարագայում, երբ դիմողի կողմից պահպանվել են բոլոր ընթացակարգային պայմանները, և առկա է տվյալ գործով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշում՝ դատարանի կիրառած օրենքի դրույթը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու կամ Սահմանադրությանը համապատասխանող, սակայն իրավակիրառ պրակտիկայում այլ մեկնաբանությամբ կիրառված լինելու վերաբերյալ: Այսինքն՝ տվյալ դեպքում իրավասու դատարանը վերանայման վարույթ հարուցելու կամ դրա հարուցումը մերժելու որոշում կայացնելիս չունի որևէ հայեցողություն, քանի որ ընթացակարգային պայմանների պահպանումը և տվյալ գործով Սահմանադրական դատարանի որոշման առկայությունն ինքնին բավարար հիմք են վերանայման վարույթի հարուցման համար:

Բացի այդ, վերանայման վարույթի հարուցումը ևս չի հանգեցնում դատական ակտի անվերապահ բեկանման: Այսպես, օրինակ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը<sup>91</sup> սահմանում է, որ վերանայող դատական ատյանն իրավասու է չբեկանելու բողոքարկվող դատական ակտը, եթե ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ Սահմանադրական դատարանի որոշումն ըստ էության չէր կարող ազդել գործի ելքի վրա<sup>92</sup>: Այսինքն՝ դատական ակտի վերանայման վարույթն ընթացակարգ է, որի շրջանակում վերանայող դատական ատյանը պետք է պարզի, թե որքանով է հակասահմանադրական ճանաչված կամ Սահմանադրությանը համապատասխանող ճանաչ-

<sup>91</sup> Միասնական կայք 2021.07.26-2021.08.08, ընդունվել է 30.06.2021 թվականին, ուժի մեջ է մտել 01.07.2022 թվականին:

<sup>92</sup> Տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 408-րդ հոդվածի 2-րդ մաս:

ված, սակայն այլ մեկնաբանությամբ կիրառված նորմի կիրառումն ազդել կոնկրետ գործի ելքի վրա: Ուստի այն դեպքում, երբ հարուցված վերանայման վարույթի շրջանակում իրավասու դատարանը, գնահատելով վերոնշյալ հանգամանքը, գալիս է այն եզրահանգման, որ հակասահմանադրական ճանաչված կամ Սահմանադրությանը համապատասխանող ճանաչված, սակայն այլ մեկնաբանությամբ կիրառված նորմը գործի ելքի վրա որևէ ազդեցություն չի ունեցել, իրավասու է օրինական ուժի մեջ թողնել դատական ակտը: Ըստ այդմ էլ, եթե վերանայման վարույթի ընթացքում հաստատվում է հակասահմանադրական ճանաչված կամ Սահմանադրությանը համապատասխանող ճանաչված, սակայն այլ մեկնաբանությամբ կիրառված նորմի ազդեցությունը դատական ակտի վրա, ապա նշված դատական ակտը ենթակա է պարտադիր բեկանման:

Սահմանադրական դատարանն իր՝ 2013 թվականի սեպտեմբերի 18-ի ՍԴՈ-1114 որոշմամբ անդրադարձ է կատարել նշված հարցին և եկել այն եզրահանգման, որ նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայումն անխուսափելիորեն պետք է ipso facto (փաստի ուժով) հանգեցնի հակասահմանադրական նորմ կիրառած դատական ակտի և/կամ կոնվենցիոն իրավունքի խախտում թույլ տված դատական ակտի բեկանմանը՝ բացառելով դրա օրինական ուժի մեջ թողնելու հնարավորությունը: Միաժամանակ Սահմանադրական դատարանը նշել է, որ վերանայված դատական ակտի եզրափակիչ մասը չփոփոխելու հնարավորությունը վերաբերում է միայն դատական ակտը բեկանելուց հետո գործի նոր քննության արդյունքում կայացվող նոր դատական ակտին: Իսկ վերջինիս եզրափակիչ մասի չփոփոխվելու հանգամանքը ծանրակշիռ փաստարկներով հիմնավորելու պարտադիր նորմատիվ պահանջը հանդես է գալիս որպես մարդու իրավունքների պաշտպանության անհրաժեշտ երաշխիք:

Սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշումից հետևում է, որ նոր հանգամանքի հիմքով դատական ակտի վերանայումը բոլոր դեպքերում ենթադրում է վերանայվող դատական ակտի բեկանում: Դատական պրակտիկայի ցուցանիշների ուսումնասիրությունը վկայում է, որ Սահմանադրական դատարանի այն որոշումները, որոնք, ըստ Սահմանադրական դատարանի, կարող էին հիմք հանդիսանալ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի վերանայման համար, ընդհանուր առմամբ ծառայել են իրենց նպատակին և միայն հազվագյուտ դեպքերում է, որ ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ վերանայող դատական ատյանը դատական ակտը թողել է օրինական ուժի մեջ:

Փաստորեն, չի բացառվում այնպիսի իրավիճակի առաջացումը, երբ մի կողմից՝ Սահմանադրական դատարանն իր որոշմամբ նշի օրինական ուժի մեջ մտած դատական ակտի՝ նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով վերանայման ենթակա լինելու մասին, իսկ դատական ակտը վերանայող դատական ատյանը գա այն համոզման, որ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված դրույթը չկիրառելու դեպքում, միևնույնն է, գործի ելքը չէր փոխվելու: Նման պայմաններում հարց է առաջանում, թե ում իրավասության տիրույթում պետք է լինի Սահմանադրական դատարանի որոշման արդյունքում նոր հանգամանքի



ի հայտ գալու հիմքով օրինական ուժի մեջ մտած դատական ակտի՝ վերանայման ենթակա լինելու հարցի լուծումը: Այստեղ է, որ առնչվում ենք դատավորի ներքին համոզմունքի և դրա վրա հիմնված իրավական դիրքորոշման վրա հնարավոր ազդեցությանը, այն է՝ արդյոք դատավորը պետք է կաշկանդված լինի - Սահմանադրական դատարանի որոշման արդյունքում նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով օրինական ուժի մեջ մտած դատական ակտի՝ վերանայման ենթակա լինելու հարցի վերաբերյալ Սահմանադրական դատարանի դիրքորոշմամբ, թե այդ հարցի լուծումը պետք է կատարի ինքնուրույն՝ հաշվի առնելով տվյալ գործի հանգամանքները:

Ամփոփելով վերոնշյալը՝ կարծում ենք դատավորի՝ ներքին համոզմունքով գործելու ազատության և իրավունքների դատական պաշտպանության արդյունավետության տեսանկյունից կարող է արդյունավետ լինել քննարկվող հարցի վերաբերյալ այն մոտեցման որդեգրումը, համաձայն որի՝

1. Սահմանադրական դատարանն իր որոշմամբ չի մատնանշում նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով վերջնական դատական ակտի վերանայման անհրաժեշտության մասին, այլ համապատասխան դատարանը, ուսումնասիրելով կոնկրետ դատական գործի նյութերը և այդ գործով արդեն իսկ կայացված դատական ակտերը, և դրանք համադրելով Սահմանադրական դատարանի որոշման հետ, ինքնուրույն որոշում է, թե արդյոք Սահմանադրական դատարանի որոշումը հաշվի առնելու դեպքում կոնկրետ գործը պետք է ստանար այլ լուծում, թե Սահմանադրական դատարանի որոշմամբ իրավական դրույթը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված լինելու պայմաններում ևս գործը լուծվելու էր այնպես, ինչպես արդեն իսկ լուծվել էր, ուստի դրա վերանայման անհրաժեշտությունը բացակայում է: Այդ դեպքում դատավորը կունենա ազատ, իր ներքին համոզմունքով գործելու ավելի լայն հնարավորություն, կամ

2. եթե, այնուամենայնիվ, ընդունելի է համարվում այն մոտեցումը, համաձայն որի՝ Սահմանադրական դատարանն իր որոշմամբ մատնանշում է դատական ակտը վերանայելու անհրաժեշտությունը, և դատարանը, կաշկանդված լինելով Սահմանադրական դատարանի այդ դիրքորոշմամբ, պետք է ամեն դեպքում վերանայի կայացված դատական ակտը, այդ դեպքում ավելի արդարացված կլինի ներդնել այնպիսի կառուցակարգ, որը չի պահանջի անձից Սահմանադրական դատարանի որոշումը ներկայացնել համապատասխան դատարան և պահանջել վերանայել իր գործով կայացված դատական ակտը, քանի որ այդ դեպքում դիմումի կամ բողոքի ներկայացումը կրում է սոսկ ձևական բնույթ: Այսինքն՝ առաջարկված մոտեցման պարագայում համապատասխան դատարանն առանց բողոքի կամ դիմումի առկայության, դատական ակտը վերանայելու անհրաժեշտության մասին նշում պարունակող՝ Սահմանադրական դատարանի որոշման առկայության փաստի ուժով կհարուցի վերանայման վարույթ կամ այդ վարույթը նշված փաստի ուժով կհամարվի հարուցված:

## 7. Սահմանադրական դատարան դիմելու վերաբերյալ որոշումների կաշկանդող ուժը կամ պարտադիրությունը գործը քննող դատարանի փոփոխության դեպքում

Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանվում է դատարանների կողմից Սահմանադրական դատարան դիմելու լիազորությունը: Նշված հոդվածի համաձայն՝ **դատարաններն իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործով** կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության հարցով դիմում են Սահմանադրական դատարան, **եթե հիմնավոր կասկածներ** ունեն դրա սահմանադրականության վերաբերյալ և գտնում են, որ տվյալ գործի լուծումը հնարավոր է միայն այդ նորմատիվ իրավական ակտի կիրառման միջոցով: Այսինքն՝ դատարանները համապատասխան դիմումներում պետք է ներկայացնեն ոչ միայն վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու վերաբերյալ իրենց հիմնավորումները, այլ նաև պետք է հիմնավորեն, որ տվյալ գործի լուծումը հնարավոր է միայն այդ նորմատիվ իրավական ակտի կիրառման միջոցով:

Դատարանների դիմումների հիման վրա սահմանադրական վերահսկողության դատավարական ընթացակարգերն ու առանձնահատկությունները սահմանվում են «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածով, որում էլ վերը նշված սահմանադրական նորմն իր ամբողջական ամրագրումն է ստացել:

Սահմանադրական դատարանն իր մի շարք աշխատակարգային որոշումներով բացահայտել է վերոնշյալ նորմերի էությունը, մասնավորապես՝ 2020 թվականի նոյեմբերի 17-ի ՍԴԱՌ-205, նույն թվականի նոյեմբերի 30-ի ՍԴԱՌ-219 և 2021 թվականի փետրվարի 26-ի ՍԴԱՌ-40 աշխատակարգային որոշումներով արձանագրել է հետևյալը.

*«(...) դատարանների՝ Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունն առկա է միայն հետևյալ երկու պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, երբ դատարանները՝*

*1. հիմնավոր կասկածներ ունեն իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության վերաբերյալ և*

*2. գտնում են, որ տվյալ գործի լուծումը հնարավոր է միայն այդ նորմատիվ իրավական ակտի կիրառման միջոցով (կոնկրետ սահմանադրական վերահսկողություն) (...):*

*Ըստ այդմ, դատարանները համապատասխան դիմումներում պետք է ներկայացնեն ոչ միայն վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու վերաբերյալ իրենց հիմնավորումները, այլ նաև պետք է հիմնավորեն, որ տվյալ գործի լուծումը հնարավոր է միայն այդ նորմատիվ իրավական ակտի կիրառման միջոցով»:*

Մեկ այլ աշխատակարգային որոշմամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ դատարանների՝ նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունն առկա է **միայն իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործի դեպքում**, ավելին՝ հիշյալ իրավունքը կարող է իրացվել համապատասխան գործով վարույթն սկսվելուց մինչև այդ գործով ըստ էության որոշում ընդունելու պահը (2020 թվականի դեկտեմբերի 29-ի ՍԴԱՌ-245):

«Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 15-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ **գործը միանձնյա քննող դատավորը գործում է որպես դատարան (...)**:

Դատավարական օրենսգրքերից 01.07.1998 թվականին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը «դատարան» հիմնական հասկացության նշանակությունը սահմանում է հետևյալ կերպ. օրենքով սահմանված կարգով կազմավորված դատարան, որը գործերը քննում է կոլեգիալ կազմով կամ **միանձնյա**. առաջին ատյանի դատարան, վերաքննիչ դատարան, վճռաբեկ դատարան (6-րդ հոդվածի 11-րդ կետ): Նույն օրենսգրքի «Վարույթն առաջին ատյանի դատարանում» վերտառությամբ 9-րդ բաժնում ամրագրված դրույթների բովանդակությունից հետևում է, որ դատարան մուտք եղած քրեական գործը **դատավորն իր վարույթ է ընդունում**, որի վերաբերյալ էլ կայացվում է որոշում (291-րդ հոդվածի 1-ին մաս):

Դատավարական մյուս օրենսգրքերը<sup>93</sup> սահմանում են, որ առաջին ատյանի դատարանում գործերը քննում է դատավորը՝ միանձնյա, իսկ դատավորը/դատարանը դատարան մուտք եղած քրեական գործի վարույթը ստանձնում է, իսկ քաղաքացիական և վարչական գործերով հայցադիմումը վարույթ է ընդունում, որոնց վերաբերյալ էլ կայացվում է որոշում<sup>94</sup>:

Այսպիսով, առաջին ատյանի դատարանում քննվող գործի վարույթն իրենից ներկայացնում է դատավարական ընթացակարգ, որը սկսվում է դատավորի կողմից դատական գործն իր վարույթ ընդունելու հարցը լուծելով, և ներառում է դատավարական օրենսգրքերով նախատեսված՝ գործը միանձնյա քննող դատավորի կողմից դատավարական որոշումների (դատական ակտերի) կայացում և համապատասխան դատավարական գործողությունների իրականացում: Ընդ որում՝ տվյալ իրավիճակում գործն իր վարույթ ընդունած դատավորը հանդես է գալիս որպես դատարան:

<sup>93</sup> Տե՛ս ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մաս, 78-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասը, 125-րդ հոդվածի 1-ին մասը, 01.07.1998 թվականին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ հոդվածի 1-ին մասը, 30.06.2021 թվականին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասը, 310-րդ հոդվածի 2-րդ մասը:

<sup>94</sup> Նկատի ունենալով, որ 30.06.2021 թվականին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթների ուժով որոշ դեպքերում ղեռն գործում է թե՛ 01.07.1998 թվականին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը և թե՛ 30.06.2021 թվականին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, սույն թեմայի շրջանակում կվերլուծվեն երկու օրենսգրքերով նախատեսված կարգավորումները:

Նման պայմաններում նախ հարկ է անդրադառնալ այն հարցին, թե արդյոք դատական գործը քննող դատավորի փոխարինումը հանգեցնում է գործն իր վարույթ ընդունած նոր դատավորի կողմից դատական գործի քննության իրականացում սկզբից, թե՛ ոչ:

«Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 5-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ դատարանի կազմի, այսինքն՝ դատավորի փոփոխության դեպքում փոխարինող դատավորի կողմից գործը վարույթ ընդունելու մասին որոշում կայացվելուց հետո **գործի քննությունն սկսվում է սկզբից**: Համանման է կարգավորումը նաև վարչադատավարական կարգով գործը քննելիս դատավորի ինքնաբացարկ հայտնելու դեպքում դատավորի փոփոխություն տեղի ունենալու պարագայում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ հարաբերությունների վրա տարածվում են «Քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերը (հիմք՝ «Վարչական դատավարության օրենսգրքի 13-րդ հոդված, «Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 9-րդ մաս): 30.06.2021 թվականին ընդունված «Քրեական դատավարության օրենսգրքով ևս նախատեսվել է, որ վարույթին դատավորի մասնակցության անհնարինության դեպքում դատավորի փոխարինումից հետո դատական վարույթն սկսվում է նորից. բացառություն է կազմում միայն այն դեպքը, երբ նույն վարույթի համար նշանակվել է պահեստային դատավոր (269-րդ հոդվածի 2-րդ մաս): Հատկանշական է, որ նույն հարցի առնչությամբ օրենսդիրը 01.07.1998 թվականին ընդունված «Քրեական դատավարության օրենսգրքով նախատեսել էր այլ կարգավորում, մասնավորապես՝ դատավորի մասնակցությունը դատական քննությանն անհնար լինելու դեպքում նա փոխարինվում է այլ դատավորով, իսկ գործի քննությունը **վերսկսվում է**: Վկայակոչված իրավանորմի բովանդակությունից հետևում է, որ օրենսդիրը 01.07.1998 թվականին ընդունված «Քրեական դատավարության օրենսգրքով դատավորի փոխարինման դեպքում նախատեսել է գործի քննության շարունակելիություն՝ փոխարինվող դատավորի կողմից այն վերսկսելու միջոցով<sup>95</sup>:

Հաշվի առնելով քրեական գործերի առանձնահատկությունները քաղաքացիական և վարչական գործերի համեմատությամբ՝ օրենսդրի կողմից 01.07.1998 թվականին ընդունված «Քրեական դատավարության օրենսգրքով քրեական դատավարության առնչությամբ տարբերվող կարգավորում նախատեսելն արդարացված է: Հատկապես կարևոր է այն հանգամանքը, որ քրեական գործի քննությունը ենթադրում է առավել ինտենսիվ միջամտություն անձի հիմնական իրավունքներին և ազատություններին, մասնավորապես՝ չի բացառվում քրեական գործի քննության ընթացքում մեղադրյալի նկատմամբ

<sup>95</sup> Հարկ է նշել, որ նշված կարգավորումից բացառություն պետք է համարել դատավորի կողմից ինքնաբացարկի մասին որոշում կայացնելու դեպքը, որպիսի պայմաններում կասկածի տակ է դրվում դատավորի անաչառությունը տվյալ գործով կայացվող բոլոր որոշումների և իրականացվող բոլոր գործողությունների առնչությամբ, ուստի հիշյալ դեպքում գործի քննությունը պետք է սկսվի սկզբից:

խափանման միջոցների կիրառումը, որոնք կարող են, ի թիվս այլնի, դրսևորվել կալանքի տակ գտնվող անձի՝ անձնական ազատության իրավունքի սահմանափակմամբ, գույքը կալանքի տակ գտնվելու դեպքում անձի՝ սեփականությունից անարգել օգտվելու իրավունքի սահմանափակմամբ կամ ստորագրություն՝ չհեռանալու մասին խափանման միջոցի կիրառմամբ անձի՝ ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակմամբ:

Ըստ այդմ, հաշվի առնելով նաև քրեական գործի առանձնահատկություններով պայմանավորված՝ այն առավել ողջամիտ ժամկետում քննելու և լուծելու օրենսդրությամբ սահմանված պահանջի ապահովման անհրաժեշտությունը՝ դատավորի փոխարինման դեպքում օրենսդիրը 01.07.1998 թվականին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով տարբերակված մոտեցում էր դրսևորել՝ սահմանելով քրեական գործի վերսկսում (շարունակելիություն) գործն իր վարույթ ընդունած նոր դատավորի կողմից: Փաստորեն, օրենսդրի նպատակն է եղել դատավորի փոխարինման դեպքում գործն իր վարույթ ընդունած նոր դատավորի կողմից քրեական գործի քննությունը վերսկսելու վերաբերյալ կարգավորում նախատեսելը: Միաժամանակ, քրեական գործի քննության շարունակելիության (վերսկսման) վերաբերյալ կարգավորում նախատեսելը պայմանավորված է գործով նախկին դատավորի կողմից արդեն իսկ կատարված մի շարք դատավարական գործողությունների և դրանցով պայմանավորված արդյունքների առկայությամբ, որոնք պարտադիր են քրեական գործը քննելիս նշված գործն իր վարույթ ընդունած նոր դատավորի համար: Ուստի, դատավորի փոխարինման դեպքում քրեական գործի շարունակելիության պայմաններում քրեական գործն իր վարույթ ընդունած նոր դատավորը կրում է որոշակի օրենսդրական կաշկանդվածություն՝ պայմանավորված գործը քննող նախկին դատավորի կողմից կայացված դատավարական մի շարք որոշումներով և իրականացված դատավարական գործողություններով:

Հարկ է նշել, որ նշված հարցն արդեն իսկ այլ կարգավորում է ստացել 30.06.2021 թվականին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով՝ նախատեսելով պահեստային դատավորի ինստիտուտը<sup>96</sup>, որի դեպքում նույն վարույթի համար կարող է նշանակվել միայն մեկ պահեստային դատավոր և մեղադրանքը քննող դատավորի բացարկի, ինքնաբացարկի, դատավորի լիազորությունների դադարեցման կամ վարույթին նրա մասնակցությունը բացառող այլ հիմքերի առկայության դեպքում պահեստային դատավորը փոխարինում է նրան՝ շարունակելով վարույթը (32-րդ հոդված):

Ուստի թե՛ 01.07.1998 թվականին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, և թե՛ 30.06.2021 թվականին ընդունված ՀՀ քրեական դա-

<sup>96</sup> Այն դեպքում, երբ դատարանում մեղադրանքի քննությունը, դրա բնույթից և ծավալից ելնելով, բացառիկ երկար ժամանակ է պահանջում, ապա դատարանի որոշման հիման վրա տվյալ դատարանի նախագահը, մինչև նախնական դատալսումները սկսվելը, այդ դատարանի դատավորների կազմից նշանակում է պահեստային դատավոր, որը պարտավոր է դատաքննության ընթացքում ներկա լինել դատական նիստերի դահլիճում: Դատարանի նախագահը կարող է պահեստային դատավոր չնշանակել, եթե գտնում է, որ տվյալ վարույթով դրա անհրաժեշտությունը բացակայում է:

տավարության օրենսգրքով նախատեսված պահեստային դատավորի պարագայում հարց է առաջանում, թե արդյոք դատավորի փոխարինման դեպքում քրեական գործն իր վարույթ ընդունած նոր դատավորը գործը քննող նախկին դատավորի կողմից կայացված բոլոր որոշումների և իրականացված բոլոր գործողությունների առնչությամբ է կրում օրենսդրական կաշկանդվածություն:

Վերոնշյալ օրենսգրքերի ուսումնասիրությունից հետևում է, որ քրեական գործն իր վարույթ ընդունած նոր դատավորը պարտավոր է կաշկանդված լինել նախկին դատավորի կողմից կայացված՝ բացառապես այն որոշումներով և իրականացված այն գործողություններով, որոնք անմիջականորեն չեն առնչվում նախկինում գործը քննող դատավորի **սուբյեկտիվ ընկալման արդյունքում գնահատման հետ**: Մասնավորապես՝ քրեական դատավարությունում այդպիսիք կարող են լինել, օրինակ, գործի դատաքննության ընթացքում ձեռքբերված՝ փորձագետի եզրակացությունը կամ վկայի ցուցմունքը (նշված հղումները սպառիչ չեն):

Ուստի, նմանօրինակ դեպքերում, երբ նշված դատավարական գործողությունը պայմանավորված չէ նախկին դատավորի սուբյեկտիվ ընկալման արդյունքում գնահատմամբ, գործն իր վարույթ ընդունած նոր դատավորն այդպիսի դատավարական գործողությունների առնչությամբ պարտավոր է կաշկանդված լինել, մինչդեռ այլ է իրավիճակը, օրինակ, նախկինում գործը քննող դատավորի կողմից Սահմանադրական դատարան դիմելու մասին որոշում կայացնելու դեպքում:

Վերոնշյալ պայմաններում անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել նախկինում գործը քննող դատավորի կողմից Սահմանադրական դատարան դիմելու մասին որոշում կայացնելու առնչությամբ գործն իր վարույթ ընդունած նոր դատավորի օրենսդրական կաշկանդվածության բացառման հարցը, քանի որ գործնականում հնարավոր են իրավիճակներ, երբ դատավորը, միանձնյա գործելով որպես դատարան, որոշում է դիմել Սահմանադրական դատարան և վերջինիս առջև բարձրացնել որևէ նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության հարց, քանի որ գտնում է, որ տվյալ գործի լուծումը հնարավոր է միայն այդ նորմատիվ իրավական ակտի կիրառման միջոցով, և ունի հիմնավոր կասկածներ այդ իրավական ակտի սահմանադրականության վերաբերյալ: Այնուհետև որևէ պատճառով (օրինակ՝ դատավորի լիազորությունների դադարում) գործը հանձնվում է այլ դատավորի քննությանը, որը և այն ընդունում է իբր վարույթ: Նման պայմաններում հարց է ծագում, թե գործի քննությունը ստանձնած նոր դատավորը որքանով է կաշկանդված տվյալ գործի քննությունը նախկինում իրականացրած դատավորի՝ տվյալ գործով նորմատիվ իրավական ակտի կիրառման ենթակա լինելու մասին դիրքորոշմամբ և դրա սահմանադրականության վերաբերյալ վերջինիս մոտ հիմնավոր կասկածների առկայությամբ: Այս հարցի կարևորությունն այն է, որ դրա պատասխանից է բխում, թե արդյոք գործի քննությունը ստանձնած նոր դատավորը Սահմանադրական դատարանում գտնվող դիմումին համաձայն լինելու դեպքում պետք է դիրքորո-

շում հայտնի դրա կապակցությամբ, և արդյոք նման դիրքորոշման բացակայության դեպքում Սահմանադրական դատարանում հնարավոր է իրականացնել գործի հետագա քննությունը:

Այսպես, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասում նշված դիմումում **դատարանը պետք է հիմնավորի իր դիրքորոշումը** նորմատիվ իրավական ակտի վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու վերաբերյալ, ինչպես նաև այն հանգամանքը, որ այդ գործի լուծումը հնարավոր է միայն վիճարկվող դրույթի կիրառման միջոցով:

Սահմանադրական դատարանը, 2013 թվականի սեպտեմբերի 18-ի ՍԴՈ-1114 որոշմամբ արձանագրել է, որ դատարանը սահմանադրական դատարան դիմելու համար երկու հիմնավորում պետք է ներկայացնի: Նախ՝ **պետք է հիմնավորի իր դիրքորոշումը** նորմատիվ ակտի վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հանգամանքի առնչությամբ: Երկրորդ՝ հիմնավորի այն հանգամանքը, որ տվյալ գործի լուծումը կարող է իրականացվել միայն վիճարկվող դրույթի կիրառմամբ: Առաջին դեպքում դիրքորոշումը կարող է ձևավորվել նորմի սահմանադրականության վերաբերյալ դատավորի **ինքնուրույն ու համարժեք** իրավական վերլուծության արդյունքում:

Պատահական չէ վերոնշյալ դրույթում օրենսդրի կողմից «**դատարանը պետք է հիմնավորի իր դիրքորոշումը**» արտահայտության օգտագործումը: Մասնավորապես՝ վերոնշյալ դրույթի բովանդակությունից և Սահմանադրական դատարանի հիշյալ որոշումից հետևում է, որ յուրաքանչյուր դեպքում կոնկրետ գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության և գործը միայն տվյալ նորմատիվ իրավական ակտի կիրառմամբ լուծելու հնարավորության հարցերի վերաբերյալ դատարանի մտահոգության առկայության, ինչպես նաև այդ մտահոգությունը Սահմանադրական դատարանի միջոցով փարատելու իրավունքը կարող է իրացվել բացառապես **գործը քննող դատավորի** կողմից տվյալ գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի՝ Սահմանադրությանը հակասելու, և գործը միայն այդ նորմատիվ իրավական ակտի կիրառմամբ լուծելու հնարավորության հանգամանքների հիմնավորման միջոցով, ավելին՝ գործը քննող դատավորը կարող է նման եզրահանգման գալ միայն նշված հարցերի վերաբերյալ **իր ներքին համոզմունքի հիման վրա ձևավորված սուբյեկտիվ դիրքորոշման արդյունքում**, որն էլ պետք է պայմանավորված լինի դատավորի մոտ ձևավորված **հիմնավոր կասկածով** և լինի վերջինիս կողմից **ինքնուրույն իրավական վերլուծության արդյունք**:

Այսպիսով, քննարկման առարկա հարցի առնչությամբ հատկանշական է այն հանգամանքը, որ կոնկրետ գործով նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության և գործը միայն այդ նորմատիվ իրավական ակտի կիրառմամբ լուծելու հնարավորության հարցերով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը **պատկանում է բացառապես այն դատավորին, որի վարույթում գտնվում է տվյալ գործը**, և վիճարկվող դրույթի սահմանադրակա-

նության և գործը միայն այդ նորմատիվ իրավական ակտի կիրառմամբ լուծելու հնարավորության բացահայտման նպատակով Սահմանադրական դատարան դիմելու հարցը կարող է հաղթահարվել **բացառապես տվյալ դատավորի վարույթում գտնվող գործով վերջինիս ներքին համոզմունքի հիման վրա ձևավորված սուբյեկտիվ դիրքորոշման արդյունքում:**

Այլ կերպ ասած՝ վիճարկվող նորմի սահմանադրականության և գործը միայն այդ նորմի կիրառմամբ լուծելու հնարավորության վերաբերյալ դատավորի սուբյեկտիվ դիրքորոշումը կարելի է համարել որպես տվյալ դատավորի ներքին համոզմունքի արդյունք և այն ոչ մի դեպքում չի կարող կաշկանդող հատկություն ունենալ այլ դատավորի համար (օրինակ՝ գործը քննող դատավորի մասնակցության անհնարինության դեպքում այլ դատավորով փոխարինվելու դեպքում), քանի որ բացառված չէ, որ փոխարինած դատավորը չունենա գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության վերաբերյալ հիմնավոր կասկած, կամ ավելին՝ չունենա համոզմունք վիճարկվող նորմատիվ իրավական ակտի կիրառելիության անհրաժեշտության մասին:

Ուստի նորմատիվ իրավական ակտի վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու, և գործը միայն այդ նորմի կիրառմամբ լուծելու հնարավորության հանգամանքների առնչությամբ դատավորի՝ **ինքնուրույն ու համարժեք** իրավական վերլուծության և **ներքին համոզմունքի** հիման վրա ձևավորված դիրքորոշման հիմքում ընկած է բացառապես տվյալ դատավորի՝ **գործով կիրառման ենթակա իրավական նորմերի սուբյեկտիվ ընկալումը և մեկնաբանությունը, մասնագիտական փորձը և դրա արդյունքում ձևավորված մասնագիտական աշխարհայացքը:**

Ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է նշել, որ նախկինում գործը քննող դատավորի վարույթում գտնվող գործով նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության և գործը միայն այդ նորմի կիրառմամբ լուծելու հնարավորության հարցերով Սահմանադրական դատարան դիմելու վերաբերյալ այդ դատավորի կողմից կայացված որոշումը համարվում է բացառապես տվյալ դատավորի սուբյեկտիվ դիրքորոշմամբ պայմանավորված ներքին համոզմունքի արդյունք, որը սերտորեն կապված է սոսկ նախկին դատավորի իրավագիտակցության, գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության վերաբերյալ վերջինիս սուբյեկտիվ ընկալման և դրա վերաբերյալ վերջինիս մոտ ձևավորված ներքին համոզմունքի հետ:

Բացի այդ, ըստ դատավարական օրենսգրքերի դատավարության մասնակիցները դատարանում իրավունք ունեն հանդես գալու միջնորդություններով<sup>97</sup>, որոնք կարող են բավարարվել կամ մերժվել: Ուստի նախկինում գործը

<sup>97</sup> Տե՛ս 30.06.2021 թվականին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 264-րդ հոդվածի 4-րդ մասը, 01.07.1998 թվականին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 3-րդ մասը, 268-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը:



քննող դատավորի կողմից գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու հարցով Սահմանադրական դատարան դիմելու վերաբերյալ դատավարության մասնակիցների միջնորդությունը մերժվելու, և դատավորի փոխարինումից հետո դատավարության մասնակիցների կողմից կրկին նշված հարցի վերաբերյալ միջնորդություն ներկայացվելու դեպքում ևս գործն իր վարույթ ընդունած նոր դատավորը չի կարող կաշկանդված լինել այդ հարցի վերաբերյալ նախկինում գործը քննող դատավորի սուբյեկտիվ ընկալման արդյունքում ձևավորված դիրքորոշմամբ:

Նշված դեպքում գործն իր վարույթ ընդունած նոր դատավորը պարտավոր է քննել ներկայացված միջնորդությունը և կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության վերաբերյալ հիմնավոր կասկածի, ինչպես նաև գործը միայն վիճարկվող նորմատիվ իրավական ակտի կիրառման միջոցով լուծելու համոզմունքի դեպքում կրում է պարտականություն ներկայացնելու իր ներքին համոզմունքի հիման վրա ձևավորված սուբյեկտիվ դիրքորոշումը՝ Սահմանադրական դատարան դիմելու վերաբերյալ:

Ավելին՝ նման միջնորդությունը գործը քննող նախկին դատավորի կողմից մերժված լինելու հանգամանքը որևէ կերպ չի կարող կաշկանդել փոխարինող դատավորին Սահմանադրական դատարան դիմելու հարցը բարձրացնել նաև իր նախաձեռնությամբ:

Հետևաբար ոչ միայն դատավարության մասնակիցների միջնորդությունների հիման վրա, այլ նաև դատարանի նախաձեռնությամբ գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության (1), ինչպես նաև գործը միայն վիճարկվող նորմատիվ իրավական ակտի կիրառման միջոցով լուծելու (2) հնարավորության հարցերի վերաբերյալ գործն իր վարույթ ընդունած նոր դատավորի մոտ 1-ին դեպքում՝ հիմնավոր կասկածի, իսկ 2-րդ դեպքում՝ համոզմունքի առկայության դեպքում, վերջինս չպետք է զրկված լինի Սահմանադրական դատարան դիմելու հնարավորությունից՝ պայմանավորված նախկինում գործը քննող դատավորի կողմից նշված հարցերի վերաբերյալ արտահայտված դիրքորոշմամբ, ավելին՝ նման իրավիճակում Սահմանադրական դատարան դիմելը դատարանի համար հանդիսանում է պարտականություն:

Ուստի դատավորի փոխարինման դեպքում գործն իր վարույթ ընդունած նոր դատավորը չի կարող կաշկանդված լինել նախկինում գործը քննող դատավորի կողմից տվյալ գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության, ինչպես նաև գործը միայն վիճարկվող նորմատիվ իրավական ակտի կիրառման միջոցով լուծելու հնարավորության հարցերի վերաբերյալ վերջինիս ներքին համոզմունքի հիման վրա ձևավորված սուբյեկտիվ դիրքորոշմամբ:

Այդուհանդերձ, անհրաժեշտ է նշել, որ գործն իր վարույթ ընդունած նոր դատավորի օրենսդրական կաշկանդվածությունը կարող է դրսևորվել բացառապես այն դեպքում, երբ նախկինում գործը քննող դատավորը նախաձեռնել

է նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության վերաբերյալ սահմանադրաիրավական վեճ՝ կայացնելով տվյալ գործով Սահմանադրական դատարանի դիմելու մասին որոշում, որպիսի վեճն էլ արդեն իսկ լուծվել է Սահմանադրական դատարանի կողմից կայացված համապատասխան որոշմամբ:

Այսինքն՝ գործն իր վարույթ ընդունած նոր դատավորի՝ օրենսդրորեն կաշկանդված վարքագծի դրսևորումը պարտադիր է, եթե արդեն իսկ առկա է գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության վերաբերյալ Սահմանադրական դատարանի որոշում:

Հետևաբար նախկինում գործը քննող դատավորի կողմից լուծ նորմատիվ իրավական ակտի սահմանադրականությունը որոշելու հարցով Սահմանադրական դատարանի դիմելու նախաձեռնությունը չի կարող համարվել տվյալ հարցերի վերաբերյալ այլ դիրքորոշում ունենալու կաշկանդվածության պարտադիր պահանջ տվյալ դատավորի փոխարինման հիմքով գործն իր վարույթ ընդունած նոր դատավորի համար:

Վերոգրյալի համատեքստում կարևոր է այն հանգամանքը, որ նախկինում գործը քննող դատավորի սուբյեկտիվ դիրքորոշման առնչությամբ գործն իր վարույթ ընդունած նոր դատավորի կաշկանդվածությունը խոցելի կդարձնի վերջինիս անկախությունը: Մինչդեռ, դատավորի անկախությունն ամրագրված է Սահմանադրությամբ, որի 164-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արդարադատություն իրականացնելիս **դատավորն անկախ է**, անաչառ և գործում է միայն Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան: Միաժամանակ, 01.07.1998 թվականին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ «Դատավորների անկախությունը» վերտառությամբ 40-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արդարադատություն իրականացնելիս **դատավորներն անկախ են և ենթարկվում են միայն օրենքին**: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ **դատավորները քրեական գործերը և նյութերը լուծում են իրենց ներքին համոզմամբ՝** ներկայացված ապացույցների պատշաճ հետազոտման հիման վրա (...): Դատավորի կողմից ներքին համոզմամբ գործելու վերաբերյալ կարգավորումներ նախատեսվել են նաև դատավարական մյուս օրենսգրքերով<sup>98</sup>:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ևս իր վճիռներում բազմիցս անդրադարձել է դատավորի անկախության սկզբունքին:

Մասնավորապես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել է, որ դատավորների անկախության համար պահանջվում է, որ առանձին դատավորներն ազատ լինեն ինչպես արտաքին, այնպես էլ դատական համակարգի ներսից բխող անհարկի ազդեցությունից: Դատական համակարգի ներսում անկախության համար պահանջվում է, որ դատավորներն ազատ լինեն **գործընկեր դատավորների** կամ դատարանում վարչական գործառույթներ

<sup>98</sup> Տե՛ս 30.06.2021 թվականին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 2-րդ մասը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասը:

իրականացնող անձանց, օրինակ՝ դատարանի նախագահի կամ դատարանի ստորաբաժանման նախագահի հրահանգներից կամ ճնշումից<sup>99</sup>:

Այսպիսով, դատավորի անկախությունը ենթադրում է դատավորի կողմից գործերի քննություն ու որոշումների կայացում հնարավոր կողմնակի ազդեցության բացակայության և ազատ գործելու հնարավորության պայմաններում: Ուստի, արդարադատական գործառույթներ իրականացնելիս դատավորի անկախության ապահովումն անհրաժեշտ պայման է Սահմանադրությամբ ամրագրված՝ մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանության երաշխավորման համար:

Դատավորի անկախությունը վերաբերում է դատավորի կողմից գործերի քննության ու որոշումների կայացման ժամանակ հնարավոր ներքին և արտաքին միջամտության բացակայությանը: Ընդ որում՝ ներքին միջամտությունը կարող է դրսևորվել ինչպես հորիզոնական հարթությունում (օրինակ՝ գործը քննող դատավոր և միևնույն ատյանի գործընկեր դատավոր), այնպես էլ ուղղահայաց հարթությունում (օրինակ՝ գործը քննող դատավոր և վերադաս դատական ատյան):

Ավելին՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ դատական համակարգի ներսում դատավորների անկախությունը և, մասնավորապես, դատական համակարգում իրենց վերադասներից անկախությունն ապահովող բավարար երաշխիքների բացակայությունը կարող է պատճառ լինել, դիմումատուի կասկածները՝ կապված տվյալ դատարանի անկախության և անաչառության հետ, օբյեկտիվորեն հիմնավորված համարելու համար<sup>100</sup>:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն, թիվ 2010 (12) հանձնարարականով անդրադառնալով դատավորի ներքին անկախությանը, նշել է, որ դատական իշխանության անկախության սկզբունքը նշանակում է **յուրաքանչյուր դատավորի անկախություն՝ դատական որոշումներ կայացնելիս**: Որոշումներ կայացնելիս դատավորները պետք է լինեն անկախ և անկողմնակալ, ունակ լինեն գործելու առանց սահմանափակումների, առանց որևէ իշխանության, ներառյալ դատական համակարգի ներքին մարմինների անհարկի ազդեցության, ճնշումների, սպառնալիքների, ուղղակի և անուղղակի միջամտության<sup>101</sup>:

Մասնավորապես՝ հորիզոնական հարթությունում դատավորի անկախության միջամտության դրսևորում կարող է համարվել այն իրավիճակը, երբ նախկինում գործը քննող դատավորի կողմից (որը որևէ պատճառով չի ավարտել տվյալ գործի քննությունը) կայացված որոշման և կատարված դատավարական գործողության արդյունքում չհիմնավորված կերպով սահմանափակվում

<sup>99</sup> Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Agrokompleks v. Ukraine թիվ 23465/03 գանգատով 06.10.2011 թվականի վճիռը, կետ 137:

<sup>100</sup> Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Parlov-Tkalčić v. Croatia թիվ 24810/06 գանգատով 06.10.2011 թվականի վճիռը, կետ 137:

<sup>101</sup> Տե՛ս Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ 2010 (12) հանձնարարականը՝ դատավորների վերաբերյալ՝ անկախություն, արդյունավետություն և պարտականություններ, 17.11.2010 թվական, կետ 22:

է այդ գործն իր վարույթ ընդունած նոր դատավորի կողմից ազատ և անկախ որոշում կայացնելու հնարավորությունը: Տվյալ դեպքում քննարկման առարկա հանդիսացող՝ նախկինում գործը քննող դատավորի կողմից գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության, ինչպես նաև գործը միայն վիճարկվող նորմատիվ իրավական ակտի կիրառման միջոցով լուծելու հնարավորության հարցերի վերաբերյալ նախկին դատավորի սուբյեկտիվ ընկալման արդյունքում ձևավորված դիրքորոշման պարտադիրությունը գործն իր վարույթ ընդունած նոր դատավորի համար կխաթարի այդ դատավորի ներքին անկախությունը:

Բացի այդ, համանման կարևորություն ունի նաև դատավորի անկախության երաշխավորումն ուղղահայաց հարթությունում: Մասնավորապես՝ ի տարբերություն 30.06.2021 թվականին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի՝ 01.07.1998 թվականին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի<sup>102</sup> 31-րդ հոդվածի 3-րդ մասով ուղղակիորեն նախատեսված էր դատավարության մասնակիցների՝ գործի վարույթը կասեցնելու և Սահմանադրական դատարան դիմելու մասին միջնորդությունները բավարարվելու կամ մերժվելու վերաբերյալ դատարանի որոշումների անմիջական բողոքարկման հնարավորություն:

Նշված իրավիճակում վերաքննիչ դատարանի կողմից գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության, ինչպես նաև գործը միայն վիճարկվող նորմատիվ իրավական ակտի կիրառման միջոցով լուծելու հնարավորության հարցերի վերաբերյալ առաջին ատյանի դատարանի դատավորի կողմից սուբյեկտիվ ընկալման արդյունքում ձևավորված դիրքորոշմամբ կայացված որոշման իրավաչափության ստուգումը խաթարում էր առաջին ատյանի դատարանի դատավորի ներքին անկախությունը, քանի որ վերահաս ատյանի դատավորը պետք է գնահատական տար, թե արդյոք առաջին ատյանի դատավորի մոտ պետք է առկա լինի նորմի սահմանադրականության վերաբերյալ հիմնավոր կասկած, թե՛ ոչ, ինչպես նաև պետք է գնահատեր, թե արդյոք տվյալ նորմը պարտադիր ենթակա պետք է լինի կիրառման գործը քննող դատավորի կողմից, թե՛ ոչ:

Ավելին՝ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ 2010 (12) հանձնարարականում ևս նշվել է, որ դատական իշխանության հիերարխիան չպետք է խաթարի դատավորների անհատական անկախությունը<sup>103</sup>:

<sup>102</sup> Նկատի ունենալով, որ 30.06.2021 թվականին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի անցումային դրույթների ուժով որոշ դեպքերում դեռևս գործում է թե՛ 01.07.1998 թվականին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը և թե՛ 30.06.2021 թվականին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը, սույն թեմայի շրջանակում կվերլուծվեն երկու օրենսգրքերով նախատեսված կարգավորումները:

<sup>103</sup> Տես Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ 2010 (12) հանձնարարականը՝ դատավորների վերաբերյալ՝ անկախություն, արդյունավետություն և պարտականություններ, 17.11.2010 թվական, կետ 22:

Ամփոփելով վերոգրյալը՝ պետք է նշել, որ գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության, ինչպես նաև գործը միայն վիճարկվող նորմատիվ իրավական ակտի կիրառման միջոցով լուծելու հնարավորության հարցերի վերաբերյալ նախկին (փոխարինված) դատավորի սուբյեկտիվ ընկալման արդյունքում ձևավորված դիրքորոշման պարտադիրությունը գործն իր վարույթ ընդունած նոր (փոխարինված) դատավորի համար չհիմնավորված կերպով կսահմանափակի վերջինիս ներքին անկախությունը: Մասնավորապես՝ նախկինում գործը քննող (փոխարինված) դատավորի կողմից կայացված սուբյեկտիվ դիրքորոշման ուղղակի ազդեցությունը դատական գործի բնականոն ընթացքի վրա անխուսափելի կդարձնի գործն իր վարույթ ընդունած նոր (փոխարինված) դատավորի կողմից կաշկանդվածության դրսևորումը դատական գործի քննության ընթացքում կիրառման ենթակա իրավական նորմերի սուբյեկտիվ ընկալման, դրանց վերաբերյալ սուբյեկտիվ մեկնաբանության և ներքին համոզմունքի ձևավորման հարցում:

Վերոնշյալի համատեքստում հարկ է նշել, որ դատավորի փոխարինման դեպքում գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության և գործը միայն այդ նորմատիվ իրավական ակտի կիրառմամբ լուծելու հնարավորության հարցերի առնչությամբ առաջնային կարևորություն պետք է ունենա գործն իր վարույթ ընդունած նոր դատավորի վարքագիծը, մասնավորապես՝ նշված հարցերի կապակցությամբ վերջինիս սուբյեկտիվ մոտեցումն ու ձևավորված ներքին համոզմունքը:

Ընդ որում՝ նշված հարցերի կապակցությամբ գործն իր վարույթ ընդունած նոր դատավորի վարքագիծը պետք է դրսևորվի ակտիվ եղանակով: Ակտիվ վարքագծի դրսևորման դեպքում գործն իր վարույթ ընդունած նոր (փոխարինված) դատավորը պետք է Սահմանադրական դատարանի առջև բացահայտի գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի հակասահմանադրական լինելու հիմնավոր կասկածի, և գործը միայն այդ նորմատիվ իրավական ակտի կիրառմամբ լուծելու հնարավորության հարցերի վերաբերյալ իր սուբյեկտիվ ընկալման և ներքին համոզմունքի արդյունքում ձևավորված դիրքորոշումը: Այլ կերպ ասած՝ դատավորի փոխարինման դեպքում նախկինում գործը քննող դատավորի կողմից նշված հարցերի վերաբերյալ սուբյեկտիվ ընկալման արդյունքում ձևավորված դիրքորոշմանը համակարծիք լինելու և նույն համոզմունքն ունենալու պարագայում գործն իր վարույթ ընդունած նոր դատավորը պետք է ակտիվ վարքագիծ դրսևորելու միջոցով բացահայտի իր դիրքորոշումը:

Այնինչ, գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության, ինչպես նաև գործը միայն վիճարկվող նորմատիվ իրավական ակտի կիրառման միջոցով լուծելու հնարավորության հարցերի վերաբերյալ նախկին (փոխարինված) դատավորի սուբյեկտիվ դիրքորոշման առնչությամբ պասիվ վարքագծի դրսևորման պարագայում գործն իր վարույթ ընդունած նոր դատավորի «անգործությունը» պետք է դիտարկվի որպես անհամաձայնություն նշված հարցերի կապակցությամբ, ինչից էլ կհետևի, որ վերջինիս սուբյեկտիվ

ընկալման և ներքին համոզմունքի արդյունքում ձևավորված դիրքորոշումը տարբերվում է նախկինում գործը քննող և փոխարինված դատավորի՝ նշված հարցի վերաբերյալ դիրքորոշումից: Ընդ որում՝ Սահմանադրական դատարանում առնվազն մեկ անգամ առաջացել է այդ հարցը, և Սահմանադրական դատարանը լռելյայն հավանության է արժանացրել այն մոտեցումը, որ նոր դատավորը կաշկանդված է տվյալ գործի քննությունը նախկինում իրականացրած դատավորի՝ Սահմանադրական դատարան դիմելու մասին որոշմամբ,<sup>104</sup> ինչն էլ ավելի է ընդգծում այս հարցի գիտական հետաքրքրությունը:

Այդուհանդերձ, դատավորի փոխարինման դեպքում գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության և գործը միայն այդ նորմատիվ իրավական ակտի կիրառմամբ լուծելու հնարավորության հարցերի վերաբերյալ գործը քննող նախկին դատավորի կողմից Սահմանադրական դատարան ներկայացված դիմումի առնչությամբ գործն իր վարույթ ընդունած նոր դատավորը պետք է դրսևորի բացառապես ակտիվ վարքագիծ և բացահայտի իր սուբյեկտիվ դիրքորոշումը նշված հարցերի և Սահմանադրական դատարանի կողմից սահմանադրական արդարադատության գործիքակազմը կիրառելու անհրաժեշտության կապակցությամբ:

---

<sup>104</sup> Տե՛ս Սահմանադրական դատարանի՝ 26.03.2021 թվականի ՍԴՈ-1586 որոշումը և Սահմանադրական դատարանի դատավորի հատուկ կարծիքը:

## ԳԼՈՒԽ 5

### ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

#### 1. Նյութական և սոցիալական անկախության սահմանադրական և միջազգային իրավական հիմքերը

Սահմանադրության՝ «Դատավորի կարգավիճակը» վերտառությամբ 164-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արդարադատություն իրականացնելիս դատավորն անկախ է, անաչառ և գործում է միայն Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:

Սահմանադրական դատարանը, 2019 թվականի հունիսի 18-ի ՍԴՈ-1463 որոշմամբ Սահմանադրության 164-րդ հոդվածի 1-ին մասը դիտարկելով Սահմանադրության 1-ին և 4-րդ հոդվածների հետ համակցության մեջ, նշել է, որ «[այդ դրույթներն] առաջնահերթ ենթադրում են դատական իշխանությունը (արդարադատությունը) իրականացնող դատավորների գործառական, կառուցակարգային, նյութական և սոցիալական անկախության նորմատիվ այնպիսի կարգավորումների առկայություն, որոնք անհրաժեշտ և բավարար են արդարադատության իրականացման համար»:

Այսպիսով, դատավորների անկախությունն ապահովող երաշխիքների համակարգում առանցքային նշանակություն ունեն նրանց սոցիալական անկախության երաշխիքները, որոնք կոչված են, ի թիվս այլնի, կանխելու դատավորի վրա կողմնակի ազդեցության հնարավոր դրսևորումները: Քննարկող երաշխիքներին վերաբերող հիմնական դրույթներն ամրագրված են Սահմանադրությամբ, մասնավորապես՝ Սահմանադրության 164-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ դատավորի համար սահմանվում է նրա բարձր կարգավիճակին և պատասխանատվությանը համապատասխանող վարձատրություն: Դատավորի վարձատրության չափը սահմանվում է օրենքով:

Հարկ է նշել, որ դատավորների՝ նրանց բարձր կարգավիճակին և պատասխանատվությանը համապատասխանող վարձատրությունը, այդ թվում՝ կենսաթոշակը ոչ թե նրանց տրվող արտոնություն է, այլ նրանց անկախությունն ապահովող երաշխիք: Այն, լինելով հանրային, մասնավորապես՝ արդարադատության շահերի պաշտպանության միջոց, մասնավորապես, նպատակ է հետապնդում կանխելու դատավորների գործունեությանն արտաքին անհարկի միջամտության հնարավոր դեպքերը:

Սահմանադիրը, կարևորելով դատավորների սոցիալական անկախության երաշխիքների նշանակությունը, ոչ միայն նախատեսել է դատավորի վարձատրության չափն օրենքով սահմանելու պահանջ, այլև ամրագրել է, որ օրենսդիրը դատավորների վարձատրության հարցը կարգավորելիս պետք է առաջնորդվի սահմանվող վարձատրության՝ նրանց բարձր կարգավիճակին և պատաս-

խանատվությանը համապատասխանելու պահանջով: Ընդ որում՝ դատավորը միակ պաշտոնատար անձն է, որի վարձատրության վերաբերյալ չափորոշիչներ ուղղակիորեն ամրագրված են Սահմանադրությամբ: Ի տարբերություն դատավորի՝ այլ պաշտոնատար անձանց (Հանրապետության նախագահ (145-րդ հոդվածի 2-րդ մաս), պատգամավոր (97-րդ հոդված)) վարձատրությանը Սահմանադրությունն անդրադառնում է միայն դրա չափի սահմանումն օրենսդրին վերապահելու շրջանակում՝ առանց ուղղակիորեն ամրագրելու այն պահանջը, որը պետք է ընկած լինի համապատասխան օրենսդրական լուծումների հիմքում:

Սահմանադրական դատարանը, 2019 թվականի հունիսի 18-ի ՍԴՈ-1463 որոշմամբ անդրադառնալով Սահմանադրությամբ ամրագրված և դրանից բխող՝ դատավորների սոցիալական անկախության ապահովման հիմնարար պահանջներին, գտել է, որ՝

1) բացառապես դատավորի բարձր կարգավիճակով և պատասխանատվությամբ, այլ ոչ թե ընթացիկ քաղաքական, ներառյալ՝ սոսկ բյուջետային միջոցների խնայողության նկատառումներով պետք է պայմանավորված լինի դատավորի վարձատրության ցանկացած նորմատիվ կանոնակարգում, այդ թվում՝ վարձատրության և կենսաթոշակի չափերը, որոնք, իրենց հերթին, կոչված են, ի թիվս այլնի, զերծ պահել նրան կողմնակի ազդեցությունից, ինչը կանխորոշում է դատավորների բնականոն գործունեության համար առանձնահատուկ սոցիալական երաշխիքների ապահովման անհրաժեշտությունը,

(...)

2) դատավորների միջև վարձատրության (...) չափի տարբերակումը պետք է պայմանավորված լինի միայն օբյեկտիվ հանգամանքներով, մասնավորապես՝ պաշտոնավարման տևողությամբ, դատավորների կողմից իրականացվող լիազորությունների բնույթով, ծավալով, նրանց պատասխանատվության աստիճանով, (...)

3) թեև, ի տարբերություն դատավորի բարձր կարգավիճակի բոլոր մյուս երաշխիքները սահմանադրական օրենքներով սահմանելու սահմանադրական պահանջի (Սահմանադրության 164-րդ հոդվածի 11-րդ մաս), դատավորի վարձատրության, ներառյալ՝ կենսաթոշակի չափը, սահմանվում է սովորական օրենքով (Սահմանադրության 164-րդ հոդվածի 10-րդ մասի երկրորդ նախադասություն), այդուհանդերձ, այդ օրենքը ևս պետք է համարժեք նախադրյալներ ապահովի՝ դատավորի բարձր կարգավիճակին և նրա պատասխանատվությանը համապատասխանող վարձատրության (...) համար, ինչը չի կարող կախվածության մեջ դրվել Ազգային ժողովում և Կառավարությունում քաղաքական ուժերի սոսկ ընթացիկ հարաբերակցությունից և այդ մեծամասնության ընթացիկ ֆինանսական քաղաքականությունից,

(...):»:

Սահմանադրական դատարանը, նույն որոշմամբ անդրադառնալով դատավորներին տրամադրվող կենսաթոշակին և դրա չափին, նշել է, որ «(...)



պետք է հաշվի առնել, որ դատավորների բարձր կարգավիճակին և պատասխանատվությանը համապատասխանող կենսաթոշակը և դրա չափը, նրանց գործունեության վարձատրության հետ միաժամանակ, հնարավորություն են տալիս դատավորներին կանխատեսելիորեն ունենալու այնպիսի իրավաչափ սպասելիքներ, ինչպիսիք են.

- իրենց կյանքը և գործունեությունը կենսաթոշակի անցնելու կապակցությամբ պաշտոնավարումից հետո պլանավորելը,
- կենսաթոշակային տարիքը լրանալու հեռանկարով պաշտոնեական գործունեության շրջանակներում անհարկի ազդեցություններով կաշկանդված չլինելը:

Հետևաբար, Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատավորների կենսաթոշակի չափը պետք է ոչ միայն համարժեք լինի նրանց բարձր կարգավիճակին և պատասխանատվության աստիճանին, այլև ողջամիտ հարաբերակցության մեջ գտնվի նրանց պաշտոնավարման դադարմանը նախորդող վարձատրության չափի հետ այն հաշվով, որ դատավորի սոցիալական անկախության երաշխավորված մակարդակն էապես չնվազի նրա պաշտոնավարման դադարման հիմքով, առավել ևս չփոփոխվի՝ կախված սոսկ ընթացիկ քաղաքական գործոններից»:

Հարկ է նշել, որ դատավորների վարձատրությանը, այդ թվում կենսաթոշակին առնչվող հարցերը կարևորվում են նաև մի շարք միջազգային փաստաթղթերում:

Այսպես՝ Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի կողմից ընդունված Դատավորների Մագնա Կարտայի (հիմնարար սկզբունքներ) 7-րդ կետի համաձայն՝ անհարկի ազդեցությունից խուսափելու համար դատավորները պետք է ստանան ողջամիտ վարձատրություն:

Դատավորների միջազգային միության Կենտրոնական խորհրդի կողմից ընդունված Դատավորների համընդհանուր խարտիայի 8-րդ հոդվածի համաձայն՝ դատավորը պետք է ստանա բավականաչափ վարձատրություն, որ ապահովվի նրա իրական տնտեսական անկախությունը և դրա միջոցով՝ նրա բարձր կոչումը, անկողմնակալությունը և անկախությունը: Դատավորի վարձատրությունը չպետք է կախված լինի նրա կատարած աշխատանքի արդյունքներից կամ նրա կատարողականներից և չպետք է նվազեցվի նրա պաշտոնավարման ընթացքում:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի CM/Rec(2010)12 հանձնարարականի 54-րդ կետի համաձայն՝ դատավորների վարձատրությունը պետք է համարժեք լինի նրանց մասնագիտությանը և պարտականություններին և բավարար լինի նրանց որոշումների վրա ազդելուն ուղղված դրդումներից պաշտպանելու համար: Նման մոտեցում է արտահայտել նաև «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողով)

իր՝ 2010 թվականի մարտի 10-ի CDL-AD(2010)004 զեկույցում՝ 46-րդ կետում նշելով նաև, որ դատավորների համարժեք վարձատրությունն անհրաժեշտ է դատավորներին արտաքին անհարկի միջամտություններից պաշտպանելու համար: Վարձատրությունը պետք է հիմնված լինի ընդհանուր ստանդարտների, օբյեկտիվ և թափանցիկ չափանիշների վրա, ոչ թե որոշվի դատավորի անհատական կատարողականի գնահատման հիման վրա:

Եվրոպայի խորհրդի շրջանակներում ընդունված՝ «Դատավորի կարգավիճակի մասին» եվրոպական խարտիայի 6.2-րդ կետի համաձայն՝ վարձատրության չափը կարող է տարբերվել՝ կախված ծառայության տևողությունից, իրենց մասնագիտական կարողությունների շրջանակներում դատավորներին վերապահված պարտականությունների բնույթից և նրանց վերապահված առաջադրանքների կարևորությունից՝ գնահատված թափանցիկ պայմաններում:

Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի՝ «Դատավորների մասնագիտացման մասին» 2012 թվականի թիվ 15 կարծիքում նշված է. «56. ԵԴԽԽԻ-ի կարծիքով, պետք է պահովել, որ (...) ավագության նույն մակարդակի բոլոր դատավորները ստանան նույն վարձատրությունը՝ բացառությամբ հատուկ պարտականությունների համար տրամադրվող լրացուցիչ վարձատրության (...):

57. (...) Լրացուցիչ աշխատավարձը, այլ վճարներ կամ որոշակի վարձատրությունը (օրինակ՝ գիշերային հերթափոխի համար) կարող են արդարացված լինել, եթե առկա են որոշակի հիմքեր, որոնցից կարելի է եզրակացնել, որ նեղ մասնագիտացում ունեցող դատավորի մասնագիտության առանձնահատկությունը կամ նրա պարտականությունների բեռը (ներառյալ՝ անձնական բեռը, որը կարող է առաջ զավ մասնագիտացված գործառույթի իրականացման ընթացքում) պահանջում են նման փոխհատուցում»:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ Դատավորների անկախության, արդյունավետության և պատասխանատվության վերաբերյալ 2010 թվականի նոյեմբերի 17-ի թիվ Rec (2010)12 հանձնարարականի 54-րդ կետը սահմանում է, որ դատավորի կենսաթոշակը պետք է ողջամիտ հարաբերակցության մեջ գտնվի նրա ստացած աշխատավարձի հետ:

Եվրոպայի խորհրդի շրջանակներում 1998 թվականին ընդունված՝ «Դատավորների կարգավիճակի մասին» եվրոպական խարտիայի 6.4-րդ կետի համաձայն՝ օրենքով նախատեսված տարիքին հասնելուց հետո թոշակի անցած դատավորները պետք է ստանան այնպիսի կենսաթոշակ, որի չափը հնարավորինս մոտ է որպես դատավոր նրանց վերջին ստացած աշխատավարձի չափին: Միաժամանակ, «Դատավորների կարգավիճակի մասին» եվրոպական խարտիայի և դրան կից բացատրական զեկույցի 6.2-րդ կետի համաձայն՝ դատավորների վարձատրությունը միմյանց համեմատ կարող է տարբերվել՝ կախված պաշտոնավարման ժամկետից, դատավորների կողմից իրականացվող պարտականությունների բնույթից և նրանց առջև դրված խնդիրների կարևորությունից, որոնք պետք է գնահատվեն թափանցիկ պայմաններում:

Հիմք ընդունելով դատավորների վարձատրությանը վերաբերող սահմանադրական դրույթները, ինչպես նաև հաշվի առնելով վերը նշված միջազգային փաստաթղթերում ամրագրված հիմնական մոտեցումները՝ հարկ է արձանագրել, որ պաշտոնավարման ընթացքում դատավորների վարձատրության չափը, այդ թվում՝ պաշտոնավարման ավարտից հետո կենսաթոշակի չափը պետք է համարժեք լինեն նրանց բարձր կարգավիճակին և պատասխանատվությանը:

Իսկ թե որքանով է դատավորների վարձատրության չափը, այդ թվում՝ կենսաթոշակի չափը համապատասխանում սահմանադրի կողմից հռչակված չափորոշիչներին, թողնում ենք ընթերցողի գնահատմանը՝ միաժամանակ ստորև ներկայացնելով դատավորների վարձատրությանը, այդ թվում՝ կենսաթոշակին վերաբերող օրենսդրական զարգացումները: Բացի այդ, ինտերնետային հասանելի աղբյուրներից ևս կարելի է ձեռք բերել համապատասխան տեղեկատվություն և համեմատել այլ հանրային ծառայողների տարեկան վարձատրությունների չափը (օրինակ՝ նախարարներ, Գլխավոր դատախազության որոշ աշխատակիցներ, Հակակոռուպցիոն կոմիտեի որոշ աշխատակիցներ, Քննչական կոմիտեի որոշ աշխատակիցներ և այլն) դատավորների կողմից ստացված վարձատրության հետ:

## **2. Դատավորների աշխատավարձի հետ կապված զարգացումները ՀՀ օրենսդրության մեջ**

**Մինչև 01.07.2014 թվականը գործող օրենսդրությունը:** ՀՀ դատական օրենսգրքի<sup>105</sup> 01.01.2013 թվականից մինչև 01.07.2014 թվականը գործող խմբագրությամբ 75-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *դատավորի պաշտոնային դրույքաչափը սահմանվում է օրենքով, ընդ որում՝*

1) *վարչական դատարանի դատավորների պաշտոնային դրույքաչափերը գերազանցում են ընդհանուր իրավասության դատարանի դատավորի պաշտոնային դրույքաչափը 14.47 փոկոսով.*

2) *վերաքննիչ դատարանների դատավորների պաշտոնային դրույքաչափերը գերազանցում են ընդհանուր իրավասության դատարանի դատավորի պաշտոնային դրույքաչափը 28.94 փոկոսով.*

3) *վճռաբեկ դատարանի դատավորների պաշտոնային դրույքաչափերը գերազանցում են ընդհանուր իրավասության դատարանի դատավորի պաշտոնային դրույքաչափը 48.23 փոկոսով.*

4) *դատարանի նախագահը ստանում է դրամական հավելավճար՝ պաշտոնային դրույքաչափի 25 փոկոսի չափով, վճռաբեկ դատարանի պալատի նախագահը՝ պաշտոնային դրույքաչափի 15 փոկոսի չափով.*

5) *յուրաքանչյուր դատավորի վճարվում է հավելավճար՝ դատավորի պաշտոնում աշխատանքային սրաժի համար. առաջին 5 տարիների համար՝ յուրաքանչյուր տարի 2-ական փոկոսի (ընդամենը 10 փոկոս), իսկ 6-րդ և դրան*

<sup>105</sup> Ընդունվել է 21.02.2007 թվականին, ուժի մեջ է մտել 18.05.2007 թվականին, ուժը կորցրել է 09.04.2018 թվականին:

*հաջորդող յուրաքանչյուր տարվա համար՝ 5-ական տոկոսի չափով:*

«Հայաստանի Հանրապետության օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների պաշտոնային դրույքաչափերի մասին» ՀՀ օրենքի (ընդունվել է 26.12.2002 թվականին, ուժի մեջ է մտել 01.07.2003 թվականին, ուժը կորցրել է 01.07.2014 թվականին)՝ 01.01.2009 թվականից մինչև 01.07.2014 թվականը գործող խմբագրությամբ 9-րդ հոդվածի համաձայն՝ *Հայաստանի Հանրապետության ընդհանուր իրավասության դատարանի դատավորի պաշտոնային դրույքաչափը սահմանվում է յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի մասին օրենքի առանձին հոդվածով:*

«Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ կետի «բ» ենթակետում սահմանվել է, որ 2014 թվականի հունվարի 1-ից հունիսի 30-ը ընկած ժամանակահատվածի համար Հայաստանի Հանրապետության ընդհանուր իրավասության դատարանի դատավորի պաշտոնային դրույքաչափը կազմում է 478.405,0 դրամ:

**01.07.2014 թվականից հետո գործող օրենսդրությունը:** ՀՀ դատական օրենսգրքի՝ 01.07.2014 թվականից գործող խմբագրությամբ 75-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *դատավորի վարձատրության, այդ թվում՝ հիմնական և լրացուցիչ աշխատավարձերի հաշվարկների և չափերի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:*

07.02.2018 թվականին ընդունված և 09.04.2018 թվականին ուժի մեջ մտած «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրք» սահմանադրական օրենքի 57-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *դատավորի համար, Սահմանադրության 164-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն, սահմանվում է նրա բարձր կարգավիճակին և պատասխանատվությանը համապատասխանող վարձատրություն: Դատավորի վարձատրության, այդ թվում՝ հիմնական և լրացուցիչ աշխատավարձերի հաշվարկների և չափերի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են օրենքով:*

«Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի<sup>106</sup> 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *պետական պաշտոն (...) զբաղեցնող անձանց աշխատավարձը կազմված է նույն օրենքով սահմանված հիմնական աշխատավարձից, լրացուցիչ աշխատավարձից և պարգևատրումներից: Լրացուցիչ աշխատավարձը ներառում է հավելումները և հավելավճարները:*

<sup>106</sup> Ընդունվել է 12.12.2013 թվականին, ուժի մեջ է մտել 01.07.2014 թվականին: Օրենքի վերնագիրը մինչև 09.04.2018 թվականը եղել է «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին», սակայն 09.04.2018 թվականից ուժի մեջ մտած օրենսդրական փոփոխություններով օրենքի վերնագիրը դարձել է «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին»:

**Հիմնական աշխատավարձը:** «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *հիմնական աշխատավարձը (կամ պաշտոնային դրույքաչափը)*՝ բազային աշխատավարձի և գործակցի արտադրյալն է:

**Բազային աշխատավարձը:** «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ *բազային աշխատավարձը պետական պաշտոն զբաղեցնող անձանց հիմնական աշխատավարձի որոշման համար հիմք հանդիսացող միավորն է:*

Նույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *պետական պաշտոն (...) զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի չափը սահմանվում է յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի մասին Հայաստանի Հանրապետության օրենքով:*

Մինչև 2022 թվականը ներառյալ յուրաքանչյուր տարվա պետական բյուջեով բազային աշխատավարձի չափը կազմել է 66,140 ՀՀ դրամ: Իսկ 2023 թվականից սկսած՝ բազային աշխատավարձի չափը կազմում է 83,200 ՀՀ դրամ:

**Գործակիցը:** «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ *գործակիցը պետական պաշտոն զբաղեցնող անձանց հիմնական աշխատավարձի չափը որոշելու համար բազային աշխատավարձն այդ թվով բազմապատկելու համար սահմանված մեծությունն է:*

«Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *պետական պաշտոն (...) զբաղեցնող անձանց պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցները սահմանվում են սույն օրենքի 1-ին հավելվածով:*

«Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի թիվ 1 Հավելվածում սահմանված են հետևյալ գործակիցները.

Պաշտոնի անվանումը	Գործակիցը
Վճռաբեկ դատարանի նախագահ	15.00
Վճռաբեկ դատարանի պալատի նախագահ	12.00
Վերաքննիչ դատարանի նախագահ	11.50
Վճռաբեկ դատարանի դատավոր	11.50
Վարչական դատարանի նախագահ	11.00
Առաջին ատյանի դատարանի նախագահ	11.00
Վերաքննիչ դատարանի դատավոր	11.00
Վարչական դատարանի դատավոր	10.00
Առաջին ատյանի դատարանի դատավոր	10.00

**Լրացուցիչ աշխատավարձը:** «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ *լրացուցիչ աշխատավարձը աշխատավարձի փոփոխական մասն է, որը հաշվարկվում է պաշտոնային դրույքաչափի նկատմամբ (...)* և ներառում է՝ (ա) **հավելում (...)**, (բ) **հավելավճար (...)**:

**Հավելավճարը:** Դատավորներին տրվող հավելավճարի վերաբերյալ 01.07.2014 թվականից գործող օրենսդրությամբ սահմանվել են հետևյալ կարգավորումները.

«Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

«1. Դատավորի պաշտոնում աշխատանքային սրածի համար դատավորին վճարվում է հավելավճար՝ յուրաքանչյուր տարվա համար 2 տոկոսի չափով: (...)

3. Դատավորներին վճարվող հավելավճարի ընդհանուր չափը չի կարող գերազանցել սույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված չափը<sup>107</sup>:

4. Դատարանում դատավորների թվի կրճատման կամ օրենքով նախատեսված՝ դատարանի կամ վճռաբեկ դատարանի պալատի վերացման դեպքում դատավորին ստորադաս դատարանի դատավորի պաշտոնում նշանակելիս նրա նախկին պաշտոնում ստացած աշխատավարձը, այդ թվում՝ հավելավճարները, բացառությամբ սույն օրենքի 32-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված դեպքի, պահպանվում են մինչև օրենքով սահմանված կարգով փվյալ պաշտոնի համար նախատեսված աշխատավարձի չափի հավասարվելը նրա նախկին պաշտոնում ստացած աշխատավարձի չափին»:

<sup>107</sup> Հիմնական աշխատավարձի 30 տոկոսը:

**Հավելումը:** 01.07.2014թ. մինչև 29.10.2021թ. գործող օրենսդրությամբ դատավորներին տրվող աշխատավարձի մեջ որևէ հավելում նախատեսված չի եղել:

Ազգային ժողովը 14.04.2021թ. ընդունել է ««Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-337-Ն օրենքը, որն ուժի մեջ է մտել 29.10.2021թ.: Նշված օրենքով «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածը լրացվել է հետևյալ բովանդակությամբ 5-րդ և 6-րդ մասերով.

*«5. Հակակոռուպցիոն դատարանի դատավորին, գործունեության ոլորտով պայմանավորված ռիսկայնությունից ելնելով, սույն օրենքով սահմանված կարգով տրվում է հավելում՝ պաշտոնային դրույքաչափի 70 տոկոսի չափով:*

*6. Վերաքննիչ քրեական դատարանի կոռուպցիոն հանցագործությունների գործերը քննող առանձին դատավորներին և վերաքննիչ քաղաքացիական դատարանի քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցերով և «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա գույքի բռնագանձման հայցերով հարուցված քաղաքացիական գործեր քննող առանձին դատավորներին, գործունեության ոլորտով պայմանավորված ռիսկայնությունից ելնելով, սույն օրենքով սահմանված կարգով տրվում է հավելում՝ պաշտոնային դրույքաչափի 60 տոկոսի չափով:»:*

Փաստորեն, վերոգրյալ կարգավորումներով օրենսդիրը դատավորների վարձատրության հարցում դրսևորել էր տարբերակված մոտեցում: Ընդ որում՝ նման տարբերակումը դիտարկվում էր ինչպես հորիզոնական, այնպես էլ ուղղահայաց հարթություններում: Այսպես՝ հակակոռուպցիոն դատարանի դատավորների աշխատավարձն էապես տարբերվում էր առաջին ատյանի ընդհանուր իրավասության, վարչական և սնանկության դատարանների դատավորների աշխատավարձից, քանի որ հակակոռուպցիոն դատարանի դատավորների դեպքում աշխատավարձը ներառում էր նաև հավելում: Նույնը վերաբերում էր վերաքննիչ քրեական դատարանում և վերաքննիչ քաղաքացիական դատարանում առանձին տեսակի գործեր քննող դատավորներին և նույն դատարանների մյուս դատավորներին տրվող աշխատավարձին: Ընդ որում՝ դատական համակարգի միևնույն ատյանի դատարանների (վերաքննիչ դատարանների դեպքում՝ միևնույն դատարանի) դատավորների միջև վարձատրության առնչությամբ նման տարբերակված մոտեցման հիմքում օրենսդիրը դրել էր «գործունեության ոլորտով պայմանավորված ռիսկայնությունը»:

Մինչդեռ կարծում ենք, որ դատավորների միջև վարձատրության չափի տարբերակման հիմքում պետք է ընկած լինեն բացառապես օբյեկտիվ հանգամանքներ, որոնց գնահատումը պետք է հիմնվի թափանցիկ չափանիշների վրա:

Հարկ է ընդգծել, որ Հայաստանի Հանրապետությունում դատավորներն օժտված են միասնական իրավական կարգավիճակով, ինչը ենթադրում է, որ դատավորների իրավական կարգավիճակը բնորոշող հատկանիշները (այդ թվում՝ սոցիալական անկախության երաշխիքները) հավասարապես վերաբերելի են բոլոր դատավորներին: Հետևաբար, թափանցիկ չափանիշների հիման վրա գնահատվող օբյեկտիվ հանգամանքների բացակայության պայմաններում դատավորների համար վարձատրության տարբեր չափերի սահմանումը կհանգեցնի նրանց սոցիալական անկախության երաշխիքների հարցում կամայական տարբերակված մոտեցման՝ խաթարելով դատավորների իրավական կարգավիճակի միասնականությունը: Ավելին, այն կասկածի տակ կդնի բոլոր դատավորների անկախությունը, քանի որ անկողմնակալ դիտորդի մոտ ողջամտորեն կարող է համոզմունք ձևավորվել դատավորի անկախության բացակայության վերաբերյալ՝ պայմանավորված դատավորների վարձատրության չափերի էական տարբերությամբ: Մասնավորապես՝ մի կողմից, դատավորների միջև օբյեկտիվ հանգամանքներով չպայմանավորված վարձատրության չափի տարբերությունը կարող է նպաստել այն ողջամիտ համոզմունքի ձևավորմանը, որ նվազ վարձատրություն ստացող դատավորի սոցիալական երաշխիքները բավարար չեն վերջինիս անկախության ապահովման տեսանկյունից, մյուս կողմից՝ դատավորի՝ մյուս դատավորների համեմատությամբ արտոնյալ պայմաններով վարձատրությունը կարող է դիտարկվել որպես հանրային իշխանության մարմինների կողմից դատավորի գործունեությանը միջամտելու լծակ, ինչն իր հերթին կարող է հանգեցնել դատական իշխանության հեղինակության նկատմամբ հանրային վստահության նվազեցմանը:

Ավելին՝ Վենետիկի հանձնաժողովն իր զեկույցներից մեկում ընդգծել է, որ դատավորների վարձատրությունը պետք է սահմանվի օրենքով, լինի արժանապատիվ նրանց պաշտոնի համար, ինչպես նաև համապատասխանի նրանց պարտականությունների շրջանակին, իսկ ֆինանսական և ոչ ֆինանսական խրախուսանքները պետք է բացառվեն<sup>108</sup>:

Այսպիսով, դատավորների միջև վարձատրության չափի տարբերակումը կարող է հիմնավորվել միայն օբյեկտիվ հանգամանքներով, որպիսին չի կարող համարվել առանձին դատավորների մասնագիտացումը: Բացի այդ, ողջամտորեն հնարավոր չէ միանշանակ դատողություն կատարել այն մասին, որ հակակոռուպցիոն դատարանի իրավասությանը վերապահված գործերը պարունակում են ռիսկայնության ավելի բարձր աստիճան, քան առաջին ատյանի ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված մյուս դատարանների կողմից քննվող դատական գործերը: Այսպես՝ օրինակ, հակակոռուպցիոն դատարանին են ենթակա նաև քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցերով գործերը:

<sup>108</sup> Տե՛ս Վենետիկի հանձնաժողովի 2010 թվականի մարտի 16-ի CDL-AD(2010)004 կարծիքը (թիվ 494/2008), պարբերություն 51:



Փաստորեն, վկայակոչված օրենսդրական փոփոխությունները քաղաքացիական գործեր քննող դատավորներին վարձատրության տեսանկյունից բաժանում էր երկու խմբի. դատավորներ, որոնք քննելու են նաև պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցերով գործերը և ստանալու են հավելում՝ պաշտոնային դրույքաչափի 70 տոկոսի չափով, և դատավորներ, որոնք քննելու են մասնավոր անձանց գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանությանն առնչվող գործերը, սակայն չեն ունենալու վերը նշված հավելումը ստանալու իրավունք: Մինչդեռ պարզ չէ, թե ինչ հանգամանքներով պայմանավորված էր օրենսդիրը պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցերով գործերը համարել ավելի ռիսկային՝ մասնավոր անձանց գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանությանն առնչվող գործերի համեմատությամբ: Արդյունքում ստեղծվել էր իրավիճակ, երբ պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցերով քաղաքացիական գործեր քննող դատավորների համար սահմանվում էր ավելի բարձր վարձատրություն, քան միայն մասնավոր անձանց մասնակցությամբ նույնաբնույթ քաղաքացիական գործեր քննող դատավորների համար: Նման իրավիճակը ոչ միայն խաթարում էր դատավորների իրավական կարգավիճակի միասնականությունը, այլ նաև սույն աշխատությունում արտահայտված դիրքորոշումների համատեքստում ողջամիտ կասկածի տակ էր դնում ինչպես հակակոռուպցիոն համարվող գործեր քննող, այնպես էլ մյուս դատավորների անկախությունը:

Ավելին, վերոգրյալ կարգավորումների արդյունքում ստեղծվել էր իրավիճակ, երբ նույնիսկ միևնույն դատարանում (վերաքննիչ քրեական դատարան, ինչպես նաև վերաքննիչ քաղաքացիական դատարան) գործունեություն են իրականացնում տարբեր չափերի վարձատրություն ստացող դատավորներ, ընդ որում՝ նման տարբերակումը պայմանավորված չէր միայն այնպիսի օբյեկտիվ հանգամանքներով, ինչպիսիք են, օրինակ, պաշտոնավարման տևողությունը, նրանց կողմից իրականացվող լիազորությունների բնույթը, ծավալը, նրանց պատասխանատվության աստիճանը:

Ողջ վերոնշյալի հաշվառմամբ կարելի է փաստել, որ հակակոռուպցիոն դատարանի, վերաքննիչ քրեական դատարանի կոռուպցիոն հանցագործությունների գործերը քննող առանձին դատավորների և վերաքննիչ քաղաքացիական դատարանի քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցերով և «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա գույքի բռնագանձման հայցերով հարուցված քաղաքացիական գործեր քննող առանձին դատավորների վարձատրության (հավելման չափի) առումով տարբերակված մոտեցման հիմքում ընկած չեն եղել թափանցիկ չափանիշների հիման վրա գնահատված օբյեկտիվ հանգամանքներ: Հայաստանի Հանրապետության բոլոր դատավորների գործունեությունը ենթադրում է որոշակի ռիսկայնություն, ուստի նրանց գործունեության ոլորտները ռիսկային կամ ավելի ռիսկային որակելու, և դրա-

նով պայմանավորված՝ միմյանցից էապես տարբերվող վարձատրություն սահմանելու հետևանքով դատավորների համար ապահովվում են սոցիալական անկախության երաշխիքների տարբեր մակարդակներ, ինչը հակասում է դատավորների իրավական կարգավիճակի միասնականությունը:

Բացի այդ, դատավորների վարձատրության չափերի տարբերությունը, թափանցիկ չափանիշների հիման վրա գնահատված օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված չլինելու դեպքում, կարող է ընկալվել որպես պրոֆեսիոնալության չափանիշով դատավորների դասակարգման դրսևորում:

Ազգային ժողովը 09.06.2022թ. ընդունել է ««Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» թիվ ՀՕ-264-Ն օրենքը, որն ուժի մեջ է մտել 10.07.2022թ.: Նշված օրենքով «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածը լրացվել է հետևյալ բովանդակությամբ 7-րդ մասով.

*«7. Վճարել դատարանի դատավորներին (այդ թվում՝ վճարել դատարանի նախագահին և վճարել դատարանի պալատի նախագահին) սույն օրենքով սահմանված կարգով տրվում է հավելում՝ պաշտոնային դրույքաչափի 50 տոկոսի չափով»:*

Փաստորեն, 10.07.2022թ. գործող օրենսդրության համաձայն՝ Վճարել դատարանի բոլոր դատավորների լրացուցիչ աշխատավարձն ավելանում է նրանց պաշտոնային դրույքաչափի 50 տոկոսի չափով:

Ազգային ժողովը 08.12.2022թ. ընդունել է ««Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-514-Ն օրենքը, որն ուժի մեջ է մտել 01.01.2023թ.: Նշված օրենքով «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածում կատարվել են հետևյալ փոփոխությունները.

- 1) 5-րդ մասի «70» թիվը փոխարինել «60» թվով.
- 2) 6-րդ մասի «60» թիվը փոխարինել «55» թվով:

Փաստորեն, 01.01.2023թ. գործող օրենսդրության համաձայն՝ Հակակոռուպցիոն դատարանի դատավորին տրվող հավելման չափը նվազեցվել է՝ պաշտոնային դրույքաչափի 70 տոկոսի փոխարեն դառնալով պաշտոնային դրույքաչափի 60 տոկոսի չափով: Նույնը տեղի է ունեցել նաև Վերաքննիչ քրեական դատարանի կոռուպցիոն հանցագործությունների գործերը քննող առանձին դատավորներին և վերաքննիչ քաղաքացիական դատարանի քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցերով և «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա գույքի բռնագանձման հայցերով հարուց-

ված քաղաքացիական գործեր քննող առանձին դատավորներին տրվող հավելման հետ՝ պաշտոնային դրույքաչափի 60 տոկոսի փոխարեն դառնալով պաշտոնային դրույքաչափի 55 տոկոսի չափով:

Այնուհետև՝ Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի ստեղծումից հետո, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ մասում «Վերաքննիչ քրեական դատարանի կոռուպցիոն հանցագործությունների գործերը քննող առանձին դատավորներին և վերաքննիչ քաղաքացիական դատարանի քաղաքացիական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցերով և «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի հիման վրա գույքի բռնագանձման հայցերով հարուցված քաղաքացիական գործեր քննող առանձին» բառերը փոխարինվել են «Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի» բառերով: Նշված օրենսդրական փոփոխությունը կատարվել է 23.12.2022թ. ընդունված և 15.06.2023թ. ուժի մեջ մտած «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» թիվ ՀՕ-579-Ն օրենքով:

Ազգային ժողովը 25.10.2023թ. ընդունել է ««Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-342-Ն օրենքը, որն ուժի մեջ է մտել 01.01.2024թ.: Նշված օրենքով «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածը լրացվել է հետևյալ բովանդակությամբ 5.1-րդ և 6.1-րդ մասերով.

«5.1. Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի, սնանկության դատարանի և վարչական դատարանի դատավորներին սույն օրենքով սահմանված կարգով տրվում է հավելում՝ պաշտոնային դրույքաչափի 60 տոկոսի չափով:

6.1. Վերաքննիչ քրեական դատարանի, վերաքննիչ քաղաքացիական դատարանի, վերաքննիչ վարչական դատարանի դատավորներին սույն օրենքով սահմանված կարգով տրվում է հավելում՝ պաշտոնային դրույքաչափի 55 տոկոսի չափով»:

Նշված օրենսդրական փոփոխություններով վերջ է դրվել դատավորների վարձատրության հարցում ««Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-337-Ն օրենքի ուժով 29.10.2021թ. առաջացած տարբերակված մոտեցմանը: 01.01.2024թ. գործող օրենսդրության համաձայն՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի, սնանկության դատարանի և վարչական դատարանի դատավորները ստանում են նույնքան հավելում, որքան ստանում է Հակակոռուպցիոն դատարանի դատավորը: Իսկ վերաքննիչ քրեական դատարանի, վերաքննիչ քաղաքացիական

դատարանի, վերաքննիչ վարչական դատարանի դատավորները ստանում են նույնքան հավելում, որքան ստանում է վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի դատավորը:

Այսպիսով, դատավորների վարձատրության հարցում օրենսդրի կողմից դրսևորված տարբերակված մոտեցումը գոյություն է ունեցել 29.10.2021թ. մինչև 01.01.2024թ.:

### **3. Դատավորների կենսաթոշակի հետ կապված զարգացումները ՀՀ օրենսդրության մեջ**

1. 12.01.1999թ. մինչև 01.07.2004թ. ընկած ժամանակահատվածի համար դատավորի կենսաթոշակը «Դատավորի կարգավիճակի մասին» 17.06.1998թ. ՀՀ օրենքի ուժով կազմում էր վերջին զբաղեցրած պաշտոնի համար նախատեսված աշխատավարձի 75 տոկոսը:

*Այսինքն՝ Կենսաթոշակ = Աշխատավարձ x 75%:*

2. 01.07.2004թ. մինչև 18.05.2007թ. ընկած ժամանակահատվածի համար դատավորի կենսաթոշակը «Դատավորի կարգավիճակի մասին» 17.06.1998թ. ՀՀ օրենքում կատարված փոփոխությունների ուժով հաշվարկվում էր «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով սահմանված չափով: Ընդ որում՝ այդ ժամանակահատվածում կենսաթոշակի իրավունք ունեցող 10 և ավելի տարի աշխատած դատավորների համար սահմանվում էր ամենամսյա հավելավճար՝ որպես դատավոր զբաղեցրած վերջին պաշտոնի համար սահմանված պաշտոնային դրույքաչափի 75 տոկոսի և «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով նշանակված պետական կենսաթոշակի տարբերության չափով: Փաստորեն, 01.07.2004թ. մինչև 18.05.2007թ. ընկած ժամանակահատվածում 10 և ավելի տարի աշխատած դատավորի կենսաթոշակային ապահովումը (պետական կենսաթոշակի և հավելավճարի հանրագումարը) կազմում էր այդ դատավորի զբաղեցրած վերջին պաշտոնի համար սահմանված պաշտոնային դրույքաչափի 75 տոկոսը:

*Այսինքն՝ Կենսաթոշակային ապահովում = Պետական կենսաթոշակ + հավելավճար, իսկ Հավելավճար = Պաշտոնային դրույքաչափ x 75% - Պետական կենսաթոշակ, արդյունքում՝ Կենսաթոշակային ապահովում = Պաշտոնային դրույքաչափ x 75%:*

3. «Դատավորի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքն ուժը կորցրած է ճանաչվել 18.05.2007թ.՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրքն ուժի մեջ մտնելու մասին» 22.02.2007թ. ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին կետի ուժով: Ընդ որում՝ մինչև 26.06.2008թ. թե՛ նշված օրենքով և թե՛ 18.05.2007թ. ուժի մեջ մտած ՀՀ դատական օրենսգրքով դատավորի կենսաթոշակային ապահովության չափի վերաբերյալ որևէ կարգավորում չի սկզբանե

նախատեսված չի եղել: Նշված հարցի կապակցությամբ կարգավորումը սահմանվել է «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրքն ուժի մեջ մտնելու մասին» ՀՀ օրենքում կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում, որոնք ուժի մեջ են մտել 26.06.2008թ.:

4. 26.06.2008թ. մինչև 20.11.2010թ. ընկած ժամանակահատվածի համար 10 և ավելի տարի աշխատած դատավորի պետական կենսաթոշակի նկատմամբ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրքն ուժի մեջ մտնելու մասին» 22.02.2007թ. ՀՀ օրենքի ուժով սահմանվում էր ամենամսյա հավելավճար՝ որպես դատավոր զբաղեցրած վերջին պաշտոնի համար ստացած աշխատավարձի 75 տոկոսի և պետական կենսաթոշակի տարբերության չափով: Փաստորեն, 26.06.2008թ. մինչև 20.11.2010 թվականն ընկած ժամանակահատվածում 10 և ավելի տարի աշխատած դատավորի կենսաթոշակային ապահովումը (պետական կենսաթոշակի և հավելավճարի հանրագումարը) կազմում էր այդ դատավորի զբաղեցրած վերջին պաշտոնի համար ստացած աշխատավարձի 75 տոկոսը:

Այսինքն՝ *Կենսաթոշակային ապահովում = Պետական կենսաթոշակ + Հավելավճար, իսկ Հավելավճար = Աշխատավարձ x 75% - Պետական կենսաթոշակ, արդյունքում՝ Կենսաթոշակային ապահովում = Աշխատավարձ x 75%:*

5. 20.11.2010թ. մինչև 01.01.2013թ. ընկած ժամանակահատվածի համար կենսաթոշակի իրավունք ունեցող 10 և ավելի տարի աշխատած դատավորի՝ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով նշանակված տարիքային կենսաթոշակի նկատմամբ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրքն ուժի մեջ մտնելու մասին» 22.02.2007թ. ՀՀ օրենքում կատարված փոփոխությունների ուժով սահմանվում էր ամենամսյա հավելավճար նրա՝ վերջին 1 տարվա ընթացքում որպես դատավոր զբաղեցրած պաշտոնի համար ստացած միջին աշխատավարձի 55 տոկոսի և պետական կենսաթոշակի տարբերության չափով: Ընդ որում՝ պետական կենսաթոշակի և հավելավճարի հանրագումարի չափը չէր կարող գերազանցել որպես դատավոր զբաղեցրած վերջին պաշտոնի համար պաշտոնային դրույքաչափի 100 տոկոսը: Փաստորեն 20.11.2010թ. մինչև 01.01.2013թ. ընկած ժամանակահատվածում 10 և ավելի տարի աշխատած դատավորի կենսաթոշակային ապահովումը (պետական կենսաթոշակի և հավելավճարի հանրագումարը) կազմում էր այդ դատավորի վերջին 1 տարվա ընթացքում որպես դատավոր զբաղեցրած պաշտոնի համար ստացած միջին աշխատավարձի 55 տոկոսը և չէր կարող գերազանցել պաշտոնային դրույքաչափի 100 տոկոսը:

Այսինքն՝ *Կենսաթոշակային ապահովում = Պետական կենսաթոշակ + Հավելավճար, իսկ Հավելավճար = Աշխատավարձ x 55% - Պետական կենսա-*

թոշակ, արդյունքում՝ **Կենսաթոշակային ապահովում = Աշխատավարձ x 55%, որը չի կարող գերազանցել Պաշտոնային դրույքաչափը:**

6. 01.01.2013թ. մինչև 01.07.2014թ. ընկած ժամանակահատվածի համար կենսաթոշակի իրավունք ունեցող առնվազն 10 տարի պաշտոնավարած դատավորի կենսաթոշակի չափը Հայաստանի Հանրապետության 21.02.2007թ. դատական օրենսգրքի ուժով կազմում էր վերջին 1 տարվա ընթացքում որպես դատավոր զբաղեցրած պաշտոնի համար ստացած միջին աշխատավարձի ընդհանուր գումարի ու 0.9 գործակցի արտադրյալի 55 տոկոսը և չէր կարող գերազանցել որպես դատավոր զբաղեցրած վերջին պաշտոնի համար պաշտոնային դրույքաչափի 92 տոկոսը: Այսինքն՝ **Կենսաթոշակ = Աշխատավարձ x 0.9 x 55%, արդյունքում՝ Կենսաթոշակ = Աշխատավարձ x 49.5%, որը չի կարող գերազանցել Պաշտոնային դրույքաչափի 92%-ը:**

7. Մինևույն ժամանակ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրքն ուժի մեջ մտնելու մասին» ՀՀ օրենքում 20.11.2010թ. ուժի մեջ մտած օրենսդրական փոփոխություններով սահմանվել է դատավորի կենսաթոշակի վերահաշվարկման (ավելացման) հնարավորություն՝ որպես դատավոր զբաղեցրած վերջին պաշտոնի համար սահմանված պաշտոնային դրույքաչափը բարձրանալու դեպքում: Այսինքն՝ 20.11.2010թ. դատավորի կենսաթոշակի չափը պայմանավորվեց որպես դատավոր զբաղեցրած վերջին պաշտոնի համար սահմանված պաշտոնային դրույքաչափով՝ հնարավորություն ընձեռելով պաշտոնային դրույքաչափի բարձրացման դեպքում համամասնորեն բարձրացնել նաև արդեն կենսաթոշակի անցած դատավորի կենսաթոշակի չափը: Ընդ որում՝ նշված իրավակարգավորումը հետագայում սահմանվեց նաև Հայաստանի Հանրապետության 21.02.2007թ. դատական օրենսգրքի 75.1-ին հոդվածի 3-րդ մասում, որը գործել է մինչև 01.07.2014թ.: Այսպիսով, 20.11.2010թ. մինչև 01.07.2014թ. ընկած ժամանակահատվածում գործող օրենսդրությունը նախատեսել է դատավորի կենսաթոշակի վերահաշվարկման (ավելացման) հնարավորություն՝ որպես դատավոր զբաղեցրած վերջին պաշտոնի համար սահմանված պաշտոնային դրույքաչափին համամասնորեն:

8. 01.07.2014թ. ուժի մեջ մտած և մինչև 09.04.2018թ. խմբագրությամբ գործող «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքը սահմանում է, որ նույն օրենքով սահմանված կենսաթոշակի իրավունք ունի դատավորի պաշտոնում առնվազն 10 տարի պաշտոնավարած անձը, որը հաշվարկվում է նույն օրենքի 5-րդ հոդվածում սահմանված հետևյալ բանաձևով.  $Կ = Հ * Գ + ՄՄ * ՄՄԱ$ , որտեղ՝ Կ-ն կենսաթոշակի ամսական գումարն է, Հ-ն՝ սույն օրենքով սահմանված կենսաթոշակի չափը հաշվարկելու համար հիմք ընդունվող հիմնական կենսաթոշակի չափը (այսուհետ՝ հիմնական կենսաթոշակ), Գ-ն՝ «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վար-

ծատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով անձի զբաղեցրած պաշտոնների համար սահմանված առավելագույն գործակիցը (այսուհետ՝ գործակից), ՄՍ-ն՝ մասնագիտական ստաժը, ՄՍԱ-ն՝ մասնագիտական ստաժի մեկ տարվա արժեքը: Մինևույն ժամանակ օրենսդիրը «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածում կարգավորել է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ առնվազն 10 տարի դատավորի պաշտոնում պաշտոնավարած անձի կենսաթոշակի իրավունքի հետ կապված հարցերը:

9. Սահմանադրական դատարանը, 16.09.2016թ. թիվ ՍԴՈ-1302 որոշմամբ անդրադառնալով «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի՝ գործող խմբագրությամբ 9-րդ հոդվածի 6-րդ մասի սահմանադրականության հարցին, արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ներկայացված հաշվարկները վկայում են, որ ընդհանուր իրավասության առաջին ատյանի, ՀՀ վերաքննիչ ու ՀՀ վճռաբեկ, ինչպես նաև վարչական դատարանների դատավորների համար, ովքեր 2014թ. հուլիսի 1-ի դրությամբ 10-ից ավելի տարի ստաժ ունեն, կախված այդ պաշտոնում աշխատանքային ստաժի տևողությունից նախկին և ներկա աշխատավարձերի հիմքով կենսաթոշակն հաշվարկելիս սոցիալական ապահովության երաշխիքների ոչ համաչափ տարբերակում է առաջանում: Նման իրավիճակը պետք է հաղթահարվի, մասնավորապես՝ «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասում՝ նկատի ունենալով, որ այն անձանց համար, որոնք սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ առնվազն 10 տարի պաշտոնավարել են դատավորի պաշտոնում, կենսաթոշակի չափը հաշվարկելիս հաշվարկային հիմք է ընդունվում մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը որպես դատավոր զբաղեցրած վերջին պաշտոնի համար ստացած աշխատավարձը՝ եթե այն ավելի մեծ է, քան «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքով սահմանված աշխատավարձի հիմքով հաշվարկված կենսաթոշակի չափը: Ընդ որում՝ ակնհայտ է, որ «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի՝ «սույն օրենքի» արտահայտությունը վերաբերում է հենց այդ օրենքին (...):»:

10. Վերոգրյալ իրավական նորմերի և Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների համակարգային վերլուծության արդյունքում կարելի է հանգել այն եզրակացության, որ կենսաթոշակի հաշվարկման համար կարող է հիմք ընդունվել ինչպես տվյալ անձի՝ մինչև «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելը որպես դատավոր զբաղեցրած վերջին պաշտոնի համար ստացած աշ-

խատավարձը, այնպես էլ դատավորի լիազորությունների դադարման պահին նախորդող ամսվա համար «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով վերջինիս ստացած աշխատավարձը: Տվյալ տարբերակված մոտեցման հիմքը աշխատավարձերի մեծությունն է. կենսաթոշակի հաշվարկման հիմք է ընդունվում «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելուց առաջ կամ հետո տվյալ անձի ստացած այն աշխատավարձը, որն իր չափերով ավելի մեծ է: Հաշվի առնելով վերոգրյալը՝ կարելի է փաստել, որ մինչև 31.03.2018թ. գործող խմբագրությամբ «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ այդ օրենքի ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ առնվազն 10 տարի դատավորի պաշտոնում պաշտոնավարած անձանց կենսաթոշակը ենթակա է հաշվարկման՝ հիմք ընդունելով տվյալ դատավորի՝ մինչև 01.07.2014թ. ստացած կամ դրանից հետո ստացած այն աշխատավարձը, որն ավելի բարձր է:

11. 01.07.2014թ. մինչև 01.01.2015թ. ընկած ժամանակահատվածի համար «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասում օրենսդիրը սահմանել է, որ նույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ առնվազն 10 տարի դատավորի պաշտոնում պաշտոնավարած անձի կենսաթոշակի չափը կազմում է որպես դատավոր զբաղեցրած վերջին պաշտոնի համար ստացած աշխատավարձի (պաշտոնային դրույքաչափի և դրա նկատմամբ սահմանված հավելավճարի հանրագումարի) գումարի և զրո ամբողջ ինը տասնորդական գործակցի արտադրյալի 55 տոկոսի չափով: Ընդ որում, եթե նշված կարգով հաշվարկված կենսաթոշակի չափը ցածր է նույն օրենքի 5-րդ հոդվածով սահմանված ընդհանուր կարգով հաշվարկվող կենսաթոշակի չափից, ապա կենսաթոշակը նշանակվում է նույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով: *Այսինքն՝ Կենսաթոշակ = Ավելի բարձր աշխատավարձ x 0.9 x 55%, արդյունքում՝ Կենսաթոշակ = Ավելի բարձր աշխատավարձ x 49.5%:*

12. 01.01.2015թ. մինչև 31.03.2018թ. ընկած ժամանակահատվածի համար «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասում առկա իրավակարգավորումն, ըստ էության, փոփոխվել է միայն այն առումով, որ նշված օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասը լրացվել է այն կանոնով, որի համաձայն՝ «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով հաշվարկված կենսաթոշակի չափը չի կարող գերազանցել մինչև նույն օրենքի ուժի մեջ մտնելը որպես դատավոր զբաղեցրած վերջին պաշտոնի համար սահմանված պաշտոնային դրույքաչափի 92 տոկոսը: *Այսինքն՝ Կենսաթոշակ = Ավելի բարձր աշխատավարձ x 0.9 x*



55%, որը չի կարող գերազանցել Պաշտոնային դրույքաչափի 92%-ը, արդյունքում՝ **Կենսաթոշակ = Ավելի բարձր աշխատավարձ x 49.5%, որը չի կարող գերազանցել Պաշտոնային դրույքաչափի 92%-ը:**

13. 07.02.2018թ. ընդունված և 09.04.2018թ. ուժի մեջ մտած «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքը դատավորի կենսաթոշակի հաշվարկման կարգի և չափի վերաբերյալ որևէ իրավակարգավորում չի սահմանում: Նշված սահմանադրական օրենքի 57-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված է, որ դատավորն ունի իր 65 տարին լրանալու, ինչպես նաև օրենքով սահմանված այլ դեպքերում և կարգով կենսաթոշակ ստանալու իրավունք: Դատավորի կենսաթոշակ ստանալու իրավունքը չի կարող դադարեցվել այլ աշխատանք կատարելու դեպքում, բացառությամբ հանրային ծառայության անցնելու դեպքերի: Իսկ 2-րդ մասում ամրագրված է, որ դատավորի աշխատավարձը և դրա նկատմամբ սահմանված հավելավճարները, կենսաթոշակի չափը չեն կարող պակասեցվել, բացառությամբ այն դեպքերի, երբ համարժեք պակասեցում կատարվում է բոլոր բարձրաստիճան պաշտոնատար անձանց համար: Փաստորեն, դատավորի կենսաթոշակի հաշվարկման կարգի և չափի հետ կապված հարաբերությունները ՀՀ նոր դատական օրենսգրքի ուժի մեջ մտնելու պայմաններում ևս կարգավորվում են «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի համապատասխան դրույթներով:

14. 31.03.2018թ. մինչև 01.06.2019թ. ընկած ժամանակահատվածում 01.07.2014թ. դրությամբ առնվազն 10 տարի դատավորի պաշտոնում պաշտոնավարած և կենսաթոշակի իրավունք ունեցող անձանց համար կենսաթոշակի հաշվարկը կատարվում է 07.03.2018թ. ընդունված և 31.03.2018թ. ուժի մեջ մտած ««Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-143-Ն ՀՀ օրենքով<sup>109</sup> կատարված օրենսդրական փոփոխություններին համապատասխան:

31.03.2018 թվականին ուժի մեջ մտած նշված օրենսդրական փոփոխությունների արդյունքում օրենսդիրը վերացրել է «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասում առկա այն անհստակությունը, որի վերաբերյալ Սահմանադրական դատարանի 16.09.2016թ. թիվ ՍԴՈ-1302 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների ուժով հնարավոր էր դատավորի կենսաթո-

<sup>109</sup> Նշված օրենքով 09.04.2018թ. «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը վերանվանվում է «Պաշտոնատար անձանց գործունեության սպասողման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենք:

շակը հաշվարկելիս հիմք ընդունել տվյալ դատավորի՝ մինչև 01.07.2014թ. ստացած կամ դրանից հետո ստացած այն աշխատավարձը, որն ավելի բարձր է: Փոխարենը, օրենսդիրը 07.03.2018թ. ընդունված և 31.03.2018թ. ուժի մեջ մտած «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-143-Ն ՀՀ օրենքով սահմանել է հստակ կանոն, որի համաձայն՝ դատավորի կենսաթոշակը հաշվարկելիս հիմք է ընդունվում վերջինիս՝ մինչև 01.07.2014թ. գործող օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված աշխատավարձը: Այսինքն՝ 31.03.2018թ. ուժի մեջ մտած օրենսդրական փոփոխությունների արդյունքում 01.07.2014թ. դրությամբ առնվազն 10 տարի դատավորի պաշտոնում պաշտոնավարած անձանց կենսաթոշակը հաշվարկվում է նախկինում գործող վերը նկարագրված նույն բանաձևի միջոցով՝ միայն այն տարբերությամբ, որ կենսաթոշակի հաշվարկման համար կարող է հիմք ընդունվել բացառապես տվյալ դատավորի՝ մինչև 01.07.2014թ. գործող օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված աշխատավարձը: *Այսինքն՝ Կենսաթոշակ = Մինչև 01.07.2014թ. ստացած աշխատավարձ x 0.9 x 55%, որը չի կարող գերազանցել Պաշտոնային դրույքաչափի 92%-ը, արդյունքում՝ Կենսաթոշակ = Մինչև 01.07.2014 թվականը ստացած աշխատավարձ x 49.5%, որը չի կարող գերազանցել Պաշտոնային դրույքաչափի 92%-ը:*

15. Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ իրավունքի գերակայությունից բխող՝ իրավական որոշակիության, օրինաչափ ակնկալիքների, օրենքի հետադարձ ուժի արգելքի, սեփականության իրավունքի պաշտպանության սկզբունքներից, ինչպես նաև կենսաթոշակային ապահովման բնագավառում Սահմանադրական դատարանի և Վճռաբեկ դատարանի արտահայտած կայուն իրավական դիրքորոշումներից բխում է, որ նշված օրենսդրական փոփոխությունը կարող է տարածվել միայն այն դատավորների վրա, ում կենսաթոշակի իրավունքը ծագել է «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-143-Ն ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելուց հետո, այսինքն՝ 31.03.2018թ.: Այն դատավորների կենսաթոշակը, ում կենսաթոշակի իրավունքը «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի ուժով ծագել է մինչև 31.03.2018թ., պետք է հաշվարկվի «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 31.03.2018թ. գործող խմբագրությամբ 9-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով՝ հաշվի առնելով դրա վերաբերյալ Սահմանադրական դատարանի 16.09.2016թ. թիվ ՍԴՈ-1302 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները: Այլ կերպ ասած՝ «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սո-

ցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-143-Ն ՀՀ օրենքով սահմանված փոփոխությունները չեն կարող ազդել այն դատավորների կենսաթոշակի հաշվարկման վրա, ում կենսաթոշակի իրավունքը «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի ուժով ծագել է մինչև 31.03.2018թ.:

16. Միևնույն ժամանակ օրենսդիրը ««Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-143-Ն ՀՀ օրենքով «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածը լրացրել է 7-րդ մասով, որը սահմանում է դրույթ հետևյալ բովանդակությամբ.

«(...)

2) լրացնել հետևյալ բովանդակության 7-10-րդ մասերով.

«7. 2014 թվականի հուլիսի 1-ից հետո դատավորի պաշտոն զբաղեցրած անձին մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը նշանակված կենսաթոշակը վերահաշվարկվում է 2018 թվականի մարտի 1-ից Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով՝ հաշվի առնելով որպես դատավոր զբաղեցրած վերջին պաշտոնի համար մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը գործող օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված աշխատավարձը (պաշտոնային դրույթաչափի և դրա նկատմամբ սահմանված հավելավճարի հանրագումարը):

(...):»:

Նշված իրավադրույթի միջոցով օրենսդրի կողմից հետապնդվող նպատակն այն է, որ «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» օրենքի՝ մինչև 31.03.2018թ. գործող խմբագրությամբ 9-րդ հոդվածի 6-րդ մասի ուժով դատավորների նկատմամբ նշանակված կենսաթոշակները վերահաշվարկվեն և համապատասխանեցվեն «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի՝ 31.03.2018թ. գործող խմբագրությամբ 9-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին: Այսինքն՝ օրենսդրի կամքը, հավանաբար, ուղղված է եղել այն նպատակին, որ «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 31.03.2018թ. գործող խմբագրությամբ 9-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ոչ հստակ իրավակարգավորումների և դրանց վերաբերյալ Սահմանադրական դատարանի 16.09.2016թ. թիվ ՍԴՈ-1302 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների կիրառմամբ նշանակված կենսաթոշակների չափը 01.03.2018թ. համապատասխանեցվի «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի՝ 31.03.2018թ. գործող խմբագրությամբ 9-րդ հոդվածի 6-րդ

մասի այն պահանջին, որի համաձայն՝ դատավորի կենսաթոշակը հաշվարկելիս հիմք է ընդունվում վերջինիս՝ մինչև 01.07.2014թ. գործող օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված աշխատավարձը:

17. Մինչդեռ «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի՝ 31.03.2018թ. գործող խմբագրությամբ 9-րդ հոդվածի 7-րդ մասում առկա ձևակերպումների պատճառով այդ նպատակի իրականացումը չի կարող տեղի ունենալ, քանի որ հնարավոր չէ կիրառել օրենքի նշված դրույթով սահմանված իրավանորմը: Բանն այն է, որ «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի՝ 31.03.2018թ. գործող խմբագրությամբ 9-րդ հոդվածի 7-րդ մասը նախատեսում է, որ վերահաշվարկման է ենթակա 01.07.2014թ. հետո դատավորի պաշտոն զբաղեցրած անձին **մինչև նույն օրենքն ուժի մեջ մտնելը** նշանակված կենսաթոշակը: Ընդ որում՝ «նույն օրենք» արտահայտությունը վերաբերում է ոչ թե ««Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-143-Ն ՀՀ օրենքին, որն ուժի մեջ է մտել 31.03.2018 թվականին, այլ «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքին, որն ուժի մեջ է մտել 01.07.2014 թվականին: Ստացվում է, որ «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի՝ 31.03.2018թ. գործող խմբագրությամբ 9-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ վերահաշվարկման է ենթակա 01.07.2014թ. հետո դատավորի պաշտոն զբաղեցրած անձին մինչև 01.07.2014թ. նշանակված կենսաթոշակը: Մինչդեռ նշված ձևակերպումն անտրամաբանական է և չի կարող որևէ կիրառություն ունենալ, քանի որ «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքն առհասարակ չի վերաբերում այն դատավորներին, ովքեր թոշակի են անցել մինչև 01.07.2014թ., և չի կարող լինել 01.07.2014թ. հետո դատավորի պաշտոն զբաղեցրած անձ, ում նկատմամբ կենսաթոշակը նշանակվել է մինչև 01.07.2014թ.:

18. Մյուս կողմից «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի՝ 31.03.2018թ. գործող խմբագրությամբ 9-րդ հոդվածի 7-րդ մասում սահմանված՝ դատավորի նկատմամբ արդեն իսկ նշանակված կենսաթոշակը վերահաշվարկելու (նվազեցնելու) վերաբերյալ կանոնը համահունչ չէ կենսաթոշակի՝ որպես սեփականության, պաշտպանությանն ուղղված սահմանադրաիրավական և կոնվենցիոն նորմերին: Այսպես, Սահմանադրական դատարանը կենսաթոշակի իրավունքի վերաբերյալ արտահայտել է մի շարք իրավական դիրքորոշումներ, որոնք հանգում են հետևյալին.

2004թ. մարտի 31-ին ընդունված՝ «Դատավորի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածով նախատեսված փոփոխությունը, համաձայն որի կենսաթոշակի նկատմամբ ամենամսյա հավելավճարի որոշման համար հիմք է հանդիսանում ոչ թե ամբողջ աշխատավարձի, այլ պաշտոնային դրույքաչափի 75 տոկոսը, չի բխում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների էությունից և չի նպաստում դատավորի անկախության երաշխիքների ամրապնդմանը: Պետությունը, թերևս, կարող է իր հնարավորությունների սահմանափակման որոշակի իրավիճակների պայմաններում նման քայլ կատարել, երբ պետության մեջ հատուկ իրավիճակ է ծագում կամ անհրաժեշտ է պաշտպանել այլ սահմանադրական արժեքներ: Սակայն 2004թ. և հետագայում Հայաստանը շարունակել է երկնիշ թվերով փոփոխական աճ արձանագրել, հարածուն մեծացել է երկրի պետական բյուջեն և օբյեկտիվ նախադրյալներ չեն եղել դատավորի աշխատավարձի ու կենսաթոշակի միջև խզումը մեծացնելու համար: Դատավորի անկախության սոցիալական երաշխիքների թուլացման հիմք չէր կարող հանդիսանալ նաև 2002թ. դեկտեմբերի 26-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների պաշտոնային դրույքաչափերի մասին» ՀՀ օրենքով դատավորների աշխատավարձի բարձրացման հանգամանքը, քանի որ Հայաստանի Հանրապետությունը միջազգային պարտավորություն է ստանձնել ոչ թե դատավորի և դատարանների անկախության երաշխիքների եղած հավասարակշռությունը պահպանելու, այլ այն ամրապնդելու առումով: Միաժամանակ աշխատավարձի փոխաբար բարձրացումը ներառել է պետական իշխանության ամբողջ համակարգը և չի վերաբերել միայն դատավորներին: Այն դեպքում, երբ դատավորի աշխատավարձը և աշխատանքային կենսաթոշակը, բացի նրա համար որոշակի կենսապայմաններ ապահովելու գործառույթից, նաև դատավորի կողմից անկախ արդարադատություն իրականացնելու համար անհրաժեշտ նախապայման ստեղծելու հատուկ գործառույթ ունեն: Դրա համար էլ, մասնավորապես, «Դատավորի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 18 հոդվածով նախատեսվում է, բացի պետական ընդհանուր կենսաթոշակից, պետական բյուջեի միջոցների հաշվին դատավորի կենսաթոշակին հավելավճար սահմանել **(20.09.2006թ. թիվ ՍԴՈ-647 որոշում):**

Կենսաթոշակի վճարումը գործնականում սեփականությունը սեփականափրորջը փոխանցելու միջոց է **(04.10.2006թ. թիվ ՍԴՈ-649 որոշում):**

Օրենսդիրն իրավասու է օրենսդրական փոփոխությունների արդյունքում սահմանելու կենսաթոշակի հետ կապված իրավահարաբերությունների կարգավորման լիովին նոր համակարգ: Սակայն նման փոփոխությունները չեն կարող վերացնել այն կենսաթոշակները, այդ թվում՝ արտոնյալ կարգով նշանակ-

վող, որոնք ստանալու իրավունքն անձը ձեռք է բերել նախկինում գործող օրենսդրության հիման վրա: Եթե օրենքն արդեն սահմանել է կենսաթոշակի տեսակները, կենսաթոշակի իրավունք ունեցող անձանց շրջանակը, կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու պայմանները, կենսաթոշակի չափը և վճարման պայմանները, պետության համար ծագում է պարտականություն երաշխավորելու կենսաթոշակի իրավունքի առնչությամբ լեգիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքի և իրավական որոշակիության սկզբունքների իրացումը **(15.01.2008թ. թիվ ՍԴՈ-723 որոշում):**

Օրենքի հետադարձ ուժի մերժման սկզբունքի տեսանկյունից սահմանադրական դատարանի 15.01.2008թ. թիվ ՍԴՈ-723 նշված որոշման մեջ ամրագրված հինգ պայմաններից չորսը՝ կենսաթոշակի տեսակները, կենսաթոշակի իրավունք ունեցող անձանց շրջանակը, կենսաթոշակի չափը, կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու պայմանները, կենսաթոշակային իրավունքի պարտադիր փորձեր են: Ընդ որում՝ կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու պայմանների ներքո սահմանադրական դատարանը նկատի է ունեցել կենսաթոշակի ձեռքբերման արտոնյալ պայմանները: Ինչ վերաբերում է վերջին փորձին՝ կենսաթոշակի վճարման պայմաններին, ապա այն ֆակուլտատիվ փորձ է և կախված է կենսաթոշակի նախկինում սահմանված կամ նշանակված չափից: Այսինքն՝ այդ փորձը կարող է դառնալ պարտադիր փորձ միայն այն դեպքում, երբ կենսաթոշակային իրավահարաբերությունների նոր համակարգ սահմանելիս նվազեցվում է նախկինում սահմանված կամ նշանակված կենսաթոշակի չափը **(04.05.2010թ. թիվ ՍԴՈ-881 որոշում):**

Անձի իրավական վիճակը վարթարացնող նորմերի հետադարձ ուժի արգելման սկզբունքը՝ իրավական անվտանգության սկզբունքի հետ մեկտեղ, կոչված է ապահովելու լեգիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքը, և անձի իրավական վիճակը վարթարացնող նորմերի հետադարձ ուժի արգելքը հանդիսանում է պետական իշխանության նկատմամբ վստահության և իրավական պետության սկզբունքների կարևոր բաղադրարարներից մեկը: Այդ սկզբունքը միաժամանակ հանդես է գալիս որպես իրավական որոշակիության սկզբունքի ապահովման կարևոր երաշխիք: Օրենքի հետադարձ ուժի մերժման սկզբունքից բխում է այն արգելքը, համաձայն որի՝ անթույլատրելի է այն իրավունքների սահմանափակումը կամ վերացումը, որոնք ամրագրվել են նախկինում գործող նորմերի հիման վրա: Նման պարտավորություն է նաև ստանձնել Հայաստանի Հանրապետությունը մի շարք միջազգային պայմանագրերով **(14.12.2012թ. թիվ ՍԴՈ-1061 որոշում):**

Դատավորի պաշտոնում պաշտոնավարած անձանց սոցիալական երաշխիքների իրավական ինստիտուտը կատարում է երկու սահմանադրաիրավական գործառույթ՝ այն, մի կողմից, հանդիսանում է հիշյալ անձանց սոցիալական

ապահովության սահմանադրական իրավունքի իրացման երաշխիք, մյուս կողմից՝ ապահովում է դատավորների և դատարանների անկախության սահմանադրահիրավական սկզբունքի իրացումը: Ուստի իրավակարգավորման հետագա զարգացումները, դատարանի գործառության, կառուցակարգային ու նյութական անկախության երաշխիքների ապահովման հետ մեկտեղ, պետք է միավորված լինեն դատավորի անկախության սոցիալական երաշխիքների ամրապնդմանը: Հայաստանի Հանրապետությունը միջազգային պարտավորություն է ստանձնել ոչ թե դատավորի և դատարանների անկախության երաշխիքների եղած հավասարակշռությունը պահպանելու, այլ այն ամրապնդելու առումով: Ըստ այդմ էլ ՀՀ Սահմանադրության պահանջներից ու դատավորների անկախության սոցիալական երաշխիքների միջազգային չափորոշիչներից չի բխում այն հանգամանքը, որ «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» օրենքով համարժեք երաշխիքներ չեն նախատեսվում 2014թ. հուլիսի մեկից հետո կենսաթոշակի իրավունք ձեռք բերող դատավորների անկախության սոցիալական երաշխիքների ապահովման ուղղությամբ, և այս հանգամանքը պահանջում է իրավակարգավորման մոտեցումների վերանայում: Բացի դրանից, հիմնախնդրի առնչությամբ 2014թ. իրականացված նոր իրավակարգավորումների փաթեթում անտեսվել է նաև դատավորի անկախության սոցիալական երաշխիքի կարևոր բաղադրարարը հանդիսացող՝ սոցիալական ապահովության վերաբերյալ նրա իրավաչափ սպասելիքների իրացման երաշխավորումը, ինչը նույնպես օրենսդրի կողմից սկզբունքային և համակարգային վերանայման անհրաժեշտություն ունի **(16.09.2016թ. թիվ ՍԴՈ-1302 որոշում)**:

Բացի այդ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ սոցիալական օրենսդրության, այդ թվում՝ կենսաթոշակների ոլորտում, պետություններն ունեն հայեցողության լայն շրջանակ, որը, ելնելով սոցիալական արդարության և տնտեսական բարեկեցության շահերից, կարող է իրավաչափորեն հանգեցնել բնակչությանը վճարվող կենսաթոշակի գումարի կարգավորմանը, հարմարեցմանը և նույնիսկ նվազեցմանը: Այնուամենայնիվ, ցանկացած այսպիսի միջոց պետք է կիրառվի ոչ խտրական ձևով և համապատասխանի համաչափության պահանջներին: Այդ պատճառով, օրենսդրին տրված հայեցողության շրջանակը քաղաքականության ընտրության հարցում պետք է լինի լայն, և նրա կողմից «հանրային շահի» գնահատումը պետք է հարգվի, եթե այն ակնհայտորեն զուրկ չէ ողջամիտ հիմնավորումից» (*Moskal v. Poland* գործով Եվրոպական դատարանի 15.09.2009թ. վճիռը, 61-րդ կետ):

19. Սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վերոգրյալ իրավական դիրքորոշումներից բխում է, որ դատա-

վորի կենսաթոշակի իրավունքի ծագման պահին գործող օրենսդրության հիման վրա վերջինիս նկատմամբ արդեն իսկ որոշակի չափով նշանակված կենսաթոշակը հետագա օրենսդրական փոփոխությունների արդյունքում չի կարող նվազեցվել: Այսինքն՝ դատավորի կենսաթոշակի չափի վերաբերյալ օրենսդրական փոփոխությունները չեն կարող ազդել այն պաշտոնաթող դատավորների վրա, որոնց նկատմամբ կենսաթոշակի իրավունքի ծագման պահին գործող օրենսդրության համաձայն նշանակվել է որոշակի չափով կենսաթոշակ: Հակառակ պարագայում առաջանում է այնպիսի իրավիճակ, որը հակասության մեջ է մտնում իրավական որոշակիության, օրինաչափ ակնկալիքների, օրենքի հետադարձ ուժի արգելքի, սեփականության իրավունքի պաշտպանության հիմնարար իրավական սկզբունքների հետ:

Մինչդեռ 07.03.2018թ. ընդունված և 31.03.2018թ. ուժի մեջ մտած «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-143-Ն օրենքը՝ դատավորի նկատմամբ արդեն իսկ նշանակված կենսաթոշակը վերահաշվարկելու (նվազեցնելու) վերաբերյալ կանոն սահմանելու առումով, չի համապատասխանում վերոգրյալ հիմնարար սկզբունքներից բխող չափանիշներին: Ավելին, այդ օրենքի ընդունմամբ անտեսվել է նաև Սահմանադրական դատարանի 16.09.2016թ. թիվ ՍԴՈ-1302 որոշմամբ արձանագրված՝ դատավորի անկախության սոցիալական երաշխիքի կարևոր բաղադրատարր հանդիսացող՝ կենսաթոշակի իրավունքի վերաբերյալ նրա իրավաչափ սպասելիքների իրացման երաշխավորումն ապահովելու անհրաժեշտությունը:

Հետևաբար, «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի՝ 31.03.2018թ. գործող խմբագրությամբ 9-րդ հոդվածի 7-րդ մասում սահմանված՝ դատավորի նկատմամբ արդեն իսկ նշանակված կենսաթոշակը վերահաշվարկելու (նվազեցնելու) վերաբերյալ կանոնի ճիշտ նորմատիվ ձևակերպման դեպքում անգամ դրանով հետապնդվող նպատակը, այսինքն՝ 01.07.2014թ. մինչև 31.03.2018թ. գործող օրենսդրության հիման վրա կենսաթոշակի իրավունք ունեցող դատավորների նկատմամբ արդեն իսկ նշանակված կենսաթոշակի վերահաշվարկումը (նվազեցումը), չի կարող ունենալ որևէ ողջամիտ հիմնավորում:

20. Բացի այդ, «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի՝ 31.03.2018թ. գործող խմբագրությամբ 9-րդ հոդվածի 7-րդ մասում սահմանված՝ դատավորի նկատմամբ արդեն իսկ նշանակված կենսաթոշակը վերահաշվարկելու (նվազեցնելու) վերաբերյալ նորմը հակասում է առավել բարձր իրավաբանական ուժ ունեցող՝ 09.04.2018թ. ուժի մեջ մտած «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահ-



մանադրական օրենքի 57-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված է այն իրավադրույթին, որի համաձայն՝ *դատավորի աշխատավարձը և դրա նկատմամբ սահմանված հավելավճարները, կենսաթոշակի չափը չեն կարող պակասեցվել, բացառությամբ այն դեպքերի, երբ համարժեք պակասեցում կատարվում է բոլոր բարձրաստիճան պաշտոնատար անձանց համար:*

21. Ավելին, Եվրոպայի խորհրդի շրջանակներում ընդունված «Դատավորների կարգավիճակի մասին» 1998թ. Եվրոպական խարտիայի 6.4-րդ կետը սահմանում է, որ *օրենքով սահմանված փարիքի հասնելուց հետո թոշակի անցած դատավորները պետք է սրանան այնպիսի կենսաթոշակ, որի չափը հնարավորինս մոտ է որպես դատավոր նրանց վերջին ստացած աշխատավարձի չափին:*

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 17.11.2010թ. թիվ Rec(2010)12 հանձնարարականի 54-րդ կետը սահմանում է, որ *դատավորի կենսաթոշակը պետք է ողջամիտ հարաբերակցության մեջ գտնվի նրա ստացած աշխատավարձի հետ:*

Մինչդեռ դատավորի կենսաթոշակի իրավունքի վերաբերյալ 1999թ. մինչ այժմ տեղի ունեցած օրենսդրական զարգացումները վկայում են, որ Հայաստանի Հանրապետությունում չի ապահովվում դատավորի կենսաթոշակի և նրա ստացած աշխատավարձի ողջամիտ հարաբերակցությունը: Վերը նկարագրված օրենսդրական փոփոխությունների արդյունքում դատավորի կենսաթոշակի չափն աստիճանաբար նվազել է, ինչը մեծացրել է խզումը դատավորի կենսաթոշակի և նրա ստացած վերջին աշխատավարձի չափերի միջև: Այսպես, օրինակ, եթե 2000թ. կենսաթոշակի իրավունք ունեցող դատավորի կենսաթոշակը կազմում էր նրա ստացած աշխատավարձի 75%-ը, ապա 31.03.2018թ. հետո 01.07.2014թ. դրությամբ առնվազն 10 տարի պաշտոնավարած և կենսաթոշակի իրավունք ունեցող դատավորի կենսաթոշակը կազմում է մինչև 01.07.2014թ. ստացած աշխատավարձի 49.5%-ը, որը չի կարող գերազանցել պաշտոնային դրույքաչափի 92%-ը:

22. 01.06.2019թ. մինչև 30.10.2019թ. ընկած ժամանակահատվածում 01.07.2014 թվականի դրությամբ առնվազն 10 տարի դատավորի պաշտոնում պաշտոնավարած և կենսաթոշակի իրավունք ունեցող անձանց համար կենսաթոշակի հաշվարկը կատարվում է 01.07.2019թ. ընդունված և 18.07.2019թ. ուժի մեջ մտած «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-101-Ն ՀՀ օրենքով<sup>110</sup> կատարված օրենսդրական փոփոխություններին համապատասխան:

<sup>110</sup> Թեև նշված օրենքն ուժի մեջ է մտել 18.07.2019թ., սակայն տարածվում է 2019թ. հունիսի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Օրենսդիրը նշված օրենքով սահմանել է հստակ կանոն, որի համաձայն՝ դատավորի կենսաթոշակը հաշվարկելիս հիմք է ընդունվում դատավորի՝ վերջին պաշտոնից ազատվելու օրվա դրությամբ այդ պաշտոնի համար հաշվարկված աշխատավարձը: Այսինքն՝ 01.06.2019թ. հետո գործող օրենսդրական փոփոխությունների արդյունքում 01.07.2014թ. դրությամբ առնվազն 10 տարի դատավորի պաշտոնում պաշտոնավարած անձանց կենսաթոշակը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով տվյալ դատավորի՝ վերջին պաշտոնից ազատվելու օրվա դրությամբ այդ պաշտոնի համար հաշվարկված աշխատավարձը: *Այսինքն՝ Կենսաթոշակ = Վերջին պաշտոնից ազատվելու օրվա դրությամբ ստացած աշխատավարձ  $\times$  0.9  $\times$  55%, որը չի կարող գերազանցել Պաշտոնային դրույքաչափի 92%-ը, արդյունքում՝ Կենսաթոշակ = Վերջին պաշտոնից ազատվելու օրվա դրությամբ ստացած աշխատավարձ  $\times$  49.5%, որը չի կարող գերազանցել Պաշտոնային դրույքաչափի 92%-ը:*

23. «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքի՝ 01.06.2019թ. մինչև 30.10.2019թ. ընկած ժամանակահատվածում գործող կարգավորումների վերլուծությունը ցույց է տալիս, որ դատավորի կենսաթոշակի չափը պայմանավորված է այն հանգամանքով, թե երբ է տվյալ անձը ձեռք բերել որպես դատավորի պաշտոնավարման 10 տարվա ստաժը՝ 01.07.2014թ. առաջ, թե՛ հետո: Եթե անձը 01.07.2014թ. դրությամբ արդեն իսկ ունեցել է 10 տարվա դատավորի պաշտոնավարման ստաժ, ապա նրա կենսաթոշակը հաշվարկվում է անցումային՝ «Վերջին աշխատավարձ  $\times$  49.5% (որը չի կարող գերազանցել Պաշտոնային դրույքաչափի 92%-ը)» բանաձևով: Իսկ եթե անձը 10 տարվա դատավորի պաշտոնավարման ստաժը ձեռք է բերել 01.07.2014թ. հետո, ապա նրա կենսաթոշակը հաշվարկվում է ընդհանուր կարգով, ինչի արդյունքում նրա կենսաթոշակի չափն էականորեն պակաս է ստացվում, քան 01.07.2014 թվականի դրությամբ 10 տարվա դատավորի պաշտոնավարման ստաժ ունեցող անձի կենսաթոշակը:

24. Սահմանադրական դատարանը 18.06.2019թ. թիվ ՍԴԴ-1463 որոշմամբ Սահմանադրությանը հակասող է ճանաչել «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի առաջին պարբերությունը, երկրորդ պարբերությունը՝ «մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը գործող օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված աշխատավարձի (պաշտոնային դրույքաչափի և դրա նկատմամբ սահմանված հավելվածների հանրագումարի) գումարի և զրո ամբողջ ինը տասնորդական գործակցի արտադրյալի 55 տոկոսի չափով» դրույթի մասով, երրորդ պարբե-

րության երկրորդ նախադասությամբ ամրագրված դրույթները, չորրորդ պարբերությամբ նախատեսված իրավակարգավորումը, ինչպես նաև նույն օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասը և նույն հոդվածի 4-րդ մասը՝ դատավորներին վերաբերող մասով:

25. Սահմանադրական դատարանը 18.06.2019թ. թիվ ՍԴՈ-1463 որոշմամբ Սահմանադրությանը հակասող ճանաչված դրույթների ուժը կորցնելու վերջնաժամկետ է սահմանել 30.10.2019թ.՝ հնարավորություն տալով Ազգային ժողովին «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի վերաբերելի իրավակարգավորումները համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին: Սակայն օրենսդիրը մինչև 30.10.2019թ. չի կատարել Սահմանադրական դատարանի 18.06.2019թ. թիվ ՍԴՈ-1463 որոշումը և չի ընդունել օրենք «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքի կարգավորումներն այդ որոշմանը համապատասխանացնելու համար:

Արդյունքում առաջացել է մի իրավիճակ, որ 30.10.2019թ. հետո «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի կարգավորումներն այլևս չեն գործել, և առկա չի եղել որևէ իրավակարգավորում մինչև 01.07.2014թ. առնվազն 10 տարի դատավորի պաշտոնում պաշտոնավարած անձի կենսաթոշակի վերաբերյալ:

26. Օրենսդիրը «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքի իրավակարգավորումները Սահմանադրական դատարանի 18.06.2019 թվականի թիվ ՍԴՈ-1463 որոշման պահանջներին համապատասխանեցնելու փորձը կատարվել է միայն 23.03.2022թ. ընդունված և 22.04.2022թ. ուժի մեջ մտած ««Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-78-Ն ՀՀ օրենքով: Այդ օրենքով, մասնավորապես, ուժը կորցրած է ճանաչվել «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերը, ինչպես նաև սահմանվել է, որ դատավորի կենսաթոշակը՝ անկախ այն հանգամանքից, թե երբ է լրացել որպես դատավոր նրա պաշտոնավարման 10 տարվա ժամկետը, հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$Կ = Հ \times 9 + ԿՀՍ \times ԿՀՍԱ - ԿԿ, \text{ որտեղ՝}$$

Կ-ն կենսաթոշակի ամսական գումարն է,

Հ-ն՝ սույն օրենքով կենսաթոշակի չափը հաշվարկելու համար հիմք ընդունվող հիմնական կենսաթոշակի չափը,

Գ-ն՝ «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով անձի զբաղեցրած պաշտոնների համար սահմանված առավելագույն գործակիցը,

ԿՀԱ-ն՝ կենսաթոշակը հաշվարկելու համար ստաժը՝ դատավորի պաշտոնը զբաղեցնելու ժամանակահատվածը,

ԿՀՍԱ-ն՝ կենսաթոշակը հաշվարկելու համար ստաժի մեկ տարվա արժեքը,

ԿԿ-ն՝ անուիտետի կամ ծրագրային վճարների ձևով վճարվող կուտակային կենսաթոշակի՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով տվյալ պաշտոնը զբաղեցրած անձի համար (օգտին) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացված լրացուցիչ միջոցներից ձևավորված ամսական չափը:

27. 23.03.2022թ. թիվ ՀՕ-78-Ն ՀՀ օրենքը չի համապատասխանում Սահմանադրական դատարանի 18.06.2019թ. թիվ ՍԴՈ-1463 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներին: Դատավորների կենսաթոշակի չափի անընդհատ նվազեցումը կանգնեցնելու, դատավորի կենսաթոշակը նրա զբաղեցրած վերջին պաշտոնի աշխատավարձին հնարավորինս մոտեցնելու փոխարեն 23.03.2022թ. թիվ ՀՕ-78-Ն ՀՀ օրենքն էլ ավելի է վատթարացնում կենսաթոշակի իրավունք ունեցող դատավորների կարգավիճակը:

Այսպես՝ ուժը կորցրած ճանաչելով «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասը՝ 01.07.2014թ. դրությամբ դատավորի 10 տարվա ստաժ ունեցող անձինք զրկվում են անցումային՝ «Աշխատավարձ  $\times$  49.5% (որը չի կարող գերազանցել Պաշտոնային դրույքաչափի 92%-ը)» բանաձևով կենսաթոշակ ստանալու իրավունքից: Առանց այն էլ, անցումային բանաձևով նշանակվող կենսաթոշակի չափը չի բավարարում դատավորի կենսաթոշակին ներկայացվող նվազագույն չափանիշներին: Իսկ այդ անցումային բանաձևի վերացման դեպքում բոլոր դատավորների կենսաթոշակի չափը հաշվարկվելու է «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ընդհանուր կարգով, որի դեպքում 01.07.2014թ. դրությամբ դատավորի 10 տարվա ստաժ ունեցող անձանց կենսաթոշակն էապես պակասելու է, որպիսի իրավիճակի առաջացումը չի բխում Սահմանադրական դատարանի 18.06.2019թ. թիվ ՍԴՈ-1463 որոշման ոգուց: Սահմանադրական դատարանի այդ որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներից բխում է, որ 01.07.2014թ. դրությամբ դատավորի 10 տարվա ստաժ ունեցող անձանց և

01.07.2014թ. հետո դատավորի 10 տարվա ստաժ ունեցող անձանց կենսաթոշակների չափերի նկատմամբ տարբերակված մոտեցումը պետք է վերանա: 01.07.2014թ. հետո դատավորի 10 տարվա ստաժ ունեցող անձինք պետք է ստանան առնվազն այնքան կենսաթոշակ, որքան ստանում են 01.07.2014թ. դրությամբ դատավորի 10 տարվա ստաժ ունեցող անձինք:

Մինչդեռ 23.03.2022թ. թիվ ՀՕ-78-Ն ՀՀ օրենքով այդ տարբերակված մոտեցումը վերացվել է ի վնաս 01.07.2014թ. դրությամբ դատավորի 10 տարվա ստաժ ունեցող անձանց: Այնինչ դրա փոխարեն առնվազն անհրաժեշտ էր «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքում համապատասխան փոփոխություններ կատարելու միջոցով սահմանել, որ 01.07.2014թ. հետո դատավորի 10 տարվա ստաժ ունեցող անձանց կենսաթոշակը հաշվարկվում է այն նույն կերպ, ինչպես որ հաշվարկվում է 01.07.2014թ. դրությամբ դատավորի 10 տարվա ստաժ ունեցող անձանց կենսաթոշակը: Այսինքն՝ անհրաժեշտ է անցումային՝ «*Վերջին աշխատավարձ  $\times$  49.5% (որը չի կարող գերազանցել Պաշտոնային դրույքաչափի 92%-ը)*» բանաձևը դարձնել ընդհանուր կարգավորում՝ կենսաթոշակի իրավունք ունեցող բոլոր դատավորների համար՝ անկախ վերջիններիս որպես դատավոր աշխատած ժամանակահատվածներից:

Փաստորեն, 23.03.2022թ. թիվ ՀՕ-78-Ն օրենքով կատարված փոփոխությունը չի ապահովում դատավորի՝ կանխատեսելի, որոշակի, կայուն, իր ստացած վերջին աշխատավարձին հնարավորինս մոտ կենսաթոշակ ստանալու իրավունքի իրացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգերը, երաշխիքներն ու նախադրյալները: Անհրաժեշտ է սահմանել այնպիսի իրավակարգավորում, որ դատավորի կենսաթոշակը հնարավորինս համարժեք լինի դատավորի վերջին ստացած աշխատավարձի չափին: Նշված սկզբունքային դրույթն ամրագրված է մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում: Մասնավորապես՝ Եվրոպայի խորհրդի շրջանակներում ընդունված «Դատավորների կարգավիճակի մասին» 1998թ. Եվրոպական խարտիայի 6.4-րդ կետը սահմանում է, որ *օրենքով սահմանված տարիքի հասնելուց հետո թոշակի անցած դատավորները պետք է ստանան այնպիսի կենսաթոշակ, որի չափը հնարավորինս մոտ է որպես դատավոր նրանց վերջին ստացած աշխատավարձի չափին*: Իսկ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 17.11.2010թ. թիվ Rec(2010)12 հանձնարարականի 54-րդ կետը սահմանում է, որ *դատավորի կենսաթոշակը պետք է ողջամիտ հարաբերակցության մեջ գտնվի նրա ստացած աշխատավարձի հետ*:

28. Սահմանադրական դատարանը, 16.09.2016թ. թիվ ՍԴՈ-1302 որոշմամբ անդրադառնալով «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի՝ գործող խմբագրությամբ 9-րդ հոդվածի 6-րդ մասի սահմանադրականության հարցին, արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) ՀՀ *աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ներկայացված հաշվարկները վկայում են, որ ընդհանուր*

իրավասության առաջին արյանի, ՀՀ վերաքննիչ ու ՀՀ վճռաբեկ, ինչպես նաև վարչական դատարանների դատավորների համար, ովքեր 2014թ. հուլիսի 1-ի դրությամբ 10-ից ավելի փարի սրած ունեն, կախված այդ պաշտոնում աշխատանքային սրածի փոփոխությունից նախկին և ներկա աշխատավարձերի հիմքով կենսաթոշակն հաշվարկելիս սոցիալական ապահովության երաշխիքների ոչ համաչափ փարբերակում է առաջանում: Նման իրավիճակը պետք է հաղթահարվի, մասնավորապես՝ «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասում՝ նկատի ունենալով, որ այն անձանց համար, որոնք սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ առնվազն 10 փարի պաշտոնավարել են դատավորի պաշտոնում, կենսաթոշակի չափը հաշվարկելիս հաշվարկային հիմք է ընդունվում մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը որպես դատավոր զբաղեցրած վերջին պաշտոնի համար ստացած աշխատավարձը՝ եթե այն ավելի մեծ է, քան «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքով սահմանված աշխատավարձի հիմքով հաշվարկված կենսաթոշակի չափը: Ընդ որում, ակնհայտ է, որ «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի՝ «սույն օրենքի» արտահայտությունը վերաբերում է հենց այդ օրենքին (...):

29. Վերոգրյալ իրավական նորմերի և Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների համակարգային վերլուծության արդյունքում կարելի է հանգել այն եզրակացության, որ կենսաթոշակի հաշվարկման համար կարող է հիմք ընդունվել ինչպես տվյալ անձի՝ մինչև «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» օրենքի ուժի մեջ մտնելը որպես դատավոր զբաղեցրած վերջին պաշտոնի համար ստացած աշխատավարձը, այնպես էլ դատավորի լիազորությունների դադարման պահին նախորդող ամսվա համար «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով վերջինիս ստացած աշխատավարձը: Տվյալ տարբերակված մոտեցման հիմքը աշխատավարձերի մեծությունն է. կենսաթոշակի հաշվարկման հիմք է ընդունվում «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելուց առաջ կամ հետո տվյալ անձի ստացած այն աշխատավարձը, որն իր չափերով ավելի մեծ է: Հաշվի առնելով վերոգրյալը՝ կարելի է փաստել, որ մինչև 31.03.2018թ. գործող խմբագրությամբ «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» օրենքի համաձայն՝ այդ օրենքի ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ առնվազն 10 տարի դատավորի պաշտոնում պաշտոնավարած անձանց կենսաթոշակը ենթակա է հաշվարկման՝ հիմք ընդունելով տվյալ դատավորի՝ մինչև 01.07.2014թ. ստացած կամ դրանից հետո ստացած այն աշխատավարձը, որն ավելի բարձր է:

30. 01.07.2014թ. մինչև 01.01.2015թ. ընկած ժամանակահատվածի համար «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքներ-

րի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասում օրենսդիրը սահմանել է, որ նույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրույթամբ առնվազն 10 տարի դատավորի պաշտոնում պաշտոնավարած անձի կենսաթոշակի չափը կազմում է որպես դատավոր զբաղեցրած վերջին պաշտոնի համար ստացած աշխատավարձի (պաշտոնային դրույքաչափի և դրա նկատմամբ սահմանված հավելավճարի հանրագումարի) գումարի և զրո ամբողջ ինը տասնորդական գործակցի արտադրյալի 55 տոկոսի չափով: Ընդ որում, եթե նշված կարգով հաշվարկված կենսաթոշակի չափը ցածր է նույն օրենքի 5-րդ հոդվածով սահմանված ընդհանուր կարգով հաշվարկվող կենսաթոշակի չափից, ապա կենսաթոշակը նշանակվում է նույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով: ***Այսինքն՝ Կենսաթոշակ = Ավելի բարձր աշխատավարձ × 0.9 × 55%, արդյունքում՝ Կենսաթոշակ = Ավելի բարձր աշխատավարձ × 49.5%:***

31. 01.01.2015թ. մինչև 31.03.2018թ. ընկած ժամանակահատվածի համար «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասում առկա իրավակարգավորումն, ըստ էության, փոփոխվել է միայն այն առումով, որ նշված օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասը լրացվել է այն կանոնով, որի համաձայն՝ «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով հաշվարկված կենսաթոշակի չափը չի կարող գերազանցել մինչև նույն օրենքի ուժի մեջ մտնելը որպես դատավոր զբաղեցրած վերջին պաշտոնի համար սահմանված պաշտոնային դրույքաչափի 92 տոկոսը: ***Այսինքն՝ Կենսաթոշակ = Ավելի բարձր աշխատավարձ × 0.9 × 55%, որը չի կարող գերազանցել Պաշտոնային դրույքաչափի 92%-ը, արդյունքում՝ Կենսաթոշակ = Ավելի բարձր աշխատավարձ × 49.5%, որը չի կարող գերազանցել Պաշտոնային դրույքաչափի 92%-ը:***

32. 07.02.2018թ. ընդունված և 09.04.2018թ. ուժի մեջ մտած «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքը դատավորի կենսաթոշակի հաշվարկման կարգի և չափի վերաբերյալ որևէ իրավակարգավորում չի սահմանում: Նշված սահմանադրական օրենքի 57-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված է, որ դատավորն ունի իր 65 տարին լրանալու, ինչպես նաև օրենքով սահմանված այլ դեպքերում և կարգով կենսաթոշակ ստանալու իրավունք: Դատավորի կենսաթոշակ ստանալու իրավունքը չի կարող դադարեցվել այլ աշխատանք կատարելու դեպքում, բացառությամբ հանրային ծառայության անցնելու դեպքերի: Իսկ 2-րդ մասում ամրագրված է, որ դատավորի աշխատավարձը և դրա նկատմամբ սահմանված հավելավճարները, կենսաթոշակի չափը չեն կարող պակասեցվել, բացառությամբ այն դեպքերի, երբ համարժեք պակասեցում կատարվում է բոլոր բարձրաստիճան պաշտոնատար անձանց համար: Փաստորեն, դատավորի կենսաթոշակի հաշվարկման կարգի և չափի հետ կապված հարաբերությունները ՀՀ նոր դատական

օրենսգրքի ուժի մեջ մտնելու պայմաններում ևս կարգավորվում են «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի համապատասխան դրույթներով:

33. 31.03.2018թ. մինչև 01.06.2019թ. ընկած ժամանակահատվածում 01.07.2014թ. դրությամբ առնվազն 10 տարի դատավորի պաշտոնում պաշտոնավարած և կենսաթոշակի իրավունք ունեցող անձանց համար կենսաթոշակի հաշվարկը կատարվում է 07.03.2018թ. ընդունված և 31.03.2018թ. ուժի մեջ մտած ««Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-143-Ն օրենքով<sup>111</sup> կատարված օրենսդրական փոփոխություններին համապատասխան:

31.03.2018թ. ուժի մեջ մտած նշված օրենսդրական փոփոխությունների արդյունքում օրենսդիրը վերացրել է «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասում առկա այն անհատակությունը, որի վերաբերյալ Սահմանադրական դատարանի 16.09.2016թ. թիվ ՍԴՈ-1302 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների ուժով հնարավոր էր դատավորի կենսաթոշակը հաշվարկելիս հիմք ընդունել տվյալ դատավորի՝ մինչև 01.07.2014թ. ստացած կամ դրանից հետո ստացած այն աշխատավարձը, որն ավելի բարձր է: Փոխարենը, օրենսդիրը 07.03.2018թ. ընդունված և 31.03.2018թ. ուժի մեջ մտած ««Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-143-Ն օրենքով սահմանել է հստակ կանոն, որի համաձայն՝ դատավորի կենսաթոշակը հաշվարկելիս հիմք է ընդունվում վերջինիս՝ մինչև 01.07.2014թ. գործող օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված աշխատավարձը: Այսինքն՝ 31.03.2018թ. ուժի մեջ մտած օրենսդրական փոփոխությունների արդյունքում 01.07.2014թ. դրությամբ առնվազն 10 տարի դատավորի պաշտոնում պաշտոնավարած անձանց կենսաթոշակը հաշվարկվում է նախկինում գործող վերը նկարագրված նույն բանաձևի միջոցով՝ միայն այն տարբերությամբ, որ կենսաթոշակի հաշվարկման համար կարող է հիմք ընդունվել բացառապես տվյալ դատավորի՝ մինչև 01.07.2014թ. գործող օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված աշխատավարձը: *Այսինքն՝ Կենսաթոշակ = Մինչև 01.07.2014 թվականը ստացած աշխատավարձ x 0.9 x 55%, որը չի կարող գերազանցել Պաշտոնային դրույքաչափի 92%-ը, արդյունքում՝ Կենսաթոշակ = Մինչև 01.07.2014 թվականը ստացած աշխատավարձ x 49.5%, որը չի կարող գերազանցել Պաշտոնային դրույքաչափի 92%-ը:*

<sup>111</sup> Նշված օրենքով 09.04.2018թ. «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» օրենքը վերանվանվում է «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենք:



34. Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ իրավունքի գերակայությունից բխող՝ իրավական որոշակիության, օրինաչափ ակնկալիքների, օրենքի հետադարձ ուժի արգելքի, սեփականության իրավունքի պաշտպանության սկզբունքներից, ինչպես նաև կենսաթոշակային ապահովման բնագավառում Սահմանադրական դատարանի և Վճռաբեկ դատարանի արտահայտած կայուն իրավական դիրքորոշումներից բխում է, որ նշված օրենսդրական փոփոխությունը կարող է տարածվել միայն այն դատավորների վրա, ում կենսաթոշակի իրավունքը ծագել է ««Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-143-Ն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո, այսինքն՝ 31.03.2018թ.: Այն դատավորների կենսաթոշակը, ում կենսաթոշակի իրավունքը «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի ուժով ծագել է մինչև 31.03.2018թ., պետք է հաշվարկվի «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի՝ մինչև 31.03.2018թ. գործող խմբագրությամբ 9-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով՝ հաշվի առնելով դրա վերաբերյալ Սահմանադրական դատարանի 16.09.2016թ. թիվ ՍԴՈ-1302 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները: Այլ կերպ ասած՝ ««Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-143-Ն օրենքով սահմանված փոփոխությունները չեն կարող ազդել այն դատավորների կենսաթոշակի հաշվարկման վրա, ում կենսաթոշակի իրավունքը «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի ուժով ծագել է մինչև 31.03.2018թ.:

Միևնույն ժամանակ օրենսդիրը ««Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-143-Ն ՀՀ օրենքով «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածը լրացրել է 7-րդ մասով, որը սահմանում է դրույթ հետևյալ բովանդակությամբ. «(...)

2) լրացնել հետևյալ բովանդակության 7-10-րդ մասերով.

«7. 2014 թվականի հուլիսի 1-ից հետո դատավորի պաշտոն զբաղեցրած անձին մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը նշանակված կենսաթոշակը վերահաշվարկվում է 2018 թվականի մարտի 1-ից Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով՝ հաշվի առնելով որպես դատավոր զբաղեցրած վերջին պաշտոնի համար մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը գործող

օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված աշխատավարձը (պաշտոնային դրույքաչափի և դրա նկատմամբ սահմանված հավելավճարի հանրագումարը)»:

35. Նշված իրավադրույթի միջոցով օրենսդրի կողմից հետապնդվող նպատակն այն է, որ «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» օրենքի՝ մինչև 31.03.2018թ. գործող խմբագրությամբ 9-րդ հոդվածի 6-րդ մասի ուժով դատավորների նկատմամբ նշանակված կենսաթոշակները վերահաշվարկվեն և համապատասխանեցվեն «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» օրենքի՝ 31.03.2018թ. գործող խմբագրությամբ 9-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին: Այսինքն՝ օրենսդրի կամքը, հավանաբար, ուղղված է եղել այն նպատակին, որ «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» օրենքի՝ մինչև 31.03.2018թ. գործող խմբագրությամբ 9-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ոչ հստակ իրավակարգավորումների և դրանց վերաբերյալ Սահմանադրական դատարանի 16.09.2016թ. թիվ ՍԴՈ-1302 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների կիրառմամբ նշանակված կենսաթոշակների չափը 01.03.2018թ. համապատասխանեցվի «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» օրենքի՝ 31.03.2018թ. գործող խմբագրությամբ 9-րդ հոդվածի 6-րդ մասի այն պահանջին, որի համաձայն՝ դատավորի կենսաթոշակը հաշվարկելիս հիմք է ընդունվում վերջինիս՝ մինչև 01.07.2014թ. գործող օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված աշխատավարձը:

36. Մինչդեռ «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» օրենքի՝ 31.03.2018թ. գործող խմբագրությամբ 9-րդ հոդվածի 7-րդ մասում առկա ձևակերպումների պատճառով այդ նպատակի իրականացումը չի կարող տեղի ունենալ, քանի որ հնարավոր չէ կիրառել օրենքի նշված դրույթով սահմանված իրավանորմը: Բանն այն է, որ «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» օրենքի՝ 31.03.2018թ. գործող խմբագրությամբ 9-րդ հոդվածի 7-րդ մասը նախատեսում է, որ վերահաշվարկման է ենթակա 01.07.2014թ. հետո դատավորի պաշտոն զբաղեցրած անձին **մինչև նույն օրենքն ուժի մեջ մտնելը** նշանակված կենսաթոշակը: Ընդ որում՝ «*նույն օրենք*» արտահայտությունը վերաբերում է ոչ թե ««Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-143-Ն ՀՀ օրենքին, որն ուժի մեջ է մտել 31.03.2018թ., այլ «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» օրենքին, որն ուժի մեջ է մտել 01.07.2014թ.: Ստացվում է, որ «Պետական պաշտոններ

զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» օրենքի՝ 31.03.2018թ. գործող խմբագրությամբ 9-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ վերահաշվարկման է ենթակա 01.07.2014թ. հետո դատավորի պաշտոն զբաղեցրած անձին մինչև 01.07.2014թ. նշանակված կենսաթոշակը: Մինչդեռ նշված ձևակերպումն անտրամաբանական է և չի կարող որևէ կիրառություն ունենալ, քանի որ «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» օրենքն առհասարակ չի վերաբերում այն դատավորներին, ովքեր թոշակի են անցել մինչև 01.07.2014թ., և չի կարող լինել 01.07.2014թ. հետո դատավորի պաշտոն զբաղեցրած անձ, ում նկատմամբ կենսաթոշակը նշանակվել է մինչև 01.07.2014թ.:

37. Մյուս կողմից՝ «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» օրենքի՝ 31.03.2018թ. գործող խմբագրությամբ 9-րդ հոդվածի 7-րդ մասում սահմանված՝ դատավորի նկատմամբ արդեն իսկ նշանակված կենսաթոշակը վերահաշվարկելու (նվազեցնելու) վերաբերյալ կանոնը համահունչ է կենսաթոշակի՝ որպես սեփականության, պաշտպանությանն ուղղված սահմանադրաիրավական և կոնվենցիոն նորմերին: Այսպես, Սահմանադրական դատարանը կենսաթոշակի իրավունքի վերաբերյալ արտահայտել է մի շարք իրավական դիրքորոշումներ, որոնք հանգում են հետևյալին.

2004թ. մարտի 31-ին ընդունված՝ «Դատավորի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի 1-ին հոդվածով նախատեսված փոփոխությունը, համաձայն որի՝ կենսաթոշակի նկատմամբ ամենամյա հավելավճարի որոշման համար հիմք է հանդիսանում ոչ թե ամբողջ աշխատավարձի, այլ պաշտոնային դրույքաչափի 75 տոկոսը, չի բխում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների էությունից և չի նպաստում դատավորի անկախության երաշխիքների ամրապնդմանը: Պետությունը, թերևս, կարող է իր հնարավորությունների սահմանափակման որոշակի իրավիճակների պայմաններում նման քայլ կատարել, երբ պետության մեջ հատուկ իրավիճակ է ծագում կամ անհրաժեշտ է պաշտպանել այլ սահմանադրական արժեքներ: Սակայն 2004թ. և հետագայում Հայաստանը շարունակել է երկնիշ թվերով փոփոխական աճ արձանագրել, հարաճուն մեծացել է երկրի պետական բյուջեն և օբյեկտիվ նախադրյալներ չեն եղել դատավորի աշխատավարձի ու կենսաթոշակի միջև խզումը մեծացնելու համար: Դատավորի անկախության սոցիալական երաշխիքների թուլացման հիմք չէր կարող հանդիսանալ նաև 2002թ. դեկտեմբերի 26-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների ղեկավար աշխատողների պաշտոնային դրույքաչափերի մասին» օրենքով դատավորների աշխատավարձի բարձրացման հանգամանքը, քանի որ միջազգային պարտավորություն է ստանձնել ոչ թե դատավորի և դատարանների անկա-

խության երաշխիքների եղած հավասարակշռությունը պահպանելու, այլ այն ամրապնդելու առումով: Միաժամանակ աշխատավարձի տվյալ բարձրացումը ներառել է պետական իշխանության ամբողջ համակարգը և չի վերաբերել միայն դատավորներին: Այն դեպքում, երբ դատավորի աշխատավարձը և աշխատանքային կենսաթոշակը, բացի նրա համար որոշակի կենսապայմաններ ապահովելու գործառույթից, նաև դատավորի կողմից անկախ արդարադատություն իրականացնելու համար անհրաժեշտ նախապայման ստեղծելու հարույժ գործառույթ ունեն: Դրա համար էլ, մասնավորապես, «Դատավորի կարգավիճակի մասին» օրենքի 18 հոդվածով նախատեսվում է, բացի պետական ընդհանուր կենսաթոշակից, պետական բյուջեի միջոցների հաշվին դատավորի կենսաթոշակին հավելավճար սահմանել **(20.09.2006թ. թիվ ՍԴՈ-647 որոշում):**

Կենսաթոշակի վճարումը գործնականում սեփականությունը սեփականատիրոջը փոխանցելու միջոց է **(04.10.2006թ. թիվ ՍԴՈ-649 որոշում):**

Օրենսդիրն իրավասու է օրենսդրական փոփոխությունների արդյունքում սահմանելու կենսաթոշակի հետ կապված իրավահարաբերությունների կարգավորման լիովին նոր համակարգ: Սակայն նման փոփոխությունները չեն կարող վերացնել այն կենսաթոշակները, այդ թվում՝ արտոնյալ կարգով նշանակվող, որոնք ստանալու իրավունքն անձը ձեռք է բերել նախկինում գործող օրենսդրության հիման վրա: Եթե օրենքն արդեն սահմանել է կենսաթոշակի տեսակները, կենսաթոշակի իրավունք ունեցող անձանց շրջանակը, կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու պայմանները, կենսաթոշակի չափը և վճարման պայմանները, պետության համար ծագում է պարտականություն երաշխավորելու կենսաթոշակի իրավունքի առնչությամբ լեզգիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքի և իրավական որոշակիության սկզբունքների իրացումը **(15.01.2008թ. թիվ ՍԴՈ-723 որոշում):**

Օրենքի հետադարձ ուժի մերժման սկզբունքի տեսանկյունից սահմանադրական դատարանի 15.01.2008թ. թիվ ՍԴՈ-723 նշված որոշման մեջ ամրագրված հինգ պայմաններից չորսը՝ կենսաթոշակի տեսակները, կենսաթոշակի իրավունք ունեցող անձանց շրջանակը, կենսաթոշակի չափը, կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու պայմանները, կենսաթոշակային իրավունքի պարտադիր տարրեր են: Ընդ որում՝ կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու պայմանների ներքո սահմանադրական դատարանը նկատի է ունեցել կենսաթոշակի ձեռքբերման արտոնյալ պայմանները: Ինչ վերաբերում է վերջին տարրին՝ կենսաթոշակի վճարման պայմաններին, ապա այն ֆակուլտատիվ տարր է և կախված է կենսաթոշակի նախկինում սահմանված կամ նշանակված չափից: Այսինքն՝ այդ տարրը կարող է դառնալ պարտադիր տարր միայն այն դեպքում, երբ կենսաթոշակային իրավահարաբերությունների նոր համակարգ սահմանե-

լիս նվազեցվում է նախկինում սահմանված կամ նշանակված կենսաթոշակի չափը **(04.05.2010թ. թիվ ՍԴՈ-881 որոշում)**:

Անձի իրավական վիճակը վատթարացնող նորմերի հետադարձ ուժի արգելման սկզբունքը՝ իրավական անվրանգության սկզբունքի հետ մեկտեղ, կոչված է ապահովելու լեզիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքը, և անձի իրավական վիճակը վատթարացնող նորմերի հետադարձ ուժի արգելքը հանդիսանում է պետական իշխանության նկատմամբ վստահության և իրավական պետության սկզբունքների կարևոր բաղադրատարրերից մեկը: Այդ սկզբունքը միաժամանակ հանդես է գալիս որպես իրավական որոշակիության սկզբունքի ապահովման կարևոր երաշխիք: Օրենքի հետադարձ ուժի մերժման սկզբունքից բխում է այն արգելքը, համաձայն որի՝ անթույլատրելի է այն իրավունքների սահմանափակումը կամ վերացումը, որոնք ամրագրվել են նախկինում գործող նորմերի հիման վրա: Նման պարտավորություն է նաև ստանձնել Հայաստանի Հանրապետությունը մի շարք միջազգային պայմանագրերով **(14.12.2012թ. թիվ ՍԴՈ-1061 որոշում)**:

Դատավորի պաշտոնում պաշտոնավարած անձանց սոցիալական երաշխիքների իրավական ինստիտուտը կատարում է երկու սահմանադրաիրավական գործառույթ՝ այն, մի կողմից, հանդիսանում է հիշյալ անձանց սոցիալական ապահովության սահմանադրական իրավունքի իրացման երաշխիք, մյուս կողմից՝ ապահովում է դատավորների և դատարանների անկախության սահմանադրաիրավական սկզբունքի իրացումը: Ուստի իրավակարգավորման հետագա զարգացումները, դատարանի գործառութային, կառուցակարգային ու նյութական անկախության երաշխիքների ապահովման հետ մեկտեղ, պետք է միտված լինեն դատավորի անկախության սոցիալական երաշխիքների ամրապնդմանը: Հայաստանի Հանրապետությունը միջազգային պարտավորություն է ստանձնել ոչ թե դատավորի և դատարանների անկախության երաշխիքների եղած հավասարակշռությունը պահպանելու, այլև այն ամրապնդելու առումով: Այս առումով ՀՀ Սահմանադրության պահանջներից ու դատավորների անկախության սոցիալական երաշխիքների միջազգային չափորոշիչներից չի բխում այն հանգամանքը, որ «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» օրենքով համարժեք երաշխիքներ չեն նախատեսվում 2014թ. հուլիսի մեկից հետո կենսաթոշակի իրավունք ձեռք բերող դատավորների անկախության սոցիալական երաշխիքների ապահովման ուղղությամբ, և այս հանգամանքը պահանջում է իրավակարգավորման մոտեցումների վերանայում: Բացի դրանից, հիմնախնդրի առնչությամբ 2014թ. իրականացված նոր իրավակարգավորումների փաթեթում անտեսվել է նաև դատավորի անկախության սոցիալական երաշխիքի կարևոր բաղադրատարր հանդիսացող՝ սոցիալական ապահովության վերաբերյալ նրա իրավաչափ սպասելիքների իրացման երաշխավորումը, ինչը նույնպես օրենսդրի կողմից սկզբունքային և համա-

կարգային վերանայման անհրաժեշտություն ունի (16.09.2016թ. թիվ ՍԴՈ-1302 որոշում):

Բացի այդ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ սոցիալական օրենսդրության, այդ թվում՝ կենսաթոշակների ոլորտում, պետություններն ունեն հայեցողության լայն շրջանակ, որը, ելնելով սոցիալական արդարության և տնտեսական բարեկեցության շահերից, կարող է իրավաչափորեն հանգեցնել բնակչությանը վճարվող կենսաթոշակի գումարի կարգավորմանը, հարմարեցմանը և նույնիսկ նվազեցմանը: Այնուամենայնիվ, ցանկացած այսպիսի միջոց պետք է կիրառվի ոչ խտրական ձևով և համապատասխանի համաչափության պահանջներին: Այդ պատճառով, օրենսդրին տրված հայեցողության շրջանակը քաղաքականության ընտրության հարցում պետք է լինի լայն, և նրա կողմից «հանրային շահի» գնահատումը պետք է հարգվի, եթե այն ակնհայտորեն զուրկ չէ ողջամիտ հիմնավորումից» (Moskal v. Poland գործով Եվրոպական դատարանի 15.09.2009թ. վճիռը, 61-րդ կետ):

38. Սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վերոգրյալ իրավական դիրքորոշումներից բխում է, որ դատավորի կենսաթոշակի իրավունքի ծագման պահին գործող օրենսդրության հիման վրա վերջինիս նկատմամբ արդեն իսկ որոշակի չափով նշանակված կենսաթոշակը հետագա օրենսդրական փոփոխությունների արդյունքում չի կարող նվազեցվել: Այսինքն՝ դատավորի կենսաթոշակի չափի վերաբերյալ օրենսդրական փոփոխությունները չեն կարող ազդել այն պաշտոնաթող դատավորների վրա, որոնց նկատմամբ կենսաթոշակի իրավունքի ծագման պահին գործող օրենսդրության համաձայն նշանակվել է որոշակի չափով կենսաթոշակ: Հակառակ պարագայում առաջանում է այնպիսի իրավիճակ, որը հակասության մեջ է մտնում իրավական որոշակիության, օրինաչափ ակնկալիքների, օրենքի հետադարձ ուժի արգելքի, սեփականության իրավունքի պաշտպանության հիմնարար իրավական սկզբունքների հետ:

Մինչդեռ՝ 07.03.2018թ. ընդունված և 31.03.2018թ. ուժի մեջ մտած ««Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-143-Ն օրենքը՝ դատավորի նկատմամբ արդեն իսկ նշանակված կենսաթոշակը վերահաշվարկելու (նվազեցնելու) վերաբերյալ կանոն սահմանելու առումով, չի համապատասխանում վերոգրյալ հիմնարար սկզբունքներից բխող չափանիշներին: Ավելին, այդ օրենքի ընդունմամբ անտեսվել է նաև Սահմանադրական դատարանի 16.09.2016թ. թիվ ՍԴՈ-1302 որոշմամբ արձանագրված՝ դատավորի անկախության սոցիալական երաշխիքի կարևոր բաղադրատարր

հանդիսացող՝ կենսաթոշակի իրավունքի վերաբերյալ նրա իրավաչափ սպասելիքների իրացման երաշխավորումն ապահովելու անհրաժեշտությունը:

Հետևաբար, «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» օրենքի՝ 31.03.2018թ. գործող խմբագրությամբ 9-րդ հոդվածի 7-րդ մասում սահմանված՝ դատավորի նկատմամբ արդեն իսկ նշանակված կենսաթոշակը վերահաշվարկելու (նվազեցնելու) վերաբերյալ կանոնի ճիշտ նորմատիվ ձևակերպման դեպքում անգամ դրանով հետապնդվող նպատակը, այսինքն՝ 01.07.2014թ. մինչև 31.03.2018թ. գործող օրենսդրության հիման վրա կենսաթոշակի իրավունք ունեցող դատավորների նկատմամբ արդեն իսկ նշանակված կենսաթոշակի վերահաշվարկումը (նվազեցումը), չի կարող ունենալ որևէ ողջամիտ հիմնավորում:

39. Բացի այդ, «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» օրենքի՝ 31.03.2018թ. գործող խմբագրությամբ 9-րդ հոդվածի 7-րդ մասում սահմանված՝ դատավորի նկատմամբ արդեն իսկ նշանակված կենսաթոշակը վերահաշվարկելու (նվազեցնելու) վերաբերյալ նորմը հակասում է առավել բարձր իրավաբանական ուժ ունեցող՝ 09.04.2018թ. ուժի մեջ մտած «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 57-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված է այն իրավադրույթին, որի համաձայն՝ *դատավորի աշխատավարձը և դրա նկատմամբ սահմանված հավելավճարները, կենսաթոշակի չափը չեն կարող պակասեցվել, բացառությամբ այն դեպքերի, երբ համարժեք պակասեցում կատարվում է բոլոր բարձրաստիճան պաշտոնատար անձանց համար:*

40. Ավելին, Եվրոպայի խորհրդի շրջանակներում ընդունված «Դատավորների կարգավիճակի մասին» 1998թ. Եվրոպական խարտիայի 6.4-րդ կետը սահմանում է, որ *օրենքով սահմանված փարիքի հասնելուց հետո թոշակի անցած դատավորները պետք է ստանան այնպիսի կենսաթոշակ, որի չափը հնարավորինս մոտ է որպես դատավոր նրանց վերջին ստացած աշխատավարձի չափին:*

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 17.11.2010թ. թիվ Rec (2010) 12 հանձնարարականի 54-րդ կետը սահմանում է, որ *դատավորի կենսաթոշակը պետք է ողջամիտ հարաբերակցության մեջ գտնվի նրա ստացած աշխատավարձի հետ:*

Մինչդեռ դատավորի կենսաթոշակի իրավունքի վերաբերյալ 1999թ. մինչ այժմ տեղի ունեցած օրենսդրական զարգացումները վկայում են, որ Հայաստանի Հանրապետությունում չի ապահովվում դատավորի կենսաթոշակի և նրա ստացած աշխատավարձի ողջամիտ հարաբերակցությունը: Վերը նկարագրված օրենսդրական փոփոխությունների արդյունքում դատավորի կենսաթոշակի չափն աստիճանաբար նվազել է, ինչը մեծացրել է խզումը դատավորի կեն-

սաթոշակի և նրա ստացած վերջին աշխատավարձի չափերի միջև: Այսպես, օրինակ, եթե 2000թ. կենսաթոշակի իրավունք ունեցող դատավորի կենսաթոշակը կազմում էր նրա ստացած աշխատավարձի 75%-ը, ապա 31.03.2018թ. հետո 01.07.2014թ. դրությամբ առնվազն 10 տարի պաշտոնավարած և կենսաթոշակի իրավունք ունեցող դատավորի կենսաթոշակը կազմում է մինչև 01.07.2014թ. ստացած աշխատավարձի 49.5%-ը, որը չի կարող գերազանցել պաշտոնային դրույքաչափի 92%-ը:

41. 01.06.2019թ. մինչև 30.10.2019թ. ընկած ժամանակահատվածում 01.07.2014 թվականի դրությամբ առնվազն 10 տարի դատավորի պաշտոնում պաշտոնավարած և կենսաթոշակի իրավունք ունեցող անձանց համար կենսաթոշակի հաշվարկը կատարվում է 01.07.2019թ. ընդունված և 18.07.2019թ. ուժի մեջ մտած «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-101-Ն օրենքով<sup>112</sup> կատարված օրենսդրական փոփոխություններին համապատասխան:

Օրենսդիրը նշված օրենքով սահմանել է հստակ կանոն, որի համաձայն՝ դատավորի կենսաթոշակը հաշվարկելիս հիմք է ընդունվում դատավորի՝ վերջին պաշտոնից ազատվելու օրվա դրությամբ այդ պաշտոնի համար հաշվարկված աշխատավարձը: Այսինքն՝ 01.06.2019թ. հետո գործող օրենսդրական փոփոխությունների արդյունքում 01.07.2014թ. դրությամբ առնվազն 10 տարի դատավորի պաշտոնում պաշտոնավարած անձանց կենսաթոշակը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով տվյալ դատավորի՝ վերջին պաշտոնից ազատվելու օրվա դրությամբ այդ պաշտոնի համար հաշվարկված աշխատավարձը:

Այսինքն՝ *Կենսաթոշակ = Վերջին պաշտոնից ազատվելու օրվա դրությամբ ստացած աշխատավարձ  $\times$  0.9  $\times$  55%, որը չի կարող գերազանցել Պաշտոնային դրույքաչափի 92%-ը, արդյունքում՝ Կենսաթոշակ = Վերջին պաշտոնից ազատվելու օրվա դրությամբ ստացած աշխատավարձ  $\times$  49.5%, որը չի կարող գերազանցել Պաշտոնային դրույքաչափի 92%-ը:*

42. «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքի՝ 01.06.2019թ. մինչև 30.10.2019թ. ընկած ժամանակահատվածում գործող կարգավորումների վերլուծությունը ցույց է տալիս, որ դատավորի կենսաթոշակի չափը պայմանավորված է այն հանգամանքով, թե երբ է տվյալ անձը ձեռք բերել որպես դատավորի պաշտոնավարման 10 տարվա ստաժը՝ 01.07.2014թ. առաջ, թե՛ հետո: Եթե անձը 01.07.2014թ. դրությամբ արդեն իսկ ունեցել է 10 տարվա դատավորի պաշտոնավարման ստաժ, ապա նրա կենսաթոշակը հաշվարկվում է անցումային՝

<sup>112</sup> Թեև նշված օրենքն ուժի մեջ է մտել 18.07.2019թ., սակայն տարածվում է 2019թ. հունիսի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:



«Վերջին աշխատավարձ x 49.5% (որը չի կարող գերազանցել Պաշտոնային դրույքաչափի 92%-ը)» բանաձևով: Իսկ եթե անձը 10 տարվա դատավորի պաշտոնավարման ստաժ ձեռք է բերել 01.07.2014թ. հետո, ապա նրա կենսաթոշակը հաշվարկվում է ընդհանուր կարգով, ինչի արդյունքում նրա կենսաթոշակի չափն էականորեն պակաս է ստացվում, քան 01.07.2014թ. դրությամբ 10 տարվա դատավորի պաշտոնավարման ստաժ ունեցող անձի կենսաթոշակը:

43. Սահմանադրական դատարանը 18.06.2019թ. թիվ ՍԴՈ-1463 որոշմամբ Սահմանադրությանը հակասող է ճանաչել «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի առաջին պարբերությունը, երկրորդ պարբերությունը՝ «մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը գործող օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված աշխատավարձի (պաշտոնային դրույքաչափի և դրա նկատմամբ սահմանված հավելավճարի հանրագումարի) գումարի և զրո ամբողջ ինը տասնորդական գործակցի արտադրյալի 55 տոկոսի չափով» դրույթի մասով, երրորդ պարբերության երկրորդ նախադասությամբ ամրագրված դրույթները, չորրորդ պարբերությամբ նախատեսված իրավակարգավորումը, ինչպես նաև նույն օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասը և նույն հոդվածի 4-րդ մասը՝ դատավորներին վերաբերող մասով:

44. Սահմանադրական դատարանը 18.06.2019թ. թիվ ՍԴՈ-1463 որոշմամբ Սահմանադրությանը հակասող ճանաչված դրույթների ուժը կորցնելու վերջնաժամկետ է սահմանել 30.10.2019թ.՝ հնարավորություն տալով Ազգային ժողովին «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքի վերաբերելի իրավակարգավորումները համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին: Սակայն օրենսդիրը մինչև 30.10.2019թ. չի կատարել Սահմանադրական դատարանի 18.06.2019թ. թիվ ՍԴՈ-1463 որոշումը և չի ընդունել օրենք «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքի կարգավորումներն այդ որոշմանը համապատասխանացնելու համար:

Արդյունքում առաջացել է մի իրավիճակ, որ 30.10.2019թ. հետո «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի կարգավորումներն այլևս չեն գործել, և առկա չի եղել որևէ իրավակարգավորում մինչև 01.07.2014թ. առնվազն 10 տարի դատավորի պաշտոնում պաշտոնավարած անձի կենսաթոշակի վերաբերյալ:

45. Օրենսդիրը «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքի իրավակարգավորումները Սահմանադրական դատարանի 18.06.2019թ. թիվ ՍԴՈ-1463 որոշ-

ման պահանջներին համապատասխանեցնելու փորձը կատարել է միայն 23.03.2022թ. ընդունված և 22.04.2022թ. ուժի մեջ մտած ««Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-78-Ն օրենքով: Այդ օրենքով, մասնավորապես, ուժը կորցրած է ճանաչվել «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերը, ինչպես նաև սահմանվել է, որ դատավորի կենսաթոշակը՝ անկախ այն հանգամանքից, թե երբ է լրացել որպես դատավոր նրա պաշտոնավարման 10 տարվա ժամկետը, հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

**Կ=Հ x Գ + ԿՀՍ x ԿՀՍԱ - ԿԿ, որտեղ՝**

Կ-ն կենսաթոշակի ամսական գումարն է,

Հ-ն՝ սույն օրենքով կենսաթոշակի չափը հաշվարկելու համար հիմք ընդունվող հիմնական կենսաթոշակի չափը,

Գ-ն՝ «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով անձի զբաղեցրած պաշտոնների համար սահմանված առավելագույն գործակիցը,

ԿՀՍ-ն՝ կենսաթոշակը հաշվարկելու համար ստաժը՝ դատավորի պաշտոնը զբաղեցնելու ժամանակահատվածը,

ԿՀՍԱ-ն՝ կենսաթոշակը հաշվարկելու համար ստաժի մեկ տարվա արժեքը,

ԿԿ-ն՝ անուիտետի կամ ծրագրային վճարների ձևով վճարվող կուտակային կենսաթոշակի՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով տվյալ պաշտոնը զբաղեցրած անձի համար (օգտին) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացված լրացուցիչ միջոցներից ձևավորված ամսական չափը:

46. Դատավորների կենսաթոշակի չափի անընդհատ նվազեցումը կանգնեցնելու, դատավորի կենսաթոշակը նրա զբաղեցրած վերջին պաշտոնի աշխատավարձին հնարավորինս մոտեցնելու փոխարեն 23.03.2022թ. թիվ ՀՕ-78-Ն օրենքն էլ ավելի է վատթարացնում կենսաթոշակի իրավունք ունեցող դատավորների կարգավիճակը:

Այսպես՝ ուժը կորցրած ճանաչելով «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասը՝ 01.07.2014թ. դրությամբ դատավորի 10 տարվա ստաժ ունեցող անձինք զրկվում են անցումային՝ «Աշխատավարձ x 49.5% (որը չի կարող գերազանցել Պաշտոնային դրույքաչափի 92%-ը)» բանաձևով կենսաթոշակ ստանալու իրավունքից: Առանց այն էլ անցումային բանաձևով նշանակվող կենսաթոշակի չափը չի բավարարում դատավորի կենսաթոշակին

ներկայացվող նվազագույն չափանիշներին: Իսկ այդ անցումային բանաձևի վերացման դեպքում բոլոր դատավորների կենսաթոշակի չափը հաշվարկվելու է «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ընդհանուր կարգով, որի դեպքում 01.07.2014թ. դրությամբ դատավորի 10 տարվա ստաժ ունեցող անձանց կենսաթոշակն էապես պակասելու է, որպիսի իրավիճակի առաջացումը չի բխում Սահմանադրական դատարանի 18.06.2019թ. թիվ ՍԴՈ-1463 որոշման ոգուց: Սահմանադրական դատարանի այդ որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներից բխում է, որ 01.07.2014թ. դրությամբ դատավորի 10 տարվա ստաժ ունեցող անձանց և 01.07.2014թ. հետո դատավորի 10 տարվա ստաժ ունեցող անձանց կենսաթոշակների չափերի նկատմամբ տարբերակված մոտեցումը պետք է վերանա: 01.07.2014թ. հետո դատավորի 10 տարվա ստաժ ունեցող անձինք պետք է ստանան առնվազն այնքան կենսաթոշակ, որքան ստանում են 01.07.2014թ. դրությամբ դատավորի 10 տարվա ստաժ ունեցող անձինք:

Մինչդեռ 23.03.2022թ. թիվ ՀՕ-78-Ն ՀՀ օրենքով այդ տարբերակված մոտեցումը վերացվել է ի վնաս 01.07.2014թ. դրությամբ դատավորի 10 տարվա ստաժ ունեցող անձանց: Այնինչ դրա փոխարեն առնվազն անհրաժեշտ էր «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքում համապատասխան փոփոխություններ կատարելու միջոցով սահմանել, որ 01.07.2014 թվականից հետո դատավորի 10 տարվա ստաժ ունեցող անձանց կենսաթոշակը հաշվարկվում է այն նույն կերպ, ինչպես որ հաշվարկվում է 01.07.2014թ. դրությամբ դատավորի 10 տարվա ստաժ ունեցող անձանց կենսաթոշակը: Այսինքն՝ անհրաժեշտ է անցումային՝ «*Վերջին աշխատավարձ x 49.5% (որը չի կարող գերազանցել Պաշտոնային դրույքաչափի 92%-ը)*» բանաձևը դարձնել ընդհանուր կարգավորում՝ կենսաթոշակի իրավունք ունեցող բոլոր դատավորների համար՝ անկախ վերջիններիս որպես դատավոր աշխատած ժամանակահատվածներից:

Փաստորեն, 23.03.2022թ. թիվ ՀՕ-78-Ն ՀՀ օրենքով կատարված փոփոխությունը չի ապահովում դատավորի՝ կանխատեսելի, որոշակի, կայուն, իր ստացած վերջին աշխատավարձին հնարավորինս մոտ կենսաթոշակ ստանալու իրավունքի իրացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգերը, երաշխիքներն ու նախադրյալները: Անհրաժեշտ է սահմանել այնպիսի իրավակարգավորում, որ դատավորի կենսաթոշակը հնարավորինս համարժեք լինի դատավորի վերջին ստացած աշխատավարձի չափին: Նշված սկզբունքային դրույթն ամրագրված է մի շարք միջազգային իրավական փաստաթղթե-

րում: Մասնավորապես՝ Եվրոպայի խորհրդի շրջանակներում ընդունված «Դատավորների կարգավիճակի մասին» 1998թ. Եվրոպական խարտիայի 6.4-րդ կետը սահմանում է, որ *օրենքով սահմանված փարիքի հասնելուց հետո թոշակի անցած դատավորները պետք է ստանան այնպիսի կենսաթոշակ, որի չափը հնարավորինս մոտ է որպես դատավոր նրանց վերջին ստացած աշխատավարձի չափին*: Իսկ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 17.11.2010թ. թիվ Rec(2010)12 հանձնարարականի 54-րդ կետը սահմանում է, որ *դատավորի կենսաթոշակը պետք է ողջամիտ հարաբերակցության մեջ գտնվի նրա ստացած աշխատավարձի հետ*:

## ԳԼՈՒԽ 6

### ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

#### **1. Դատավորների պատասխանատվության ինստիտուտի և դատավորի հայեցողության գնահատման արդի հիմնահարցերը**

**Դատավորի պատասխանատվության ինստիտուտը:** Դատավորների պատասխանատվության ինստիտուտի կարևորագույն բաղադրիչներից է, ինչպես արդեն նշվել է, նաև Բարձրագույն դատական խորհրդի որոշումների բողոքարկման հնարավորության հարցը: Ըստ էության, այս հարցի առնչությամբ հարկ է ղեկավարվել Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշմամբ, որն արտահայտվել է 2019 թ. ՍԴՈ-1488 որոշմամբ: Հիշյալ որոշմամբ առանձնացվել են բողոքարկման խնդրին առնչվող երկու վերապահում. «(...) գործող սահմանադրական կարգավորումների համատեքստում բացակայում է Հայաստանի Հանրապետությունում գործող դատարաններից որևէ մեկում (եռաստիճան դատական համակարգի մասով) դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու իրավական հնարավորություն, քանի որ դա կհակասի Բարձրագույն դատական խորհրդի՝ որպես անկախ սահմանադրական մարմնի, կարգավիճակին: Բացի դրանից, տվյալ որոշումների վերանայումը, դրանով իսկ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի լուծումը դուրս է Հայաստանի Հանրապետությունում դատարանների սահմանադրական գործառույթների շրջանակներից»:

Հիշյալ որոշումը իրավական հիմնավորվածության տեսանկյունից մի շարք հարցադրումներ է առաջադրում: Մասնավորապես, Սահմանադրական դատարանի հիմնավորումները վերաբերում են Բարձրագույն դատական խորհրդի, որպես անկախ սահմանադրական մարմնի կարգավիճակին, ինչպես նաև կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերալ որոշումները վերանայելն ազգային դատարանների սահմանադրական գործառույթների շրջանակից դուրս լինելուն: Այս հիմնավորումները, ըստ էության, համընդհանուր են, այսինքն՝ որևէ կապ չունեն այն խնդրի հետ, թե խոսքը Բարձրագույն դատական խորհրդի կոնկրետ որ որոշմանն է վերաբերում: Մասնավորապես, եթե որպես փաստարկ ենք նշում այն, որ կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերալ որոշումները վերանայելն ազգային դատարանների սահմանադրական գործառույթների շրջանակից դուրս է, ապա Բարձրագույն դատական խորհրդի մյուս որոշումների հետ կապված իրավական հիմքեր ևս չկան, մինչդեռ՝ գործնականում բազմաթիվ են Բարձրագույն դատական խորհրդի՝ դատավորի իրավական վիճակի առնչությամբ այլ որոշումների (օրինակ՝ դատավորին բացառիկ հիմքերով մեկ այլ դատարան տեղափոխելու

մասին դիմումը մերժելու մասին և այլն) վիճարկման առնչությամբ վարչական դատարանում քննվող գործերը:

Վերն ասվածից, թերևս, բացառություն կարող են կազմել դատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու և նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու հարցերով կայացված որոշումները, քանզի «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական ի 164-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նշված որոշումներն ընդունվում են դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշում կայացնելու համար սահմանված կարգով, եթե այլ բան սահմանված չէ հիշյալ հոդվածով:

Ինչևէ, գործնականում ձևավորված պրակտիկայի համաձայն, վարչական դատարանում քննվում են Բարձրագույն դատական խորհրդի միայն այն որոշումները, որոնք չեն առնչվում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելուն, ինչպես նաև դատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու և նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու հարցերին:

Կարծում ենք, առավել հիմնավորված կդիտվեր այն դիրքորոշումը, ըստ որի՝ զուտ ընթացակարգային չափանիշներով վարչական դատարանի քննության առարկա դառնար ցանկացած որոշում, վերջին հաշվով, օրենսդրությամբ սահմանված ընթացակարգային նորմերի խախտումներով ընդունված որոշումները որևէ առնչություն չունեն անկախ սահմանադրական մարմնի կարգավիճակի, ըստ այդմ էլ՝ հայեցողության ազատության սահմանափակման հետ: Միաժամանակ, առկա հիմնախնդիրը հիմնովին լուծելու հեռանկարային ու համարժեք եղանակը, այնուամենայնիվ, հարկ է դիտարկել համապատասխան սահմանադրական փոփոխությունների հարթությամբ, ինչին արդեն անդրադարձել ենք:

Միաժամանակ, ողջունելի է Բարձրագույն դատական խորհրդի կողմից իր իսկ որոշումների բողոքարկման ընթացակարգերը բարելավելու նախաձեռնությունը, որն արտացոլվեց 2023 թ. հոկտեմբերի 25-ին ընդունված «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՆՕ-335-Ն օրենքով. ««Բարձրագույն դատական խորհուրդը դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու, դատավորի լիազորությունները դադարեցնելու հարցերի լուծման, դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի և դատավորի լիազորությունները դադարեցնելու մասին որոշումների դեմ բողոքները քննելու լիազորություններն իրականացնում է սույն օրենսգրքով սահմանված կազմերի միջոցով, որոնք հանդես են գալիս Բարձրագույն դատական խորհրդի անունից՝ գործելով որպես Բարձրագույն դատական խորհուրդ»:

Ընդ որում՝ վերը նշված օրենսդրական փոփոխությամբ բացարկի արդյունքում անհրաժեշտ քվորումի բացակայությունը կանխելու նկատառումով պարզապես բացարկն արգելելը իրավիճակային լուծում է, ինչը խիստ խոցելի է

հանրային ծառայողի անհրաժեշտ անաչառությունը և իրավաչափ հայեցողությունը երաշխավորելու տեսանկյունից: Հարկ է, հետագա սահմանադրական փոփոխություններով անդրադառնալ նաև փոխարինողների ինստիտուտին, ինչը, օրինակ՝ կիրառման դրական փորձ ունի ինչպես միջազգային կառույցներում (օրինակ՝ ՄԻԵԴ-ի պարագայում), այնպես էլ միջազգային պրակտիկայում: Վերջին հաշվով, բացարկյալ անխուսափելի և իրավաչափ ինստիտուտ է, այն օրենքի ուժով արգելելը թեպետ սոսկ իրավիճակային լուծում է, սակայն առաջադրում է էլ ավելի վիճահարույց ու խոցելի հարցադրումներ, որոնց արդեն անդրադարձանք:

Դատական ակտերի գնահատման տեսանկյունից կարևոր է նաև դատավորի իրազեկվածության հարցադրումը: Մասնավորապես, կոնկրետ իրավական նորմի առնչությամբ դատավորի իրազեկվածության բացակայությունը ինքնին չի կարող անհրաժեշտ այլ հիմքերի առկայության պարագայում, բավարար համարվել կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար, եթե առնվազն առկա են հետևյալ հիմքերը՝ ա) իրավական նորմը դեռևս չի անցել ողջամիտ կիրառման «փորձաշրջան», չեն ձևավորվել հնարավորինս միասնական դիրքորոշումներ, բ) խմբագրությունն ամբողջությամբ չի համապատասխանում որոշակիության աստիճանին և օբյեկտիվորեն կարող է տարամեկնաբանությունների տեղիք տալ, գ) նույն նորմի առնչությամբ իրազեկվածության պակաս է արձանագրվել նաև մի շարք այլ դատավորների պարագայում և դ) դատավորների վերապատրաստման ծրագրերում այդ հարցադրումները ներառված չեն եղել, դատավորները չեն ծանուցվել ըստ էության՝ նոր իրավական նորամուծությունների առնչությամբ արդեն իսկ ձևավորված գիտագործնական չափանիշներին: Վերջին հաշվով, ԵԴԽԽ-ն ելակետ է ընդունում այն կարևոր հիմնադրույթը, ըստ որի. «Դատական համակարգը պետք է ուսումնասիրվի իր ամբողջության մեջ՝ գնահատելու համար դատական ակտերի որակը»<sup>113</sup>:

Վերն ասվածը, թերևս, չի կարող տարածվել այն դեպքերի վրա, երբ դատավորը պարզապես ծանոթ չլինելով Վճռաբեկ դատարանի նախադեպային դատական այն ակտին, որում արձանագրված են նույնանման փաստերով իրավական նորմի կոնկրետ մեկնաբանություն, դատական ակտում չի հիմնավորում օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտի՝ Վճռաբեկ դատարանի մեկնաբանությունից շեղվելը: Նկարագրված իրավիճակում, թերևս, լրացուցիչ վերապատրաստման կարիք չկա, քանի որ նույնատեսակ փաստերը համադրելու և այդ առնչությամբ Վճռաբեկ դատարանի մեկնաբանություններն ընկալելու հմտությունները համարվում են այն նվազագույնը, որոնց առնվազն պարտավոր է տիրապետել յուրաքանչյուր դատավոր:

<sup>113</sup> Տե՛ս Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի 2008 թ. դեկտեմբերի 18-ի թիվ 11(2008) «Դատական ակտերի որակի մասին» կարծիքի «Հիմնական եզրակացություններ և առաջարկներ» մասի 18-րդ» կետը:

Այս առնչությամբ, թերևս, էական դիտարկում է արձանագրվել ԵԴԽԽ-ի կարծիքում «Դատավորի պրոֆեսիոնալիզմը դատական ակտի որակի առաջնային երաշխիքն է և կարևոր դեր է խաղում դատական ակտի վրա ազդող ներքին միջավայրի հարցում: *Պրոֆեսիոնալիզմի մաս են կազմում դատավորների բարձրակարգ վերապատրաստումը* (ընդգծումը մերն է) իրավունքի վերաբերյալ հարցերով, ինչպես նաև անկախության, էթիկայի և դեոնտոլոգիայի մշակույթի զարգացումը»<sup>114</sup>:

Վերը նշված վերապահումները համահունչ են նաև օրենսդրական պահանջներին, քանզի միայն անհրաժեշտ իրազեկվածություն երաշխավորելու դեպքում հնարավոր կլինի խոսել «կոպիտ անփութության» մասին, ինչը կարգապահական զանցանքի սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշներից է: Բացի այդ, «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն. «Արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս օրենքի մեկնաբանությունը, փաստերի և ապացույցների գնահատումն ինքնին չեն կարող հանգեցնել կարգապահական պատասխանատվության»:

Այսպիսով, պրոֆեսիոնալիզմի, ըստ այդմ էլ՝ դրանով պայմանավորված օրենքի մեկնաբանությունը, փաստերի և ապացույցների գնահատումը չի կարող մեկուսի իրականացվել, այն համարժեք կարող է լինել միայն այն դեպքում, երբ նախապատվությունը տրվում է վերը նշված բոլոր բաղադրիչներին հնարավորինս համալիր անդրադառնալուն:

Էական նշանակություն ունի նաև այնպիսի հարցադրումների առնչությամբ դատավորների վերապատրաստման որակը, որոնք թեպետ անմիջականորեն իրավական չեն, սակայն հնարավորություն են տալիս դատավորին առավել ճշգրիտ կողմնորոշվելու իրավական նշանակություն ունեցող այնպիսի հարաբերություններում, որոնք առնչվում են բարեվարքության կանոններին հետևելու հետ, որոնք լայն հայեցողության պայմաններում օգտակար են լինում առավել արդյունավետ ու ազդեցիկ որոշումներ կայացնել և զերծ մնալ խնդրահարույց վարքագիծ դրսևորելուց:

Խնդիրն այն է, որ դատավորի կարգապահական պատասխանատվության հիմքերից է ոչ միայն արդարադատություն իրականացնելու, այլև դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտումը, դատավորի վարքագծի կանոնները խախտելը («ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետեր):

<sup>114</sup> Տե՛ս նշված «Հիմնական եզրակացություններ և առաջարկներ» մասի 6-րդ կետը:



Ընդհանրապես, հնարավորինս միատեսակ դատական պրակտիկայի ձևավորման պատասխանատվությունը Սահմանադրությամբ վերապահված է Վճռաբեկ դատարանին, սակայն զուտ գործնական հարթությամբ առաջավոր փորձին համարժեք իրազեկված լինելու, ընդհանրապես դատական պրակտիկայում հաջողված դատական ակտերի մասին պատկերացում կազմելու տեսանկյունից մեծ դեր կարող են ունենալ համապատասխան ձեռնարկները, որոնք լայն տարածում ունեն միջազգային փորձի համատեքստում: Այսպիսի ձեռնարկների պատրաստումը ոչ միայն բարձրացնում է դատավորների պրոֆեսիոնալիզմը, այլև ուղղորդող նշանակություն է ունենում նույն այդ ձեռնարկների պատրաստման կամ դրանց հրատարակման գործում իրավասու և էական ներդրում ունեցող այն սահմանադրական մարմինների համար, որոնք պատասխանատու են դատավորի կարգապահական պատասխանատվության գործընթացում:

Հարկ է նկատի ունենալ, որ դասական իմաստով նախադեպային իրավունքի բացակայության պարագայում, օրենքների միատեսակ կիրառումը երաշխավորելու տեսանկյունից հնարավոր չէ բավարարվել սուկ Վճռաբեկ դատարանի որոշումներով, ուստի նաև այս հանգամանքի հաշվառմամբ է, որ օրենսդրությունը յուրաքանչյուր անձի համար վերապահել է նաև այլ դատարանների որոշումների վրա հղումներ անելու իրավունք. «Յուրաքանչյուր ոք իր գործի քննության ժամանակ որպես իրավական փաստարկ իրավունք ունի վկայակոչելու նույնանման փաստերով այլ գործով Հայաստանի Հանրապետության դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտում առկա օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտի մեկնաբանությունները: Դատարանն անդրադառնում է նման իրավական փաստարկներին»: Պարզապես, խնդիրն այն է, որ տվյալ դեպքում, «մեկնաբանություն» եզրույթը չի կարող օգտագործվել դասական իմաստով, այն չի կարող ունենալ իրավաստեղծ նշանակություն, քանզի հայրենական իրավական համակարգում չի գործում դասական իմաստով նախադեպային իրավունք:

Հիշյալ տեսանկյունից, թերևս, որոշակի հաջողություններ են գրանցվել Սահմանադրական դատարանի պրակտիկայում: Նկատի ունենք այն, որ վերջինս իր տարեկան զեկույցներում ոչ թե պարզապես զետեղում է իր կողմից ընդունված որոշումները, այլ նախապատվությունը տվել է դրանց վերլուծությանը, կատարման ընթացքին և ընդհանրապես որոշումներին առնչվող իրավական հարցադրումների էական բաղադրիչներին:

Ինչ վերաբերում է դատական ակտերի որակի գնահատմանը, այլ ոչ թե կոնկրետ օրինականությանը և հիմնավորվածությանը, ապա դա իրավաչափ է վերապահել ոչ թե վերադաս դատական ատյանին, այլ անկախ սահմանադրական մարմնի, ինչպիսին Բարձրագույն դատական խորհուրդն է: Իհարկե, ոչ պաշտոնական հետազոտությունները ևս կարող են որոշ վերապահումներով պիտանի լինել:

Հաճախ, դատավորի կողմից նյութական և դատավարական իրավանորմների խախտումը թելադրված է լինում օրենսդրության թերություններով, այդ թվում՝ այնպիսի կոլիզիաներով, որոնք ոչ միայն հնարավոր չէ հաղթահարել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 40-րդ հոդվածով ամրագրված իրավական կոլիզիաների լուծման կանոններով, այլև տեսականորեն դժվար է լինում դրանք սահմանազատել կարգավորման առանձնահատկություններից: Խնդիրն այն է, որ օրենսդրությունը որոշ դեպքերում նախատեսում է կարգավորման թույլատրելի առանձնահատկություններ, սակայն գիտագործնական և օրենսդրական հարթությամբ ոչ միայն կանխորոշված չեն այդ առանձնահատկությունների սահմանները, այլև որոշակիացված չեն դրանք հակասություններից սահմանազատելու չափանիշները: Այսպես, օրինակ՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով առանձին տեսակի վարույթների առանձնահատկությունների մասով սահմանել է ընդամենը հետևյալը. «Առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով»: Այս առնչությամբ բազում կարևոր հարցերի, ցավոք, օրենսդրական հարթությամբ որևէ անդրադարձ չի արվել, օրինակ՝ որո՞նք են այդ առանձնահատկությունների թույլատրելի սահմանները, այդպիսիք նախատեսելու անհրաժեշտ չափանիշները, ինչպե՞ս են դրանք տարանջատվում հակասություններից և այլն:

Հավելենք, որ հիշյալ դիտարկումները վերաբերում են նաև դատավորների թեկնածուների հավակնորդների և դատավորների թեկնածուների ցուցակներում ընդգրկված անձանց կարգապահական պատասխանատվության հիմքերին և առանձնահատկություններին:

Ինչ վերաբերում է քաղաքական զսպվածության և քաղաքական չեզոքության պահանջներին, և այդ պահանջները շրջանցելու դեպքում, կարգապահական պատասխանատվության հարցադրումներին, ապա դրանց հանգամանորեն անդրադարձ է արվել սույն ձեռնարկի 6.2. պարագրաֆում:

**Դատավորի հայեցողության գնահատումը:** Դատավորի հայեցողության հարցադրումները դատավորի պատասխանատվության համատեքստում քննարկելը պայմանավորված է այն առանցքային փաստով, որ հենց հայեցողության գնահատման արդյունքում է որոշվում դատավորին պատասխանատվության ենթարկելու իրավաչափությունը: Ոչ իրավաչափ դատական ակտ կայացնելը կամ որևէ դատավարական գործողություն կատարելը ինքնին բավարար հիմք չէ դատավորին կարգապահական կամ այլ տեսակի պատասխանատվության ենթարկելու համար, եթե դատավորը գործել է իրեն վերապահված հայեցողության իրավաչափ սահմաններում:

Դատավորի հայեցողության գնահատման առնչությամբ, թերևս, առկա են հանրահայտ իրավատեսական հիմքեր, ուստի սույն ձեռնարկում նպատակահարմար ենք գտնում անդրադառնալ առավել խնդրահարույց ասպեկտներին: Ինչևէ, մինչև հայեցողության գնահատման նշված ասպեկտներին անդրադառ-

նալը, խիստ կարևոր է նկատել, որ դատավորի հայեցողությունը գործում է երկու սկզբունքային նշանակություն ու արժեք ունեցող շահերի բախման կիզակետում, ըստ այդմ էլ՝ հարկ է ոչ թե միմյանց հակադրել, այլ ապահովել անհրաժեշտ ներդաշնակություն, մի կողմից՝ արդարադատության հանրային շահի, մյուս կողմից՝ դատավորի անկախության միջև: Հավասարապես անընդունելի են ինչպես արդարադատության հանրային շահի պաշտպանության տարաբնույթ պատճառաբանություններով դատավորի հայեցողության շրջանակները սահմանափակելու, այնպես էլ անսահմանափակ հայեցողության ձգտելու միտումները:

Ինչ վերաբերում է քաղաքական զսպվածության և քաղաքական չեզոքության, լրատվության միջոցների հետ փոխհարաբերության և նմանաբնույթ այլ հարթությամբ դատավորի հայեցողության սահմաններին, ապա դրանց անդրադարձ է արված սույն ձեռնարկի համապատասխան հատվածներում:

Ըստ էության, դատավորի հայեցողությունը գանահատելիս, հարկ է նկատի ունենալ, որ այն ունի երկակի դրսևորում՝ ա) դատավորը գնահատելով հանրային իշխանության իրավասու մարմինների և պաշտոնյաների իրավական ակտերի, գործողության և անգործության իրավաչափությունը, անդրադառնում է նաև վերջիններիս կողմից հայեցողության թույլատրելի շրջանակներում գործելու հարցադրմանը և բ) ինքն է դրսևորում իրավաչափ հայեցողություն՝ հիմնավորելով այդ առնչությամբ իր դիրքորոշումները:

Հայեցողության առաջին ասպեկտի առնչությամբ դատարանը ելակետ է ընդունում այն, թե հայեցողության ինչպիսի շրջանակներ է նախատեսում օրենսդրությունը, կամ ընդհանրապես նախատեսում է: Ասվածը վերաբերում է նաև միջազգային պայմանագրերին, քանի որ դրանք ևս հնարավորինս հստակ ամրագրում են ազգային օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի սահմանները:

Իհարկե, երբ որևէ իրավական ակտով սահմանվում են հայեցողության շրջանակներ, բնավ չի նշանակում, որ այդ շրջանակներում գործում է ազատ հայեցողության սկզբունքը. յուրաքանչյուր դեպքում իրավաստեղծ կամ իրավակիրառ գործունեություն իրականացնելիս հարկ է ղեկավարվել պետաիշխանական տվյալ իրավասության իրականացման համար նախատեսված հայեցողության սահմանափակման սկզբունքով և օրինական շահերով: Այսպես, օրինակ՝ վարչարարություն իրականացնելիս վարչական մարմինները պարտավոր են ղեկավարվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված իրավանորմով. «Հայեցողական լիազորություն իրականացնելիս վարչական մարմինը պարտավոր է առաջնորդվել մարդու և քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, վարչարարության իրականացման համաչափության և կամայականության արգելքի սկզբունքներով, ինչպես նաև հետապնդել օրենքով կանխորոշված այլ նպատակներ»:

Ինչ խոսք, թեպետ վերը նշված հողվածով ընդգծված է Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությունը, այնուամենայնիվ, հարկ է ելակետ ընդունել այն, որ Սահմանադրությամբ ամրագրված են նաև այնպիսի միանշանակ պահանջներ, որոնք հավասարապես վերաբերում են ցանկացած բնույթի հայեցողության սահմաններին: Խոսքն այնպիսի հիմնադրույթների մասին է, ինչպիսիք են, օրինակ՝ որոշակիության սկզբունքը, համաչափության սկզբունքը, հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ դրույթների էության անխախտելիությունը և այլն: Ինչ վերաբերում է Սահմանադրության 81-րդ հոդվածով սահմանված հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան հաշվի առնելու պահանջին, ապա հարկ է համարժեք ընկալել «պրակտիկա» եզրույթը: Մասնավորապես, իր բովանդակությամբ այն ընդգրկում է և չի կարող սահմանափակվել սոսկ միջազգային կազմակերպությունների իրավական ակտերով կամ միջազգային դատարանների դատական ակտերով, այն ներառում է նաև միջազգային վավերացված պայմանագրերի հիման վրա գործող մարմինների իրավական արժեք ունեցող մյուս փաստաթղթերին՝ բանաձևեր, եզրակացություններ և այլն: Իհարկե, այս դատողությունը չպետք է ընկալել դատավորի հայեցողությունը սահմանափակելու ասպեկտով, քանզի դատավորը իրավասու է իր իրավաչափ հիմնավորումներով շեղվել այդ պրակտիկայից, այդ թվում՝ «կենդանի մեխանիզմի» սկզբունքի հիմքով:

Դատավորի հայեցողության առնչությամբ հարկ է նկատել, որ վերջինս պարտավոր չէ բավարարվել օրենսդրությամբ ստույգ և որոշակի ամրագրված իրավակարգավորումներով: Դատավորի բարձր պատասխանատվության և արհեստավարժության ցուցիչ է նաև այն, թե վերջինս ինչպես է կարողանում իրավաչափ եղանակներով հաղթահարել օրենքի բացերը: Մասնավորապես, հենց արհեստավարժության աստիճանի մասին է վկայում, օրինակ՝ օրենքի կամ իրավունքի անալոգիայի կիրառմամբ օրենքի բացերը հաղթահարելը: Ընդ որում, հարկ է նկատել, որ օրենքի կամ իրավունքի անալոգիա կիրառելը չի թողնվել իրավակիրառ մարմնի հայեցողությանը, այն միանշանակ պահանջ է, ինչն ամրագրված է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով: Այսպես, այդ օրենքի 1-ին մասով ամրագրված է. «Եթե օրենսդրության մեջ բացակայում է կոնկրետ հասարակական հարաբերությունը կարգավորող իրավական նորմը, սակայն օրենսդրությամբ սահմանված է համանման հարաբերությունները կարգավորող այլ իրավական նորմ, ապա այդպիսի հարաբերությունների նկատմամբ (եթե դա չի հակասում դրանց էությանը) կիրառվում են (ընդգծումը մերն է) համանման հարաբերություններ կարգավորող իրավական նորմերը (օրենքի անալոգիա)»:

Ինչ վերաբերում է դատավորի սեփական հայեցողության սահմաններին, ապա անհրաժեշտ է նկատել, որ հայեցողությունը կայուն, ձևավորված դիրքորոշումների համակարգ չէ, այն կարող է փոփոխվել նաև այն դեպքում, երբ իրավական հիմքերը բացարձակապես չեն ենթարկվում փոփոխությունների: Տվյալ դեպքում, դատավորը հիմք է ընդունում այն իրողությունը, որ հիմնարար իրավական փաստաթղթերը (օրինակ՝ Սահմանադրությունը, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան և այլն) «կենդանի մեխանիզմներ են», ուստի դրանցում ամրագրված իրավական դրույթները մեկնաբանելիս, անխուսափելիորեն հարկ է համարժեքորեն հաշվի նստել ոչ միայն այդպիսիք ընդունելու պահին ձևավորված իրավական պատկերացումների, այլև դրանց հետ անմիջականորեն առնչվող հետագա իրավական զարգացումների, մասնավորապես իրավական մշակույթի էական բաղադրիչների հետ: Պատահական չէ, որ ՄԻԵԴ-ը բացարձակապես միատեսակ փաստական և իրավական հիմքերի պայմաններում, եթե դրանք միմյանցից տարանջատված են ոչ միայն պարզապես ժամանակագրական կտրվածքով, այլև արդեն առնչվում են բովանդակային կտրվածքով միանգամայն այլ իրավիճակների հետ, վերանայում են իրենց նախադեպային դատական ակտերը:

Գործնականում հարկ է համարժեք ընկալել վերը նշված դիրքորոշման համընդհանուր լինելը և ելակետ ընդունել այն, որ Վճռաբեկ դատարանի մեկնաբանությունները ևս անվերապահորեն իրավական հիմք չեն, եթե դատարանը կարողանում է հիմնավորել դրանցից շեղվելը. «Նույնանման փաստերով այլ գործով Վճռաբեկ դատարանի կողմից իրավական նորմի մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանության դեպքում դատարանը պետք է հիմնավորի օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտի՝ Վճռաբեկ դատարանի մեկնաբանությունից շեղվելը» («ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մաս): Ասվածից չի բխում, որ դատավորի հիմնավորումն ինքնին բավարար հիմք է Վճռաբեկ դատարանի մեկնաբանությունից շեղվելն իրավաչափ դիտարկելու համար (այս կտրվածքով կարևոր է նաև դատավորների հայեցողության շրջանակների հարցադրումը), բայց և ինքնին վկայում է այն մասին, որ այդպիսի շեղումները չեն կարող գնահատվել ոչ իրավաչափ սոսկ այն պատճառաբանությամբ, որ փաստական ու իրավական հիմքերը նույնական են եղել:

Դատավորի հայեցողության գնահատման հաջորդ կարևոր ասպեկտը կապված է հանրության կարծիքի օբյեկտիվ գնահատման հետ, այդ թվում՝ իր անձի նկատմամբ: Մասնավորապես, այդպիսի հոգեբանական իրավիճակ է ստեղծվում, երբ դատավորը փորձում է իր հայեցողությամբ գնահատել ինքնաբացարկի հիմքերը: Այս առնչությամբ դեռևս իրավատեսական բավարար դիրքորոշումներ չեն ձևավորվել, իսկ Բարձրագույն դատական խորհրդի դիրքորոշումը կարող է միայն ելակետային դիտարկվել, քանի որ խիստ հատվածաբար է առնչվում հիշյալ խնդրին. **«Միաժամանակ Բարձրագույն դատական**

խորհուրդը գտնում է, որ թերևս վկայակոչված հոդվածը<sup>115</sup> հայեցողություն է տալիս դատավորին որոշելու, թե կոնկրետ որ հանգամանքը կարող է ողջամիտ կասկած հարուցել իր անաչառության վերաբերյալ, պետք է հաշվի առնել, որ այդ հանգամանքները պետք է ոչ միայն դատավորի կարծիքով լինեն ինքնաբացարկի հիմք, այլև անկողմնակալ դիտորդի մոտ ողջամիտ կասկած առաջացնելու իրական և հիմնավոր վտանգ ներկայացնելու հիմք հանդիսանան: Բարձրագույն դատական խորհուրդը շեշտում է, որ ողջամիտ կասկած առաջացնելու մտավախությունը պետք է լինի իրական և ոչ թե մտացածին՝ պայմանավորված զուտ դատավորի մեկնաբանությամբ և անձնական գնահատականներով»<sup>116</sup>: Հիշյալ դիրքորոշումը չի կարող նմանաբնույթ իրավիճակներում դիտարկվել իբրև դատավորի հայեցողության սահմանների սպառիչ գնահատման մեկնակետ: Վերջին հաշվով, դատավորի կարծիքը ոչ թե ապրիորի է ձևավորվում, որ գնահատվի «մտացածին», այլ հաշվի է առնվում հենց անկողմնակալ դիտորդի մոտ ողջամիտ կասկածը, որի գնահատման պատասխանատուն հենց դատավորն է: Դատավորի կարծիքը կարող է խոցելի, անբավարար դիտարկվել, եթե այն զուրկ է սպառիչ հիմնավորումներից, այսինքն՝ դատավորը չի փորձում հստակ ու սպառիչ բացահայտել իր հայեցողության ձևավորման նախադրյալները, այլապես ստացվում է, որ դատավորի փոխարեն անկողմնակալ դիտորդի ողջամիտ կասկածը գնահատելու հայեցողական լիազորությունն ստանձնում է որևէ այլ մարմին, փվյալ դեպքում՝ Բարձրագույն դատական խորհուրդը:

Հայեցողությունը չի տարածվում այն հարաբերությունների վրա, որոնցում դատավորին վերապահված են միանշանակ պարտականություններ, որոնք չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը առաջացնում է իրավական հետևանքներ, ընդհուպ՝ իրավական պարտասխանավություն: Այսպես, «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով նախատեսված առանձին դեպքերում, դատավորը պարզապես պարտավոր է կատարել օրենսդրությամբ սահմանված պահանջը: Օրինակ՝ դատավորը պարտավոր է անցնել բժշկական զննություն՝ Բարձրագույն դատական խորհրդի կողմից բժշկական զննություն նշանակելու որոշման հիմքով, իսկ նշված պարտականության կատարումից խուսափելը հանգեցնում է դատավորի լիազորությունների դադարեցմանը (159-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ) և այլն:

Այսպիսով, դատավորների հայեցողությունը կարող է իրավաչափ համարվել, եթե ստույգ ուրվագծվում է հստակ չափանիշներով, որոնց անդրադարձանք վերևում, ինչը նշանակում է, որ այն չի կարող անսահմանափակ լինել, բայց և չի կարող անհարկի խոչընդոտել արդար դատաքննության

<sup>115</sup> Խոսքը «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածի մասին է:

<sup>116</sup> Տե՛ս Բարձրագույն դատական խորհրդի «Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Դավիթ Գրիգորյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ» 2019 թ. մայիսի 13-ի թիվ ԲԴԽ-27-Ո-Կ-09 որոշումը:

*իրավունքին: Հայեցողության փարաբնութի դրսևորումները էլ ավելի խնդրահարույց են Վճռաբեկ դատարանի պարագայում: Այս փեսանկյունից, թերևս, հարկ է հիմք ընդունել նաև ԵԴԽԽ-ի այն դիրքորոշումը, ըստ որի՝ «Նախադեպերի հակասությունների կարգավորման, օրենքի հեղուկացումն ու միափեսակ կիրառության և նախադեպերի միջոցով իրավունքի զարգացումն ապահովելու դերերն առաջին հերթին փրված են գերագույն դատարանին (այս դեպքում հարկ է հասկանալ բարձրագույն դատական ատյանին, այսինքն՝ Վճռաբեկ դատարանին)»<sup>117</sup>:*

## **2. Դատավորների քաղաքական զսպվածության և քաղաքական չեզոքության սահմանները, հրապարակայնության սկզբունքը**

Աշխարհաքաղաքական զարգացումներին համահունչ անխուսափելիորեն նկատվում են քաղաքական գործունեությամբ զբաղվելու, քաղաքական չեզոքության սահմանափակումները վերանայելու բացահայտ միտումներ: Հեղինակություն և բարի համբավ վայելող, բայց քաղաքական չեզոքությամբ սահմանափակված հանրային ծառայողներն անխուսափելիորեն ելակետ են ընդունում այն իրողությունը, որ հաղորդակցության էլեկտրոնային համակարգերի ներդրմանը զուգահեռ՝ առավել դյուրին եղանակով լայն ճանաչողություն են ապահովում ոչ այնքան նեղ մասնագիտական, արհեստավարժ աշխատանքների մասին նյութերը, որքան սուր քաղաքական ուղղվածություն ունեցող ելույթները և տեղեկատվությունը՝ ընդհանրապես: Մյուս կողմից, նույն այդ հանրային ծառայողները, զրկված լինելով քաղաքական ուժերի հանիրավի թիրախավորմանը համարժեք արձագանքելու հնարավորությունից, փորձում են այլընտրանքային գործիքների դիմել, սակայն անխուսափելիորեն բախվում են դեռևս հստակ չուրվագծված քաղաքական չեզոքության արգելքի հետ, իսկ նշված ոլորտում իրավական որոշակիության բացակայությունն էլ ավելի է վատթարացնում պետական համակարգի բնականոն գործունեության ընդհանուր վիճակը: Կարծում ենք՝ մենք գործ ունենք ժողովրդավարության ու բյուրոկրատիայի բախման միանգամայն նոր դրսևորումների հետ, որոնք թերևս հանգեցնում են ժողովրդավարության սկզբունքների խոցելիությանը: Այս առնչությամբ կառավարության հիմունքների գերմանացի տեսաբան, փիլիսոփա Մաքս Վեբերը նկատել է. «Ըստ էության, ժողովրդավարությունը, գոնե ձևական հարթությամբ, ունի բյուրոկրատիայի աջակցության կարիքը, մինչդեռ բյուրոկրատիան չունի ժողովրդավարության կարիքը»<sup>118</sup>:

Ապաքաղաքականացվածության սկզբունքի սահմաններն ու հիմքերը, հատկապես դատավորների առնչությամբ, զգալիորեն վերանայվում են նաև

<sup>117</sup> Տե՛ս Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի 2017 թ. նոյեմբերի 10-ի թիվ 20(2017) «Օրենքի միատեսակ կիրառության մասով դատարանների դերի մասին» կարծիքի «Հիմնական եզրակացություններ և առաջարկներ» մասի «ե» կետը:

<sup>118</sup> Տե՛ս Weber M., (1947), The Theory of Social and Economic Organisation (New York: Oxford University Press). էջ 341:

բոլոր այն երկրներում, որոնք դատավորների համար կուսակցությանն անդամակցելն արգելք չեն համարում: Ընդ որում՝ աշխուժություն նկատվում է հենց դատավորների շրջանում, քանզի վերջիններս առավել հաճախ են փորձում դիմակայել քաղաքական ուժերի՝ իրենց պատկերացմամբ ոչ իրավաչափ արձագանքներին, ըստ այդմ էլ՝ բոլոր հնարավոր միջոցներով, այդ թվում՝ գիտական հետազոտությունների հարթությամբ, ձգտում են հիմնավորել իշխանության այլ ճյուղերի հետ փոխհարաբերություններում իրենց առավել անկաշկանդ գործունեության երաշխիքներ ամրագրելու անհրաժեշտությունը<sup>119</sup>:

Մեծ հաշվով, հիշյալ զարգացումները, թերևս, կարելի է առավելապես բացատրել դատարանների հաշվետվողականության ինստիտուտի արդիականացմամբ: Ինչ խոսք, այս ինստիտուտն արդար դատաքննության իրավունքի երաշխավորման և դատական համակարգում կոռուպցիայի դեմ պայքարի տեսանկյունից չափազանց կարևոր նախաձեռնություն է, սակայն չենք կարող անտեսել, որ ցանկացած ազդեցություն անխուսափելիորեն հանգեցնում է որոշակի հակազդեցության: Ընդ որում՝ այդ հակազդեցությունը ներկայումս առնվազն համակարգված և անհրաժեշտ չափով կանոնակարգված չէ, ինչի արդյունքում ծագում են տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք տվող իրավիճակներ, ընդհուպ՝ փոխադարձ մեղադրանքներով բանավեճեր և այլն:

Ինչևէ, ապաքաղաքականացվածության սկզբունքը մի կողմից նպաստում է պաշտոնական դիրքի չարաշահմամբ քաղաքական գործընթացների վրա ապօրինի ազդեցությունները բացառելուն, մյուս կողմից՝ զրկում է հիրավի պահանջված քաղաքական ու մասնագիտական փորձ ունեցող պաշտոնյաների ներուժը հանրային շահերին ծառայեցնելու ծանրակշիռ հնարավորությունից: Այսպիսով, հիշյալ սկզբունքն առանձնանում է երկակի, հաճախ իրարամերժ որակներով, որոնց ներդաշնակեցման անհրաժեշտությունը ձեռք է բերել խիստ արդիական նշանակություն: Ընդ որում՝ այս հատվածի նկատմամբ քաղաքական ուժերի վերաբերմունքը ևս միանական չէ՝ իշխող քաղաքական ուժը հակված է քողարկված եղանակներով օգտվելու ապաքաղաքականացվածության սկզբունքով սահմանափակված հանրային պաշտոնյաների ծառայությունից, մինչդեռ նույն այդ փաստի հաշվառմամբ ընդդիմադիր քաղաքական ուժերը ձգտում են բացահայտել այդպիսի դրսևորումները և հնարավորինս բացառել համագործակցությունը<sup>120</sup>: Որոշ հեղինակներ պնդում են, որ ապաքաղաքականացվածության սկզբունքը չպետք է խոչընդոտ լինի լավագույն ու փորձված մասնագետներին քաղաքական հարցերում հիմնարար լուծումներ գտնելու գործընթացում ներգրավելուն<sup>121</sup>:

<sup>119</sup> Տե՛ս, օրինակ՝ **C. Pollitt & G. Bouckaert**, *Public Management Reform: A Comparative Analysis*, 2000, էջ 24-25:

<sup>120</sup> Տե՛ս **Simon Baddeley and Kim James**, *From political neutrality to political wisdom*, *Politics* (1987)7(2), 30, էջ 39:

<sup>121</sup> Տե՛ս **Simon Baddeley, Sand James, K.**, (1987)18(1), «Owl, Fox, Donkey or Sheep: Political Skills for Managers», *Management Education and Development*, էջ 15:



Միջազգային փորձի, ինչպես նաև հայրենական իրավաստեղծ ու իրավակիրառ գործունեության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այս անընդունելի իրավիճակին նպաստել է նաև այն, որ իրավական որոշակիության բացակայությանը զուգահեռ ազգային օրենսդրությամբ աստիճանաբար ավելի ու ավելի է ընդլայնվել հիրավի անկախ ու ինքնավար կարգավիճակով օժտված հանրային պաշտոնյաների նկատմամբ քաղաքական ուժերի ազդեցության գործիքների շրջանակը, մասնավորապես՝ ներդրվել են դատախազների, դատավորների և այլ պաշտոնյաների նշանակման ու ընտրության այնպիսի կառուցակարգեր, որոնք բացահայտ հնարավորություն են ընձեռել քաղաքական իշխող ուժին չարաշահելու եղած հնարավորությունները: Ըստ էության, չարաշահումների կանխարգելումը հնարավոր կլիներ, եթե նույն ազգային օրենսդրությամբ ներդրված լինեին իշխանությունների բաժանման և հավասարակշռման հուսալի կառուցակարգեր և ընթացակարգեր, մինչդեռ իշխող քաղաքական ուժերը, կարծում ենք, գործնականում չեն ցուցաբերում անհրաժեշտ զսպվածություն՝ անընդունելի ազդեցությունները սահմանափակելու հարցում:

Օրենսդրությամբ հաճախ լայն կիրառում են ստանում լրջագույն իրավական հետևանքներ առաջացնող այնպիսի եզրույթներ, որոնց մոտավոր բնորոշումն անգամ պարզապես բացակայում է: Որպես կանոն, գործնական հարթությամբ ընդհանուր ընկալումն այն է, որ դրանք հանրահայտ եզրույթներ են, անհրաժեշտ չափով համապատասխանում են իրավակարգավորման որոշակիության սկզբունքին, ուստի կարիք չկա լրացուցիչ բացահայտելու դրանց բովանդակությունը:

Անշուշտ, կան բազում եզրույթներ, որոնք բովանդակային կտրվածքով պարզաբանման, առավել ևս մեկնաբանման կարիք չունեն, դրանք գիտության այս կամ այն ճյուղում կիրառվում են իրենց համընդհանուր նշանակությամբ՝ զուտ բացատրական բառարանաբանության կանոններով ներկայացվող իմաստով: Սակայն ասվածը բացարձակապես չի վերաբերում այն եզրույթներին, որոնց կենցաղային կամ հասարակակգիտական իմաստը ոչ միայն համընդհանուր չէ և ուղեկցվում է տարաբնույթ մեկնաբանություններով, այլև ակնհայտ չի համապատասխանում դրանց մասնագիտական ընկալումներին: Եվ այս տեսանկյունից «քաղաքականություն» եզրույթը բնավ բացառություն չէ, ինչի մասին է վկայում օրենսդրությունում կիրառվող այդ եզրույթի բովանդակության առնչությամբ գործնականում խիստ իրարամերժ դիրքորոշումների առկայությունը: Ընդ որում՝ խոսքը ոչ միայն այս կամ այն կառույցին, պետական մարմնին կամ պաշտոնյային ուղղված հրապարակային քննադատության, այլև առանձին դեպքերում պաշտոնատար անձանց լիազորությունները դադարեցնելու և այլ բնույթի սանկցիաներ կիրառելու հիմնավորվածության մասին է: Ցավոք, հայրենական իրավակիրառ տեսանկյունից համալիր վերլուծության դիմելը գրեթե անհնարին է, քանզի այն սահմանափակվում է միայն որոշակի պաշտոնյաների կամ հանրային դեմքերի (օրինակ՝ կրոնական գործիչների) քաղաքական զսպվածության արգելքը շրջանցելու մեղադրանք բովանդակող հրապարա-

կային կոչերով<sup>122</sup> կամ կոնկրետ պետական ծառայողներին ազատվելու դիմում գրելու առերևույթ պարտադրանքով<sup>123</sup>: Ընդ որում՝ իրավական որոշակիության իսպառ բացակայության պայմաններում խիստ խոցելի են դառնում հատկապես դատավորների անկախության երաշխիքները, քանզի վերջիններիս կողմից անգամ առերևույթ իրենց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նպատակով արված հայտարարությունները տարաբնույթ շարժառիթներով հաճախ ընկալվում են իբրև քաղաքական զսպվածության կամ քաղաքական չեզոքության խախտումներ՝ դրանցից բխող բացասական հետևանքներով հանդերձ:

«Քաղաքականություն» եզրույթը ոչ միայն ընդհանուր, այլև իրավագիտության կտրվածքով չի կարող միանշանակ բնորոշվել հենց այն պատճառով, որ այն գործնականում, ինչպես նաև օրենսդրությամբ կիրառվում է տարբեր իմաստներով: Ընդ որում՝ առավել տարածված է, երբ քաղաքականությունը բնորոշվում է որպես պետական կառավարման հոմանիշ, հատկապես՝ Կառավարության կողմից ներքին և արտաքին քաղաքականությունը մշակելու և իրականացնելու իմաստով, կամ երբ մեկնաբանվում է որպես կուսակցական գործունեություն՝ իր բոլոր բաղադրիչներով հանդերձ: Նկատենք, որ «քաղաքականություն» եզրույթի բոլոր հնարավոր դրսևորումները համալիր արտացոլված են Էդուարդ Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում». «Քաղաքականություն, գ. 1. Պետական իշխանության՝ կուսակցության կամ հասարակական խմբի (դասակարգի) գործունեությունը ներպետական կառավարման և արտաքին հարաբերությունների բնագավառում, որ բնորոշվում է այդ պետության (կուսակցության, դասակարգի) դասակարգային շահերով 2. Ներքին և արտաքին հարաբերությունների հետ կապված հարցերի լուծման ընդհանուր քաղաքական ուղղվածությունն ու բնույթը: 3. Մեկի՝ մի բանի գործունեության ընդհանուր ուղղությունն ու բնույթը, վարվելակերպ, գործելակերպ, վարքագիծ: 4. Քաղաքական գործունեություն»<sup>124</sup>: Ինչպես տեսնում ենք, քաղաքականությունը տարբեր իմաստներով, մասնավորապես՝ և՛ որպես կառավարման գործառույթ, և՛ որպես զուտ կուսակցական գործունեություն դիտելը բնորոշ է նաև ընդհանուր բացատրական բառարանաբանությանը: Սա թերևս հնարավոր

<sup>122</sup> Տե՛ս, օրինակ՝ Մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանի կողմից իբր քաղաքական հայտարարություններ անելու վերաբերյալ Ազգային ժողովի պատգամավոր Մարիա Կարապետյանի (<https://www.youtube.com/watch?v=ppD112krc8w>), կամ Անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանի (<https://www.youtube.com/watch?v=ppD112krc8w>) ելույթները: Նույն կերպ Ազգային ժողովի պատգամավոր Արթուր Հովհաննիսյանը պնդել է, որ Բարձրագույն դատական խորհրդի նախագահ Ռուբեն Վարդազարյանը հնչեցրել է քաղաքական բնույթի հայտարարություններ (<https://www.azatutyun.am/a/31131307.html>) և այլն:

<sup>123</sup> Այս դեպքում փաստարկը համարում ենք «ենթադրյալ», քանզի դրա հիմքում դրված են սոսկ մամուլում արտացոլված մեծաթիվ հավաստիացումները: Ընդ որում՝ առանձին դեպքերում այդպիսի հայտարարություններով հանդես են եկել նաև ծառայությունից ազատվելու դիմումներ գրած բազմաթիվ պետական ծառայողները:

<sup>124</sup> Տե՛ս **Էդուարդ Բազրատի Աղայան**, Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» Հրատարակչություն, Երևան, 1976, էջ 1545:

րություն է տալիս հնարավորինս համարժեք ուրվագծել «քաղաքականություն» և հարակից եզրույթների բովանդակությունը և որոշակիացնել այդ եզրույթներով ուղեկցվող վարքագծի կանոնները:

Մի կարևոր դիտարկում միջազգային փորձի կտրվածքով. անդրադառնալով ապաքաղաքականացվածության սկզբունքին՝ արևմտյան Եվրոպայի երկրների հանրային իրավունքի աղբյուրներում կիրառվում է հիմնականում՝ «քաղաքական չեզոքության» եզրույթը, մինչդեռ «քաղաքական զսպվածություն» եզրույթը հազվադեպ է կիրառվում<sup>125</sup>: Ընդ որում՝ «քաղաքական չեզոքություն» եզրույթի բնորոշումն այնքան լայն է, որ ընդգրկում է նաև «քաղաքական զսպվածություն» եզրույթի բաղադրիչները: Իրավակիրառ տեսանկյունից, կարծում ենք, առավել ընդունելի է միայն «քաղաքական չեզոքությամբ» բավարարվելը, քանզի բովանդակային կտրվածքով այն զգալիորեն մոտ է «քաղաքական զսպվածությանը» և միաժամանակ երկուսի կիրառումը գործնականում անհարկի բարդություններ է ստեղծում, մանավանդ, որ ոչ միայն օրենսդրությամբ, այլև հայրենական հետազոտողների աշխատություններում դրանց հստակ բնորոշումը տրված չէ և նպատակահարմար էլ չէ դրան անդրադառնալ, քանզի բովանդակությամբ գրեթե նույնական եզրույթները միմյանցից տարանջատելու անհարկի խնդիր է ծագում:

Սույն ձեռարկում, հաշվի առնելով հետազոտության նպատակը, նպատակահարմար չենք համարում համալիր քննարկել «քաղաքականություն» եզրույթի էվոլյուցիային, քանզի խնդիրն առավելապես առնչվում է մեր ժամանակներում այդ եզրույթի ընկալմանը: Պարզապես նկատենք, որ քաղաքականության արմատները, որպես կանոն, փոխկապակցվում են անտիկ Հունաստանի քաղաքներում քաղաքական մտքի հետ: Մասնավորապես, անգլիացի հելլենիստ **Մոսես Ֆինլեյթ** նկատել է, որ քաղաքականությունը դեմոդեոնիստական աշխարհում քիչ տարածված գործունեություն է, և այն առավելապես **հունական** ծագում ունի, ինչի արդյունքում վերջինս հույներին առանձնացրեց բոլորից<sup>126</sup>: Ի դեպ, իր հոշակավոր «Քաղաքականություն» մենագրությունում<sup>127</sup> Արիստոտելն այդ եզրույթն ընկալել է ակնհայտ լայն մեկնաբանությամբ, ներառելով ոչ միայն պետության քաղաքականությունը, այլև այնպիսի հարցադրումներ ու բաղադրիչներ, ինչպիսիք են ընտանիքի՝ որպես պետության բջջի, հիմնախնդիրները, ստրկությունը, քաղաքացիությունը, պետության բնորոշումը և այլն:

<sup>125</sup> Տե՛ս, օրինակ, **Simon Baddeley and Kim James**, From political neutrality to political wisdom, *Politics* (1987)7(2), 30, էջ 35-36, **Richard Y. Schauffler**, Judicial accountability in the US state courts Measuring court performers' *Utrecht law Review*, published by igitur, էջ 112-113, judicial restraint, judicial restraint – Britannica online Encyclopedia, էջ 3 և այլն:

<sup>126</sup> Տե՛ս *L'invention de la politique*, Flammarion, 1985, էջ 89:

<sup>127</sup> Տե՛ս **Аристотель**, Политика, перевод С.А. Жебелева, Сочинения в 4 т., Т. 4, Мысль, 1983, с. 376-644, հասանելի է հետևյալ կայքում՝ <https://www.litres.ru/aristotel/politika-18979153/chitat-onlayn/>.

Վերևում արդեն անդրադարձանք այն խնդրին, որ «քաղաքականություն» եզրույթը օրենսդրությամբ ուղեկցվում է մի քանի հարակից եզրույթներով, որոնցից յուրաքանչյուրն ուղղված է ինքնուրույն վարքագծի կանոն սահմանելուն: Ընդհանուր առմամբ, պաշտոնյաների և այլ հանրային դեմքերի առնչությամբ սահմանափակումներ կիրառելիս, առավել լայն տարածում ունեն հետևյալ եզրույթները՝ «քաղաքականություն», «քաղաքական գործունեություն», «քաղաքական զսպվածություն» և «քաղաքական չեզոքություն»: Ընդ որում՝ գործնականում խնդիրն ավելի է բարդանում, երբ հարկ է լինում միմյանցից սահմանազատել ըստ էության գրեթե նույնաբովանդակ եզրույթները (օրինակ՝ «քաղաքական զսպվածություն», թե՛ «քաղաքական չեզոքություն» և այլն) և ըստ այդմ էլ ճշգրիտ որակել պաշտոնյայի արարքը:

Կարևորում ենք նաև ապաքաղաքականացվածության սկզբունքի էության ամբողջական բացահայտումը: Խնդիրն այն է, որ այս սկզբունքը ունի երկակի նշանակություն. մի կողմից այդ սկզբունքը քաղաքական համակարգը զերծ է պահում իշխող քաղաքական ուժի կողմից ընտրված կամ նշանակված ազդեցիկ պաշտոնյաների հնարավոր ոչ իրավաչափ ազդեցությունից, մյուս կողմից՝ երաշխավորում է հենց այնպիսի պաշտոնյաների ինքնուրույն, քաղաքական ուժերից անկաշկանդ գործունեությունը, որոնց կարգավիճակը զուտ նեղ մասնագիտական է, որևէ առնչություն չունի քաղաքական գործընթացների և քաղաքական դիրքորոշումների հետ: Այլ կերպ ասած՝ ապաքաղաքականացվածության սկզբունքի խելամիտ կիրառումը ոչ թե սահմանափակում է հատուկ կարգավիճակով օժտված հանրային ծառայողների գործունեությունը, այլ այն դարձնում է առավել անկաշկանդ և նպաստում է անհրաժեշտ անկախությանը քաղաքական ուժերից: Մյուս կողմից, երբ հիշյալ սկզբունքը դրսևորվում է որոշակի խաթարումներով, ապա նշված հանրային ծառայողների մոտ ձևավորվում են իշխող քաղաքական ուժին նվիրված լինելու տարաբնույթ նկրտումները, ինչը որոշ հեղինակներ գնահատում են ընդհուպ, որպես «ստրկամտություն»<sup>128</sup>: Քաղաքական ուժերը չպետք է օգտվեն իրավական որոշակիության բացակայությունից և փորձեն հանիրավի սահմանափակել հանրային ծառայողների կողմից հնչող քննադատությունը:

«Քաղաքականություն» եզրույթի և դրան առնչվող հարակից այլ եզրույթների իրավական հիմքերի վերլուծությունը ցույց է տալիս, որ ոչ միայն յուրաքանչյուր եզրույթ պետք է ունենա մյուսներից տարբերվող բովանդակություն, այլև միևնույն եզրույթը կարող է կիրառվել միմյանցից էապես տարբերվող մի քանի նշանակությամբ: Ընդ որում՝ եզրույթի նշանակությունը բացահայտելու տեսանկյունից էական դեր ունեն մի շարք գործոններ՝ իրավահարաբերության բնույթը և ծագման ոլորտը, սուբյեկտի կարգավիճակը, արտահայտության կամ գործողության իրական շարժառիթները, սահմանափակման

<sup>128</sup> Տե՛ս **Simon Baddeley and Kim James**, From political neutrality to political wisdom, *Politics* (1987)7(2), 30, էջ 37:

իրավական հիմքերի առանձնահատկությունները և այլն: Սա խիստ կարևոր խնդիր է, քանզի խոսքը վերաբերում է այդ եզրույթներով ուղեկցվող այնպիսի վարքագծի կանոններ սահմանելուն, որոնց խախտումների համար սահմանված են լրջագույն իրավական հետևանքներ:

«Քաղաքականություն» եզրույթը իրավական տեսանկյունից բացահայտելու համար անխուսափելիորեն հարկ է անդրադառնալ նաև դրա առավել տարածված ընդհանուր իմաստներին, քանզի դրանք այս կամ այն չափով ևս բովանդակում են իրավական բաղադրիչներ: Նկատենք, որ մասնագիտական գրականությունում հաճախ կարելի է հանդիպել «քաղաքական գործունեություն» եզրույթի մեկնաբանությունների, սակայն դրանց համալիր վերլուծությունը ցույց է տալիս, որ արդյունքում այդպես էլ չի լուծվում որոշակիության խնդիրը, քանզի բնորոշումներում հավասարապես կիրառվում են դարձյալ լրացուցիչ պարզաբանման կարիք ունեցող եզրույթներ և հասկացություններ, ինչպես օրինակ՝ «քաղաքական հարաբերություններ», «քաղաքական համակարգ», «քաղաքական շահեր», «ապաքաղաքականացվածություն» և այլն: Մասնավորապես, երբ քաղաքական գործունեությունը մեկնաբանվում է որպես քաղաքական հարաբերություններ ձևավորելուն միտված գործընթաց, անխուսափելիորեն հարկ է լինում անդրադառնալու նաև այն հարցին, թե իսկ ինչ են իրենցից ներկայացնում քաղաքական հարաբերությունները, ինչ իմաստով են դրանք դիտարկվում այս կամ այն արտահայտության համատեքստում:

Այժմ անդրադառնանք վերը նշված եզրույթների իրավական հիմքերին և համակարգային վերլուծության արդյունքում փորձենք բացահայտել դրանց իրավական ստույգ նշանակությունը և կիրառման սահմանները: Այսպես, նախ՝ Սահմանադրության 8-րդ հոդվածի 3-րդ մասով ժողովրդի քաղաքական կամքի ձևավորման ու արտահայտման համատեքստում կարևորվում է բացառապես կուսակցությունների դերակատարումը: Իհարկե, քաղաքական կամքն անմիջականորեն չի ուրվագծում քաղաքական գործունեության սահմաններն ու եղանակները, սակայն հիշյալ նորմը ելակետային նշանակություն ունի այն իմաստով, որ հայրենական իրավական համակարգը, հանձինս Սահմանադրության, քաղաքական կամքը փոխկապակցում է քաղաքական համակարգի կարևորագույն բաղադրիչներից մեկի՝ կուսակցությունների գործունեության հետ, ինչը հուշում է, որ քաղաքական կամքն անմիջականորեն ընկալվում է որպես հանրային իշխանության ձևավորման գործընթացում իրավաչափ ակնկալիքներ ունեցող կուսակցության առանցքային գործունեության թիրախ: Ընտրական օրենսդրությունը ինչպես համապետական, այնպես էլ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում հիմնական դերակատարումը վերապահում է հենց կուսակցություններին, ինչի արդյունքում «կուսակցություն» եզրույթը հաճախ դիտվում է որպես «քաղաքականություն» եզրույթի հոմանիշ, ըստ այդմ էլ՝ «քաղաքական գործունեություն» եզրույթն առավելապես փոխկապակցվում է անմիջականորեն կուսակցությունների կամ

որևէ կուսակցության առնչությամբ, վերջինիս շահերին համահունչ կամ դեմ կեցվածքով իրականացվող գործունեության հետ:

Այն, որ կուսակցությանն անդամակցելը բնավ չի համարվում միանշանակ սահմանափակում քաղաքական պաշտոն չգրադեցնող բոլոր պաշտոնյաների համար, բխում է Սահմանադրության 46-րդ հոդվածի կարգավորումներից, ըստ որոնց՝ կուսակցության անդամ չեն կարող լինել միայն դատավորները, դատախազները և քննիչները: Իր լիազորությունների իրականացման ընթացքում կուսակցության անդամ չի կարող լինել նաև Հանրապետության նախագահը (Սահմանադրության 124-րդ հոդվածի 5-րդ մաս): Մարդու իրավունքների պաշտպանի, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամների, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամների, Հաշվեքննիչ պալատի անդամների, Կենտրոնական բանկի նախագահի և խորհրդի անդամների պարագայում Սահմանադրությամբ նախապատվությունը տրվել է առավել լայն շրջանակով սահմանափակումներին. վերջիններս իրենց լիազորությունների իրականացման ժամանակահատվածում չեն կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ որևէ այլ կերպ զբաղվել քաղաքական գործունեությամբ: Հրապարակային ելույթներում նրանք պետք է ցուցաբերեն քաղաքական զսպվածություն (Սահմանադրության 193-րդ հոդվածի 3-րդ մաս, 195-րդ հոդվածի 5-րդ մաս, 197-րդ հոդվածի 5-րդ մաս, 199-րդ հոդվածի 5-րդ մաս և 201-րդ հոդվածի 4-րդ մաս):

Մինչդեռ զինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության և այլ ռազմականացված մարմիններում ծառայողների համար կուսակցության անդամության արգելք սահմանելը Սահմանադրությունը թողել է օրենսդրի հայեցողությանը: Ընդ որում՝ ներկայումս հիշյալ հանրային ծառայողների առնչությամբ օրենսդրությամբ սահմանված է կուսակցության անդամության արգելք:

Հավելենք, որ դատավորների վերաբերյալ Սահմանադրությունը սահմանափակվել է միայն քաղաքական գործունեության արգելք սահմանելով (Սահմանադրության 164-րդ հոդվածի 7-րդ մաս), թեպետ՝ «Հ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով այդ սահմանափակումն առավել լայն շրջանակներով է ամրագրվել. «Դատավորը չի կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ հիմնադիր, կուսակցությունում պաշտոն զբաղեցնել, կուսակցության անունից ելույթներ ունենալ կամ այլ կերպ զբաղվել քաղաքական գործունեությամբ: Դատավորը հրապարակային ելույթներում և ցանկացած այլ հանգամանքներում պարտավոր է դրսևորել քաղաքական զսպվածություն և չեզոքություն» (4-րդ հոդվածի 1-ին մաս): Նույնպիսի իրավանորմ է բովանդակում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 4-րդ հոդվածի 5-րդ մասը: Ընդ որում՝ այսպիսի օրենսդրական կարգավորումը, մեր կարծիքով, խնդրահարույց է, քանի որ Սահմանադրությամբ ընդամենը նախատեսվել է, որ *դատավորների կարգավիճակին վերաբերող մանրամասները* սահմանվում են Սահմանադրական դատարանի մասին օրենքով և Դատական

օրենսգրքով, այսինքն՝ խոսքը բացառապես մանրամասներին է վերաբերում, ոչ թե միանգամայն նոր վարքագծի կանոններ սահմանելուն: Նշված իրավական կարգավորումը կարող է ընկալվել, որպես այն իրողության արձանագրում, որ օրենսդիրը ևս հստակ չի սահմանափակում «քաղաքական գործունեությամբ զբաղվելը» «քաղաքական զսպվածությունից» և «քաղաքական չեզոքությունից», ուստի ելակետ է ընդունել այն, որ քննարկվող դեպքում քաղաքական զսպվածությունը և քաղաքական չեզոքությունը քաղաքական գործունեության բաղադրատարրեր են: Մյուս կողմից՝ այսպիսի մոտեցումը խնդրահարույց է, քանի որ այլ պաշտոնյաների վերաբերյալ սահմանադրական նորմերի բովանդակությունը ցույց է տալիս, որ Սահմանադրությունը քաղաքական գործունեությամբ զբաղվելը հստակ տարանջատում է քաղաքական զսպվածությունից և քաղաքական չեզոքությունից՝ դրանք ամրագրելով, որպես վարքագծի ինքնուրույն կանոններ:

Ինչևէ, սահմանադրաիրավական նորմերի համալիր վերլուծությունը հնարավորություն է տալիս համակարգված ներկայացնելու «քաղաքականություն» եզրույթի և դրանով կազմված արտահայտությունների տարբերակված երկու իմաստները՝

1) նախ, «քաղաքականություն» եզրույթը կիրառվում է բացառապես պետության գործառույթի իմաստով, ըստ այդմ էլ՝ վերջինիս տակ նկատի է ունեցվում ինչպես պետության գործառույթների ողջ համակցությունը, օրինակ՝ «պետական քաղաքականությունը» (11-րդ և 86-րդ հոդվածներ), այնպես էլ կոնկրետ ոլորտներում իրականացվող գործունեությունը, օրինակ՝ «հայապահպանմանն ուղղված քաղաքականությունը», «արտաքին քաղաքականությունը», «ներքին քաղաքականությունը», «տնտեսական և ֆինանսական քաղաքականությունը», «տարածքային քաղաքականությունը», «դրամավարկային քաղաքականությունը» և այլն (13-րդ, 19-րդ, 132-րդ, 146-րդ, 154-րդ հոդվածներ):

Երբ «քաղաքականություն» եզրույթն ամրագրվում է իբրև պետության հիմնական գործառույթ, այն բովանդակային կտրվածքով չի կարող նույնացվել այդ եզրույթի այն բաղադրիչների հետ, որոնք բնորոշում են հանրային իշխանության նկատմամբ սուբյեկտիվ պատկերացումների հետ, մասնավորապես, այն ընդհանուր ոչինչ չունի քաղաքական կամքի ձևավորման, իշխանության, ինչպես նաև կուսակցությունների նկատմամբ ունեցած վերաբերմունքի դրսևորման հետ,

2) վերջապես, «քաղաքականություն» եզրույթի հաջորդ, առավել խնդրահարույց իմաստն արդեն փոխկապակցվում է որոշակի պաշտոնյաների կոնկրետ վարքագծի սահմանափակման հետ: Մասնավորապես, ամրագրվում է քաղաքական գործունեության արգելքը՝ իր մի շարք բաղադրիչներով, հատկապես քաղաքական զսպվածությունը և կուսակցություններին անդամակցելու արգելքը: Ընդ որում՝ թեպետ՝ «քաղաքական գործունեությամբ զբաղվելու արգելքը» ներկայացված է «քաղաքական զսպվածությունից» տարան-

ջատված, բովանդակային կտրվածքով վերլուծությունը ցույց է տալիս, որ տվյալ դեպքում դրանք փոխհարաբերվում են իբրև ամբողջը և մասը:

Հիշյալ եզրահանգման համար հիմք է հանդիսանում այն, որ միևնույն նորմով «քաղաքական զսպվածությունը» պարզապես հաջորդում է «քաղաքական գործունեության արգելքին» և կարող է դիտարկվել իբրև այդ արգելքի մասնավոր դեպք: Այս եզրահանգման մասին է խոսում նաև այն, որ սահմանադրական և ընթացիկ օրենքներով «քաղաքական գործունեության արգելքը» մանրամասնելիս, սահմանվել են այնպիսի սահմանափակումներ, ինչպիսիք են «քաղաքական զսպվածությունը», «քաղաքական չեզոքությունը» և այլն:

Հարկ է հիմք ընդունել այն հիմնարար մոտեցումը, որ քաղաքական գործունեությունն առավելապես կապված է կուսակցական գործունեության հետ, քանզի հենց կուսակցություններն են կոչված ոչ միայն ձևավորելու ժողովրդի քաղաքական կամքը, այլև արտահայտելու այն: Ընդ որում՝ սահմանադրական մարմինների, հատկապես իշխանության օրենսդիր և գործադիր մարմինների ձևավորման ողջ գործընթացը փոխկապակցվում է կուսակցությունների քաղաքական գործունեության հետ: Թերևս սրանով է պայմանավորված սահմանադրական այն կարգավորումը, ըստ որի՝ դատավորների, դատախազների և քննիչների համար ամրագրված է կուսակցության անդամությունը բացառող արգելք, իսկ զինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության և այլ ռազմականացված մարմիններում ծառայողների համար կուսակցությանն անդամագրվելու իրավունքի սահմանափակումներ սահմանելու իրավասությունը թողնված է օրենսդիր մարմնի հայեցողությանը: Այլ կերպ ասած՝ կուսակցական գործունեությունն ինքնին համարվում է քաղաքական գործունեության ինքնուրույն բաղադրիչ:

Այս տեսանկյունից, Սահմանադրությամբ ելակետ է ընդունվել այն, որ Սահմանադրությամբ նախատեսված սահմանադրական մարմինների առանձին պաշտոնյաների պարագայում քաղաքական գործունեությամբ զբաղվելու արգելքն անվերապահորեն ուղեկցվել է որևէ կուսակցությանն անդամագրվելու արգելքի հետ:

Ասվածից բնավ չի բխում, որ քաղաքական գործունեությունը և կուսակցական անդամությամբ պայմանավորված գործունեությունն ամբողջապես նույնական են, և կուսակցական անդամ չհանդիսացող ցանկացած այլ անձ սկզբունքորեն զրկված է անմիջականորեն քաղաքական գործունեությամբ զբաղվելու փաստացի հնարավորությունից: Քաղաքական գործունեությամբ կարելի է զբաղվել՝ նաև չլինելով կուսակցության անդամ, սակայն այս տեսանկյունից խիստ անհրաժեշտ է որոշակիացնել, թե կոնկրետ ինչպիսի գործունեությունը կարող է համարվել քաղաքական, կամ օրինակ՝ ինչպիսի հայտարարությունը կարող է որակվել, որպես քաղաքական զսպվածության կամ քաղաքական չեզոքության արգելքի խախտում և այլն:



Թեպետ կուսակցության անդամության բացակայությունն ինքնին չի բացառում քաղաքական գործունեությունը, այնուամենայնիվ, կուսակցական անդամությունից զատ, հրապարակային և հանրային բնույթի գործունեությունը չի կարող ինքնին համարվել քաղաքական, եթե այն որևէ առնչություն չունի կուսակցական գործունեության բաղադրիչների և դրա շրջանակներում ներառված այլ նույնաբնույթ հարցադրումների հետ: Կարծում ենք՝ սա ելակետային արժեք ունեցող վերապահում է, քանզի հակառակ պարագայում քիչ թե շատ անձնավորված կամ կոնկրետ քաղաքական ուժի կողմից ձևավորված հանրային իշխանությանն ուղղված ցանկացած հրապարակային քննադատություն կարող է ապրիորի որակվել որպես քաղաքական զսպվածության արգելքի խախտում, ինչին, ցավոք, ականատես ենք լինում գործնականում:

Հավելենք, որ կուսակցությունների գործունեության առնչությամբ այլ կառույցների փոխհարաբերության շրջանակների վերաբերյալ հնարավոր չէ առանձնացնել հստակ ձևավորված և հետևողականորեն իրականացվող դիրքորոշում, հատկապես կապված հասարակական կազմակերպությունների հետ: Այսպես, դեռևս 1991 թ. փետրվարի 26-ին ընդունվեց «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» վերտառությամբ օրենք, որով հանիրավի և անհարկի նույնացվեցին հասարակական կազմակերպությունները քաղաքական կուսակցությունների հետ, կառույցներ, որոնք իրենց էությամբ ու կարգավիճակով իրավունքի բոլորովին այլ սուբյեկտներ են: Այս օրենքի առանցքային գաղափարը սուկ այն էր, որ բացառվեք Հայաստանում գործող կուսակցությունների ղեկավար մարմինների ձևավորումը Հայաստանից դուրս: 1996 թ. հոկտեմբերի 22-ին ընդունված «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքով ընդամենն արգելվում էր կուսակցությունների մասնակցությունը մանկապատանեկան հասարակական կազմակերպությունների գործունեությանը (5-րդ հոդվածի 4-րդ մասը), այլ կերպ ասած՝ մյուս հասարակական կազմակերպությունների գործունեությանը կուսակցություններն անարգել կարող էին մասնակցել: 2001 թ. դեկտեմբերի 4-ին ընդունված «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքով արգելվեց քաղաքական նպատակ հետապնդելը (3-րդ հոդվածի 1-ին մաս), ինչից բխում էր, որ հասարակական կազմակերպությունը, օրինակ՝ չէր կարող իր աջակցությունը հնչեցնել այս կամ այն քաղաքական ուժի վերաբերյալ, սատարել այս կամ այն կուսակցությանը և այլն: Նկատենք, որ այս սահմանափակումը հանվեց արդեն 2016 թ. դեկտեմբերի 16-ի «Հասարակական կազմակերպությունների մասին» գործող օրենքով:

Ստորև համակարգված անդրադառնանք այն չափորոշիչներին, որոնք հնարավորություն կտան որոշակիացնելու, թե որ դեպքում գործունեությունը, հրապարակային հայտարարությունը կամ կեցվածքը կարող են որակվել որպես քաղաքական գործունեության արգելքի, քաղաքական զսպվածության կամ չեզոքության խախտում:

- քաղաքական գործունեությունը չի սահմանափակվում միայն կուսակցական գործունեությամբ, հատկապես կուսակցությանն անդամակցելով: Անմիջապես քաղաքական գործունեություն կարող է իրականացվել նաև կուսակցական գործունեության շրջանակներից դուրս, ընդ որում՝ դա կարող է լինել ինչպես օրինական, այնպես էլ՝ ոչ իրավաչափ: Կուսակցության անդամության արգելքը ինքնին չի բացառում քաղաքական գործունեությունը, սակայն այդպիսի արգելքի դեպքում տվյալ պաշտոնյան ղեկավարվում է ոչ թե որևէ քաղաքական ուժի, այլ համապետական, համազգային շահերով: Այսպես, Հանրապետության նախագահը Սահմանադրության 124-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ իր լիազորությունների իրականացման ընթացքում չի կարող լինել որևէ կուսակցության անդամ, իսկ 123-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ իր լիազորություններն իրականացնելիս անաչառ է և առաջնորդվում է *բացառապես համապետական և համազգային շահերով*: Ընդ որում՝ «Հանրային ծառայության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, Հանրապետության նախագահը պետական *քաղաքական պաշտոնյա է*,
- իշխանությունների հասցեին ուղղված քննադատությունը կարող է քաղաքական որակվել միայն այն դեպքում, երբ հաստատվում է, որ այն հետապնդել է որևէ քաղաքական ուժին, կուսակցությանն աջակցելու կամ թիրախավորելու նպատակ,
- քաղաքական ուժերի առնչությամբ գնահատական հնչեցնելը պետք է փոխկապակցվի իշխանության հետ առնչակցության տեսանկյունից, ընդ որում՝ էական չէ, վարքագծի բուն շարժառիթն անձնական ակնկալիքներն են, թե սուբյեկտիվ պատկերացումները,
- դատավորները կոնկրետ գործեր քննելիս ցանկացած եղանակով իրավասու չեն փոխկապակցելու քաղաքական գործընթացները իրենց վարույթում քննվող կոնկրետ գործերի հանգամանքների հետ, նրանք կարող են անդրադառնալ քաղաքական գործընթացներին միայն այնքանով, որքանով, որ դրանք անմիջականորեն վերաբերում են դատական իշխանությանը և բխում են իրենց անկախությունն անխաթար պահելու անհրաժեշտությունից,
- որևէ վարքագիծ քաղաքական որակելու համար անհրաժեշտ է անդրադառնալ նաև քաղաքական ուժերի պահվածքին, մասնավորապես: Եթե որոշակի քաղաքական բաղադրիչներ ունեցող վարքագիծը թելադրված է ոչ թե զուտ քաղաքական ուժի առնչությամբ զուտ սուբյեկտիվ պատկերացումներով, այլ սեփական բարի համբավն անխաթար պահելու նկատառումով, ապա այն չի կարող որակվել, որպես քաղաքական,

- ապաքաղաքականացվածության չափանիշները միասնական չեն բոլոր այն պաշտոնյաների համար, որոնք պարտավոր են զերծ մնալ քաղաքական գործունեությունից, մասնավորապես, դա թելադրված է կոնկրետ չափանիշներով՝
- ա) իրենց օրինական շահերը պաշտպանելու իրավաչափ եղանակների անհրաժեշտությամբ,
- բ) համապետական և համազգային շահերով ղեկավարվելու պահանջով,
- գ) իրենց կամ իրենց համակարգի նկատմամբ քաղաքական ուժերի պահվածքով և այլն:

Այսպիսով, իրավաչափ հիմքերով քաղաքականությամբ զբաղվել կարելի է նաև առանց որևէ քաղաքական ուժի առնչությամբ դատողություններ անելու կամ գործունեություն իրականացնելու: Այս դեպքում, պարզապես անհրաժեշտ է, որպեսզի կեցվածքը, դիրքորոշումները և ողջ գործունեությունը, անկախ նրանից, թե որ քաղաքական ուժին են վերաբերում, բացառապես թելադրված լինեն համապետական և համազգային շահերով:

Մյուս կողմից՝ բոլոր այն դեպքերում, երբ պաշտոնյան (օրինակ՝ դատավորները, քաղաքական պաշտոնյաներ չեն) իրավասու չէ զբաղվելու քաղաքական գործունեությամբ՝ անգամ համապետական և համազգային շահերի հետապնդմամբ:

Այսպիսով, հրապարակային որևէ գործունեություն, հայտարարություն կամ ցանկացած այլ ձևով արտահայտման դրսևորում կարող է որակվել քաղաքական միայն հետևյալ պայմանների առկայության դեպքում՝ այն միտված է գործող քաղաքական իշխանության առնչությամբ ուղղակի կամ անուղղակի գնահատման համատեքստում որևէ քաղաքական ուժի առավելությունների կամ թերությունների մասին հրապարակային դիրքորոշում հնչեցնելուն կամ նույն շարժառիթով որևէ քաղաքական ուժի գործունեությանը խոչընդոտելուն կամ աջակցելուն, և դրանք թելադրված չեն իրենց օրինական շահերի պաշտպանության շարժառիթով: Միաժամանակ, հիշյալ հարցադրումները կարող են ամբողջական, համալիր պատասխաններ ունենալ միայն այն դեպքում, երբ յուրաքանչյուր կոնկրետ իրավիճակում հավասարապես հաշվի ենք առնում շարժառիթները, տվյալ պաշտոնյայի կարգավիճակը, քաղաքական ուժերի կողմից դրսևորվող կեցվածքը և այլն:

Վերը շարադրված նյութը հնարավորություն է տալիս նաև սահմանազատելու «քաղաքական գործունեություն», «քաղաքական զսպվածություն» և «քաղաքական չեզոքություն» հասկացությունները:

Մասնավորապես, «քաղաքական գործունեությունը» ենթադրում է վերը նշված վավերապայմաններով ուղեկցվող այնպիսի գործունեություն, որն անմիջականորեն առնչվում է որևէ քաղաքական ուժին սատարելու կամ վերջինիս վարկանիշը նվազեցնելու հետ և պայմանավորված է տվյալ անձի քաղաքա-

կան ակնկալիքներով: Ընդ որում, ակնկալիքը կարող է դրսևորվել տարաբնույթ եղանակներով՝ ինչպես կուսակցական գործունեության մաս կազմելու, այնպես էլ քաղաքական ուժի աջակցությունն ակնկալելու շարժառիթով:

«Քաղաքական զսպվածություն» և «քաղաքական չեզոքություն» եզրույթները բովանդակային կտրվածքով գրեթե նույնական են: Ընդհանուրը, թերևս, այն է, որ վերջիններս որևէ կերպ չեն կարող առնչվել վերը նշված մեկնաբանությամբ՝ քաղաքական գործունեության հետ: Կարծում ենք, օրենսդիրն առանձնապես չի անդրադարձել այս եզրույթների բովանդակությունն առավել որոշակի ամրագրելուն, ուստի, որպես կանոն, բավարարվել է «ապաքաղաքականացվածության սկզբունքի խախտում» ընդհանուր եզրույթով (օրինակ՝ «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մաս): Կարծում ենք, որ «ապաքաղաքականացվածության սկզբունքի խախտում» հասկացությունն այնքան էլ արդարացված չէ, քանզի այն ակնհայտ համընդհանուր բովանդակություն ունի և հավասարապես կարող է կիրառվել բոլոր երեք սահմանափակումների վրա, այդ թվում՝ քաղաքական գործունեության:

Առանձնահատկություններին անդրադառնալիս, «քաղաքական զսպվածության» պարագայում կարող ենք ընդգծել վերը նշված վավերապայմաններին համահունչ արտահայտություններից, իսկ «քաղաքական չեզոքության» պարագայում՝ գործունեությունից զերծ մնալը: Այսպես, օրինակ՝ «քաղաքական զսպվածության» արգելքի խախտում կարող է դիտարկվել դատավորի կողմից հնչած այնպիսի արտահայտությունը, որով վերջինս մասնագիտական քննարկումների ժամանակ, քննադատելով որևէ իրավական ակտի նախագիծ, դրա ենթադրյալ թերությունները փոխկապակցում է նախագծի հեղինակ քաղաքական ուժի գաղափարների հետ: «Քաղաքական չեզոքության» օրինակ կարող է լինել այն, երբ դատախազը դե ֆակտո քաղաքական հետապնդումներ է նախաձեռնում որևէ քաղաքական ուժի ներկայացուցիչների նկատմամբ՝ արտաքուստ ժխտելով այդպիսի ընտրանքային գործելաոճի իրական շարժառիթները:

Ինքնըստինքյան, կուսակցության անդամակցության տեսանկյունից որոշակի պաշտոնյաների համար արգելքներ սահմանելը ի զորու չէ ծառայել քաղաքական չեզոքության և զսպվածության նպատակին: Վերջապես, դատախազներն ու ուժային կառույցների այլ պաշտոնյաները, քաղաքական իշխող ուժին կարող են սպասարկել ոչ թե բացահայտ, այդ թվում՝ տվյալ քաղաքական կուսակցությանն անդամագրվելով, այլ քողարկված բազում եղանակներով, ընդհուպ՝ ընդդիմադիրների նկատմամբ բացահայտ քաղաքական դրդապատճառներով շինծու քրեական հետապնդումներ իրականացնելով:

Միաժամանակ, անհրաժեշտ է նկատել, որ բոլոր այն իրավական համակարգերում, որտեղ բացակայում է «քաղաքական զսպվածություն» եզրույթը, վերջինս իր բովանդակությամբ ամբողջությամբ կարող է ներառվել «քաղաքական չեզոքություն» հասկացությամբ:

Վերևում արդեն անդրադարձանք նաև դատավորների քաղաքական չեզոքության իրավական հիմքերին և դրանց բարելավման առավել էական հիմնահարցերին: Միաժամանակ նպատակահարմար ենք գտնում նկատել, որ դատական իշխանության անկախության համատեքստում առկա են որոշ նրբություններ՝ կապված դատավորների ապաքաղաքականացվածության հետ: Խնդիրն այն է, որ դատավորների պարագայում հիշյալ սկզբունքի երկակի բնույթն առավել սուր է դրսևորվում, մասնավորապես՝ դատավորը, փորձելով պաշտպանվել իշխանության մյուս ճյուղերի կողմից իր հասցեին ուղղված հանիրավի քննադատություններից կամ ոչ իրավաչափ արտահայտություններից, պարտավոր է դրսևորել այնպիսի վարքագիծ, որպեսզի ինքն իրեն չկաշկանդի կոնկրետ գործերով լիարժեք արդարադատություն իրականացնելու հնարավորությունից, անհարկի չստեղծի բացարկի կամ ինքնաբացարկի հիմքեր և այլն:

Իհարկե, նշված խնդրի տեսանկյունից առաջնահերթ պահանջ է առաջադրվում իշխանության մյուս ճյուղերին, վերջիններս պարտավոր են դատական իշխանության առնչությամբ արտահայտություններ անելիս զերծ մնալ ոչ իրավաչափ վարքագիծ դրսևորելուց. «Անպատասխանատու է, երբ քաղաքական գործիչները կատարում են անհավասարակշիռ քննադատական մեկնաբանություններ, և դա լուրջ խնդիր է առաջացնում, քանի որ դրանով դատական իշխանության նկատմամբ հանրային համոզվածությունը և վստահությունը կարող են ակամա կամ միտումնավոր կերպով խաթարվել: ... Նման վարքագիծը ոտնձգություն է ժողովրդավարական պետության սահմանադրության դեմ, ինչպես նաև ոտնձգություն է իշխանական մեկ այլ թևի լեգիտիմության նկատմամբ: Նման վարքագիծը նաև խախտում է միջազգային չափորոշիչները»<sup>129</sup>:

Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդը, որպես լրջագույն խնդիր է որակել դատավորների ներգրավվածությունը քաղաքական գործունեության մեջ. «Իհարկե, դատավորները ևս քաղաքացիներ են և պետք է իրավունք ունենան օգտվելու իրենց քաղաքական իրավունքներից, որոնցից օգտվում են բոլոր քաղաքացիները: Այնուամենայնիվ, հաշվի առնելով արդար դատաքննության իրավունքը և լեգիտիմ հանրային ակնկալիքները, դատավորները պետք է սահմանափակեն հանրային քաղաքական գործունեությամբ զբաղվելու իրենց նկրտումները»<sup>130</sup>:

Ընդհանուր առմամբ, վերոհիշյալ նախապայմանների շրջանցմամբ իշխանության մյուս ճյուղերի քննադատություններին արձագանքելը, դրական

<sup>129</sup> Տե՛ս Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի «Ժողովրդավարական հասարակությունում դատական իշխանության դիրքը և փոխհարաբերությունը իշխանության այլ թևերի հետ» թիվ 18(2015) կարծիքի 52-րդ կետ:

<sup>130</sup> Տե՛ս Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի «Դատավորների մասնագիտական վարվելակերպը, մասնավորապես՝ էթիկան, դատավորի պաշտոնի հետ անհամատեղելի վարքագիծը և անաչառությունը կանոնակարգող սկզբունքների և կանոնների մասին» թիվ 3(2002) կարծիքի 30-րդ կետ:

կողմերով հանդերձ, կարծում ենք, խիստ խնդրահարույց է, քանզի այն հղի է դատական համակարգի նկատմամբ հանրային վստահության նվազմամբ: Նկատենք, որ հանրային ընկալումներում դատավորները քաղաքական բանավեճերի հարմար սուբյեկտներ չեն համարվում, բացի այդ, իրենք չեն կարող հակադարձելու նպատակով կոնկրետ գործերով բացահայտել զուտ բանավեճի տեսանկյունից շահեկան, սակայն հրապարակման համար ոչ ենթակա տվյալներ, սուբյեկտիվ գնահատականներ հնչեցնել և այլն: Հավելենք, որ քաղաքական իշխանություններն ի սկզբանե օժտված են իրենց դիրքորոշումները տարածելու համար մարդկային ու տեխնիկական անհամեմատ մեծ ռեսուրսներով, վերջին հաշվով, կարող են օգտագործել խորհրդարանի և այլ պետական մարմինների ամբիոնները և այլն, մինչդեռ՝ դատավորների արձագանքը չի կարող ընդգրկել այդպիսի լայն շրջանակներ: Ասվածից չի բխում, թե դատավորները պետք է ընդհանրապես զերծ մնան քաղաքական իշխանությունների անընդունելի վարքագծին արձագանքելուց, պարզապես նպատակահարմար է գործել առավել հիմնավոր ու գործուն կառուցակարգերով: Մասնավորապես, առավել հիմնավորված կլինի, եթե այդ պատասխանատվությունն անմիջականորեն ստանձնի համապատասխան ներուժով օժտված բարձրագույն դատական խորհուրդը, ոչ թե բավարարվի սոսկ իր շահերը պաշտպանելու փորձ անող դատավորի արտահայտությունների վերաբերյալ կարգապահական վարույթ իրականացնելով:

Հավելենք, որ դատավորների քաղաքական չեզոքության պահանջը գրեթե նույն չափանիշներով է գործում և այն դեպքում, երբ առանձին երկրների ազգային օրենսդրությամբ կուսակցությանն անդամակցելը, ինչպես նաև հանրային բանավեճերում մասնակցությունն արգելված չէ: Այսպես, անդրադառնալով հիշյալ իրավիճակին, Եվրոպայի դատավորների խորհրդատվական խորհուրդն արձանագրել է. «... անհրաժեշտ է հավասարակշռություն պահպանել դատավորների՝ կարծիք ունենալու և արտահայտման ազատության ու չեզոքության պահանջի միջև: Ուստի՝ չնայած դատավորների՝ քաղաքական կուսակցության անդամությունը և առանցքային խնդիրների մասին հանրային բանավեճերում մասնակցությունը չեն կարող արգելվել, անհրաժեշտ է, որ վերջիններս խուսափեն առնվազն այն քաղաքական գործունեությունից, որը կարող է հարցականի տակ դնել նրանց անկախությունը կամ վտանգել անաչառ երևալու հանգամանքը»<sup>131</sup>:

Այսպիսով, ձեռնարկի եզրափակիչ հատվածը նվիրելով առավել արդիական ու հրատապ խնդրին՝ դատավորների քաղաքական զսպվածության ու չեզոքության սահմաններին, անհրաժեշտ ենք համարում փաստել, որ դատական իշխանությունը զուտ օբյեկտիվ չափանիշներով զրկված է իշխա-

<sup>131</sup> Տե՛ս Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի «Դատավորների մասնագիտական վարվելակերպը, մասնավորապես՝ էթիկան, դատավորի պաշտոնի հետ անհամատեղելի վարքագիծը և անաչառությունը կանոնակարգող սկզբունքների և կանոնների մասին» թիվ 3(2002) կարծիքի 33-րդ կետ:

նության մյուս ճյուղերին համարժեք արձագանքելու նյութական և իրավական հնարավորություններից, ուստի իշխանության այդ ճյուղերի համար ևս պետք է սահմանվեն գործուն սահմանափակումներ, պատասխանատվության ավելի բարձր պահանջներ, որպեսզի հնարավորինս բացառվեն նշված հնարավորությունները չարաշահելու նկրտումները: Գործնական կյանքը ցույց է տալիս, որ քաղաքական լիդերները հանիրավի շատ են տարվում դատական իշխանության հասցեին ոչ միայն զուտ քննադատական, այլև ակնհայտ վիրավորական ելույթներով, ընդհուպ՝ դատարանների շենքերը շրջափակելու կոչերով, ուստի մեր վերոհիշյալ նկատառումը հիմնավորված է նաև գործնական կյանքում տեղի ունեցող իրադարձությունների տեսանկյունից:

Ատահոգողը, թերևս, դատավորների համեմատաբար պասիվ ներգրավվածությունն է ոչ միայն իրավաստեղծ, այլև անմիջականորեն դատական իշխանությանն առնչվող օրենսդրական ակտերի նախագծերի քննարկման գործընթացներին: Մինչդեռ հենց այս ոլորտում դատավորները կարծիքներ արտահայտելու և բանավեճերին լիարժեք մասնակցելու անհամեմատ լայն իրավասությամբ են օժտված: Այս դեպքում, խնդիրը, թերևս ոչ միայն անհրաժեշտ ավանդույթների պակասն է, այլև համապատասխան կազմակերպարարական գործիքների բացակայությունը:

Ամփոփելով քաղաքական գործունեության արգելքին առնչվող հարցադրումների վերաբերյալ դիրքորոշումները, մասնավորապես հիմք ընդունելով մեր կողմից արտացոլված վերապահումները՝ նպատակահարմար ենք գտնում ելակետ ընդունել այն, որ սահմանափակումներ, ընդհանրապես իրավական կարգավորումներ կիրառելիս, հարկ է ելակետ ընդունել այն, որ քաղաքական չեզոքությունը բնավ չի ենթադրում անվերապահորեն քաղաքական բնույթի ցանկացած վարքագծից ձեռնպահ մնալու պարտավորություն: Ինչևէ, անհարկի տարածայնություններից խուսափելու, արդյունքում պաշտոնյաների նկատմամբ հանիրավի ոտնձգությունները կանխելու և առավել կանխատեսելի ու որակյալ հանրային ծառայություն ունենալու միակ ճանապարհը որոշակիության սկզբունքներին համահունչ օրենսդրություն ունենալն է, ինչին հասնելուն էլ հենց միտված են մեր վերոհիշյալ եզրահանգումները:

Իրավական անկատարության և իրավաքաղաքական խոցելի մշակույթի պարագայում կարող ենք ունենալ մի անընդունելի իրավիճակ, երբ պարզապես իշխանության հասցեին ուղղված ցանկացած քննադատություն անարգել որակվում է որպես քաղաքական չեզոքության կամ զսպվածության շրջանցում՝ դրանից բխող անընդունելի հետևանքներով հանդերձ, իսկ քաղաքական հետապնդումներ իրականացնելը բացահայտ անտեսվում է:

(Գևորգ Դանիելյան)

## ԵՂՐԱՓԱԿԻՉ ԽՈՍՔ

Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի, Արդարադատության ակադեմիայի և Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի (IRZ) նախաձեռնությամբ ու աջակցությամբ մշակված սույն ձեռնարկը միտված է ինչպես գործող դատավորների և դատավորների թեկնածուների մասնագիտական ունակությունների կատարելագործմանը, այնպես էլ դատական իշխանության հեղինակության բարձրացմանը և դատական համակարգի նկատմամբ անհրաժեշտ հանրային վստահության ձևավորմանը:

Հայաստանի անկախությունը նշանավորվեց նաև արմատական դատաիրավական բարեփոխումներով, սահմանադրաիրավական հիմքերի շարունակական կատարելագործմամբ, ինչպես նաև դատական իշխանության անկախությունը գործնական հարթությամբ երաշխավորելու առաքելությամբ:

Ինչ խոսք, հիշյալ խնդիրների հաղթահարման առանցքում իրավական մշակույթն է, առանց որի սոսկ կատարյալ սահմանադրաիրավական հիմնադրույթները և դրանց համարժեք մեկնաբանություններն ու մասնագիտական վերլուծությունները ինքնին ի գորու չեն երաշխավորելու ցանկալի արդյունավետություն: Միաժամանակ, անհրաժեշտ իրավական մշակույթ ձևավորելու գրավականը խորքային գիտելիքներն են, ինչն էլ հաշվի առնելով, ձեռնարկի հեղինակները հետազոտության շրջանակներում ընդգրկել են առավելապես այն հարցադրումները, որոնք ոչ միայն ունեն խիստ գործնական արժեք, այլև որոնց առնչությամբ, հատկապես՝ գործնական հարթությամբ դեռևս չեն ձևավորվել հնարավորինս միասնական դիրքորոշումներ, ինչն ինքնին խոցելի է դարձնում դատական իշխանության անկախության երաշխավորման առաքելությունը:

Սույն ձեռնարկը չի հավակնում վերը նշված խնդիրների առնչությամբ ձևավորելու վերջնական ու անբեկանելի տեսական չափանիշներ, այն սոսկ միտված է դատական իշխանության անկախության երաշխավորման համատեքստում առավել իրատապ խնդիրները բացահայտելուն, դրանց առաջացման խորքային պատճառները ուրվագծելուն, իշխանության առավել խոցելի ճյուղի առնչությամբ գիտագործնական և իրավական հիմքերի էվոլյուցիան ներկայացնելուն և դրանց լուծումներին հնարավորինս համապարփակ անդրադառնալուն: Նկատի ունենալով դատական իշխանության անկախության երաշխավորման առավել արդիական և իրատապ խնդիրները՝ հետազոտության նյութ են դարձել հատկապես հետևյալ հարցադրումները.

- ա) իշխանությունների բաժանման հայեցակարգի ձևավորումը և դատավորների անկախության հիմնահարցերը Երրորդ Հանրապետության իրավական համակարգում,
- բ) անկախության իմաստային առումները դատական իշխանության համակարգային խորապատկերում,
- գ) Սահմանադրական դատարանի և Վճռաբեկ դատարանի որոշումների



պարտադիրությունը և դրանց ազդեցությունը դատավորի ներքին համոզման և իրավական դիրքորոշումների ձևավորման հարցում,

- դ) Սահմանադրական դատարանի և Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների փոփոխության հնարավորության որոշ հիմնախնդիրները,
- ե) սահմանադրական նորմերի մեկնաբանության հետ կապված հիմնախնդիրները,
- զ) դատավորների ներքին անկախությունը,
- է) դատավորների անկախության հիմնահարցերը Երրորդ Հանրապետության իրավական համակարգում,
- ը) դատավորների պատասխանատվության ինստիտուտը,
- թ) դատավորների քաղաքական զսպվածության և չեզոքության սահմանները,
- ժ) դատավորների նյութական և սոցիալական անկախությունը:

Համահեղինակներն իրենց պատրաստակամությունն են հայտնում պատեհ առիթով հավուր պատշաճի անդրադառնալու սույն ձեռնարկում արտացոլված դիրքորոշումների վերաբերյալ հնարավոր դիտարկումներին: Միաժամանակ լիահույս ենք, որ հրատարակված նյութը խթան կհանդիսանա հետագայում ծագած հիմնահարցերի առնչությամբ համարժեք հետազոտություններ իրականացնելու և հնարավորինս միասնական մոտեցումներ ձևավորելու տեսանկյունից:

***Արթուր Վաղարշյան, Երվանդ Խունդկարյան, Գևորգ Դանիելյան***

## ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Դատական իշխանության անկախությունը (Ձեռնարկ Արդարադատության ակադեմիայի ունկնդիրների համար) հետազոտությունը կատարված է Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի, ՀՀ Արդարադատության ակադեմիայի և Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի (IRZ) նախաձեռնությամբ:

Ձեռնարկը պատրաստվել է Գևորգ Դանիելյանի, Արթուր Վաղարշյանի և Երվանդ Խունդկարյանի համահեղինակությամբ:

Հետազոտության կառուցվածքն ու բովանդակությունն ընտրելիս հաշվի է առնվել, որ վերջինս նախատեսված է ինչպես գործող դատավորների, այնպես էլ՝ Արդարադատության ակադեմիայի դատավորների թեկնածուների համար: Ըստ այդմ էլ ձեռնարկում քննարկման առարկա են դարձել հետևյալ հարցադրումները՝

ա) անկախության իմաստային առումները դատական իշխանության համակարգային խորապատկերում,

բ) իշխանությունների բաժանման հայեցակարգի ձևավորումը և դատավորների անկախության հիմնահարցերը Երրորդ Հանրապետության իրավական համակարգում,

գ) դատավորների անկախության հիմնահարցերը Հայաստանի Հանրապետության Երրորդ Հանրապետության իրավական համակարգի բարեփոխումների համայնապատկերում,

դ) դատավորների ներքին անկախությունը որպես դատավորի անկախության կարևոր բաղադրիչ,

ե) դատավորների նյութական և սոցիալական անկախության ապահովման հիմնախնդիրները,

զ) դատավորների պատասխանատվությունը դատական իշխանության անկախության երաշխավորման համատեքստում:

Ձեռնարկում անդրադարձ է արվել հիշյալ հարցադրումների առնչությամբ օրենսդրությանը՝ հնարավորինս համարժեք մեկնաբանություններով, միջազգային կառույցների իրավական փաստաթղթերին, այդ թվում՝ ԵԴԽԽ կարծիքներին, ինչպես նաև հանրաճանաչ գիտնականների դիրքորոշումներին: Ձեռնարկը կառուցված է քննադատական-վերլուծական մեթոդաբանությամբ: Մասնավորապես, միջազգային իրավական չափանիշների հետ համեմատության արդյունքում առանձնացվել են հայրենական օրենսդրության այն դրվագները, որոնք խնդրահարույց են և բարելավման կարիք ունեն: Ընդ որում, հեղինակներն առաջադրել են օրենսդրական բարեփոխումների իրենց տեսլականը, ինչը կարող է պիտանի լինել դատական համակարգի ներկայացուցիչների համար:

Միաժամանակ համակողմանի վերլուծվել են դատական պրակտիկայի այն ասպեկտները, որոնք անմիջականորեն առնչվում են գործնականում դատական իշխանության անկախությունը երաշխավորելու հարցադրումների հետ:

# ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ

(Ձեռնարկ ԱՐԴԱՐԱԳԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՈՒՆԿԵԴԻՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ)



Տպագրված է «ԱՍՈԴԻԿ» հրատարակչության տպարանում:  
Ք. Երևան, Բաղրամյան 30 (գրասենյակ)  
Ավան, Դավիթ Մալյան 45 (տպարան)  
Հեռ.՝ (374 11) 52 10 20, (374 11) 54 62 60  
Էլ. փոստ՝ [info@asoghik.com](mailto:info@asoghik.com)

ISBN 978-9939-1-1893-2



9 789939 118932